



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԹՈՒՐԷԻԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ
1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.**





ՇՆՔԵՐՈՒՄԱՐԱԶ ✓

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

A II
86786

ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԸ
1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.



ԵՐԵՎԱՆ - 2001

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇԱԿԱՐ

«ԱՐՄԷՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԷ ԾԵՐԵԾԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» (ԱՄՆ)
ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱԿ

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY "ARMEN AND BERSABE
JEREJIAN FOUNDATION" INC. USA

Խմբագիր՝ պ.գ.թ. Ռ. Ա. Սաֆրաստյան

ՀՏԳ. 941/949
ԳՄԴ. 63.3(4թու)
Բ. 242

ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Բ 242 ԹՈՒՐԹԻԱՅԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹԹ.
– Եր.: «Զանգակ-97» հրատ., 2001թ.,– 160 էջ:

Աշխատության մեջ քննարկվում է Թուրքիայի Հանրապետության ստեղծման և կայացման ժամանակաշրջանում (1920–1930–ական թթ.) հաստատված քաղաքական համակարգի և նրա հիմնական տարրերի հիմնախնդիրները: Նորովի են լուսաբանվում այնպիսի հարցեր, ինչպիսին են միակուսակցական համակարգի կազմավորումն ու գործունեությունը, քաղաքական կյանքում բուրքական բանակի գործոնը, քաղաքական ղեկավարության դերը և քաղաքական արդիականացման ընթացքը: Գրքում ուսումնասիրվում է ժամանակակից Թուրքիայի քաղաքական համակարգի ազդեցությունը հանրապետության հետագա զարգացման վրա:

Նախատեսվում է արևելագետների, քաղաքագետների, դիվանագետների և այլ մասնագետների համար:

0503030000
Բ 2001
0003(01)-2001

ISBN 99930-2-267-5

ԳՄԴ. 63.3 (4թու)

© Բաղդասարյան Ս.
© «Զանգակ-97» հրատ.

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

SUREN BAGHDASARYAN

THE POLITICAL SYSTEM
OF TURKEY
IN 1920-1930'S

A II
86786



YEREVAN - 2001

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5

ԳԼՈՒԽ ԱՈՍԶԻՆ

ԹՈՒՐԻԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԵՎԱՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԻԵՐԸ

ա. Երևույթի ժառանգությունը	15
բ. Թուրքիայի Հանրապետության սահմանադրական կարգը և պետական ինստիտուտների դերն ու նշանակությունը 1920–1930–ական թվականներին.....	21
գ. Քաղաքական կուսակցությունները Թուրքիայում 1920–1930–ական թվականներին	31
դ. Բանակի գործոնը Թուրքիայի քաղաքական կյանքում 1920–1930–ական թվականներին.....	52
ե. Զեմալիզմը և նրա սկզբունքները որպես պետական գաղափարախոսություն.....	58

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԶԱՂԱԶԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԻԻԱՅՈՒՄ (1920–1930–ական թթ.)

ա. Թուրքիայի քաղաքական դեկավարության ավանդույթն ու տեսակները	70
բ. Զեմալ Աթաթյուրը.....	73
գ. Թուրքիայի քաղաքական ընտրանին 1920–1930–ական թվականներին	87

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԹՈՒՐԻԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄԸ (1920–1930–ական թթ.)

ա. Քաղաքական արդիականացման գաղափարը և նշանակությունը Թուրքիայում	103
բ. Քաղաքական արդիականացման ընթացքը և գործոնները Թուրքիայի Հանրապետությունում 1920–1930–ական թվականներին.....	113
գ. Արդիականացումը և իսլամը.....	126
դ. Զեմալիզմի քաղաքական ժառանգությունը	131

ԿԵՐՉԱԲԱՆ..... 136
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳՅՈՐՆԵՐԻ ՑԱՆԿ..... 150

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XX դարի սկզբին՝ 1920–1930–ական թվականներին, Թուրքիան ապրեց մի պատմական անցում, որի հետևանքով ստեղծվեց ժամանակակից բուրբակյան պետությունը՝ Թուրքիայի Հանրապետությունը: Նրա ստեղծման, նրա պետական և քաղաքական հիմքերի և ինստիտուտների կայացման ժամահակաշրջանում (1920–1930–ական թթ.) քաղաքական համակարգի և քաղաքական գործընթացների ուսումնասիրությունը ունի այդիական և կարևոր գիտական, քաղաքական ու գործնական նշանակություն:

Թուրքիայի Հանրապետությունը Մերձավոր և Միջին Արևելքում առաջին արդիական ազգային պետություններից մեկն է, որի պատմական զարգացմանը վերոհիշյալ տարիներին բնորոշ էին բերև երկու հիմնական միտում՝ բուրբակյան ազգային պետության ստեղծումը և արդիական հասարակության ձևավորումը: 1920–1930–ական թթ. Թուրքիայի քաղաքական համակարգը մեծ ազդեցություն է գործել երկրի հետագա պատմական զարգացման, նրա քաղաքական և զինվորական վերահասակի, ինչպես նաև լայն զանգվածների քաղաքական վարքագծի, գաղափարների և կուլտուրայի վրա: Այս առումով կողմնորոշիչ դեր կարող է կատարել հանրապետության քաղաքական և գաղափարախոսական արմատների առաջացման, նրա հիմնական պետական ինստիտուտների քաղաքական դերի և նշանակության, քաղաքական կուսակցությունների գործունեության և սկզբունքների, պետության և իշխող Հանրապետական–ժողովրդական կուսակցության փոխհարաբերությունների, հանրապետության առանցքային պետական և քաղաքական ինստիտուտ հանդիսացող բուրբակյան բանակի գործունի, քեմալիզմի գաղափարախոսության, երկրի քաղաքական առաջնությունի դերակատարման և քաղաքական արդիականացման գործընթացի ուսումնասիրությունը:

1920–1930–ական թվականների ժամանակահատվածի ընտրությունը պատահական չէ և պայմանավորված է եղել մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմ բուրբակյան ազգային պետության ձևավորմամբ և նրա հիմքերի հաստատմամբ, ինչպես նաև հանրապետության հիմնադիր Քեմալ Արաբքյուրքի պետական և քաղաքական գործունեությամբ և պետական շինարարության գործընթացի վրա մեծ ազդեցությամբ: Այդ տարիներին Թուրքիայում քաղաքական համակարգի առանցքը, արարիչ և շարժիչ ուժը հանդիսացող քեմալիզմի պատմական փուլն այսօր էլ չի կարելի ավարտված համարել, թեև նրա հիմնական տարրերն ու սկզբունքներն ար-

դեն ենթարկվել են էական փոփոխությունների կամ թուրքիայի քաղաքական ուժերի և մտավորականության կողմից դարձվել բանալեծի առարկա: Բացի այդ, մեզանում թուրքիայի քաղաքական համակարգի և զարգացման հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է նաև ներկա ժամանակաշրջանում նորաստեղծ ազգային պետությունների կայացման և արդիական հասարակարգին անցման գործընթացներով:

Աշխատությունը կարևորվում է Մերձավոր Արևելքի երկրների քաղաքական պատմության նորագույն շրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացների ու պետական շինարարության առավել խոր ընկալման առումով, ինչպես նաև հետաքրքրություն է ներկայացնում թուրքիայում արդի փուլում ընթացող քաղաքական իրադարձությունների և պրոցեսների մասին հստակ պատկերացում կազմելու տեսակետից: Մերձավոր Արևելքում եղել են և այսօր էլ գոյություն ունեն պետություններ, որոնք փոխառել ու կիրառել են քեմալիզմի քաղաքական գործունեության ձևերն ու եղանակները: Ծանաչելով թուրքիայի քաղաքական փորձը՝ մենք հնարավորություն ունենք հետազոտելու Մերձավոր Արևելքում քաղաքական զարգացման մի փուլ, որի միջով անցել են և դեռ անցնում են ուրիշ ազգերը, ինչպես նաև ծանոթանալ քաղաքական համակարգի արդիականացման մոդելի առանձնահատկություններին:

Ազգային պետության ստեղծման բուրբական փորձը և թուրքիայի քաղաքական համակարգի ուսումնասիրությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար նաև այն առումով, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս ինքը գտնվում է այդ խնդիրների լուծման փուլում: Վերոհիշյալ հարցերի ու պրոբլեմների քննարկումն ու վերլուծությունը կարող է օգտակար լինել մեր պետական շինարարության ճանապարհին՝ օգնելով ճանաչել արտասահմանյան փորձը մեր երկրի բարդ և համաձայն պրոբլեմների լուծման նպատակով:

Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգի ստեղծման և զարգացման հիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ այն տեղի էր ունենում քացառիկ պատմական հանգամանքներում՝ համազգային ճգնաժամից, պատերազմների տասնամյա ժամանակաշրջանից և թուրքական պետականության նախորդ ձևի՝ Օսմանյան կայսրության փլուզումից հետո նոր թուրքական ազգային պետության կայացման ընթացքում:

Մեր կարծիքով, քեմալական թուրքիայի պայմաններում քաղաքական համակարգի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նրա կազմավորումը և տարրերը կոնկրետ պատմական-քաղաքական ժամանակաշրջանում որոշակիորեն տարբերվում էին վերոհիշյալ բնորոշումներից՝ ներառելով իրենց մեջ մեկ քաղաքական կուսակցության մենիշխանություն-

նը, բանակի որոշիչ ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում, քարիզմատիկ ուժեղ առաջնորդի իշխանության վարչակարգը և ժամանանակակից քաղաքական համակարգերին և քաղաքացիական հասարակությանը՝ հատուկ ինստիտուտների բացակայությունը:

Աշխատության մեջ արծարծվող թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի հանդիսացել հատուկ ուսումնասիրության առարկա: Չնայած որ Թուրքիայի Հանրապետության կազմավորման, նրա քաղաքական և հասարակական զարգացման խնդիրները, (ինչպես, օրինակ, սահմանադրական կարգերի, քաղաքական կուսակցությունների, իսլամի և արևմտակամացման հարաբերության հարցերը) քննարկվել են որոշ հայ և խորհրդային հեղինակների կողմից, սակայն քաղաքական համակարգը որպես այդպիսին չի ներկայացվել առանձին աշխատանքով: Խորհրդային արևելագիտության և քաղաքագիտության մեջ Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքականության ոլորտի մասնագետները սովորաբար առաջնահերթությունը տալիս էին տնտեսական զարգացման, բյուրոկրատիայի, դասակարգային պայքարի և դասակարգային կառուցվածքի խնդիրներին, ինչը թելադրվում էր խորհրդային ժամանակաշրջանի գաղափարախոսական կաղապարներով: Թուրքական և արևմտյան պատմագրության և քաղաքագիտության մեջ ուշադրությունը հիմնականում սեռեոված է եղել Թուրքիայի քաղաքական պատմության և առանձին քաղաքական պորթլենդների ուսումնասիրության վրա, այլ ոչ թե իր ամբողջության մեջ վերցրած քաղաքական համակարգի ուսումնասիրությանը:

Տվյալ աշխատությունը, որպես այդպիսին, իր բովանդակությամբ, հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ համակողմանիորեն վերլուծության է ենթարկվում Թուրքիայի Հանրապետության ձևավորման ժամանակաշրջանում քաղաքական համակարգը, Թուրքիայի պետական շինարարության և քաղաքական զարգացման ընթացքը, ինչպես նաև համադրվում և ճշտվում են արդեն գոյություն ունեցող տեսակետները քեմալական ժամանակաշրջանի հանգուցային որոշ պահերի վերաբերյալ: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում նորովի մեկնաբանել քեմալական Թուրքիայի քաղաքական ինստիտուտների ձևավորման և զարգացման ընթացքը, այդ զարգացման տարբեր փուլերն, օրինաչափությունները և մեխանիզմը:

Աշխատության մեջ հանգամանալիորեն ուսումնասիրվում են Թուրքիայում 1920-1930-ական թթ-ին Հանրապետական-Ժողովրդական կուսակցության դերը քաղաքական համակարգում և նրա փոխհարաբերությունները պետության հետ, որոնք ձեռք էին բերել «կուսակցապետության» կարգավիճակ: Ըննության է առնվում բանակի գործունը տվյալ ժամանակաշրջանում, երբ

փաստորեն հիմք դրվեց բուրքական բանակի ներկա դերի և կարգավիճակի համար, մինչդեռ Թուրքիայի նորագույն պատմության մեջ բանակի գործունի ուսումնասիրությունները կենտրոնացված են հիմնականում 1960–ական թթ–ից սկսած բանակի կողմից իրականացվող պետության և Գերագույն դատարանի կողմից պաշտպանության վրա: Հատուկ ուշադրություն է դարձնում Թուրքիայի Հանրապետության առաջին քաղաքական ղեկավարների դերին, ընդհանրապես՝ բուրքական քաղաքական ղեկավարման խնդրին, որը մինչ այդ թե՛ խորհրդային և ռուսական, թե՛ հայ մասնագիտական գրականության մեջ չի դիտարկվել որպես առանձին երևույթ: Լուսաբանվում են նաև քաղաքական արդյունավետացման պրոբլեմները, որոնք լայն մեկնաբանությունների են արժանացել բուրքական և արևմտյան պատմագրության և քաղաքագիտության կողմից՝ ունենալով, սակայն, որոշակի բացթողումներ, որոնք սույն աշխատությունը փորձ է անում լրացնել:

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, բուրբերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և պատմագիտական գրականության հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են բուրբ, ամերիկյան, եվրոպական և խորհրդային հետազոտողների հարցին անդրադարձող արժեքավոր աշխատությունները, հողվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հուշերը և պարբերականները: Մասնավորապես, օգտագործվել են Գուրբեր, որոնք պահվում են Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական արխիվում: Դրանք Հայկական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի N 114 ֆոնդին պատկանող գրագրությունն ու թղթակցություններն են, որոնք վերաբերում են քեմալական Թուրքիայի պատմության սկզբնական փուլերին:

Աշխատանքի համար որպես փաստաթղթային սկզբնաղբյուր են ծառայել բուրբերեն, ռուսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով տպագրված վավերագրեր և փաստաթղթեր՝ «Աբաբյուրբի ելույթները ԹՄԱԺ–ի բաց և գաղտնի նիստերում»՝ Բյազըմ Օզբյուրբի խմբագրությամբ, «Աբաբյուրբի ճառերի և ելույթների»՝ բուրբերեն և ռուսերեն հրատարակությունները, որտեղ ներգրավված են նաև լրագրողներին տրված Աբաբյուրբի հարցազրույցները, ինչպես նաև «Իթթիհաղ վե Թերաբբը» («Միություն և Առաջադիմություն») կուսակցության, Հանրապետական–Ժողովրդական կուսակցության, Առաջադիմական–Հանրապետական և Լիբերալ–Հանրապետական կուսակցությունների նյութերը¹: Նախագահական արխիվից չիրա-

¹ Atatürk'ten Düşünceler. Ankara, 1964; Atatürk'ün Söylev ve Demeçleri, c. I–III, Ankara, 1961; Kemal Atatürk. Söylev (Nutuk), c. 1–3, Ankara, 1964; Atatürk'ün TBMM oturumlar şındaki

տարակված աղբյուրներ են բերվում մահ Շ. Ալյեմիրի «Միակ Մարդը», յուր Կինրասի «Աքաբյուրք» գրքում, «Թարիի վե թովում» և «Բեկետեն» պարբերականներում²: Սույն սկզբնաղբյուրները կազմում են այսպես կոչված «ուղղահավատ քեմալիզմի» հիմքը: Ք. Աքաբյուրքի հայտնի «Շառք», օրինակ, որոշակի միտումնավորություն է պարունակում՝ ուղղված լինելով նրա նախկին զինակիցների վարկաբեկմանը:

Օգտագործված սկզբնաղբյուրների մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն թուրքական պետական ու քաղաքական գործիչների ելույթները, հարցազրույցները և հիշողությունները, մասնավորապես, Քեմալ Աքաբյուրքի զինակիցների և ապա մահ քնդդիմախոսների՝ Ք. Կարաբեքիրի, Ա. Ֆ. Ջեբետայի, Ռ. Օրբայի³ հուշերում պաշտոնական պատմագրությունից առանձնապես տարբերվող տեսակետները 1920–1930–ական թթ. պատմական փաստերի վերաբերյալ չեն հանդիպում, սակայն դրանք այս կամ այն կերպով թույլ են տալիս պարզել քեմալական շարժման, հետագայում մահ հանրապետության քաղաքական կյանքում էական դեր կատարած գործիչների հայացքները: Հարկ ենք գտնում առանձնացնել մահ Թուրքիայի առաջին նախագահի շրջապատին պատկանող գործիչների և նրա ժանանակակիցների՝ Ք. Ալիի, Յ. Ք. Կարասումանօղլուի, Ֆ. Ռ. Աքայի, Հ. Է. Աղըվարի, Ա. Աղաօղլուի, Ա. Է. Յալմանի հուշերը⁴:

Վերևում արդեն նշվել է, որ ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ խորհրդային արևելագիտության մեջ հատուկ աշխատություններ գոյություն չունեն, սակայն օգտակար եղան այն խորհրդային թուրքագետների, արևելագետների, պատմաբանների աշխատությունները, որոնք այս կամ

açık ve gizli konuşmaları. С.1–2 Ankara, 1990; Ататурк К. Избранные речи и выступления. Москва, 1966; Мустафа Кемаль. Путь новой Турции. т. 1–4, Москва, 1929–1934; Tunaya T.Z. Türkiye’de Siyasî Partiler. 1859–1952. İstanbul, 1952; Устав турецкой Народно-Республиканской партии. “Революционный Восток”, Москва, N 4–5, 1928, сс. 348–358.

² Aydemir Ş.S. Tek Adam. Mustafa Kemal. с. 2–3, İstanbul, 1975–1976; Kinross, Lord. Atatürk. The Rebirth of a Nation. London, 1965; Tekeli I., İlkin Ş. Kurtuluş savaşında Talât Paşa ile Mustafa Kemal’in mektuplaşmaları. “Belleten”, с. XLIV, N 174, Nisan 1980. ss.301–346; Zürcher E.J. 1924’ teki Çok Partili Demokrasi.– “Tarih ve toplum”, N 49, Ocak 1988, ss. 16–19.

³ Cebeşoy A.F. Mustafa Kemal – Milli Lider. “Belleten”, с. XX, N 77, Ekim 1956, ss. 48–64; Cebeşoy A.F. Milli Mücadele Hatıraları. Ankara, 1957; Kandemir F. Kâzım Karabekir’in yakınlı hatıraları meselesinin içyüzü. İstanbul, 1964; Orbay R. Hatıraları. “Yakın Tarihimiz”, “Milliyet”. 7–27.10.1983.

⁴ Ağaoglu A. Serbest Fırka Hatıraları. İstanbul, 1968; Ali K. Kılıç Ali hatıralarını anlatıyor. İstanbul, 1955; Atay F.R. Çankaya: Atatürk Devri Hatıraları. с. 2, İstanbul, 1958; Adıvar H.E. Turkey Faces West. New-York, 1973; Yalman A.E. Turkey in My Time. Oclahoma, 1967; Караосманоглу Я.К. Дипломат поневоле. Москва, 1978.

այն տեսանկյունից դիտարկում են պրոբլեմի առանձին կողմերը: Այս շարքում կարելի է նշել Գ. Աստախովի, Վ. Գուրկո-Կրյաժնի, Մ. Պավլովիչի, Իրանդուսի, Վ.Գորդլևսկու, Ա.Միլերի, Ա.Նովիչի, Ա. Շամսուրդինովի, Է. Հասանովի, Բ. Պոլսկիսի, Ֆ.Շաբանովի, Մ.Հասարաթյանի ակնարկները և հետազոտությունները⁵, քեյտեռն նրանց ոչ բոլոր եզրակացությունների և դրույթների հետ կարելի է համաձայնել: Միաժամանակ խորհրդային պատմագիտության մեջ Թուրքիայի Հանրապետության կայացման շրջանի հետ կապված որոշ քաղաքական հիմնախնդիրներ և ասպեկտներ կամ ընդհանրապես լուսաբանված չեն, կամ էլ դրանց մեկնաբանությունը հաճախ բավարար չէ՝ կատարվելով մարքսիստ-լենինյան կոնցեպցիաների հիման վրա, համաձայն որոնց, քաղաքական համակարգը դիտվում էր որպես տնտեսական գործընթացների արտահայտություն և դասակարգերի միջև հարաբերությունների ոլորտ:

Պետք է նշել, որ, չնայած խորհրդային ժամանակաշրջանի գաղափարախոսական սահմանափակումներին, հայ արևելագիտությունը կարողացել է տալ քննալական Թուրքիայի ավելի օբյեկտիվ և ինքնուրույն գնահատականը, մասնավորապես, նրա կողմից վարած ազգային քաղաքականության հարցում, ինչի օրինակ կարող են հանդիսանալ հայ թուրքագետներ Ե.Սարգսյանի, Ռ.Սահակյանի, Բ.Կոնդակչյանի, Հ.Ինճիկյանի արժեքավոր աշխատությունները⁶: Բացի այդ, քննալական շարժման և Թուր-

⁵ Գ.Астахов. От султаната к демократической Турции. Очерки из истории кемализма. Москва—Ленинград, 1926; Ирандуст. Движущие силы кемалистской революции. Москва—Ленинград, 1928; Кряжин В. Политические группировки в Турции. "Новый Восток", кн. 3, 1925, сс. 35—66; Павлович М., Гурко—Кряжин В., Раскольников Ф. Турция в борьбе за независимость. Москва, 1925; Гасанова Э. Об идеологических основах кемализма и их современном толковании в Турции. "Народы Азии и Африки", 1968, N 3, сс. 25—33; Гордлевский В. Избранные сочинения, т. 3, Москва, 1962; Миллер А. Очерки новейшей истории Турции. Москва—Ленинград, 1948; Миллер А. Турция. Актуальные проблемы новой и новейшей истории. Москва, 1983; Новичев А. Турция. Краткая история. Москва, 1966; Поцхверия Б. Мустафа Кемаль А—татюрк. "Народы Азии и Африки", 1963, N 12, сс. 18—27; Шабанов Ф. О кемалистских принципах формирования национальной государственности в Турции. — "Турция: история, экономика", Москва, 1978, сс. 32—43; Шамсутдинов А. Турецкая Республика. Москва, 1962; Гасратян М. Курды Турции в новейшее время. Ереван, 1990.

⁶ Кондакчян Р. Внутренняя политика Турции в годы второй мировой войны. Ереван, 1978; Кондакчян Р. Турция: внутренняя политика и ислам. Ереван, 1983; Инджикян О. Буржуазия Османской империи. Ереван, 1977; Саакян Р. Франко—турецкие отношения и Киликия в 1918—1923 гг. Ереван, 1986; Սահակյան Ռ. Կայսրությունից դեպի ազգային պետություն, «Ինքնություն», Երևան,

քիայի Հանրապետության ստեղծման ժամանակաշրջանին անդրադարձել են և իրենց գնահատականներն տվել որոշ հայ պատմաբաններ՝ Ջ.Կիրակոսյանը, Հ. Սիմոնյանը և այլն⁷:

Թուրքիայի Հանրապետության ստեղծման ժամանակաշրջանին և Բ.Արաբյուրքի կյանքին ու գործունեությանը մեծ տեղ և ուշադրություն է հատկացվում բուրքական պատմագրության մեջ: Թուրքիայի Հանրապետության քաղաքական զարգացման առաջին տարիների վերաբերյալ բուրքական պատմագրության մեջ առկա կարծիքների, գնահատականների և դատողությունների հիմքում հաճախ դրվում են պաշտոնական տեսակետները, որոնք մեծ մասամբ ջատագովական բնույթ են կրում: Թուրքիայի պաշտոնական պատմության – «Թարիհի», դասագրքերի, հուշերի հեղինակները հաճախ իղեպակեանցում են Քեմալ Արաբյուրքի և այլ բուրքական ղեկավարների անձն ու գործունեությունը: Այդ շարքի հեղինակներին են պատկանում, օրինակ, Է. Քարալը, Աֆեթինանը, Յ. Հ. Բայուրը, Ս. Սոնյեթը⁸:

Թուրքիայի Հանրապետության քաղաքական կայացման և զարգացման այս կամ այն ասպեկտին, մասնավորապես, հանրապետության և նրա ինստիտուտների ստեղծման կամ քաղաքական կուսակցությունների խնդիրներին անդրադարձել են Ծ. Թուրանը, Թ. Թունայան, Դ. Ավջըողլուն, Մ. Թունչայը, Հ. Ինալչըքը⁹: Արևմուտքում բնակվող ազգությամբ բուրք պատմաբաններ և հասարակագետներ Ն. Բեքրեսի, Բ. Թուփրաքի, Օ. Մեհմեթի, Չ. Քեյդերի, Բ. Քարալատի, ինչպես նաև Մ. Հեփերի, Օ. Օքյարի աշխատություններում¹⁰ հետազոտվում են Թուրքիայի հասարակական-քա-

1995, էջ 134–139: Սահակյան Ռ., Մուստաֆա Քեմալի մի հարցազրույցի աղբրով, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, N 3, էջ 237–238; Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964:

⁷ Киракосян Дж. Млодогүрки перед судом истории. Ереван, 1989; Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:

⁸ Afetinan. Atatürk ve Demokrasi. "Belleten", c. LII, N 204, Kasım 1988, ss. 825–832; Bayur Y.H. Atatürk'ün sezis gücü. "Belleten", c.LII, N 204, Kasım 1988, ss. 975–984; Karal E.Z. Atatürk ve Devrim. Ankara, 1980; Karal E.Z. Türkiye Cumhuriyeti Tarihi. İstanbul, 1944; Sonyel S. Büyük General, Asıl Düşman ve Cömert Dost Gazi Mustafa Kemal. "Belleten", c.XLIII, N 171, Temmuz 1979, ss. 619–634:

⁹ Avcioğlu D. Türkiye'nin Düzeni. Dün – Bugün– Yarın. 2. c. 2, İstanbul, 1976; Tunaya T.Z. Türkiye'de Siyasî Partiler. 1859–1952. İstanbul, 1952; Tunçay M. Türkiye Cumhuriyetinde Tek Parti Yönetiminin Kurulması (1923–1931). Ankara, 1981; Turan Ş. Türk Devrim Tarihi. kitap 1–2, Ankara, 1991–1992.

¹⁰ Berkes N. Türkiye'de Çağdaşlaşma. Ankara, 1973; Berkes N. The Development of Secularism in Turkey. Montreal, 1964; Keyder Ç. State and Class in Turkey. London–New–York, 1987; Inalcık H. Türkiye'nin modernleşmesi. "Belleten", c.II, N 204, Kasım 1988, ss. 985–

ղաքական գործընթացների և աղյուսակաճանաչման պատճառները, ընդ որում, այդ հեղինակները, թեև տուրք տալով թուրքական պաշտոնական պատմական կոնցեպցիաներին, փորձել են տալ ավելի օբյեկտիվ և բնագրատական գնահատականներ Թուրքիայի պատմության քեմալական ժամանակաշրջանին:

Անդրադառնալով արևմտյան հետազոտողների ուսումնասիրություններին՝ հարկ է նշել, որ այնտեղ 1920–1930–ական թթ. քեմալական Թուրքիան ավանդաբար դիտվում է որպես ժողովրդավարության նախապատրաստական և անհրաժեշտ անցումային փուլ, թեև վերջին տարիների հետազոտություններն արդեն կենտրոնանում են քեմալիզմի ավտորիտար բնույթի վրա՝ նկատելով նույնիսկ ամբողջատիրական միտումներ: Արևմտյան հեղինակների կողմից շատ տեղ է հատկացվում քեմալիզմը որպես առաջադիմական քաղաքականություն և գաղափարախոսություն բնութագրելուն և անտեսվում են դրա որոշակի բացասական կողմերը:

Այսպես, քեմալական Թուրքիայում քաղաքական զարգացման և քաղաքական կուսակցությունների խնդիրն հետազոտվել է Յ. Յյուրխերի, Դ. Ռասթուռլի, Ֆ. Ահմադի, Գ. Յեչկեյի, Ռ. Ռոբինսոնի ուսումնասիրություններում¹¹: Նույն Ռ. Ռոբինսոնը, Դ. Լեբնեյը, Դ. Ռասթուռլ անդրադարձել են թուրքական բանակի դերին քաղաքական կյանքում,¹² իսկ Հ. Արմստրոնգի, լորդ Կինրոսի, Ռ. Բրոքի աշխատությունները նվիրված են Քեմալ Աթաթյուրքի անձին և գործունեությանը¹³, ընդ որում, այնտեղ տրվող գնա-

992; Mehmet Ö. Turkey in Crisis: some contradictions in the Kemalist development strategy. "International Journal of Middle East Studies", vol. 15, N 1, February 1983, pp. 47–66; Okyar O. Development Background of the Turkish Economy 1923–1973. "International Journal of Middle East Studies", vol. 10, N 3, August 1979, pp. 325–332; Toprak B. Islam and Political Development in Turkey. Leiden, 1981; Karpat K. Turkey's Politics. The Transition to a Multi-party System. Princeton, 1959.

¹¹ Jaschke G. Die Gründung der Türkischen Republik. "Belleten", c. XXXVII, N 148, October 1973, ss. 458–482; Jaschke G. Auf dem Wege zur türkischen Republik. "Die Welt des Islams", N 5, 1958, SS. 12–25; Ahmad F. The Making of Modern Turkey. London, 1992; Robinson R.D. The First Turkish Republic. Cambridge, Mass., 1965; Robinson R.D. The Lesson of Turkey. "The Middle East Journal", N 3, Autumn 1951, pp. 8–23; Rustow D. A. The Development of Parties in Turkey. in La Palombara J. and Weiker M. (eds.). Political Parties and Political Development. Princeton, 1966; Zürcher E.J. The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish national movement 1905–1926. Leiden, 1984.

¹² Lerner D. and Robinson R. Swords and Ploughshares. The Turkish Army as a Modernizing Force. "World Politics", vol. XIII, N 1, October 1960, pp. 19–45; Rustow D.A. The Army and the Founding of the Turkish Republic. "World Politics", vol. XI, N 4, July 1959, pp. 513–552.

¹³ Armstrong H.C. Grey Wolf. Mustafa Kemal. London, 1933; Kinross, Lord. Ataturk; Brock R. Ghost on Horseback. The Incredible Ataturk. New-York, 1954.

հատականները՝ անկախ Աքաթյուրքի հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքից, պարունակում են հեղինակների բացահայտ սուբյեկտիվ մտտեցումներ: Հարկ ենք համարում առանձնացնել նաև Թուրքիայի, ընդհանրապես զարգացող երկրների քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացների բավականին խոր վերլուծություն պատմականոլ աշխարհի աշխատություններ, ինչպես, օրինակ, բուրքագետներ Ֆ. Ֆրեյի աշխատությունը բուրքական քաղաքական ընտրանու և Բ. Լյուխի հետազոտությունները ժամանակակից Թուրքիայի ստեղծման և զարգացման մասին. հայտնի պատմաբաններ և հասարակագետներ Ե. Այգենշտադտի, Ա. Թոյնբիի, Ս. Հանթինգտոնի ուսումնասիրությունները քաղաքական արդիականացման խնդիրների և, մասնավորապես, Թուրքիայում նրա լիարկանացման վերաբերյալ¹⁴:

Աղբյուրների և գիտական գրականության հետ միասին առենախոսության մեջ օգտագործվել բուրքական, խորհրդային, արևմտյան պարբերական մամուլը, որն այս կամ այն կերպով անդրադառնում է տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններին:

Աշխատության ծավալները և բուն բուրքական աղբյուրների և հետազոտությունների անբավարար քանակը չեն ընձեռել մեզ հնարավորություն հանգամանակիորեն և սպառիչ կերպով վերլուծել 1920–1930–ական քվականների Թուրքիայի քաղաքական զարգացման բոլոր կողմերն ու փաստերը: Մինևույն ժամանակ աշխատության մեջ փորձ է կատարվում դիտարկել քեմալական քաղաքական համակարգը ավելի լայն պատմա-տեսական հեռանկարում և առաջ քաշել տվյալ զարգացման այդ փուլի տեսական բացատրությունները, ինչպես նաև որոշել դրա ընդհանուր ուղղվածությունը:

Հեղինակը իր խորին երախտագիտությունը հայտնում է բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել աշխատության քննարկման, մշակման, խմբագրման և հրատարակման գործում:

¹⁴ Frey F.W. The Turkish Political Elite. Cambridge, 1965; Eisenstadt S. Modernization and Conditions of Sustained Growth. "World Politics", vol. XVI, N 4, April 1964, pp. 58–74; Eisenstadt S. (ed.). Readings in Social Evolution and Development. London, 1970; Huntington S. Political Order in Changing Societies. New–Haven–London, 1968; Lerner D. The Passing of Traditional Society. Glencoe, 1966; Lewis B. The Emergence of Modern Turkey. London, 1961.

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԵՐԸ**

Քեմալական Թուրքիայի քաղաքական համակարգի զարգացումը, իր հերթին, ընթացավ մի քանի փուլերով: Առաջին փուլը՝ դա 1920-1923 թթ., երբ տեղի էր ունենում նոր պետական և քաղաքական ինստիտուտների կազմավորումը, որն իր արտահայտությունը գտավ Հանրապետության հաստատությունների և ՀԺԿ-ի մեջ: Երկրորդ փուլը՝ 1923-1926թթ. շրջանն էր, երբ իշխանության համար պայքար էր ընթանում իշխանության համար ազգայնական շարժման երկու քևերի միջև, որն ավարտվեց Մուստաֆա Քեմալի կողմից ընդլիմության լիակատար ջախջախմամբ և երկրում միակուսակցական համակարգի ու անձնական իշխանության վարչակարգի հաստատմամբ: Այս գալիս է 1926-1930թթ. շրջանը, երբ ամրապնդվում են Մ. Քեմալի և ՀԺԿ-ի իշխանության դիրքերը, իրականացվում են կարևոր հասարակական և գաղափարախոսական բարեփոխումներ, և այս շրջանի գագաթնակետը դարձան Լիբերալ-Հանրապետական կուսակցության շուրջ ծավալված իրադարձությունները, որոնք հանդիսացան փորձ երկրում իրագործել քաղաքական բարեփոխումներ, սակայն արդյունքում ստացան իշխանությունների համար անցանկալի ընթացք՝ հանգեցնելով ԼՀԿ-ի գործունեության կասեցմանը: Եվ չորրորդ շրջանը՝ 1931-1938թթ. «կարծրացման» շրջանն է, երբ կատարվում է իշխանության չափազանց մեծ կենտրոնացում նախագահի և կուսակցական մարմինների ձեռքերում:

1920-1930-ական թթ. Թուրքիայի քաղաքական համակարգի ձևավորման և զարգացման մեջ զգալի դեր կատարեց նախորդ՝ երիտթուրքական ժամանակաշրջանը, այդ պատճառով էլ հանրապետական Թուրքիայի քաղաքական համակարգի ուսումնասիրությունը սկսելիս նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ երիտթուրքերի քաղաքական ժառանգությանը:

ա. Երիտթուրքական ժառանգությունը

Սովորաբար նորաստեղծ պետությունները ժառանգում են իրենց քաղաքական համակարգը նախորդ վարչակարգերից: Այդ ժամանակ էլ այս

պետությունները կանգնում են հետևյալ ընտրության առջև՝ կամ ընդունել, կամ մերժել, կամ էլ արդիականացնել այդ ժառանգությունը:

Չնայած Մուստաֆա Քեմալի կողմից Օսմանյան կայսրությունից ժառանգած ավանդույթների, քաղաքականության, հասարակարգի մերժման փորձերի և թուրքական պաշտոնական պատմագրության կողմից երիտթուրքական և քեմալական ժամանակաշրջաններն իրարից անջատելու, երիտթուրքերին և քեմալականներին որպես տարբեր քաղաքական հոսանքների մերկայացուցիչներ ներկայացնելու որոշակի փորձերին, պատմական իրողությունները վկայում են, որ 1919 թ. Անատոլիայում սկսված ազգայնական շարժման մեջ նախաձեռնությունը պատկանում էր *«Իթթիհադ վե թերաքքը»* երիտթուրքական կոմիտեի անդամներին: Թեպետ այդ ժամանակ *Իթթիհադը* կորցրել էր իշխանությունը և լուծարվել, սակայն նրա տեղական կառույցները շարունակում էին իրենց գործունեությունը և նրա շատ գործիչներ պահպանել էին իրենց դիրքերը պետական սպարատում ու բանակում: Թուրք պատմաբան-հասարակագետ Դողան Ավջըօղլուն, նշելով տվյալ փաստը, եզրակացնում է, որ «երիտասարդ իթթիհատական սպաները և պաշտոնյաները կազմեցին ազգային շարժման ողնաշարը»¹⁵: Ընդհանրապես, հարկ ենք համարում շեշտել, որ 1919–1922 թթ. ազգայնական շարժման և 1923 թ.-ին հռչակված Թուրքիայի Հանրապետության համար հողը նախապատրաստվել է հենց երիտթուրքական շրջանում: «Քեմալիզմի պատմական ծագումը, – արդարացիորեն նշում էր Իբրահիմօղլը, – հարկավոր է փնտրել երիտթուրքական կուսակցության ընդերքում...»¹⁶:

1908թ. օսմանյան բանակը, որը փնտրում էր փլուզվող Օսմանյան կայսրության փրկության ուղիները, հեղաշրջում իրականացրեց *«Իթթիհադ վե թերաքքը»* («Միություն և Առաջադիմություն») երիտթուրքական կոմիտեի ղեկավարության տակ՝ սահմանափակելով արդեն երեսուր տարուց ավել իշխող բռնապետ–սուլթան Աբդուլ–Համիդ II իշխանությունը և վերականգնելով 1876թ. Սահմանադրությունը: Միապետությունը Թուրքիայում պահպանվեց, սակայն իրական իշխանությունն անցել էր բյուրոկրատական–գինվորական վերնախավի ձեռքը: Իշխանության լծակները սկսեցին կենտրոնանալ *Իթթիհադի* կենտրոնական կոմիտեի ձեռքերում: Օգտվելով Օսմանյան կայսրության կողմից վարվող Տրիպոլիտանական և Բալկան-

¹⁵ D. Avcioglu. Milli Kurtuluş Tarihi. c.3. Istanbul, 1976. s. 1230.

¹⁶ Ирандуст. Движение силы кемалистской революции. Москва–Ленинград, 1928, с.50.

յան պատերազմների արդյունքում երկրում ստեղծված վիճակից՝ իբրև հաղթանակները կարողացան չեզոքացնել ընդդիմադիր ուժերին և հաստատել իրենց բռնապետությունը¹⁷:

Այդ ժամանակահատվածում տեղի ունեցավ նաև տիրապետող գաղափարախոսության փոփոխությունը. նախորդ օսմանիզմի և պանիսլամիզմի հուսանքներին փոխարինման է գալիս քյուրքիզմի հայեցակարգը, որը հետզհետե վերածվեց պանքյուրքիստական ազգայնամուլական տեսությանը: Նրա իրականացմանը հետամուտ լինելով՝ երիտթուրքերը ներքաշեցին Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կողմից. «... Հենց համաքյուրքյան իրականացման փորձերը, - նշում է անվանի հայ թուրքագետ Ռ. Սահակյանը, - նպաստեցին իբրև հաղթանակների ղեկավարած Թուրքիայի պարտությանը առաջին աշխարհամարտում և Օսմանյան կայսրության փլուզմանը»¹⁸:

1918 թ.-ին պատերազմում պարտություն կրելուց հետո իբրև հաղթանակ վարչակարգը տապալվեց, իսկ նրա պարագլուխները փախուստի դիմեցին: Սահայն Էնվերն ու Թալեթը դեռևս իրենց փախուստից առաջ կարգադրել էին իբրև հաղթանակ «Հատուկ կազմակերպության» (*“Teşkilatı Mahsusa”*) անդամներին շարունակել իրենց գաղտնի գործունեությունը: «*Ընկալլ Միլլիե*»-ի («Ազգային Ռժեր») ջոկատները զինվում էին երիտթուրքերի կողմից վաղուց պատրաստված զինապահեստներից¹⁹: 1919 թ. սեպտեմբերին Սվաստում կայացած Անատոլիայի և Ռումելիայի վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերությունների համաթուրքական համագումարին միայն մասնակցում էին «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի 90 ականավոր անդամ²⁰:

Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգում «*Իբրև հաղ Վե Թերաքքը*» կազմակերպության ազդեցությունը մնում էր բավական

¹⁷ Ավելի մանրամասն երիտթուրքական կառավարման ժամանակաշրջանի մասին տե՛ս Գ.Ալև. Турция в период правления младотурок. Москва, 1972:

¹⁸ Ռ. Սահակյան. Կայսրությունից դեպի ազգային պետություն - «Ինքնություն», Երեվան, 1995, էջ 135:

¹⁹ Ավելի մանրամասն բնակական շարժման և իբրև հաղթանակների միջև կապի մասին տես E.J.Zurcher. The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926. Leiden, 1984.

²⁰ Краткий обзор о Турции. Информация о Турции и восточной политике ССР Армении. Прокламация турецкого конгресса в Эрзруме.- ՀՀ նորագույն պատմության պետական արխիվ, ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 16, էջ 9:

նին ուժեղ, ինչի վկայությունն այն էր, որ մինչև 1960-ական թթ. երկիրը դեկադարել են երիտթուրքական շարժման հետ կապված երեք նախագահ, հինգ վարչապետ, մեջլիսի մի քանի նախագահներ, արտաքին և ներքին գործերի նախարարներ: Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը և նրա զինակիցները՝ Իսմեթ Ինյունյուն, Ալի Ֆուադ Ջեբեսուրը, Քյազըմ Կարաբեքիրը, Ալի Ֆեթիհ Օրչարը, Ռամֆ Օրբայը, Ֆեզի Չարքմաքը, Ջելալ Բայարը և ուրիշները հանդիսանում էին *Բոքրիադի* զինվորական վերնախավի երկրորդ էջերնի ներկայացուցիչներ, որոնց Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո հնարավորություն ընձեռվեց գրավել իշխող դիրքեր և ստեղծել նոր պետություն: Բազմաթիվ երիտթուրքական գաղափարախոսներ՝ Ջյա Գյորալփը, Թերիմ Ալփը, Յուսուֆ Աբշուրան, Ահմեդ Աղաօղլուն, Յունուս Նալին, Ֆուադ Հյուրիյուլյուն քեմալական շրջանում ևս նշանակալի դեր էին կատարում երկրի հասարակական-քաղաքական կյանքում:


Թեպետ և, մի կողմից, Քեմալ Աթաթյուրքը խուսափում էր նրանից, որպեսզի իրեն բնութագրեն որպես երիտթուրքերի ժառանգորդ՝ հայտարարելով, որ «ոչ մեր գոյժուններսույունը, ոչ էլ մեր ազգային շարժումը չունեն որևէ ընդհանրություն իբրիհատիզմի հետ», մյուս կողմից, նա գտնում էր, որ իբրիհադականներից ոչ բոլորն էին պատասխանատու Առաջին աշխարհամարտում կատարվածի համար, այլ միայն նրանց «փոքր մի խումբ, որն իր վատ կառավարմամբ ու չարաշահումներով երկիրը հասցրեց կործանման եզրին»²¹: 1923թ-ին «*Հաքիմիեթի Միլլեթ*» թերթին տրված հարցազրույցում Քեմալն ինքը նշում էր. «Մենք բոլորս էլ եղել ենք «*Բոքրիադի*» անդամներ»²²:

Այս համատեքստում չի կարելի չհամսծայնել բուրք հեղինակ Օմեր Հյազըմի այն կարծիքի հետ, որ «Անկարայի քեմալականներն ու Սադնիկի երիտթուրքերն իրենց էությունը նման էին իրար, ունեին նույն մտադրությունները, հետապնդում էին միևնույն նպատակներ, կիրառում էին նույն մարտավարությունը և նույն միջոցները: Անկարայի մարդկանց մեծ մասը «*Բոքրիադ*» կոմիտեի իին անդամներն էին... Կառավարության անդամները մեծ մասամբ ևս երիտթուրքեր են»²³: Ալեմհայտ է, որ քախումը, որը տեղի ունեցավ այդ երկու թեերի միջև 1920-ական թթ. 1-ին կեսին, ոչ այնքան գաղափարների և սկզբունքների պայքար էր, այլ սնձերի միջև հակամարտություն:

²¹ К.Атапурк. Избранные речи и выступления. Москва, 1966, с. 58-59.

²² T.Z.Tunaya. Türkîyede Siyasi Partiler. 1859-1952. İstanbul, 1952. s. 560.

²³ O.Kiazim. L. Aventure Kemaliste. Paris, 1921. p.35: մեջբերվում է քաղ ԴՋ.Կիրակոսյան. Младотурки перед судом истории. Ереван, 1989 , с. 303:



4 II
86786

Հարկ է նշել, որ երիտթուրքական և քեմալական ժամանակաշրջանների միջև ժառանգական կապը ոչ միայն կադրային էր, այլև գաղափարախոսական: Ինչպես նշում է ամերիկյան թուրքագետ Բերնարդ Լյուխը, «Ժրքադարական գաղափարներով Քեմալ Աթաթյուրքը եղել է երիտթուրքերի՝ հատկապես նրանց ազգայնական, պոզիտիվիստական և արևմտականացված թևի ժառանգորդը»²⁴: Դեռևս երիտթուրքերի իշխանության օրոք քննարկման առարկա էին դարձել այն գաղափարները, որոնք ձևավորված ձևով կյանքի կոչվեցին քեմալական շրջանում, ինչպես, օրինակ, ազգային միատարրության հիմքի վրա քաղաքական և պետական համակարգի ստեղծումը, կրոնի քաղաքական դերի սահմանափակումը, կրոնական հաստատությունների աշխարհիկացումը: «Ազգային և աշխարհիկ պետության խղեալը,– գրում է թուրք պատմաբան Թ. Թունայան,– կարող է համարվել *Իթթիհատ վե Թերաքքը* կոմիտեի համոզումները: Այս խղեալը դարձավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի միջոցով Թուրքիայի Հանրապետության բարոյական հենքը»²⁵: Վերջապես, հենց երիտթուրքերի կառավարման տարիներին քաղաքական իշխանության եկավ գիմնոթական վերնախավը, որը սկսեց պարտադրել իր արժեքներն ավելի պահպանողական պաշտոնյա խավին (բյուրոկրատիային):

Չժխտելով այս հանգամանքները՝ հարկ է նշել, որ երիտթուրքերն ի վիճակի չեղան իրականացնել ժամանակակից թուրքական պետության կառուցման խնդիրը, մինչդեռ քեմալականները ավելի հետևողական էին իրենց քաղաքականության և նպատակների իրագործման գործում, ինչպես, օրինակ, հաստատելով ավելի խիստ վերահսկողություն քաղաքական կյանքի նկատմամբ, ստեղծելով ավելի ամուր և հստակ պետական–քաղաքական կառուցվածք:

Քաղաքական համակարգի մոդելի առումով քեմալական վարչակարգը որոշ իմաստով դարձավ իթթիհատական վարչակարգի շարունակությունը: 1908թ–ից մինչև 1918 թ. Թուրքիայում գերիշխող էր մեկ կուսակցությունը՝ «Մյուսթյուն և առաջադիմություն»: Իր էությունը դա գաղտնի ընկերություն էր, ընդ որում, մինչև 1913 թ. միայն նրա խորհրդարանական խմբակցությունն էր կրում կուսակցություն անվանումը: Համաձայն 1913 թ. *Իթթիհատի* նոր կառուցադրության, ամբողջ ընկերությունը հայտարարվեց քաղաքական կուսակցություն, որի գլխավոր մարմինն էր Գլխավոր խորհուրդը՝ գլխավոր նախագահի ղեկավարությամբ, ապա՝ Կենտրոնական կոմիտեն՝

²⁴ B. Lewis. The Emergence of Modern Turkey. London, 1961, p. 286.

²⁵ T. Z. Tunaya. Hürriyetin İlanı. İkinci Meşrutiyetin siyasi hayatına bakışlar. İstanbul, 1959, s. 82.

գլխավոր քարտուղարի ղեկավարությամբ, և խորհրդարանական խմբակ-
ցությունը:

Այն, որ միակուսակցական համակարգի ավանդույթը հանրապետա-
կան թուրքիայում ժառանգվել երիտթուրքական շրջանից, հաստատվում է
այսպիսի երևույթներով, ինչպիսին էին կուսակցական մարմիններում իշ-
խանության կենտրոնացումը, քաղաքացիական ազատությունների արհա-
մարհումը կամ խիստ հսկողության տակ ընտրությունների անցկացումը, ո-
րանք իրենց տեղն էին գտել երիտթուրքական կառավարման օրոք: *Իքթի-
հադը* հաստատել էր իր քաղաքական մենիշխանությունը, որոշում էր երկրի
հասարակական ու քաղաքական կյանքի ուղղվածությունը: Իքթիհադա-
կանների այն պնդումը, որ «թուրք ժողովուրդը բավարար չափով կրթված
չէ», որ երկրում «փոփոխություններն իրականացնելու համար անհրաժեշտ
է ուժեղ և լավ կազմակերպված փոքրամասնության իշխանությունը»²⁶, կի-
սում էին հետագայում նաև քեմալական առաջնորդները:

Բացի այդ, հարկ է նշել, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի
իշխանական առանցքը կազմում էին բանակի բարձրաստիճան սպաները,
և այս ավանդույթը պահպանվեց նաև հանրապետական թուրքիայի քա-
ղաքական կյանքում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ երիտթուրքական ժամանակաշր-
ջանում իշխանության եկավ արդիականացվող զինվորական-քայտրկրա-
տական ընտրանին, «Միություն և առաջադիմություն» կազմակերպությու-
նը դարձավ առաջին արդիական քաղաքական կուսակցությունը թուր-
քիայում, որի կառույցների հիմքի վրա ձևավորվեց քեմալական ազգայնա-
կան շարժումը, և որը նախապատրաստեց Քեմալ Աթաթյուրքի և Հանրա-
պետական-Ժողովրդական կուսակցության ավտորիտար վարչակարգի
հիմքերը՝ ծառայելով որպես մոդել վերջինիս համար: Ինչպես *Իքթիհադի*,
այնպես էլ ՀԺԿ-ի իշխանության շրջաններում թուրքիայում տեսականո-
րեն գոյություն ունեւ խորհրդարանական կառավարման համակարգ, թեև
գործնականում ստեղծվել էր միակուսակցական բռնապետություն: Սա-
կայն, իրենց հերթին, քեմալականներին հաջողվեց դասեր քաղել իքթիհա-
դական փորձից, և իրենց քաղաքականությունն ու բարեփոխումներն իրա-
կանացնելու գործում նրանք գործադրում էին ավելի հետևողական ու
կենտրոնացված ջանքեր, քան թե երիտթուրքերը:

²⁶ H.E.Adivar. Turkey Faces West. New-York, 1973, p. 183.

բ. Թուրքիայի Հանրապետության սահմանադրական կարգը և պետական ինստիտուտների դերն ու նշանակությունը քաղաքական համակարգում 1920–1930–ական թվականներին

Թուրքիայի Հանրապետության կազմավորումը տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1919–1922թթ. Անատոլիայում ծավալված ազգայնական (քեմալական) շարժման ընթացքում և հետևանքով: Շարժման առաջնորդ՝ թուրքական բանակի գեներալ Մուստաֆա Քեմալ-փաշան Ստամբուլում մեջլիսի ցրումից և օսմանյան մայրաքաղաքը Դաշնակիցների զորքերի կողմից գրավումից հետո 1920թ. ապրիլի 23–ին Անկարայում գումարեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (մեջլիս ԹՄԱԺ), որն իրեն հռչակեց թուրք ժողովրդի օրենսդիր ու գործադիր իշխանության գերագույն ներկայացուցիչը, իսկ Մուստաֆա Քեմալ-փաշային ընտրեց ԹՄԱԺ–ի նախագահ ու կառավարության նախագահ²⁷: Դրանով ստեղծվեց Ստամբուլում մնացած սուլթանական կառավարությանը իշխանական այլընտրանքային կենտրոն: Այս 1921թ. հունվարի 20–ին մեջլիսում ընդունվեց «Հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը, որով իրավաբանորեն ամրագրվում էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ որպես երկրի օրենսդրական ու գործադիր իշխանության գերագույն մարմնի դիրքը, և հռչակվում էր ազգի գերիշխանության սկզբունքը:

1922 թվականին, հունական զորքերի ջախջախման և իրենց առջև դրված պատերազմում հաղթելու և թուրքական գերիշխանությունն Անատոլիայի ամբողջ տարածքի նկատմամբ պահպանելու գերխնդրի լուծումից հետո, Անկարայի իշխանություններն կարող էին անցնել պետական նոր կառուցվածքի ստեղծմանը: Այդ ուղղությամբ առաջին քայլը պետք է լիներ սուլթանատի և Ստամբուլի կառավարության խնդրի լուծումը: Քանի որ առջևում Լոզանի խաղաղության բանակցություններն էին, հարկավոր էր վերջնականապես կողմնորոշվել այս հարցում, որպեսզի ապահովվեր Թուրքիայի ներկայացուցչության ամբողջականությունը: Բացի այդ, Քեմալ-փաշան այլևս չէր կարող հաշտվել սուլթանության գոյության հետ, քանի որ նրա համար պետության մեջ իշխանության երկու կենտրոնների համագոյակցումը թե՛ գործնական, թե՛ հոգեբանական տեսակետից անընդունելի էր: 1922թ. նոյեմբերի 1–ին մեջլիսը ընդունեց սուլթան Մեհմեդ VI–ին գահից կեց անելու, խալիֆայության ու սուլթանության անջատման և սուլթանության վերացման մասին օրենքները: Քեմալը չգնաց խալիֆայության վերացմանը՝ հաշվի նստելով

²⁷ А. Шамсутдинов Турецкая Республика. Москва, 1962. с. 12.

այն հանգամանքի հետ, որ Լոզանի կոնֆերանսի ընթացքում Թուրքիան կարող էր շահագործել իր՝ մահմեդական աշխարհի կենտրոն լինելու հանգամանքը Անգլիայի ու Ֆրանսիայի (որոնց զարդարների քնակչության մեծամասնությունը դավանում էր իսլամ) վրա ճնշման լծակներ ունենալու համար. և որ թուրքերի մեծամասնությունը դեռևս պատրաստ չէր այս քայլին:

Թուրքական ազգային պետության հիմքերի ձևավորման գործընթացի տրամաբանական շարունակությունը դարձավ 1923թ. հոկտեմբերի 29–ին Թուրքիայի Հանրապետության հռչակումը և մեջլիսի կողմից Մուստաֆա Քեմալին որպես Հանրապետության առաջին նախագահի ընտրությունը: Չնայած որ արդեն մեջլիսի նախագահի պաշտոնում Քեմալը հանդիսանում էր Թուրքիայի իրական լեգիսլատիվը, բայց Հանրապետության նախագահի պաշտոնը թույլ էր տալիս նրան ստանալ ավելի մեծ իշխանություն, ավելի լայն լեգիտիմություն և ավելի մեծ քաղաքական ու հասարակական աջակցություն: Կազմվեց նաև Հանրապետության կառավարությունը՝ նախագահի հավատարիմ գինակից՝ Իսմեթ-փաշայի գլխավորությամբ:

1924թ. մարտի 3–ին ընդունվում է խալիֆայության վերացման և Օսմանյան դինաստիան Թուրքիայի տարածքից արտաքսելու մասին օրենքները: Եվ, վերջապես, 1924թ. ապրիլի 20–ին ընդունվեց Հանրապետության առաջին Սահմանադրությունը, որն ազդանշում էր քեմալական շարժման և նոր թուրքական ազգային պետության հիմքերի կառուցման փուլի ավարտը:

Սահմանադրությունը բաղկացած էր վեց գլխից և 105 հոդվաներից: Առաջին գլուխն ընդգրկում էր Սահմանադրության ընդհանուր դրույթները: Դրանցում, մասնավորապես, իրենց արտացոլումը գտան քեմալական պետական հայեցակարգի հիմնական դրույթները՝ ազգի գերիշխանության և իշխանությունների միասնականության սկզբունքները: Հայտարարվում էր, որ գերիշխանությունն անվերապահորեն պատկանում է ազգին, որն իրականացվում է ազգի միակ ներկայացուցիչ հանդիսացող Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից, հռչակվում էր, որ օրենսդիր և գործադիր իշխանությունը մարմնավորված են և կենտրոնացած Ազգային մեծ ժողովում, որը ինքն է իրականացնում օրենսդիր իշխանությունը, իսկ գործադիր իշխանությունը՝ իր միջից ընտրված Հանրապետության Նախագահի և նրա կողմից նշանակվող Նախարարների Խորհրդի միջոցով²⁸: Քեմալականները մերժեցին արևմտյան պետական կարգերի մեջ կիրառվող իշ-

²⁸ Конституции государств Ближнего и Среднего Востока. Москва, 1956, с. 503.

խանությունների տարանջատման սկզբունքը: Մուստաֆա Քեմալի կարծիքով, «այն իշխանությունն ու այն ուժը, որը մենք անվանում ենք «ազգային կամք», չի կարող բաժանվել կամ բախշվել»²⁹: Աբաթյուրքը նաև շեշտում էր այն միտքը, որ Թուրքիան տարբերվում է արևմտյան պետություններից իր պետական կարգով. «Միայն մեզ մոտ խորհրդարանն ունի և՛ օրենսդիր. և՛ գործադիր իրավասություններ»³⁰: Քեմալ Աբաթյուրքը, ըստ էության, գիտակցում էր, որ Թուրքիայում իշխանությունների տարանջատման սկզբունքը կարող է բերել բազում բայությունների և տեղական պայմաններում այդ սկզբունքը չէր աշխատելու: Ժողովրդավարական ավանդույթների ու նորմերի լիակատար բացակայության պայմաններում հնարավոր չէր ձևավորել իշխանության մի քանի ճյուղ, որոնք ներառնակորեն կաշխատեին իրար հետ: Թերևս, այս դրույթն արձագանք էր իշխող վերնախավի այն մտավախությանը, որ իշխանությունների տարանջատման արևմտյան սկզբունքի կիրառումը Թուրքիայում կհանգեցնէր պետական իշխանության ամբողջականության խախտմանը և երկրում քաղաքական ապակայունացմանը:

Սահմանադրության երկրորդ գլխում խոսվում էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի դերի և լիազորությունների մասին: ԹՄԱԺ-ը ընտրվում էր ժողովրդի կողմից չորս տարին մեկ անգամ: Սկսած 1920 թ-ից մինչև 1939թ. անց են կացվել վեց խորհրդարանական ընտրություններ: Դրանցից վաղաժամկետ են հանդիսացել միայն 1923 թ. ընտրությունները: Այս փաստը վկայում է, որ թուրքական քաղաքական համակարգը ղեկավարվում էր քաղաքական կայունության պահպանման և որոշակի ավանդույթների արձատավորման սկզբունքներով: Թեև, լիարկե, էական դեր էր կատարում միակուսակցական համակարգի գործունը, ինչը թույլ էր տալիս խուսափել խորհրդարանական ճգնաժամերից:

Այսպես թե այնպես, Թուրքիայի Ազգային մեծ ժողովին վերապահված էր կարևոր դեր երկրի քաղաքական ղեկավարության կողմից: Հարկ է նշել, որ Քեմալ Աբաթյուրքի և Հանրապետական-Ժողովրդական կուսակցության մենիշխանության հաստատումը սկսվեց 1923 թ. մեջլիսի նկատմամբ նրանց կողմից վերհսկողության սահմանումով: Աբաթյուրքը միշտ էլ ձգտում էր օրինական բնույթ հաղորդել իր քայլերին և այդ պատճառով մեջլիսի աջակցության կարիք էր զգում: Չի կարելի չնշել նաև, որ 1946-

²⁹ Н.Сокольский. Очерки современной Турции. Тбилиси, 1923, с. 35.

³⁰ Atatürkten düşünceler. Ankara. s.27.

1950 թթ. քաղաքական համակարգի փոփոխությունը Թուրքիայում իրականացվեց հենց խորհրդարանական պայքարի շրջանակներում:

Ազգային մեծ ժողովի վարույթին վերաբերում էին «օրենքների ընդունումը, կրապարակումը, փոփոխությունը, մեկնությունը և չեղյալ հայտարարումը արտասահմանյան պետությունների հետ պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, պատերազմի հայտարարումը և խաղաղության կնքումը: պետական բյուջեի մասին օրենքների քննարկումը և ընդունումը: մեծատիրությունների և կոնցեսիաների մասին պայմանագրերի հաստատումը և չեղյալ հայտարարումը: մասնակի և լրիվ համաներումը: պատիժների մեղմացումը կամ փոխարինումը, դատավճիռների գործողության կասեցումը: դատարանների կողմից ընդունված մահավճիռների հաստատումը»³¹: Խորհրդարանը իրոք օժտված էր լայն լիազորություններով: Այն, Մուստաֆա Քեմալի կարծիքով, պետք է պահի ամբողջ իշխանությունն իր ձեռքում և քույլ չտա սեփական լիազորությունների որևէ սահմանափակում: Նա նաև դեմ էր, որպեսզի Հանրապետության նախագահը կամ կառավարությունն ունենան մեջլիսը ցրելու իրավասություն. «Ոչ ոք չունի ձեռք արձակելու իրավունք»³²: Իհարկե, սա գուտ դեկլարատիվ հայտարարություն էր. քանի որ նույն Հանրապետության նախագահը լիովին վերահսկում էր խորհրդարանը իր կողմից ղեկավարվող կուսակցական մեծամասնության միջոցով, հետևաբար, նա կարող էր այնտեղ անցկացնել ցանկացած որոշում, այդ թվում և ինքնալուծարման մասին³³:

Վերոհիշյալ հանգամանքով էլ պայմանավորված էր նաև այն, որ մեջլիսը, որը կոչված էր վերահսկելու կառավարության գործունեությունը և քննարկելու նրա գործողությունները, սահմանափակվում էր լոկ դյանց հավանությամբ: Եթե առաջին մեջլիսում գոյություն ունեին մի քանի խմբավորումներ, ընթացում էին իրոք լուրջ բանավեճեր և քննարկումներ, ապա երկրորդ մեջլիսն արդեն ավելի վերահսկելի էր հանրապետության նախագահի կողմից այնտեղ ճնշող մեծամասնություն կազմող Հանրապետական-Ժողովրդական կուսակցության խմբակցության միջոցով: Փաստորեն 1920-1930-ական թվականների ընթացքում Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հանդիսանում էր գործադիր իշխանությանը կից մարմին, որը միա-

³¹ Նույն տեղում, էջ 506:

³² К. Ататюрк. Избранные речи и выступления. Москва, 1966, стр. 174.

³³ Ազգային մեծ ժողովի արտահերթ ընտրությունները կարող էին անցկացվել միայն այն դեպքում, եթե մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը մեջլիսի անդամների բացարձակ մեծամասնությունը որոշում ընդուներ, որ պետք է անցկացվեն նոր ընտրություններ, ինչպես դա, օրինակ, տեղի ունեցավ 1923 թ, հուլիս-օգոստոս ամիսներին, երբ առաջին ՄԱԺ-ը որոշում կայացրեց իր ինքնալուծարման մասին:

ճայն հաստատում էր պետության ղեկավարության և կուսակցական ապարատի կողմից պատրաստված որոշումները: Կարծում ենք, որ քեմալական Թուրքիայի դեպքում կիրառելի է հայտնի ամերիկյան քաղաքականագետ Ս.Հանթինգտոնի այն տեսակետը, որ «բազմաթիվ ժամանակակից երկրներում օրենսդիր գործառույթը տեսականորեն գտնվում է մեծ ներկայացուցչական ժողովի (խորհրդարանի) ձեռքում: Սակայն գործնականում այն իրականացվում է մարդկանց համեմատաբար փոքր մի խմբի կողմից, որը իրագործում է իր որոշումներն իշխանության գործունեության բոլոր ոլորտներում»³⁴: Այսպիսի վիճակը պետք է դիտել քեմալական, քանզի ուժեղ մեջլիս՝ որպես ուժեղ նախագահի ու կառավարության հակակշիռ այս ժամանակաշրջանում գոյություն ունենալ չէր կարող, եթե այդ խորհրդարանն ուներ միակուսակցական կազմ՝ բաղկացած լինելով հանրապետության նախագահի կողմից ղեկավարվող, երկրում միակ կուսակցության ներկայացուցիչներից: ՀԺԿ-ի ղեկավարությունը խստորեն վերահսկում էր մեջլիսում իր խմբակցության գործունեությունը. պատգամավորները հիմնականում հանդիսանում էին ՀԺԿ-ի կոմիտեներում առաջադրված թեկնածուներ, որոնց հաստատում էր կուսակցության բարձրագույն ղեկավարությունը, իսկ մեջլիսում նիստերի տևողությունը զբաղեցնում էր շատ քիչ ժամեր, ամեն մի օրենքի կամ որոշման քննարկումն ու հաստատումը երկու-երեք րոպեի գործ էր:

Վերևում արդեն նշվեց, որ Սահմանադրությամբ գործադիր իշխանությունը դրված էր Ազգային մեծ ժողովի ենթակայության տակ: Հանրապետության նախագահը ընտրվում էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավորների քվից չորսամյա ժամկետով³⁵: Թերևս, ոչինչ չէր խանգարում Մուստաֆա Քեմալին զնալ համաժողովրդական նախագահական ընտրությունների՝ հաշվի առնելով նրա հեղինակությունը ժողովրդի մեջ և թուրքերի սովորույթը, որպես կանոն, հնազանդվել իրենց տիրակալին: Սակայն, դրանով ճաք կառաջանար պետական իշխանության մասին քեմալիստական հայեցակարգի մեջ, որտեղ իշխանությունը կենտրոնացվում է մեկ մարմնի՝ ՄԱԸ-ում, ուստի նա էլ պետք է ընտրի պետության ղեկավարին: Բացի այդ, Աբաբյուրքը նախընտրում էր նախագահի պաշտոնում ընտրվելու ավելի ոլորին և վստահելի ձևը, քանի որ մեջլիսում բացարձակապես բոլոր պատգամավորները ընտրվում էին նրա համաձայնությամբ:

³⁴ S. Huntington. Political Order in Changing Societies, p. 115.

³⁵ Նախագահի պաշտոնավարության ժամկետը սահմանափակված չէր: Конституции государств Ближнего и Среднего Востока., с. 507.

Սահմանադրությամբ Հանրապետության նախագահին տրվող լիազորությունները այնքան էլ լայն չէին: Պետության ղեկավարը չուներ այն իրավունքները, որոնք սովորաբար ունի նախագահը պրեզիդենտական կառավարման համակարգում: Նախագահին վերապահված էր վարչապետի նշանակումը և վերջինիս ներկայացմամբ՝ նախարարների նշանակումն ու ներկայացումը մեջլիսի հաստատմանը, ինչպես նաև կառավարության ընդհանուր գործունեության ղեկավարումը: Երկրին սպառնացող որևէ վտանգի դեպքում արտակարգ դրության հայտարարումը: ղեսպանների նշանակումը³⁶: Սակայն այս դրույթները չեն վկայում քննարկվող ժամանակաշրջանում նախագահի իրական դերի և կշռի մասին: Հենց նախագահն էր հանդիսանում իշխանական ամբողջ բուրգի գագաթը: Կառավարության կազմի մեջ մտնում էին միայն նախագահին հավատարիմ մարդիկ, իսկ եթե նրանցից որևէ մեկը, ինչպես, օրինակ, Իսմեթ Ինյունյուն 1937թ.-ին համարձակվում էր դժգոհություն հայտնել, նա անմիջապես հեռացվում էր իր պաշտոնից:

Սահմանադրության այս կետերը, համաձայն որոնց Հանրապետության նախագահը չուներ օրենսդրական նախաձեռնության իրավունք, որը պատկանում էր Ազգային մեծ ժողովի և Նախարարների Խորհրդի անդամներին³⁷, և նրա բոլոր հրամանագրերը պետք է պարտադիր կերպով հաստատվեին վարչապետի և համապատասխան նախարարի կողմից³⁸, կարծես թե ընդգծում էին Թուրքիայի խորհրդարանական հանրապետություն լինելու հանգամանքը, մեջլիսի և նրա կառավարության գերակայությունը պետական համակարգում: Բայց նախագահը, ըստ էության, տիրապետում էր մեծ իշխանության, որի դեմ քաղաքական համակարգում հակակշիռներ այդ տարիներին չկային: Նմանապես Սահմանադրության և քաղաքական իրականության միջև տարբերությունը դրսևորվում էր Թուրքիայի Զինված Ուժերի գերագույն հրամանատարության մասին դրույթում. պաշտոնապես այն իրականացնում էր Ազգային մեծ ժողովին, իսկ Հանրապետության նախագահը հանդիսանում էր դրա ներկայացուցիչը³⁹: Բայց փաստորեն մեջլիսը որևէ գործնական առնչություն Զինված Ուժերի ղեկավարման հետ չուներ, և այն իրականացվում էր նախագահի կողմից:

Այսպիսով, եթե 1923թ. Թուրքիայում իրոք գործում էր ՄԱԺ-ի կառավարության համակարգը, ապա Հանրապետության հռչակմամբ սկսվեց Ա-

³⁶ Նույն տեղում, էջ 508–509:

³⁷ Նույն տեղում, էջ 504:

³⁸ Նույն տեղում, էջ 508:

³⁹ Նույն տեղում, էջ 508:

քաթյուրքի և Ինյոնյուի փաստացի նախագահական կառավարման համակարգի շրջանը: Ավելին, երկուսն էլ հանդիսանում էին ավելի ուժեղ առաջնորդներ, քան դա թույլ է տալիս նախագահական կառավարման համակարգը: Հանրապետության նախագահն ամենևին էլ չէր կատարում պետության ղեկավարի գուտ ձևական գործառույթները, ինչպես դա ընդունված է խորհրդարանական պետական համակարգ ունեցող երկրներում: Ե՛վ Քեմալ Աթաթյուրքի, և՛ Իսմեթ Ինյոնյուի օրոք Հանրապետության նախագահի պաշտոնը լիովին համարժեք էր Թուրքիայի իրական առաջնորդի դերին: Փաստորեն «Հավերժական Շեֆ»՝ Քեմալ Աթաթյուրքի և «Ազգային Շեֆ»՝ Իսմեթ Ինյոնյուի⁴⁰ ժամանակաշրջանները հանդիսանում էին պրեզիդենտական հանրապետության շրջան: 1920–ական թթ–ից մինչև 1950թ. ամբողջ պետական ու կուսակցական իշխանությունը երկրում կենտրոնացված էր նախագահի ձեռքում: Մյուս կողմից, պետք է նշել, որ նախագահի հանգուցային դերը քաղաքական համակարգում պայմանավորված էր հիմնականում այդ պաշտոնը զբաղեցնող անձանց անհատականությամբ: Ո՛չ Աթաթյուրքը, ո՛չ էլ Ինյոնյուն չգնացին նախագահի քացարձակ իշխանության ինստիտուցիոնալիզացմանը: Նման միտման մասին վկայում է այն փաստը, որ, երբ 1930թ–ին քաղաքական վերնախավում և մամուլում մի պահ (կապված այն ժամանակ Լիբերալ Հանրապետական կուսակցության կողմից վարչապետ Իսմեթ–փաշայի հասցեին հնչող քննադատության և նրա հնարավոր հրաժարականի հետ) խոսք գնաց գործադիր իշխանության ամերիկյան մոդելին՝ նախագահի և վարչապետի պաշտոնների համատեղմանն անցնելու մասին, Մուստաֆա Քեմալը պատասխանեց այդ առաջարկին. «Ամերիկյան համակարգը մեր երկրում կիրառելի չէ: Ես երբևէ չեմ մտածել Հանրապետության նախագահի ու վարչապետի պաշտոնները միաժամանակ զբաղեցնելու մասին: Եվ չեմ էլ մտածելու...»⁴¹:

Մեր կարծիքով, այն հանգամանքը, որ Թուրքիայում երկրի գերագույն ղեկավարը՝ հանրապետության նախագահը, կանգնած էր քաղաքական համակարգի վերևում, հարկ է գնահատել որպես նորմալ երևույթ մե՞տ երկրների քաղաքական զարգացման շրջաններում: Երեսուն տարով երկրում հաստատվել էր գործադիր իշխանության, ավելի ճիշտ մեկ մարդու՝

⁴⁰ Այսպես է ընդունված անվանել հանրապետության առաջին և երկրորդ նախագահներին բորթական պատմագրության մեջ և մամուլում:

⁴¹ I.Arar. Atatürk'ün günümüz olaylarına da ışık tutan bazı konuşmaları. "Belleten", c. XLV, N 177, Ocak 1981. s. 211

հանրապետության նախագահի լիակատար վերահսկողությունը քաղաքական համակարգի գլխավոր տարրերի՝ խորհրդարանի, կառավարության, կուսակցության և բանակի վրա: Իշխանության մեծ կենտրոնացումը, ըստ երևույթին, արդարացված էր բուրքական հասարակության մեջ բարեփոխումների, արդիականացման քաղաքականության անհրաժեշտությամբ:

Հանրապետության կառավարությունը՝ Նախարարների Խորհուրդը, ինչպես արդեն նշել ենք, նշանակվում էր հանրապետության նախագահի կողմից մեջլիսի անդամների կազմից, ինչից հետո այն մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնում էր իր գործունեության ծրագիրը Ազգային մեծ ժողովին՝ վստահության քվե ստանալու համար⁴²: Դա, ըստ էության, ևս ձևակերպում էր: Որևէ կառավարություն Արաբյուրբի և Ինյոնյուի իշխանության ժամանակաշրջանում մեջլիսում անվստահության քվե չի ստացել⁴³, վարչապետների և կաբինետների փոփոխությունը տեղի էր ունենում միայն հանրապետության նախագահի կամքով, երբ նա լուծում էր որոշակի քաղաքական խնդիրներ: Վարչապետի պաշտոնը, ինչ-որ առումով, նախագահի համար ծառայում էր որպես վահան, որին նա ուղղում էր վերնախավի և բնակչության դժգոհությունը երկրի տնտեսական վիճակի կապակցությամբ կամ լիցքաթափում էր քաղաքական կյանքը երկրում ապակայունացման վտանգից խուսափելու համար, ինչպես դա կատարվեց 1924թ-ին. երբ հրաժարական տվեց Իսմեթ-փաշան, իսկ 1925թ-ին՝ Ալի Ֆեթհին, կամ էլ 1937թ-ին, երբ ազատվեց վարչապետի պաշտոնից մույն Իսմեթ Ինյոնյուն:

Սահմանադրության չորրորդ գլուխը վերաբերում է դատական իշխանության: Դատարանը Թուրքիայի Հանրապետությունում հռչակվում էր անկախ, դատական որոշումներն ու վճիռները ո՛չ մեջլիսը, ո՛չ էլ կառավարությունն իրավասու չէին փոխել⁴⁴: Սակայն իրականում դատարանները ևս ենթակա էին հանրապետության քաղաքական ղեկավարության կամքին, ինչի օրինակ կարող են ծառայել 1926 թ-ին տեղի ունեցած Իզմիրի դավադրության գործի հետ կապված դատավարությունները, որոնք կյում էին որոշակի պատվերի բնույթ և անցան արդարադատության կարգի խախտմամբ:

⁴² Конституции государств Ближнего и Среднего Востока., с. 509.

⁴³ Այստեղ քաղաքային կարող են կազմել 1924թ. իրադարձությունները, երբ առաջադիմական ընդդիմությունը մեջլիսում բարձրացնում էր Իսմեթ-փաշայի կաբինետին անվստահություն հայտնելու հարցը, սակայն մեծամասնությունը մերժեց այն:

⁴⁴ Նույն տեղում, էջ 510-511:

Հինգերորդ գլուխն անդրադառնում է Թուրքիայի քաղաքացիների իրավունքներին: Հռչակվեցին բոլոր թուրքերի հավասարությունը օրենքի առաջ, անհատի անձեռնմխելիությունը, խղճի, մտքի, խոսքի, մամուլի, տեղաշարժման, աշխատանքի, սեփականության, հանրահավաքների, միավորումների ստեղծելու իրավունքներն ու ազատությունները⁴⁵: Մակայն կառավարությունը հարկ եղածի դեպքում, օրինակ՝ պատերազմի կամ նրա սպառնալիքի, խռովության, հայրենիքի կամ հանրապետության դեմ դավադրության կազմակերպման դեպքերում, վերապահում էր իրեն անհատի անձեռնմխելիությունը, իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու կամ ժամանակավորապես դադարեցնելու լիազորությունը⁴⁶: Այս կետի կիրառումը դարձավ քեմալական ժամանակաշրջանի համար ոչ թե բացառություն, այլ օրինաչափություն: Մասնավորապես, սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինակ կարող է ծառայել 1925թ. մարտի 4-ին մեջլիսում ընդունված «Կարգուկանոնի պահպանման մասին» օրենքը, որով իշխանությունները լայն և բացառիկ լիազորություններ էին ստանում: Օրենքի 1-ին կետում ասվում էր. «Կառավարությունը սեփական մասնաձեռնությամբ իրավասու է մախազախի բույլատրությունը ստանալուց հետո պայքարել հետադիմական բնույթ կրող, խռովություն ստղող կամ դրող, կամ էլ հասարակական կարգին, երկրի անդրդրին և անվտանգությանը վնաս հասցնող բոլոր կազմակերպությունների, ելույթների, գործողությունների ու տպագիր հրատարակումների դեմ: Կառավարությունը իրավասու է հանձնել տվյալ գործողությունները կատարած անձանց Անկախության դատարաններին»⁴⁷: Օրենքը գործեց իր ընդունումից հետո մոտ երկու տարի և փաստորեն հիմք ծառայեց ամբողջ քաղաքական ընդդիմության ճնշման և ջախջախման համար: Օգտագործելով այն՝ կառավարությունը 1925թ. մայիս-հունիս ամիսներին արգելեց Առաջադիմական-Հանրապետական կուսակցության գործունեությունը և փակեց բոլոր ընդդիմադիր թերթերը՝ «Թեհիլիլ Է-ֆըյար», «Իսթիքլալ», «Ալ-դընլըր», «Թանիմ»⁴⁸: Հենվելով այդ օրենքի վրա՝ Անկախության դատարանները երկու տարվա ընթացքում մահվան դատապարտեցին մոտ 600 մարդու⁴⁹:

⁴⁵ Նույն տեղում, էջ 512-513:

⁴⁶ Նույն տեղում, էջ 514-515:

⁴⁷ Düstür. C. 6, s. 144, մեջբերվում է ըստ М.Гасратян. Курды Турции в новейшее время. Ереван, 1990, с. 89:

⁴⁸ Ş. S. Aydemir. Tek Adam. C. 3, s. 229.

⁴⁹ S. Yerasimos. Tek Parti Dönemi.- I.C. Schick ve E. Tonak (derl.). Geçiş Sürecinde Türkiye. İstanbul, 1998, s.99.

Հետագայում Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները վերաբերում էին իսկա՛նք հանրապետության պաշտոնական կրոն հայտա-
բարոյ հռո՛ղվածի վերանայմանը (1928թ.), երբ բուրքական պետությունը
հռչակվեց հանրապետական, ազգային, ժողովրդական, էտատիստական,
աշխարհիկ և հեղափոխական; կանանց ընտրական իրավունք տրամադ-
րելու հռո՛ղվածի (1934թ.) և քե՛նայիզմի հայտնի վեց սկզբունքները ամրագ-
րող հռո՛ղվածի (1937թ.) մուտքին⁵⁰:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ ձևականորեն Թուրքիան խորիրոչա-
րանական հանրապետություն էր, քանի որ, ըստ Սահմանադրության, մա-
խազահն ու կառավարությունը ընտրվում կամ նշանակվում էին մեջլիսի
կողմից: Սակայն իրականում և՛ Սահմանադրության, և՛ հանրապետու-
թյան գլխավոր պետական ինստիտուտների դերը, տեղը և կշիռը պայմանա-
վորված են եղել երկրի առաջնորդների անձերով ու կամքով և իշխող կու-
սակցության դիրքերով:

Դրա հետ մեկտեղ չի կարելի ժխտել այն հանգամանքը, որ 1924թ. ըն-
դունված Սահմանադրությունը ունակ եղավ գործել և՛ միակուսակցական հա-
մա՛նակարգի պայմաններում (մինչև 1946թ.), և պառլամենտական ժողովրդա-
վարությանն անցման փուլում (1946–1960թթ.), ինչը վկայում է քե՛նայա-
կանների որդեգրած սահմանադրական կարգերի ճկունության և իրավի-
ճակին համարժեք լինելու մասին:

Ինչ վերաբերում է ևս մեկ կարևոր քաղաքական ինստիտուտին՝ ընտ-
րությունների համակարգին, ապա այն մինչև 1946թ. գործում էր փաստո-
րեն, որոշ փոփոխություններով, 1877թ. ընդունված ընտրական կանոնադ-
րության հիման վրա: Ընտրությունները տեղի էին ունենում երկաստիճան
փուլով՝ սկզբից Հանրապետության քվեարկության իրավունք ունեցող քա-
ղաքացիներն ընտրում էին 50 000 ընտրիչներին, որոնք այնուհետև ընտ-
րում էին այդեն Ազգային մեծ ժողովի պատգամավորներին⁵¹: Մեջլիսի
պատգամավորները ընտրվում էին մեկ ընտրատարածքից, այսինքն՝ գոր-
ծում էր մեծամասնական ընտրական համակարգ:

Մինչև 1934թ. ընտրական իրավունք ունեին միայն բուրք տղամարդիկ՝
սկսած 18 տարեկան հասակից: Ընտրվելու իրավունք ունեին 30 տարեկան
տղամարդիկ, եթե նրանք չեն եղել դատված, չէին գտնվում օտարերկրյա
ծառայության մեջ և անգրագետ չէին: 1934թ. նույն իրավունքները տարած-

⁵⁰ Конституции государств Ближнего и Среднего Востока, с. 503.

⁵¹ Թուրքիայի ՄԱԺ ի պատգամավորի թեկնածու գրանցվելու համար ընտրական օրենքը պահանջում էր ԺԺԿ-ից ներկայացնել այդ կուսակցության անդամության մասին վկայական:

վեցին մաս թուրք կամանց վրա: Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 22 տարեկանը լրացած թուրքերը (1934թ-ից հետո մաս թրքուհիները), պատգամավոր կարող էին ընտրվել 30 տարեկանին հասած յուրաքանչյուր թուրք (1934թ-ից հետո մաս թրքուհի)⁵²:

1920-1930-ական թվականների Թուրքիայում ընտրական համակարգն ամենևին էլ չէր հանդիսանում քաղաքական իշխանության ձևավորման մեխանիզմ: Մինչև 1950թ. Թուրքիայում կիրառվող ընտրությունների պրակտիկան, ըստ էության, գրոյի էր հավասարեցնում Հանրապետության Սահմանադրության մեջ հռչակվող ժողովրդական իշխանության գաղափարը: Ընտրողներն էլ, ընտրիչներն էլ միայն հաստատում էին պատգամավորության թեկնածուների այն ցուցակը, որն իրենց ներկայացնում էր Հանրապետական-Ժողովրդական կուսակցության ղեկավարությունը: 1927 թվականից մինչև 1946 թվականը ընկած ժամանակահատվածում մեջլիսի պատգամավորների մոտ 2/3-ը անընդիստ վերընտրվել է⁵³, այսինքն չժԿԿ-ի կողմից հայտավորված թեկնածուները երբեք չեն ենթարկվել այն ռիսկին, որին ենթարկվում են պատգամավորները ազատական ժողովրդավարություն դավանող երկրներում: Թուրք հեղինակ Նեշեթ Հալի Աթայը նշում է. «Երկրում ընտրությունների փորձը ցույց տվեց, որ ոչ մի կազմակերպություն կամ խումբ, կամ էլ անձ ի վիճակի չէ շահել դրանք Առաջնորդի (Մուստաֆա Քեմալի-Ս.Բ.) դեմ»⁵⁴:

Հետևաբար՝ այդ տարիներին հաստատված միակուսակցական համակարգի պայմաններում ընտրություններն ավելի շատ մեման էին նշանակումների, քան թե իսկական ընտրությունների և դրանք որևէ կերպով չէին ազդում երկրի քաղաքական իրավիճակի վրա՝ ծառայելով գոյտ քարոզական նպատակների կենսագործմանը: Իշխող կուսակցության հաղթանակն այսպիսի ընտրություններում կանխորոշված էր: Իշխանությունը փաստորեն ընտրում էր ինքն իրեն:

դ. Քաղաքական կուսակցությունները Թուրքիայում 1920-1930-ական թվականներին

Ինչպես հայտնի է, ժամանակակից քաղաքականության անբաժանելի քաղադրիչը հանդիսանում են քաղաքական կուսակցությունները և նրանց դերը քաղաքական համակարգի ձևավորման, զարգացման և կառավար-

⁵² Конституции государства Ближнего и Среднего Востока. Москва, с. 504.

⁵³ Նույն տեղում, էջ 194:

⁵⁴ N. H. Atay. Büyük Meclis ve İnkılâp. Ankara, 1944, s. 173; մեջբերվում է ըստ F. Frey. The Turkish Political Elite., p. 121:

ման հարցում այս առումով դժվար է գերազնահատել: Կարելի է համաձայնել Ս. Հանթինգտոնի՝ կուսակցական համակարգին վերաբերող այն բնութաման հետ, որ «քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգը հանդիսանում են քաղաքական կյանքի մեջ մասնակցության ընդլայնման և կազմակերպման համար հիմնական միջոցը»⁵⁵: Թուրք պատմաբան Թարըք Թունայայի կարծիքով, «քաղաքական կուսակցությունը ազգի զարկերակը զգալու և նրան դեկավարելու համար ստեղծված քաղաքական ուժ է»⁵⁶: Սրանով, իհարկե, քաղաքական կուսակցությանը վերաբերող բնութագրումները չեն սպառվում. բայց, կայող ենք եզրակացնել, որ կուսակցությունը քաղաքական իշխանության նվաճման, պահպանման և իրականացման հիմնական միջոցն ու գործիքն է, ինչը վառ կերպով այտառալույտեց քեմալական Թուրքիայի օրինակով:

Ազգայնական շարժման առաջին օրերից ի վեր Մուստաֆա Քեմալ֊փաշային ամիրաժեշտ էր ունենալ մեջլիսում համախմբված մեծամասնություն, այսինքն, հենարան ի դեմս քաղաքական կուսակցության: Դեռևս 1920թ. փետրվարի 2֊ին Թալեաթ֊փաշային Բեռլին ուղարկված իր մի նամակում Քեմալը գրում էր, որ աշխատելու է ստեղծել մեջլիսում ուժեղ մի կուսակցություն, որը կդեկավարի կառավարության գործունեությունը⁵⁷: Թուրքիայի առաջին Ազգային մեծ ժողովում գոյություն ունեին մի քանի խմբավորումներ՝ «Իրավունքների պաշտպանության խումբ», «Իրավունքների պաշտպանության երկրորդ խումբ», «Բարենորոգում», «Անկախություն». որոնցից ոչ մեկը չուներ կայուն մեծամասնություն: Առաջին մեջլիսը քավականին տարաբնույթ մի մարմին էր: Քըլլը Ալին տալիս է, օրինակ, այդ մեջլիսի հետևյալ բնութագիրը. «Առաջին Ազգային մեծ ժողովը եղել է զանազան տարրերից բաղկացած մի աշխարհ: Այստեղ կարելի էր գտնել ֆեետրով, քրոյական և չերքեզական ազգային տարազներ հագած, բժիշկ, դեղբարան, հրամանատար, ուլեմա, դատավոր, դերվիշ, շեյխ, փաստաբան, փոստային ծառայող, փաշա, քեյ, աղա, հոջա, հասարակության ամեն ձևի ու տեսակի մարդկանց և զբաղմունքներ»⁵⁸: Սեփական հենարանն այդ մեջլիսում ունենալու նպատակով 1921թ. մայիսին Մուստաֆա Քեմալը կազմավորեց Իրավունքների պաշտպանության ընկերությունների խումբը, որը, սակայն, բավարար ամուր դիրքեր և ուժ չուներ Քեմալի ծրագրերի իրագործման համար: Ավելին, չուտով մեջլիսում ձևավորվեց Իրավունքների

⁵⁵ S. Huntington. Political Order in Changing Societies, p. 398.

⁵⁶ T. Z. Tunaya. Türkiye'de Siyasi Partiler. 1859-1952, s. 9.

⁵⁷ İ. Tekeli, S. İlkin. Kurtuluş Savaşında Talât Paşa ile Mustafa Kemal'in mektuplaşmaları. - "Belleten", c. XLIV, N 174, Nisan 1980, s. 327.

⁵⁸ K. Ali. Kılıç Ali hatıralarını anlatıyor. s. 67.

պաշտպանության երկրորդ խումբը՝ որպես Մուստաֆա Քեմալի ընդդիմություն⁵⁹:

1923թ. հունվարի 6-ին Քեմալը հրապարակեց վերոհիշյալ ընկերությունների հիմքի վրա ժողովրդական կուսակցության⁶⁰ ստեղծման մասին հռչակագիրը. ապա ապրիլի 8-ին հրապարակվեցին կուսակցության մալանական ծրագրային դրույթներ համարվող «Ինը սկզբունքները»⁶¹: Խոսելով ԺԿ-ի առաքելության մասին՝ Քեմալը շեշտում էր. «Ժողովրդական կուսակցությունը Թուրքիային ժամանակակից աշխարհի մեջ մտցնելու և այնտեղ նրա վերելքն ապահովելու համար պարտավորված հաստատական կուսակցություն է»⁶²: 1923թ. գարնան-ամռանը Մուստաֆա Քեմալը շրջում էր երկրում և բացատրում էր նորաստեղծ կուսակցության անդամներին. «Պահպանեք ձեր կազմակերպությունը: Արտաքին թշնամին այլևս չկա, բայց պատերազմը չի վերջացել: Երկիրը լի է դավաճաններով: Տարածեք ձեր կազմակերպությունը, կանգնեք իմ կողքին... Դուր՝ ժողովրդական կուսակցությունը, պետք է դեկավարեք մեր Թուրքիան»⁶³: Այսպիով՝ հենց սկզբից ժողովրդական կուսակցությանը վերապահվում էր բացառիկ դեր երկրի քաղաքական համակարգում:

Հարկ է նշել, որ ԺԿ ի ստեղծումն մի քաղաքական գործողություն էր՝ մեջլիսի վրա լիակատար վերահսկողություն հաստատելու համար: Ավելի կառավարելի ու հնազանդ մեջլիս ձևավորելու համար անհրաժեշտ էր ունենալ մի հուսալի քաղաքական հենարան, որն էլ դարձավ ժողովրդական կուսակցությունը: 1923թ. հուլիսին-օգոստոսին կայացած Թուրքիայի երկրորդ Ազգային մեծ ժողովի ընտրություններում ԺԿ-ը 283 տեղից ստացավ 263 տեղ, ընդ որում, ընտրություններից առաջ Քեմալի կողմից հաստատված բոլոր թեկնածուները պարտավոր էին ստորագրել ԺԿ-ի «Ինը

⁵⁹ Ազգայնական շարժման ընթացքում այս խումբը հանդես էր գալիս Մուստաֆա Քեմալի՝ որպես բանակի գերագույն հրամանատարի իր քաղաքական պաշտոններից հրաժարականի, ապա սուլթանության և խալիֆայության միասնական պահպանման օգտին:

⁶⁰ 1924թ-ից այն վերանվանվեց Հանրապետական-Ժողովրդական կուսակցություն:

⁶¹ Դրանց մեջ խոսվում էր ազգի գերիշխանության սկզբունքի, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ որպես ազգի իշխանության միակ ներկայացուցչի, երկրի անվտանգության և խաղաղության ապահովման պարտականության, դատական ու ֆինանսական համակարգերի բարեփոխման, գյուղատնտեսության վերակառուցման, զինվորականության նյութական վիճակի բարելավման, պետական հիմնարկությունների աշխատանքի կատարելագործման, մասնավոր ձեռնարկատիրության խրախուսման մասին:

⁶² Atatürk'ün Söylev ve Demeçleri. C. 2. Ankara, 1959, s. 189.

⁶³ H.C.Armstrong. Grey Wolf, p. 232.

սկզբունքները» տակ⁶⁴: Այս ընտրությունների միջոցով քեմալականները քաղաքական ասպարեզից դուրս մղեցին «Իրավունքների պաշտպանության ընկերությունների» ընդդիմադիր երկրորդ խումբը»⁶⁵ և ամրապնդեցին իրենց դիրքերը:

Հանրապետական-ժողովրդական կուսակցության ձևավորումը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. ա) կուսակցական կառույցների ու ասպարատի կազմավորումը, բ) պետական և կուսակցական իշխանության կենտրոնացումը, գ) գաղափարախոսության մշակումը, դ) կուսակցության գերակայության հաստատումը պետական քաղաքականության մեջ և միակուսակցական վարչակարգի խստացումը:

Քեմալի և նրա շրջապատի առաջնահերթ խնդիրը դարձավ ուժեղ կուսակցական կառույցի կազմաշրջումը: Հանրապետական-ժողովրդական կուսակցության կառուցվածքում գերագույն մարմինն էր հանդիսանում կուսակցության ընդհանուր համագումարը, որը հրավիրվում էր չորս տարին մեկ անգամ: Համագումարն ընտրում էր Կենտրոնական վարչություն, որի մեջ մտնում էին ՀԺԿ-ի գլխավոր նախագահը, գլխավոր նախագահին կից խորհուրդը, կուսակցության խորհուրդը և գլխավոր վարչությունը, ինչպես և կուսակցական տեսուչները: Նման բարդ կառուցվածքի գոյությունը պայմանավորված էր Հանրապետական-ժողովրդական կուսակցության ինչպես զանգվածային կազմակերպություն լինելու, այնպես էլ նրա կողմից պետական փաստացի կառավարումն իրականացնելու հանգամանքներով: Որոշումները կուսակցական, պետական ու քաղաքական բնույթի հարցերի վերաբերյալ կայացնում և մեջլիսի ընտրությունները ղեկավարում էր, մասնավորապես, գլխավոր նախագահին կից խորհուրդը: Այս ամբողջ ապարատի միջոցով էլ Մուստաֆա Քեմալը իրականացնում էր իր իշխանությունը: ՀԺԿ-ի գլխավոր նախագահը հանդիսանում էր միաժամանակ համագումարի, կուսակցական խորհրդի, գլխավոր վարչության և մեջլիսում կուսակցական խմբակցության նախագահը: Իշխանության այսպիսի կենտրոնացումն արտացոլում էր Մուստաֆա Քեմալ Արաբյուրքի ուժեղ իշխանական համակարգի մասին պատկերացումները և բացառում էր նրա համար որևէ մրցակցի կամ այլընտրանքային ուժի առաջացման հնարավորությունը: Նա իրավասու էր ներկայացնել ամբողջ կուսակցությունը և խոսել կուսակցության անունից:

⁶⁴ E.J.Zürcher. The Unionist Factor... p. 132.

⁶⁵ Երե առաջին խմբից երկրորդ մեջլիս 1923 թ-ին վերընտրվեց նրա անդամների 58%, սակայն երկրորդից մնացել էր միայն երեք հոգի:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ ՀԺԿ-ի կառուցվածքը կրում էր խիստ կենտրոնացված և ավտորիտար բնույթ և նրանից էր բխում կուսակցական ղեկավարության ձեռքբերում քաղաքական և պետական իշխանության հսկայական կենտրոնացումը:

Կուսակցության մեջ գլխավոր նախագահից հետո կարևոր դեր էին կատարում ՀԺԿ-ի գլխավոր նախագահի տեղակալը և գլխավոր քարտուղարը, ոլորնք նշանակվում էին նախագահի կողմից: Դրանք, բնականաբար, վերջինիս հավատարիմ մարդիկ էին, ինչպես, օրինակ, Իսմեթ Ինյունյուն կամ Ռեջեփ Գեքեբը: Բացի դրանից, այդ պաշտոնները, որպես կանոն, զբաղեցնում էին Հանրապետության վարչապետը և ներքին գործերի նախարարը, ինչով պահպանվում էր պետության և կուսակցության ղեկավարության միասնության սկզբունքը: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը պետության և կուսակցության ղեկավարների պաշտոնների համատեղումը կարելի է համարել Թուրքիայի քաղաքական համակարգի կարևորագույն հատկանիշը: Երբ դեռ 1923-1924 թթ-ին Մուստաֆա Քեմալի որոշ նախկին զինակիցների⁶⁶ կողմից բարձրացվում էր Հանրապետության նախագահի և ՀԺԿ-ի գլխավոր նախագահի պաշտոնների բաժանման հարցը, Քեմալը ի պատասխան դրան հայտարարում էր. «Հասարակայնությունը և ամբողջ աշխարհը թող իմանան, որ ինձ համար չի կարող գոյություն ունենալ որևէ քաղաքական չեզոքություն: Ես հանրապետական եմ, և դա (հանրապետականությունը-Ս.Բ.) նաև Ժողովրդական կուսակցության գերագույն հավատամքն է... Ժողովրդական կուսակցությունն ընդգրկում է իր մեջ ամբողջ ազգը, նրա ծրագիրն ամբողջ ազգի ծրագիրն է: Ես կտրուկ ձևով հայտարարում եմ, որ ինձ համար պատվի հարց է մնալ միաժամանակ նրա առաջնորդը և պետության նախագահը»⁶⁷:

Այդին ՀԺԿ-ի կազմավորման շրջանում Մուստաֆա Քեմալը հստակ պատկերացում ուներ պետության մեջ կուսակցության դերի և տեղի մասին: Նա հայտարարում էր, որ «Ժողովրդական կուսակցությունը միակ քաղաքական կուսակցությունն է երկրում: Մրցակից կուսակցություններ կամ տեղություններ գոյություն ունենալ չեն կարող»⁶⁸: Այդ պատճառով էլ տրամաբանական էր ՀԺԿ-ի ղեկավարության մեծ մասամբ անհանդուրժ-

⁶⁶ Դրանք Առաջադիմական կուսակցության հիմնադիրներն էին՝ Ռաուֆը, Կարաբեքիրը, Զուսուր:

⁶⁷ D.von Mikusch. Gasi Mustafa Kemal. Leipzig, 1929, s. 315.

⁶⁸ R.Brock. Ghost on Horseback. P. 312

դական վերաբերմունքը ցանկացած ընդդիմության նկատմամբ պետության և կուսակցության միասնականացման պայմաններում:

Հարկ է նշել, որ ՀԺԿ-ն ոչ միայն կոչված էր կատարելու իշխանության նվաճման ու պահպանման գործիքի դերը, այլ նաև լինելու այդ իշխանության իրականացման կարևորագույն միջոց: Կուսակցությունը վերևից հասարակության նկատմամբ վերահսկողությունն իրականացնող մի մեխանիզմ, իշխանության կառույցներում անհրաժեշտ միասնությունն ու համախմբվածությունն ապահովող, քարծրագույն դեկավարության որոշումներն իրագործող կարգապահ կազմակերպություն էր, որի գոյությամբ կարելի է բացատրել նաև քեմալական թուրքիայում քաղաքական և իշխանական համակարգի կայունությունը:

Սակայն չի կարելի ասել, որ այսպիսի կուսակցական մոդելը չհանդիպեց որևէ դիմադրության: 1924թ. նոյեմբերին կազմավորվում է Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին ընդդիմադիր կուսակցությունը՝ Առաջադիմական-Հանրապետական կուսակցությունը, որի արմատները պետք է փնտրել 1923թ. հոկտեմբերից հետո Ժողովրդական կուսակցության ներսում ծագած լուրջ հակասությունների մեջ: ԺԿ-ի որոշ անդամներ՝ նախկին վարչապետ Հյուսեյն Ռաուֆը, գեներալներ Քյազըմ Կարաբեքիրը, Ալի Ֆուադը, Ռեֆեքը և ուրիշներ տեղյակ չէին պահվել Հանրապետության հռչակման մասին: Նրանք դիտում էին այս որոշումը, ինչպես և Մուստաֆա Քեմալին Հանրապետության նախագահ ընտրվելու փաստը որպես վերջինիս կողմից իշխանության հանդեպ նրա մենատիրական հավակնությունների դրսևորում⁶⁹: Հետզհետե այդ խմբավորումը կուսակցության ներսում մեկուսացվեց և անջատվեց նրանից՝ դառնալով ինքնուրույն կուսակցություն, որն ուներ մեջլիսում մոտ երեսուն հոգիանոց ընդդիմադիր խմբակցություն: ԱՀԿ-ի նախագահ դարձավ Քյազըմ Կարաբեքիրը, թեև նրա իրական առաջնորդը Ռաուֆն էր:

ԱՀԿ-ն միավորեց իր շուրջ կրոնական պահպանողականության և լիբերալիզմի հողի վրա հավարված կառավարության ընդդիմախոսներին: Կուսակցության հենարանը բավականին բազմատեսակ էր՝ *Իսթիքայի* մնացորդները, առաջին մեջլիսում «իրավունքների պաշտպանության ընկերությունները» երկրորդ խումբը կազմած նախկին պատգամավորները, կղերականները, պահպանողականները, ազատականները, Ստամբուլի մամուլը, որոշ զինվորականները:

Տեսնելով իրադարձությունների զարգացման նման ընթացքը՝ Քեմալը որոշեց զնալ որոշ փոխազիջումների: Առողջության վատթարացման պատր-

⁶⁹ Rauf Orbay'in Hatıraları - "Tercüman", 16.10.1986.

վակով նա ազատեց վարչապետի պաշտոնից Իսմեթին և նրա տեղը նշանակեց իր չափավոր հայացքներով հայտնի և ԱՀԿ-ի ղեկավարներից հետ մոտիկ հարաբերություններ ունեցող Ալի Ֆեթիհին: Իրենց հերթին առաջադիմականները չէին կարող բացահայտ հանդես գալ հայրենիքի փրկչի փառքն ունեցող Քեմալի դեմ: Թեև նրանք պահանջում էին, որպեսզի Հանրապետության նախագահը ընդուներ ընդդիմության գոյությունը և համաձայնեց թողնել կուսակցություններից վեր կանգնել ու չեզոք քաղաքական դիրք գրավել: Այս հարցի վերաբերյալ Քեմալի դիրքորոշումը հետևյալն էր. «Ովքեր կրկնում են, որ Հանրապետության նախագահը կողմնապահ է ու կապված է կուսակցության նախագահի պաշտոնով, և ամբողջ աշխարհը թող իմանան, որ ինձ համար գոյություն ունի միայն մեկ կողմնապահություն՝ Հանրապետության, զաղափարական և հասարակական հեղափոխության կողմնապահություն...»⁷⁰: «Թայմս» թերթին տված հարցազրույցում նախագահը շեշտում էր, որ Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը մնում է պետության ղեկի մոտ, որ ՀԺԿ-ի և ԱՀԿ-ի միջև եական տարբերություններ չկան և որ ինքը մերժում է այն բոլոր պնդումները, որ նա գնում է դեպի բռնապետություն⁷¹: Սակայն որոշ վկայություններ հերքում են Քեմալի այս մտեցումը: ԱՀԿ-ի ստեղծման օրերին, ինչպես Լոնդոն էր հաղորդում Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Մաքկարտնին, նախագահը գտնվում էր խիստ զայրացած վիճակում՝ համարելով, որ իրեն շատ քանով պարտական ընդդիմության լիդերները երախտամոռ դուրս եկան⁷²: Հետագոտող Ս. Յերասիմոսը ևս նշում էր, որ «Մուստաֆա Քեմալը սկզբից ի վեր թշնամաբար էր տրամադրված նոր կուսակցության նկատմամբ»⁷³:

Անշուշտ, Առաջադիմական կուսակցության ստեղծման մեջ որոշակի դեր կատարեցին անձնական հակադրությունները, մասնավորապես, Ռաուֆի և Իսմեթի, որոշ գեներալների և Մուստաֆա Քեմալի միջև, սակայն առկա էր նաև արմատական սկզբունքային տարածայնությունների գործոնը: Առաջադիմականները հակված էին դեպի սահմանադրական միապետության և ուժեղ խորհրդարանական համակարգի հաստատումը, քաղաքական իշխանության ավելի մեծ բաշխումը քաղաքական կուսակցությունների միջև: Նրանք հայտարարում էին իրենց ազատական և դեմոկրատական ուժ հասարակության մեջ, ինչի վկայությունն էր կուսակցության մա-

⁷⁰ E.J.Zürcher. 1924' teki Çok Partili Demokrasi.- "Tarih ve toplum", N 49, Ocak 1988, s. 19.

⁷¹ Նույն տեղում, էջ 19:

⁷² Նույն տեղում, էջ 19:

⁷³ S. Yerasimos. Tek Parti Dönemi.- I.C. Schiick ve E. Tonak (derf.). Geçiş Sürecinde Türkiye.. s.98.

նիֆեստը, որտեղ ասվում էր, որ «ա. քուրբական պետությունը ժողովրդի իշխանության վրա հենվող հանրապետություն է, ք. ազատականությունն ու ժողովրդական գերիշխանությունը կազմում են կուսակցական դոկտրինայի հիմքը»⁷⁴: Նշվում էր, որ ստեղծված իշխանական համակարգը «հնարավորություն է տալիս բռնապետության ձևավորման համար...», այդ պատճառով էլ անհրաժեշտ է մեջլիսում հակակշիռների ու վերահսկող խմբերի, ինչպիսիք են տարբեր կուսակցությունները, ստեղծումը⁷⁵:

Առաջադիմականների ծրագիրը պարունակում էր ազատական ժողովրդավարությանը հատուկ այսպիսի սկզբունքներ, ինչպիսին էին իշխանությունների տարանջատումը, քաղաքացիական ազատությունների անխախտելիությունը, ձեռնարկատիրության նախաձեռնության ազատությունը, ինչպես նաև ավելի հարգալից վերաբերմունք կրոնական համոզմունքների ու հավատի նկատմամբ⁷⁶: Առաջադիմական կուսակցությունը առաջարկում էր կիրառել թուրքիայում բրիտանական տիպի խորհրդարանական համակարգ կրկու պալատներից կազմված մեջլիսով: Հետաքրքիր էր նաև ծրագրի 12-րդ կետը, որն անուղղակիորեն ուղղված էր Մուստաֆա Քեմալի դեմ. «Հանրապետության նախագահ ընտրված անձը պետք է թողնի իր տեղը մեջլիսում և չեզոք լինի կուսակցական քաղաքականությունից»⁷⁷:

Այսպիսով ԱՀԿ-ի ստեղծումը հնարավորություն էր ընձեռում թուրքիայում երկրորդ կուսակցության միջոցով ձևավորել իրական խորհրդարանական համակարգ և հակակշիռ ընդդեմ մեկ անհատի ձեռքբերած պետական իշխանության կենտրոնացմանը. «Առաջադիմական-Հանրապետական կուսակցության նպատակն էր դարձել, - արձանագրում է այս միտումը Ք. Էնարպատը. - ձգտումը պահպանել անհատական ազատությունները՝ ընդդիմանալով որոշ մարդկանց բռնապետական միտումներին ու նրանց օլիգարխիկ նպատակներին»⁷⁸: Բայց, կարելի է նաև միաժամանակ ասել, որ ԱՀԿ-ի դերի վերաբերյալ դատողությունները վերոհիշյալ շրջանակներով չի սահմանափակվում: Առաջադիմականները իրենց էությանը առանձնապես չէին տարբերվում հանրապետական-ժողովրդականներից: Նախ, չպետք է մոռանալ, որ ԱՀԿ-ի ղեկավարությունը կազմում էր ազգայնական շարժման կորիզը, որը համախփվել էր Քեմալի շուրջը, ուստի, չի կարելի վստահարար պնդել, որ ԱՀԿ-ի իշխանության տակ հանրապետությունում

⁷⁴ T.Z.Tunaya. Türkiye'de Siyasi Partiler. s. 616.

⁷⁵ А. Мельник. Турция., с. 153.

⁷⁶ M.Tunçay. Türkiye Cumhuriyetinde Tek-Parti Yönetiminin Kurulması. Ankara, 1981... ss.370-371.

⁷⁷ T.Z.Tunaya. Türkiye'de Siyasi Partiler. s. 618.

⁷⁸ K.Karpat. Turkey's Politics. Princeton, 1959. p. 46.

չէր հաստատովի ցնանատիպ վարչակարգ՝ հաշվի առնելով կուսակցության դեկավարների հավակնություններն ու զինվորական արմատները:

Իր կարճ գոյատևման ընթացքում ԱՀԿ-ն մնում էր համեմատաբար փոքր կուսակցություն, սակայն նրան հաջողվեց դառնալ բավականին ազդեցիկ ուժ՝ շնորհիվ իր առաջնորդների դիրքերի ու ժողովրդակամության, ինչպես նաև ստամբուլյան մամուլի աջակցության: Այս ուժի հետ նախագահը ստիպված էր հաշվի նստել, քանի դեռ ընդդիմությունը վերացնելու համար նրան չընձեռվեց հարմար առիթ: Նման առիթ հանդիսացավ 1925թ. գարնանը Արևելյան Անատոլիայում բռնկված քրդական ապստամբությունը: Իր «Ճառում» Մուստաֆա Քեմալը հայտարարում էր, որ քրդական խռովության պատճառներից մեկն այն էր, որ «ԱՀԿ-ն առաջ էր քաշում կրոնական կարգախոսներ և արևելյան վիլայեթներ է ուղարկել իր պատվիրակներին»⁷⁹: Քեմալը մեղադրում էր առաջադիմականներին այն բանում, որ նրանք նորից բարձրացրին իսլամի դրոշը. «...կրոնական մոլեռանդությունը խրախուսելով՝ մի՞թե նրանք ազգն ու հանրապետությունը առաջընթացի և նորացման դեմ չէին հանում: Նոր կուսակցությունը կրոնական գաղափարների ու հավատի հարգանքի քողի տակ աղաղակում էր, որ «մենք ուզում ենք խալիֆայությունը վերականգնել, մենք դեմ ենք նոր օրենքներին, մեզ հին օրենքները բավարար են, մենք պահպանելու ենք մեդրեսները, թեքեները, սոֆթաներին և շեյխերին...», իսկ Մուստաֆա Քեմալի կուսակցությունը վերացրեց խալիֆայությունը, մահմեդականությանը վնաս է հասցնում, ձեզ գյավուր են դարձնելու...»: ԱՀԿ-ի ծրագիրն ամենաուխտադրյալ մտքի արգասիք է: Այս կուսակցությունը հայրենիքում հետադիմականների ապաստանն ու հենարանն էր դարձել և օգնում էր արտաքին թշնամիների նորաստեղծ թուրքական պետությունը, մանուկ հանրապետությունը քայքայելու ուղղված պլանների կենսագործման գործին»⁸⁰: Իրականում Քեմալի պնդումներն այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը. ԱՀԿ-ն, որն առիթը բաց չէր թողնում այս կամ այն սխալի համար քննադատել կառավարությանը, քրդական ապստամբության ընթացքում լիովին աջակցում էր իշխանություններին այն ճնշելու նրա ջանքերում: Ք.Կարաբեքիրը հայտարարեց, որ քաղաքական նախատակներով կրոնն օգտագործողները դավաճաններ են: Վտանգի առջև «բոլոր թուրքերը, – շեշտում էր նա, – պետք է պատրաստ լինեն մեկ մարդու պես կանգնել երկրի պաշտպանությանը»⁸¹: Ինչ-որ առումով, դա վկայում է

⁷⁹ М. Гасратян. Курды Турции в новейшее время. Ереван, 1990, стр. 112.

⁸⁰ Atatürk'ün Söylev ve Demeçleri. C. III. Ankara, 1961, s. 609.

⁸¹ Նույն տեղում, էջ 84–85:

ընդդիմության կողմից պետական շահերի գերակայության ճանաչման փաստի օգտին:

Սակայն Առաջադիմական կուսակցության ճակատագիրը արդեն վճռված էր: Արդեն 1925թ. փետրվարին ԱՀԿ-ի ղեկավարությունը նախագուշացվեց վարչապետ Ալի Ֆեթհիի կողմից, որ իրենց կուսակցությունը պետք է լուծարվի, քանի որ հակառակ դեպքում կարող է այլու՞ն բափվել⁸²: Երբ Իսմեն-փաշան վերադարձավ Անկարա, որպեսզի կրկին զբաղեցնի վարչապետի պաշտոնը, նա հայտարարեց հեռացող Ֆեթհիին, որ «ընդդիմության գոյության մեջ այլևս որևէ կարիք չկա»⁸³ արտահայտելով դրանով երկրի ղեկավարության մտ գերիշխող որևէ ընդդիմադիր գործույնությանը բացառելու տրամադրությունները:

ԱՀԿ-ն արգելվեց 1925թ. հունիսի 3-ի կառավարության որոշմամբ, «Կարգուկանոնի պահպանման մասին» օրենքի հիման վրա: Փակվեցին նաև ԱՀԿ-ի բերթերը, մոտ 150 առաջադիմականներ ձերբակալվեցին, ույշ ղեկավարներ՝ Ռատֆը, Ադնանը արտաքսվեցին երկրից⁸⁴: Ինչպես նման տեսակի ցանկացած որոշում. իշխող վարչակարգը քողարկեց իր այդ քայլը երկրում անվտանգության և կարգուկանոնի պահպանման մղումով, մինչդեռ ԱՀԿ-ն, ըստ էության, չէր կատարել օրենքի որևէ լուրջ խախտում:

Առաջադիմական կուսակցության հետ կապված իրադարձությունները հանդիսացան բեկումնային պահ թուրքիայի Հանրապետության կայացման փուլի պատմության մեջ իշխանության համար մղվող պայքարի և երկրի զարգացման ուղիների ընտրության առումով: ԱՀԿ-ն հավակնում էր դառնալ թուրքիայի առաջին քաղաքական կուսակցությունը, որը կազմված կլիներ արևմտյան սկզբունքների հիմքի վրա: Քեմալականներն իրենք էին ընդունում, որ «Առաջադիմական-Հանրապետական կուսակցությունը լուրջ և խոշոր մի շարժում է եղել»⁸⁵: Կարելի է ենթադրել, որ հենց այսպիսի ընդդիմությունը կարող էր սպառնալ քեմալականների իշխանությունը, և այդ սպառնալիքը վերացնելու դրոյապատճառն էր, որ մղեց ՀԺԿ-ին գնալ ԱՀԿ-ի ջախջախման քայլին:

Սակայն իշխանության համար պայքարը իր վերջնական լուծումը գտավ 1926թ. ամռանն Իզմիլում Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձի կազմակերպման ու բացահայտման և դրան հաջորդած քաղաքական դատավարությունների ու մահապատիժների կիրառման մեջ: 1926թ. հունիսին

⁸² Ş. S. Aydemir. Tek Adam. C. III, s. 220.

⁸³ Lord Kinross. Atatürk. P. 402.

⁸⁴ ԱՀԿ-ի առաջնորդների մեղաակցությունը քրդական ապստամբության հրահրման մեջ հիմնավոր կերպով այդպես էլ չապացուցվեց: Հետագայում նրանք արդարացվեցին:

⁸⁵ F.R. Atay. Çankaya. c. 2, s. 347

Իզմիլյում բացահայտվեց Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձ նախապատրաստող խումբ, որի գլուխ կանգնած էին *Իթթիհատի* կուսակցության անդամները: Նրան հետևեցին, վարչակարգին՝ քիչ քե շատ հայտնի բոլոր ընդդիմադիր գործիչների ձերբակալությունները⁸⁶: Նախագահի կարգադրությամբ դեռևս մեկ տարի առաջ ստեղծված «Անկախության դատարաններին» հանձնարարվեց այս գործի քննությունը և նրա մասնակիցների պատիժը⁸⁷: Հարկ է նշել, որ տեղի ունեցած դատավարությունները հետապնդում էին քուրբական ազգայնական շարժման ներսում Մուստաֆա Քեմալի և ՀՇԿ-ի իշխանությանը մարտահրավեր նետելու ունակ բոլոր մրցակից խմբերի վերացման նպատակը:

Իթթիհատականներն իրոք լուրջ վտանգ էին ներկայացնում իշխող վարչակազմի համար, այն պարզ պատճառով, որ ազգայնական շարժումն ու քուրբական ազգային պետությունն իրենք ձևավորվել էին իթթիհատական հիմքերի վրա: «Միություն և առաջադիմություն» երիտրուրբական կուսակցությունը շարունակում էր իր գործունեությունը ոչ միայն ազգայնական շարժման տարիներին, այլ նաև Հանրապետության հռչակումից հետո: Դեռ 1923թ. գարնանն Իզմիլյում Մուստաֆա Քեմալը հանդիպել էր իթթիհատական գործիչ Կարա Քեմալի հետ՝ շոշափելով *Իթթիհատի* գործունեության հետ կապված հարցեր (քեև այս կուսակցությունը լուծարվել էր դեռևս չորս տարի առաջ): Հանդիպումից հետո դարձյալ Իզմիլյում իթթիհատական ղեկավար գործիչները՝ Ջավիդը, դոկտոր Նազլը, Կարա Քեմալը, Հյուսեյն Ջահիդը, Իսմայիլ Ջանփուլադը և այլոք խորիդակցություն անցկացրեցին, որտեղ որոշվեց, որ կուսակցությունը չի մասնակցի մեջլիսի գալիք ընտրություններին և կաջակցի Մուստաֆա Քեմալին, ինչպես նաև ընդունվեց *Իթթիհատի* ծրագրի նոր խմբագրությունը, որտեղ կային արևմտյան տիպի ժողովրդավարություն ստեղծելու, իշխանության տա-

⁸⁶ Ավելի մանրամասն Իզմիլի դավադրության մասին տե՛ս E.J.Zürcher. The Unionist Factor. Pp. 130-155:

⁸⁷ «Անկախության դատարանները» կազմվում էին մեջլիսի, իսկ փաստորեն՝ հսկրապետության նախագահի կողմից նշանակվող անդամներից: Պատերազմի ժամանակ դրանք իրականացնում էին դասալրության դեմ պայքարի գործառույթը, իսկ 1925թ. նրանց անցել էր «պետության դեմ բշնամական գործունեություն ծավալող անձանց, հայրենիքի դավաճանների, կարգուկանոնը խախտողների, քրեանների դեմ պայքարի իրավասությունը: Արդյունքում՝ 1925-1927թթ. ընթացքում այդ դատարանները մոտ 130 մահավճիռ կայացրին:

լուսնջատման մասին կետեր⁸⁸։ Սակայն *Իսթիհալի* մնացորդները վաղ քե ուշ պետք է բախվելին Մուստաֆա Քեմալի հետ, որը 1925թ–ից ուներ գրեթե անսահմանափակ իշխանություն, և նրա համար շարունակել հանդուրժել իր նախկին կուսակիցների գործունեությունը կհնարակեր վտանգի տակ դնել այդ իշխանությունը, առավել ևս, որ ինքը լավ ծանոթ էր *Իսթիհալի* գաղտնի կառույցների մեթոդներին։ Իզմիլի դավադրությունը հենց այն առիթներից էր, որոնք Քեմալը հմտորեն օգտագործում էր իր հակառակորդներին ասպարեզից վերացնելու կամ չեզոքացնելու համար⁸⁹։

1926թ. դատավարություններն ու նրանց հաջորդած մահապատիժները, անշուշտ, կրում էին քաղաքական հետապնդումների բնույթ։ Թուրք պատմաբան Մեթե Ռուհչայն արդարացիորեն նշում է, որ 1920–ն թթ. դատավարությունները հանդիսացել են «քաղաքական ու իրավական տեռորի մի ձև»⁹⁰, որի բխումն էին հանդիսանում *Իսթիհալի* մնացորդները և Առաջադիմական կուսակցությունը։ Դրանով վերացվեցին երկրի քաղաքական վերնախավում գոյություն ունեցող ինչպես բոլոր մրցակից խմբերը, այնպես էլ իշխանությունների վերահսկման կամ ընդդիմության գործունեության համար անհրաժեշտ բոլոր մեխանիզմները և ավարտին հասցվեց միակուսակցական քաղաքական համակարգի ձևավորումը։

1925–1926 թթ. իրադարձություններին և դրանցից հետո հաստատված նոր քաղաքական իրավիճակը օրինաչափորեն բխում էին երկրում ընթացող գործընթացներից։ Ինչպես նշում էր Քեմալ Արաքյուրբի զինակից և ապա ընդդիմախոս Հալիլե Էդիպը (Աղլվարը), «խասարակության մեջ խաղաղության մարտը և մեջլիսում ձևավորված մեթոդորտը պատրաստ էին ընդունել նորաստեղծ քուրքական պետականությունը վտանգի տակ դնող զինված պայքարն ու քաղաքական բարդությունները կանխելուն ուղղված յուրանչյուր կտրուկ միջոց»⁹¹։

ԱՀԿ–ի արգելումը և Իզմիլի դավադրության գործով դատավարությունները խորհրդանշեցին Թուրքիայում իշխանության համար մղվող պայքարի ավարտը, ինչից հետո քեմալականների քաղաքական մեմիշխանության

⁸⁸ E.J.Zürcher. The Unionist Factor. pp 133–135.

⁸⁹ Իզմիլի և Անկարայի դատավարությունների արդյունքում մոտ երեք տասնյակ երկտորքական գործիչ հանրապետության սահմանադրական կարգերի և Ազգային մեծ ժողովի կառավարության դեմ դավադրություն կազմակերպելու մեղադրանքով դատապարտվեցին կախաղանի միջոցով մահապատժի, այդ թվում՝ Խուրշիդը, Ջանիդաղը, Կարա Քեմալը, Արիֆը (որը Քեմալի համարզն էր պատերազմի տարիներին), Ջավիդը, Նազըմը, Հիլմին և ուրիշները։ Ռաուֆ–բեյը հեռակա կարգով ստացավ տասը տարի, մյուս առաջադիմականներն ազատ արձակվեցին։

⁹⁰ M.Tunçay. Türkiye Cumhuriyetinde Tek Parti... s. 161.

⁹¹ H.E.Adıvar.Turkey Faces West, p. 220.

համար մոտ քսան տարի որևէ լուրջ սպառնալիքներ այլևս չէր ստեղծվում: Մ.Թունչայի բնութագրմամբ, «բուրբական պատմության մեջ ավարտվեց Քաղաքականության շրջանը և սկսվեց Կառավարման շրջանը»⁹²: Իսկապես, այսուհետև, մեկ բացառությամբ, Մուստաֆա Քեմալը և Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը կենտրոնացրել էին իրենց ջանքերը ոչ թե ընդդիմության հետ քաղաքական պայքար տանելու, այլ պետական կառավարման մարմիններում սեփական անվիճարկելի գերիշխանությունն ամրապնդելու ուղղությամբ:

Միակուսակցական համակարգը, որպես կանոն, բնորոշ է այնպիսի հասարակություններին, որտեղ բացակայում են հասուն հասարակական կառուցվածքը, զարգացած տնտեսությունը, բնակչության քաղաքական կուլտուրայի ավանդույթները: 1920-ական թթ-ին Թուրքիան հենց այսպիսի մի երկիր էր. և այս պայմաններում էլ ստեղծվեց ուժեղ կուսակցություն, որն իր ձեռքերում կենտրոնացրեց և քաղաքական ղեկավարման, և վարչական ու տնտեսական կառավարման գործառույթները: Միևնույն ժամանակ իրավիճակը 1920-ական թթ. վերջում իշխանությունների համար այնքան էլ բարենպաստ չէր. «Հանրապետական-Ժողովրդական կուսակցության և ժողովրդի միջև հոգևոր կապը, – գրում է իր հուշերում Ահմեդ Աղասոյուն, – լիովին վերացված էր: Այն, որ ժողովուրդը շարունակում էր դիմանալ շժԿ-ի իշխանությանը, պայմանավորված էր երկու գործոնով: Առաջինն ու գլխավորը՝ վախը, երկրորդն էլ՝ Գ-ագլիի հանդեպ տածվող հարգանք ու երախտագիտության զգացմունքները»⁹³: Տնտեսական ճգնաժամը և իշխող կուսակցության չարաշահումները, ինչպես և ժողովրդի կրած գրկանքները պայարտ հող էին ստեղծում նոր ընդդիմության ձևավորման համար: Միակուսակցական պետական-քաղաքական համակարգը, այսինքն՝ չվերահսկվող և քննադատության ենթակա չհանդիսացող իշխանությունն անկարող էր հաղթահարել երկրի առջև ծառայած տնտեսական ու հասարակական դժվարությունները: Այս դրությունից ելք համարվեց անցումը բազմակուսակցական համակարգին: Քեմալը որոշեց իրականացնել այն կառավարելի ընդդիմության կազմավորման միջոցով:

1930թ. օգոստոսին մախկին վարչապետ և Մուստաֆա Քեմալի մտերիմ ընկեր Ալի Ֆեթհին մամակ հղեց Հանրապետության մախագահին, որտեղ քննադատում էր կառավարության տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը՝ նշելով, որ խորհրդարանում բացակայում է ազատ քննադատության մթնոլորտը, և առաջարկելով ստեղծել նոր կուսակցություն՝ Լի-

⁹² M. Tunçay. Türkiye’de Sol Akımlar. 1908–1925. Ankura, 1978, p. 29.

⁹³ A. Ağaoglu. Serbest Firka Hatıraları. İstanbul, 1968, s. 45–46.

բերալ–Հանրապետական կուսակցությունը, որը կնպաստեր այս մթնոլորտի ձևավորմանը. «Մի կողմից՝ մեջլիսում ցանկալի է իրար հետ մրցակցող երկու կուսակցությունների գոյությունը և մյուս կողմից՝ երկրում որոշ աստիճանով ազատության մթնոլորտի ձևավորումը»⁹⁴: Ֆեթիլին հատկապես շեշտում էր, որ ստեղծվող կուսակցությունը «լիովին և իսկապես հանրապետական ու աշխարհիկ է լինելու, քեև ունի ՀԺԿ–ի հետ տարածայնություններ ֆինանսա–տնտեսական, ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտը կետերում և պատրաստ է նրանցում քաղաքական պայքարի մեջ մտնել»⁹⁵:

Բնական է, որ նոր կուսակցությունը ստեղծվում էր Մուստաֆա Քեմալի ցանկությամբ և համաձայնությամբ: Նախագահը Ֆեթիլին ուղղված պատասխան նամակում նշում էր. «...քանի դեռ ես հանդիսանում եմ Հանրապետության նախագահ, Դուք կարող եք վստահ լինել, որ յուրաքանչյուր կուսակցություն, անկախ նրանից, քե այն իշխանության մեջ է, քե ոչ, կարծամենա հավասար վերաբերմունքի...Չեր քաղաքական գործունեությունը չի հանդիպի որևէ բարոյությունների»⁹⁶: Նա նաև, ողջունելով Լիբերալ–Հանրապետական կուսակցության ստեղծումը, իր ելույթներից մեկում հայտարարում էր, որ «Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ևս մեկ կուսակցության գործունեությունը և ազգային հիմնախնդիրների ազատ քննարկումը համարում եմ հանրապետական կարգերի հիմնաքարը»⁹⁷, և շեշտում, որ «այս կուսակցությունը ես համձնում եմ այն մարդկանց ձեռքը, որոնց մեջ ես վստահ եմ»⁹⁸: Այն, որ Լիբերալ–Հանրապետական կուսակցությունը կազմավորվեց Մուստաֆա Քեմալի անդրկուլիսյան մասնակցությամբ, վկայում է այն փաստը, որ նախագահի կարգադրանքով իր շրջապատի մարդիկ մտան այդ կուսակցության մեջ, բաժանվում էին այնտեղ դեկավար պաշտոնները, որոշվում ծրագրային դրույթները և նույնիսկ ֆինանսական միջոցներ տրամադրվում: Բացի այդ, Մուստաֆա Քեմալը խոստանում էր Ֆեթիլին 70–80 տեղ ապագա մեջլիսում, ու ինքն էր նաև կատարում կուսակցության դեկավար պաշտոնների նշանակումները⁹⁹:

Կարելի է ենթադրել, որ Լիբերալ–Հանրապետական կուսակցության ստեղծման մտախղացումը կայանում էր հետևյալում. վարչապետ Իսմեթ–

⁹⁴ Նույն տեղում, էջ 18:

⁹⁵ Նույն տեղում, էջ 22:

⁹⁶ I.Orga, Phoenix Ascendant. P. 176.

⁹⁷ А. Колесников. Народные дома в общественно – политической и культурной жизни Турецкой Республики. Москва, 1986, с. 42.

⁹⁸ A. Ağaoğlu. Serbest Firka ... s. 80.

⁹⁹ Նույն տեղում, էջ 64

փառան և Ալի Ֆեթիին մնում էին գաղափարական զինակիցներ: Երկուսն էլ հանրապետական ու հեղափոխական էին: Նրանք ճանաչում էին իրար որպես լիդերներ և աշխատում Հանրապետության նվաճումները պահպանելու համար, իսկ նրանցից դուրս եղած հարցերի շուրջ կարող էին բախվել, վիճել, առանձին–առանձին մասնակցել ընտրությունների՝ արմատավորելով ժողովրդավարական ավանդույթները Թուրքիայում: Իսկ Մուստաֆա Ֆեմալին վերապահվում էր երկու ուժերից վեր կանգնած արքիտրի դերը, որը կմիջամտեր իրադարձությունների ընթացքին իրական ճգնաժամային պահերի՝ հակասությունները մեղմելու համար:

Բայց իրադարձությունների զարգացումն ընթացավ ոչ նախատեսված հունով: Իրավիճակը երկրում իրոք այնքան ծանր էր և զանգվածների դժգոհությունը հանրապետական–ժողովրդական վարչակարգից այնքան մեծ էր, որ Լիբերալ–Հանրապետական կուսակցության ստեղծումը մեծ աշխուժություն և ոգևորություն առաջ բերեց բնակչության մոտ: Երկրում Ա.Ֆեթիի շրջագայության ժամանակ նրան ամենուրեք դիմավորում էին կանաչ իսլամական դաշնակցությունը, ընդունում որպես անասոված Հանրապետության դեմ հակառակի պաշտպանի, հռչակում էին «չար հանրապետությունից ժողովրդի ազատարար»¹⁰⁰:

Փաստորեն, զանգվածները սկսեցին համախմբվել նորաստեղծ կուսակցության շուրջը՝ նրան դարձնելով իրենց բողոքական տրամադրությունների և իշխող վարչակազմից դժգոհությունների խորհրդանիշը: Միայն ԼՀԿ-ի ձևավորումից տասներկու օրվա ընթացքում կուսակցություն դիմել էր անդամագրվելու համար մոտ 130 000 մարդ: Թուրքիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Գրեյը այդ օրերին գրում էր. «Նոր կուսակցությունը դարձել է երկրի քաղաքական ջերմաստիճանի չափման մի ջերմաչափ, և այսօր որևէ կասկած չկա, որ այն արձանագրում է տեճը»¹⁰¹:

Բացի այդ, նոր կուսակցությունը առաջ էր քաշում բնակչության համար գրավիչ մի քանի նոր գաղափարներ. 1930թ. սեպտեմբերին հրապարակված ԼՀԿ-ի ծրագրի առանցքային կետերն էին տնտեսական ոլորտի նկատմամբ պետական վերահսկողության թուլացման, կաշառակերության և իշխանական շարաշահումների դեմ պայքարի, մամուլի և խոսքի ազատության գաղափարները: Լիբերալ–Հանրապետական կուսակցությունը հանդես էր գալիս որպես հանրապետականության, ազգայնականության և լաիցիզմի սկզբունքների ամրապնդման, հարկային բեռի իջեցման, արտասահմանյան ներդրումների խրախուսման, տնտեսության մասնավոր սեկտորի ընդլայն-

¹⁰⁰ I.Orga. Phoenix Anscendant. P. 176.

¹⁰¹ Lord Kinross. Ataturk. P. 452.

ման, կանանց քաղաքական իրավունքները տրամադրելու, միաստիճանական ընտրությունների օգտին: Դիանով հանդերձ պետք է ընդունել, որ ՀՎԿ-ի և ԼՀԿ-ի միջև առկա էին ծրագրային տարբերություններ, լիբերալներն ավելի քաղաքական վերաբերմունք ունեին ժողովրդականների էտատիստական քաղաքականության նկատմամբ և շեշտում էին մասնավոր նախածեռնության կարևորությունը, ինչպես նաև ավելի հստակ էին արտահայտում քաղաքական ինդիվիդուալիզմի¹⁰² գաղափարը:

Լիբերալներից մոտ կանգնած «Յարքն» քերթը քացահայտորեն քննադատում էր Իսմեթի կարիքների «սխալ» տնտեսական կուրսը՝ բյուջեում մեծ ճեղքվածքի, մեծածավալ ռազմական ծախսերի, մամուլի և դատարանների վրա գործադրվող ճնշումների, Արևմուտքի հետ ֆինանսական կապեր չստեղծելու համար: Իսմեթը նույնիսկ մի պահ հրաժարականի խնդրանք ներկայացրեց նախագահին, քայքայեց Քեմալը կտրականապես մերժեց այն¹⁰³:

Իշխող վարչակարգի կողմից ԼՀԿ-ի հանդեպ դիքթոյաշման կոշտացումն արտահայտվեց 1930թ. հոկտեմբերին կայացած տեղական իշխանությունների ընտրություններում, որոնք պետք է դառնային ՀՎԿ-ի և ԼՀԿ-ի միջև առաջին լուրջ քաղաքական մեամարտը: Սակայն ներքին գործերի նախարար և ՀՎԿ-ի գլխավոր քարտուղար Ռեֆեփի կուսակցության և ուժային կառույցների վիլայեթական մարմիններին ուղղված կարգադրարյունը քացառում էր որևէ հաջողություն ընդդիմության համար. կարգադրարյան մեջ շեշտվում էր, որ «ամեն գնով պետք է ապահովել Հանրապետական Ժողովրդական կուսակցության հաղթանակը»¹⁰⁴: Արյունքում ընտրություններն անցան ՀՎԿ-ի և ոստիկանության բիրտ ճնշման և հսկողության տակ, ինչից հետո Ֆեթիհն իշխող վարչակարգը բնութագրեց որպես «օլիգարխիկ» և «ամբողջատիրական»¹⁰⁵:

Վերջապես, Մուստաֆա Քեմալը հայտարարեց, որ ինքը մտադիր չէ խզել իր կապերը Հանրապետական Ժողովրդական կուսակցության հետ և դատապարտում է նոր կուսակցության անպատասխանատու գործողությունները: Քեմալի դիքթոյաշման պարզեցումից հետո Ֆեթիհն հայտարարեց, որ «լավագույն ելքն» է՝ լուծարել կուսակցությունը, «որովհետև ստեղծված իրադրության հետևանքով սպազայում անխուսափելի կդառնան նոր կուսակցության և Գազիի միջև բախումները քաղաքական ասպարե-

¹⁰² Խոսքը գնում է անհատի խզմի, խոսքի, հավաքների հիմնարար իրավունքների գերակայության մասին:

¹⁰³ A. Ağaoğlu. Serbest Firka ... s. 78.

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 81:

¹⁰⁵ Новейшая история Турции. Москва, 1968, с. 119.

գում»¹⁰⁶։ Դրանով լիբերալ–հանրապետականներն ընդունեցին իրենց կուսակցության լուծարման պաշտոնական վարկածը, համաձայն որի, ԼՀԿ–ի գործունեության բողի տակ աշխուժացան հետադիմական տարրերը, երկրում մեծացավ անիշխանության վտանգը, և այս իրավիճակում լավագույն ելքն է՝ կուսակցության ինքնալուծարումը։ Դա ոչ այնքան լավագույն, որքան միակ տրամաբանական ելքն էր, քանի որ ԼՀԿ–ն ստեղծվել էր նախագահի կամքով և նրա կամքով էլ պիտի փակվեր։ Իշխող վարչակազմի համար շարունակել օգնել ԼՀԿ–ին նշանակում էր նպաստել սեփական պարտությանը և իրադրության ապակայունացմանը, ինչի ապացույցը կառավարության համար դարձան Իգմիրի և Մենեմենի¹⁰⁷ դեպքերը։ Համալսարաններից հեռացվեցին այն պրոֆեսորները, որոնք համակրում էին ԼՀԿ–ին, Ալի Ֆեթիին և ԼՀԿ–ի այլ գործիչներին 1931 թ. մեջլիսի ընտրություններին «խորհուրդ տրվեց» չառաջադրել իրենց քեկնածությունները¹⁰⁸։

Իսմեթ–փաշան այսպես էր մեկնաբանում ԼՀԿ–ի լուծարումը. «Կարչակարգի նորմալացումն արդյո՞ք ցնցումներով պետք է ուղեկցվեր։ Եթե Լիբերալ–Հանրապետական կուսակցությունը շարունակեր գոյություն ունենալ, մենք բոլորս վաղուց թշվառ կլինեինք այդ փոթորիկով»¹⁰⁹։ Այս խոսքերը վկայում են, թեևս, իշխող վերնախավի երկու մտավախությունների հիմնավորված լինելու մասին. վերոհիշյալ իրադարձությունները ակնհայտ դարձրին ՀԺԿ–ի դիրքերի բուլացումը և նոր կուսակցությունը իսկապես լրջորեն սպառնում էր դրանց։ Եվ, երկրորդը, Մուստաֆա Բենալի և նրա շրջապատը այսուհետ բացասական էին տրամադրված երկրի քաղաքական համակարգում արժատական փոփոխությունների հանդեպ՝ նախընտրելով աստիճանական քաղաքական զարգացման տարբերակը։ ԼՀԿ–ի լուծարումից հետո ՀԺԿ–ի մենիշխանությունը 15 տարվա ընթացքում մնում էր անասամ՝ չունենալով որևէ մրցակից ուժ կամ այլընտրանք։ Սակայն հարկ է նշել, որ Լիբերալ–Հանրապետական կուսակցությանը կարելի է որոշ չափով համարել տասնիինգ տարի անց կազմավորված նոր ընդդիմադիր ուժի՝ Դեմոկրատական կուսակցության նախակարապետը։

¹⁰⁶ Б.Данциг. Турция. Москва, 1949, с. 227.

¹⁰⁷ 1930թ. սեպտեմբերին Ա. Ֆեթիի Իգմիր կատարած այցելության ժամանակ ԼՀԿ–ի կողմնակիցները հարձակում էին գործել տեղական պաշտոնական բերրի խնացության վրա, իսկ նույն թվականի դեկտեմբերին Մենեմեն քաղաքականում տեղի ունեցավ կրոնական մոլեռանդների խռովություն, որը ճնշվեց միայն բանակի ուժերի միջամտության շնորհիվ։ Խռովության պարագլուխները կախադան հանվեցին։

¹⁰⁸ M. Barlas. İnönü – Bayar ayrılığı. "Milliyet", 4.08.1984.

¹⁰⁹ F.R. Atay. Çankaya. c. 2, s. 439.

1930թ. իրադարձություններն ինչ-որ առումով վկայում էին այսպես կոչված «Հեղափոխության» շրջանի ավարտի մասին, ինչի ապացույց կարելի է համարել 1931թ. ամռանը տեղի ունեցած ՀԺԿ-ի 3-րդ համագումարը, որն ազդարարեց Թուրքիայի պետական ու քաղաքական կյանքի նոր փուլի սկիզբը: Կուսակցությունը հայտարարեց, որ իր վրա է վերցնում ազգի ամունից իշխելու իրավունքն ու պարտականությունը: Ավելի բացահայտ էին դառնում իշխող վարչակարգի ավտորիտար, անգամ տոտալիտար հակումները: Հայտնի թուրք հասարակագետ Չաղլար Քեյդերը նշում է, որ այդ տարիներին Աքաթյուրքի վրա մեծ ազդեցություն էին բողել եվրոպական ֆաշիզմի և ռուսական կոմունիզմի մոդելները, որտեղ ամեն նախաձեռնություն իրականացվում էր կուսակցության հովանու տակ¹¹⁰: Որպես ժամանակաշրջանի պետական քաղաքականության լավագույն ձևակերպում կարելի է բերել «մեկ կուսակցություն, մեկ ազգ, մեկ առաջնող» կարգախոսը:

1920-ական թթ. երկրորդ կեսից սկսած և հատկապես 1930-1946թթ. շրջանում Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը, մնալով երկրում միակ գործող ու օրինական կուսակցությունը, դառնում է փաստորեն բռնապետական տիպի կազմակերպություն, որը պահանջում էր բնակչության անվերապահ աջակցությունն ու հնազանդությունը՝ համախմբելով իշխող տարբեր խմբերի ու խավերի շահերը: Դեռևս 1927թ-ին ընդունված ՀԺԿ-ի կանոնադրության մեջ հռչակվում էր այն դրույթը, որ կուսակցությունն «ազգի վրա հենվող, ազգի հետ համախմբված կազմակերպություն է, որն իր մեջ ներառում է ամբողջ երկիրն ու կառավարությունը»¹¹¹: Դրանով ՀԺԿ-ն հավակնում էր ներկայանալ որպես ամբողջ ժողովրդի կուսակցություն, ինչի գաղափարը շեշտվում էր նախագահ Մուստաֆա Քեմալի կողմից, երբ 1931թ. փետրվարին մա, ելույթ ունենալով Կոնիայում, հայտարարեց, որ ինքը կցանկանար, որպեսզի Հանրապետության բոլոր քաղաքացիներն ընդգրկվեին ՀԺԿ-ի մեջ¹¹²:

Դասական իմաստով ՀԺԿ-ն նույնիսկ քաղաքական կուսակցություն չէր, այլ «կուսակցապետություն»: Նա դարձավ պետական համակարգի էական բաղկացուցիչ մասը, որն իր մենատիրությունը, այսինքն՝ գաղափարախոսական ու կազմակերպչական վերահսկողությունը հաստատեց քաղաքական գործունեության նկատմամբ: Կուսակցությունն էր վերահս-

¹¹⁰ Կ. Keyder. State and Class in Turkey. p. 100.

¹¹¹ T. Z. Tunaya. Türkiye’de Siyasi Partiler. s. 569.

¹¹² Կ. Keyder. State and Class in Turkey. p. 109. Այդ տարիներին կուսակցության անդամները իրիկը հասավ 1 300 000 հոգու, այսինքն՝ այն կազմում էր Թուրքիայի բնակչության 1/12 մասը:

կում խորհրդարանը, կառավարական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները, ոստիկանությունը, դատարանները և շարժման մեջ դնում ամբողջ պետական–հասարակական մեխանիզմը: Քաղաքական ու պետական կառույցները վերածվեցին բացառապես ժողովրդահանրապետականների մենաշնորհի: Կուսակցությունից դուրս որևէ հասարակական, մշակութային կամ քաղաքական գործունեության մասին այլևս խոսք չէր գնում: Այսպես, 1931թ. ապրիլին լուծարվեցին «Թուրքական օջախները»¹¹³, որոնց փոխարեն ՀԺԿ–ին կից կազմավորվեցին քեմալիզմի քարոզչությանը զբաղվող «Ժողովրդական տները»: Կուսակցության հովանու տակ անցան երկրում առկա բոլոր հասարակական կազմակերպությունները՝ Կանանց միությունը, Մամուլի քննչությունը, պահեստային սպաների միությունը: Առանց կուսակցության հավանության որևէ հասարակական, զանգվածային կազմակերպություն գոյություն ունենալու իրավունք չուներ: Բացի այդ, ՀԺԿ–ի հսկողության տակ էին գտնվում նաև քարոզչության ու լրատվության բոլոր միջոցները: ՀԺԿ–ն փաստորեն հանդիսանում էր քեմալական քաղաքական համակարգի ամբողջ քաղաքական, գաղափարախոսական ու տնտեսական գործունեության ռդնաշարը:

Ի տարբերություն 1920–ական թվականների առաջին կեսի, երբ կուսակցության անդամները համեմատաբար ազատ էին որևէ հարցի շուրջ իրենց կարծիքն արտահայտելու մեջ, 1930–ական թվականներին ՀԺԿ–ին բնորոշ դարձան կենտրոնացվածությունը, խիստ կարգապահությունը, գաղափարական միասնությունը¹¹⁴: Ամենափոքր անհնազանդությունը պատժվում էր կուսակցությունից հեռացմամբ¹¹⁵, ինչը կարգազանց անդամի համար նշանակում էր զրկվել աշխատանքից և ապրելու միջոցներից: Ըստ էության, ՀԺԿ–ն վերածվեց «գորանոցային» կուսակցության, որտեղ բացակայում էին կարծիքների հրապարակային պայքարը, բանավեճերը և քննարկումները:

Քաղաքական կյանքում ՀԺԿ–ի բացարձակ մենատիրությունն օրինաչափորեն հանգեցրեց կուսակցական ու պետական ապարատների ենթադնամար: Կուսակցական առաջնորդները միաժամանակ հանդիսանում էին պետության ղեկավարներ: Պետական և կուսակցական պաշտոնների համատեղումը կատարվում ամբողջ աստիճանակարգով՝ Հանրապետության նախագահից մինչև գյուղապետ: Այդ երևույթն ավելի հստակ էր ձևա-

¹¹³ Դրանք ստեղծվել էին դեռևս երիտորրների իշխանության օրոք՝ հանդիսանալով բյուրյակմի քարոզչության գլխավոր մարմինները:

¹¹⁴ Շ. Yetkin. Tek-Parti ... s. 142

¹¹⁵ M. Tunçay. Tek Parti Yönetimi... s. 215

կերպում չժԿ-ի կանոնադրության 40-րդ կետը. «Բոլոր քաղաքական, կառավարական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ կազմակերպությունների ղեկավարները պետք է հաստատվեն կուսակցության ղեկավար մարմինների և տեսուչների կողմից»¹¹⁶: Կուսակցության և պետության միասնությունը հասնում էր նրան, որ առանց կուսակցական կոմիտեի համաձայնության չէր կարող նշանակվել անգամ գյուղական ոստիկանը: Պետական պաշտոնների նշանակման հարցում նախ և առաջ հաշվի էր առնվում անդամակցությունը չժԿ-ին:

1935թ-ին ընդունված Հանրապետական-Ժողովրդական կուսակցության կանոնադրության նոր խմբագրության մեջ նշվում էր. «Կուսակցությունը դիտում է իր ջանքերով ստեղծված կառավարական մարմիններն ու իր սեփական մարմինները որպես միասնական ամբողջություն, որտեղ մեկը լրացնում է մյուսին»:¹¹⁷ Պետության և կուսակցության սերտաճումը դարձավ միակուսակցական համակարգի ձևավորման շարունակություն, ամրապնդումը և համախմբումը: Այստեղ առկա է անմիջական կապ. չժԿ-ի քաղաքական մենիշխանությունը հնարավոր չէր լինի պահպանել, եթե պետությունը չդառնար կուսակցության մենատիրոջը: Այս գործընթացը երկկողմանի էր. եթե պետությունը «կուսակցականացվում» էր, ապա կուսակցությունը՝ «պետականացվում»: Պետությունը դարձավ կուսակցական, կուսակցությունն էլ պետական: Պետական և կուսակցական ապարատի սերտաճումն այնքան ուժեղ էր ու օրգանական, որ անհնար էր սահմանագիծ անցկացնել և որոշել, թե որտեղ էր սկսվում կուսակցության ոլորտը և վերջանում պետության իրավասությունը:

ՉժԿ-ն իր բնույթով հանդիսանում էր «անձնական» կուսակցություն, որտեղ մեկ առաջնորդը օգտվում էր մեծ օրինական և բարոյական իշխանությունից: Այսպիսի կուսակցությունները ստեղծվում են ուժեղ քաղաքացիական հաստատվածությունների, այլ ոչ թե ծրագրերի և գաղափարների շուրջ, ինչը հարկ է դիտել որպես բնական երևույթ պետության կայացման խորհրդանիշ: Ինչպես նշում է թուրք քաղաքականագետ Այազ Փայասլեօղլուն, «կուսակցությունը ծառայում էր իբրև Արաբյուրքի և նրա քաղաքականության հենարան՝ իրեն հավատարիմ մարդկանց ներգրավման և համախմբման, ժողովրդի քաղաքական կրթության իրագործման, բարեփոխումների անցկացման, ինչպես նաև խորհրդարանական վարչակարգի

¹¹⁶ T.Z. Tunaya. Türkiye'de Siyasi Partiler. s. 569.

¹¹⁷ А.Ф. Миллер. Очерки новейшей истории Турции. Москва — Ленинград, 1948, с. 210.

ձևական կողմի պահպանման և հետագայում ժողովրդավարական զարգացման համար հող մախապատրաստելու մպատակով»¹¹⁸:

Այսպիսով՝ 1930-ական թթ. ընթացքում Հանրապետական-Ժողովրդական կուսակցության մոտ գերիշխող էր դարձել հասարակական կյանքում համաընդգրկուն, տոտալ դեր կատարելու միտումը: ՀԺԿ-ն ձեռք բերեց «պետություն պետության մեջ» կարգավիճակը: Կուսակցությունը համարվում էր ամբողջ ազգի ներկայացուցիչը, պետական ու կուսակցական մեխանիզմները նույնացվեցին, կուսակցության ծրագրային սկզբունքները ամրագրվեցին Սահմանադրության մեջ: Այս ամենն, իրոք, մտնում է միակուսակցական, ավտորիտար և ամբողջատիրական կուսակցական համակարգի մասին պատկերացումների շրջանակների մեջ: Եթե 1920-ական թթ. ժամանակաշրջանը կարելի է բնութագրել որպես քաղաքական վարչակարգի և կուսակցական համակարգի համեմատաբար ազատական շրջան¹¹⁹ (թեև հենց այդ շրջանում տեղի ունեցան քեմալական Հանրապետության պատմության մեջ առավել խոշոր քաղաքական հետապնդումները), ապա 1930-ական թթ-ին քեմալականները ոչ միայն մտադիր չէին վերջ դնել միակուսակցական վարչակարգին, այլ ամրապնդեցին այն՝ հաստատելով կուսակցապետություն և ստիպելով հասարակությանը հետևել իր քաղաքական գծին: Փաստորեն, իշխող վարչակարգի համար հենարան ծառայող քաղաքական կուսակցությունից վերածվեց հարկադրող, զինված ուժերի և բյուրոկրատական ապարատի վրա հենվող կազմակերպությանը: Տրամաբանական էր նաև, որ այս պայմաններում, երբ իշխող կուսակցությունը գուրկ էր որևէ վերահսկումից կամ ընդդիմությունից, երբ գոյություն չունեին ինքնուրույն հասարակական կազմակերպություններ և լյառավամիջոցներ, ՀԺԿ-ի ղեկավար և միջին վերահսխավոր օգտագործելու էր պետական և քաղաքական իշխանությունը սեփական անձնական մպատակների համար:

Գնահատելով վերոիշխյալ փաստերը և երևույթները՝ կարելի է եզրակացնել, որ 1920-1930-ական թթ-ին քաղաքական կուսակցությունների հետ կապված գործընթացների հետևանքով թուրքիայի քաղաքական համակարգը ձեռք բերեց ավտորիտար-ամբողջատիրական համակարգերին հատուկ գծեր. (1) միակուսակցական վարչակարգի հաստատում, (2) իշխող կուսակցության սերտաճումը պետական ապարատի հետ, (3) ամբողջ

¹¹⁸A. T. Payaslıoğlu. Political Leadership and Political Parties. in R. Ward and D.A.Rustow. The Political Modernization in Japan and Turkey. Princeton, 1964., p. 418.

¹¹⁹A. T. Payaslıoğlu. Political Leadership and Political Parties. in R. Ward and D.A.Rustow. The Political Modernization in Japan and Turkey. Princeton, 1964., p. 417.

հասարակական կյանքի միասնականացում, (4) մտածողության ավտորիտար եղանակ և ազգային առաջնորդի պաշտամունք:

դ. Բանակի գործունը Թուրքիայի քաղաքական կյանքում 1920–1930–ական թվականներին

Բանակը Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում, որպես կանոն, հանդիսացել է երկրում քաղաքական իրադարձությունների և գործընթացների գլխավոր դերակատարներից մեկը: Ջինվորականության գերակայությունը Թուրքիայի հասարակական–քաղաքական կյանքում ունի երկարատև և ուժեղ ավանդույթ: Ջինվորականների աջակցությունն էր վճռորոշ դառնում սկզբից սուլթանի և իթթիհադական վարչակարգի, իսկ ապա նաև՝ Հանրապետության առաջնորդների համար:

Թուրքիայում որևէ ժողովրդավարական ավանդույթների բացակայությունը բնական է, որ պետք է առաջին պլան որպես գլխավոր քաղաքական գործոն մղեր բանակին: Օսմանյան պետական հայեցակարգի համաձայն հզոր մահմեդական կայսրության գոյությունն անբաժան էր համարվում ուժեղ բանակի գոյությունից: Անուրանալի փաստ է նաև, որ «Մյուսթյուն և առաջադիմություն» երիտթուրքական կոմիտեի ամենամվիլիված կորիզը կազմում էին բանակային սպաները: Առանց զինվորականների *Իթթիհադը* ոչ միայն չէր կարողանա նվաճել իշխանությունը, այլև պարզապես գոյություն չէր ունենա: Բանակը վճռական դեր խաղաց նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադրման գործում: 1919–1922թթ. պատերազմի ընթացքում հայերի և հույների նկատմամբ բանակի տարած հաղթանակի շնորհիվ էր, որ հնարավոր դարձավ նոր բուրժուական պետության կազմավորումը:

Հանրապետության ղեկավարությունը կազմեցին հենց այդ բանակի հաղթական հրամանատարները: 1920–1940–ական թթ–ին քաղաքական և պետական իշխանությունը Թուրքիայում փաստորեն պատկանում էր գեներալիտետի ներակայացուցիչներին, որոնց շարքում կարելի է հիշատակել մարշալներ Քեմալ Աթաթյուրքին և Ֆեզի Չաքմակին, գեներալներ Իսմեր Ինյունյուին, Ռեջեբ Փեքերին, Ֆեհի Օքյարին: Մինչև 1950թ. զինվորականները կազմում էին մեջլիսի պատգամավորների մշտապես 15–20 տոկոսը¹²⁰. Պատահական չէր նաև, որ հանրապետությունում առաջին ընդլիմնադիր կուսակցության՝ Առաջադիմական–հանրապետական կուսակցության կորիզը ևս կազմում էին ականավոր գեներալները:

¹²⁰ D. Lerner, R. Robinson. Swords and Ploughshares. The Turkish Army as a Modernizing Force. "World Politics", vol. XIII, N 1, October 1960, p. 22.

Գնահատելով բանակի դերը երկրի քաղաքական կյանքում՝ Մուստաֆա Քեմալը 1924թ. փետրվարին ունեցած իր մի ելույթում ընդգծում էր. «Մեր հանրապետությունը ճանաչում ու հարգում է միայն ազգային կամքը և Ջինված Ուժերի կողմից ղեկավարումը»¹²¹: 1935թ. ՀԺԿ-ի չորսրդդ համագումարում ընդունված կուսակցության ծրագրում ասվում էր. «Մենք առանձնահատուկ հոգս ենք տանում, որ գերագույն պետական կառուցվածքի անսասան հիմքը հանդիսացող, ազգային խղելաները, ազգային գոյությունը և Հեղափոխությունն ու նրա արժեքները պաշտպանող Հանրապետության բանակը միշտ հարգված լինի»¹²²: Այնհայտ է, որ բանակին վերապահվում էր բացառիկ տեղ երկրի հասարակական և քաղաքական կյանքում:

Արևմտյան հետազոտողների՝ Ջ. Հարրիսի, Ս. Հանթինգտոնի, Դ. Ռասթրուի, Դ. Լեոների, Ռ. Ռոբինսոնի աշխատություններում այն տեսակետն է առաջ քաշվում, որ Մուստաֆա Քեմալը 1909թ-ից ի վեր հետևողականորեն հանդես էր գալիս քաղաքականության ու բանակի բաժանման օգտին¹²³: Իրոք, Աթաթյուրքը շեշտում էր, որ «քաղաքականությունից բանակի անջատման սկզբունքը միշտ եղել է Հանրապետության հիմնական կանոնը»¹²⁴: Թուրքիայի առաջին նախագահը նաև տեսակետ էր հայտնում, որ «ուսուցող ներքին քաղաքականությունը պետք է ավելի շատ պարտական լինի նախ և առաջ կառավարությանը, քան թե բանակին»¹²⁵:

Սակայն ճիշտ չի լինի պնդել, որ բանակը որևէ էական մասնակցություն կամ ազդեցություն քեմալական Թուրքիայի քաղաքական համակարգում: «Անկախության պատերազմում» հաղթանակ տանելուց հետո քանակն իսկապես վերադարձավ զորանոցներ՝ թողնելով քաղաքականությունը քաղաքական կուսակցություններին ու քաղաքացիական բյուրոկրատիային, բայց նա ապահովում էր իր վերահսկողությունը քաղաքական կյանքի վրա երկրի իշխող ընտրամու մեջ մեծ տոկոս կազմող զինվորականների միջնդոլավորվածությամբ: Կարելի է համաձայնել Դ. Ռասթրուի այն տեսա-

¹²¹ В. Запорожец, А. Колесников. Турция: Общество и Армия. Т. 1, Ленинград, 1983, с. 174.

¹²² J. Parker, Ch. Smith. Modern Turkey. p. 205.

¹²³ S. Huntington Political Order in Changing Societies.; D. Lerner and R. Robinson Swords and Ploughshares. The Turkish Army as a Modernizing Force. "World Politics", vol. XIII, N 1, October 1960, pp. 19-45; D. A. Rustow The Army and the Founding of the Turkish Republic. "World Politics", vol. XI, N 4, July 1959, pp. 513-552.

¹²⁴ К. Ататюрк. Избранные речи и выступления. с. 325.

¹²⁵ D. Lerner, R. Robinson. Swords and Ploughshares. The Turkish Army as a Modernizing Force. "World Politics", vol. XIII, N 1, October 1960, p. 20.

կետի հետ, որ «Քենալի ու Ինյոնյուի զինվորական հեղինակությունը լավագույն երաշխիքն էր հանդիսանում, որ զինված ուժերը բավարարվում էին իրենց ապաքաղաքական դերով»¹²⁶:

Թեպետև և՛ Քենալ Աքաթյուրքը, և՛ Իսմեթ Ինյոնյուն գերադասեցին դեկավարել երկիրը իբրև քաղաքացիական լյուերներ՝ հրաժարվելով իրենց զինվորական կոչումներից ու զինվորական համազգեստ կրելուց, և իրենց հենարանն էին դարձրել քաղաքացիական ինստիտուտները՝ մեջլիսը, պետական բյուրոկրատիան, Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը, սակայն զինվորական ու քաղաքական ոլորտների բաժանումն հանրապետությունում այնպես էլ չդարձավ լիարժեք:

Քենալ Աքաթյուրքը գիտակցում էր, որ նրա իշխանությունը վերջիվերջո կախված է զինվորականությանն նկատմամբ իր վերահսկողությունը պահպանելու հանգամանքից, ուստի, նա միշտ զգոն էր բանակում կատարվող յուրաքանչյուր հուզումների հանդեպ: Այսպես, 1924թ-ին խալիֆայության վերացման մասին որոշումն ընդունելուց առաջ նախագահը մոտ երկու ամիս շրջում էր գործաձախում, ուշադիր ծանոթանում էր հրամանատարական կազմի տրամադրություններին, խորհրդակցություններ էր վարում գեներալիտետի անդամների հետ՝ ապահովելով իր համար բանակի աջակցությունն ընդդիմության հնարավոր բողոքների դեմ¹²⁷: Նույն 1924թ. աշնանը, երբ կազմավորվեց Առաջադիմական կուսակցությունը, Մուստաֆա Քենալը, ինչպես նա հետագայում հայտարարում էր իր «Ճառում», բացահայտել էր բանակում իր անձի դեմ ուղղված դավադրություն կամ շարժում¹²⁸: Եվ նա հրամայեց բանակի բոլոր հրամանատարներին ու բարձրաստիճան սպաներին, որոնք հանդիսանում էին մեջլիսի անդամներ, վայր դնել իրենց պատգամավորական լիազորությունները: Հրամանին ենթարկվեցին բոլորը, բացի գեներալներ Ջաֆեր Թալաթից ու Ջևադ Ջանվոլադից, որոնք միացել էին առաջադիմականներին: Քենալն անմիջապես ազատեց նրանց իրենց հրամանատարական պաշտոններից: Հիմնավորումը, որը նախագահը տվեց այս կապակցությամբ, հետևյալն էր. «Ես եկել եմ այն եզրակացության, որ բանակում հրամանների կատարման համար պահանջվող աստիճանի կարգապահությունն ապահովելու միատեսակ անբույլատրելի է, որպեսզի բանակի հրամանատարները լինեն նպատամանակ պատգամավորներ»¹²⁹: Մեջլիսն օրենք ընդունեց, համաձայն որի՝ այն զինվորա-

¹²⁶ D.A.Rustow, *The Army and the Founding of the Turkish Republic*. "World Politics", vol. XI, N 4, July 1959, p. 522.

¹²⁷ K. Atatürk, *Söylev (Nutuk)*. Ankara, 1964. Ss. 578-579.

¹²⁸ Նույն տեղում, էջ 583-584:

¹²⁹ D.Lerner, R.Robinson. *Swords and Ploughshares*. P.20.

կանները, որոնք ցանկանում էին զբաղվել քաղաքականությամբ ու մեջլիս ընտրվել, պետք է հրաժարվեին իրենց բանակային ծառայությունից¹³⁰: Այսպիսով՝ մեկ հարվածով նախագահը կտրեց կապը բանակի և մեջլիսում գոյացած ընդդիմության միջև ու ապահովեց զինվորականության հավատարմությունն իր նկատմամբ:

Հենց այս հավատարմության փաստի վրա էր հիմնվում Քեմալ Աբաբյուրբի վստահությունն իր իշխանության և դիրքերի մեջ: Քանի դեռ նա վերահսկում էր բանակը, ոչ ոք չէր կարող հեռացնել իրեն: Դրա օրինակ կարելի է բերել դեռևս 1921 թ. հունիսին Անկարայում տեղի ունեցած դեպքերը, երբ իթթիհադականների կողմից փորձ կատարվեց տապալել Մուստաֆա Քեմալին: Ինչպես վերևում նշվել է, առաջին մեջլիսում գործում էին տարբեր խմբավորումներ, որոնք 1921 թ. գարնանը արևմտյան ոսգմաճակատում անհաջողությունների ազդեցության տակ համախմբվեցին Քեմալի գլխավորած կառավարությանն անվստահություն հայտնելու խնդրի շուրջ: Խոսակցություններ էին գնում անգամ Էնվեր-փաշային Ռուսաստանից կանչելու մասին: Սակայն Քեմալը իր մոտ հավաքեց բանակի հրամանատարական կազմը և մարտական պատրաստվածության բերեց Անկարայի կայազորը, որոշ պատգամավորներ՝ հիմնականում երիտարքերի համակիրները, ձերբակալվեցին: Չինվորականների ճնշման տակ մեջլիսը հաստատեց կառավարության այն կազմը, որը ներկայացվել էր Քեմալ-փաշայի կողմից¹³¹:

Այսպիսով՝ բանակի հետ կապված՝ նախագահի հիմնական հոգը եղել է, ըստ էության, ոչ թե այն քաղաքականությունից դուրս պահելու, այլ ապահովել նրա հավատարմությունն իր անձին, քաղաքական գծին ու ժառանգությունը: Աբաբյուրբը դարձրեց բանակն այն «վերջին փաստարկը», որին հարկ կլիներ դիմել, երբ զգացվեր աջակցության կարիքը նոր Թուրքիայի կառուցման ջանքերի համար: Այդ հավատարմությունը Մ.Քեմալն ապահովում էր Չինված Ռեժեի Գլխավոր շտաբի¹³² պետ մարշալ Ֆեզլի

¹³⁰ Նույն տեղում, էջ 21:

¹³¹ Докладные записки информационного отделения НКВД ССР Армении, сводки и обзоры российского информационного бюро в Турции о политическом положении в Турции, о политических течениях в Турции, о турецкой печати. - Գոնդ 114, ցուցակ 2, գործ 86, էջ 63-64:

¹³² 1924թ. մարտի 3-ի մեջլիսի որոշմամբ Գլխավոր շտաբի պետը դուրս բերվեց նախարարների խորհրդի կազմից և անմիջականորեն ենթարկվեց հանրապետության նախագահին: Բացի Գլխավոր շտաբից, որին հանձնարարված էր իրականացնել բանակի անմիջական կառավարումը, մշակել երկրի պաշտպանական ոսգմավարություն ու օպերատիվ ծրագրերը, 1924թ. հանրապետության նախագահին կից ստեղծվել էր Գերագույն ոսգմական խորհուրդը, որի մեջ մտնում էին վարչապետը, Գլխավոր շտաբի պետը, բանակային

Չարմաքի միջոցով, որը, չնայած իր պահպանողական հայացքների, մինչև վերջ հավատարիմ մնաց Թուրքիայի առաջին նախագահին: Ավելին՝ Չարմաքի խոսքը վճռական դեր կատարեց 1938թ. նոյեմբերին Իսմէթ Ինյունյուի հանրապետության երկրորդ նախագահ ընտրվելու հարցում¹³³:

Մյուս կողմից, թուրք զինվորականությունը, կազմելով Առաջին Հանրապետության իշխանության կորիզը, հրաժարվեց ռազմական վարչակարգի հաստատման գաղափարից: Քեմալական քաղաքական համակարգը չի կարելի բնորոշել որպես զուտ զինվորական դիկտատուրա. զինվորական իշխանությունը սովորաբար վերացնում է բոլոր քաղաքական ինստիտուտները՝ խորհրդարանը, կառավարությունը, կուսակցությունները: Քեմալականները, իրենց արմատներով պատկանելով զինվորականությանը, գնացին այլ ճանապարհով. նրանք, հաստատեցին միակուսակցական համակարգ, մինչդեռ զինվորական բռնապետությունները հանդես են գալիս ապակուսակցականացված վարչակարգի տեսքով, որտեղ միակ կուսակցությունն է հանդիսանում բանակը:

Հարկ է նշել, քեև, որ բանակը նախագահի կամքի հյու կամակատարը չէր: 1926թ-ին բանակի հրամանատարական կազմի ճնշման տակ Մուստաֆա Քեմալը ստիպված եղավ ազատ արձակել գեներալներ Քյազըմ Կարաբեքիրին, Ալի Ֆուադին, Ռեֆեքին և ուրիշներին, որոնք մեղադրվում էին Իզմիրի դավադրությանը մասնակցելու մեջ: Ֆուադը գրում էր, որ բանակի հրամատարները բողոք էին ներկայացրել Ֆեզին, որտեղ հայտարարում էին, որ ակամավոր գեներալների հետապնդումները վիրավորում են բանակի պատիվը և սև բիժ են գցում նրա վրա: Դրանից հետո էր, որ Քեմալը կարգադրեց ազատել ձերբակալված զինվորականներին¹³⁴:

Քեմալ Աթաթյուրքի իշխանության տարիները միայն ամրապնդեցին բանակի դերը Հանրապետության քաղաքական կյանքում, իսկ նրանից հետո այլևս ոչ ոք չէր համարձակվում բացահայտ հանդես գալ այդ դերի սահմանափակման օգտին: Աթաթյուրքը փաստորեն բանակի վրա դրեց Հանրապետության սկզբունքների ու խղետների պահապանի ու դրանց կենսագործման երաշխավորի դերը. «Մեր պողպատյա բանակը, – հայ-

կորյուսների հրամանատարները: Խորհուրդը դուրս էր գտնվում մեջքիս ու կտավաբության վերահսկողությունից՝ ենթարկվելով միայն նախագահին: Փաստորեն Գ.Լու-ն դարձավ հետագայում Թուրքիայի քաղաքականության մեջ վճռական դեր կատարող Ազգային անվտանգության խորհրդի նախատիպը:

¹³³ B. Lewis. Emergence of Modern Turkey. p. 364.

¹³⁴ G. Harris. The Role of the Military in Turkish Politics. "The Middle East Journal", vol. XIX, N 1, 1965, p. 59.

տարարում էր նա, – իր վե՛ն մարդասիրական իդեալներով գերազանցում է նախկին սուլթանական բանակին: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բանակն ազատվել է օտար հողերի գրավման և սուլթանություններ հիմնելու ու քանդելու համար նախատեսված մեկ մարդու կրքերի գործիք լինելու դառը բախտից: Այս ուժեղ ու հարգված կազմակերպությունը կազմված է ազգի հավատարիմ ու նվիրված զավակներից և ոգեշնչվում է նրա իդեալներով, որոնք ուղղված են մեր երկրի անկախ ու արժանապատիվ գոյությանը... Մեր բանակը թուրքական պողպատյա միասնության, թուրքական հզորության, թուրքական հայրենասիրության մարմնավորումն է: Մեր բանակն անսասան երաշխիքն է թուրքական հողի անձեռնմխելիության և ջանքերի վերջնական հաջողության, որ մենք հետևողականորեն գործադրում ենք Թուրքիայի իդեալներն իրականացնելու համար»¹³⁵:

Բացահայտ է, որ Աթաթյուրքը որպես թուրքական պետության առանցք և սեփական ձեռքբերումների ու ժառանգության պաշտպանության միակ վստահելի և հուսալի միջոց դիտում էր ոչ թե բյուրոկրատական ապարատը, կուսակցությունը, խորհրդարանը կամ գործադիր իշխանությունը, այլ բանակը. «Պետության, անկախության, ազգի և երկրի գոյության միակ առանցքը, – շեշտում էր թուրք առաջնորդը, – հանդիսանում է մեր հենդակնակ բանակը: Այդ պատճառով մեզ համար գլխավոր հիմնադրույթներից մեկն է լինելու շխմայել մեր ուժերն ու միջոցները մեր ռազմական կառույցների բարելավման համար»¹³⁶: Այս համոզմունքը կարելի է բացատրել ինչպես Օսմանյան պետության ամբողջ պատմության մեջ բանակի կատարած դերով, այնպես էլ Քեմալի կարյային զինվորական լինելու փաստով:

Թուրքիայի դեպքում, թերևս, կիրառելի է Ս.Հանթինգտոնի այն բնորոշումը, որ «արդիականացվող պետություններում զինվորականությունը հանդիսանում է երկրի լավագույնս կազմակերպված ինստիտուտը և դրա շնորհիվ նա գտնվում է ազգային կամքն արտահայտելու համար ավելի նպաստավոր դիրքում, քան թե կուսակցություններն ու շահերի խմբերը»¹³⁷:

Չինվորականությունն իր ուժը մշտապես զգացնել է տալիս խորը քաղաքական ճգնաժամերի պահին և միջամտում է իրադարձությունների ընթացքին, երբ, իր գնահատմամբ, սպառնալիք էր առաջանում այդ իմաստների ու պետական կարգերի համար, ինչպես, օրինակ, անջատողականություն

¹³⁵ К.Ататюрк. Избранные речи и выступления. сс. 237, 402.

¹³⁶ Նույն տեղում, էջ 315:

¹³⁷ S. Huntington. Political Order in Changing Societies. p. 85.

նը, ահաբեկչությունը կամ կրոնական ծայրահեղականությունը: Արդեն Քենալի օրոք բանակն օգտագործվում էր նմանատիպ խնդիրների լուծման համար, ինչի օրինակ կարող է ծառայել բանակային գործառնների մասնակցությունը 1925 և 1930 թթ. քրդական խռովությունների ճնշման գործում: 1920-1930-ական թթ. ի վեր թուրքիայում արմատավորվեցին այն ավանդույթները, համաձայն որոնց, բանակն, անմիջականորեն չմասնակցելով երկրի կառավարմանը, համոզես է գալիս որպես վճռորոշ քաղաքական գործոն և իր ձեռքում է պահում երկրի քաղաքական կյանքի վրա ազդեցության ու վերահսկողության լծակները¹³⁸, ինչպես նաև զինվորականության առաջնորդներն իրենց վրա վերցրեցին քաղաքական համակարգի փոփոխության և քաղաքական ինստիտուտների ձևավորման խնդիրը:

Ե. Քենալիզնը և նրա սկզբունքները որպես պետական գաղափարախոսություն

Մինչ օրս հայրենական, բուրքական և արևմտյան պատմագրության մեջ քննարկվում է այն հարցը, թե ինչ է իրենից ներկայացնում քենալիզնը՝ հստակ ու համակարգված գաղափարախոսություն¹³⁹, կոնկրետ ժամանակաշրջանում կոնկրետ խնդիրների լուծման որոշակի բանաձև, թե՞ պետության զարգացման մոդել և ռազմավարություն:

«Ուղղադավան» քենալականների կարծիքով, քենալիզնն իրենից ներկայացնում է համազգային գաղափարախոսություն, որի մեջ նմփոփված են բոլոր ազգային շահերը¹³⁹: Թուրքիզմի և պանթուրքիզմի հայտնի գաղափարախոսներից մեկը՝ Թեքին Ալիը, քենալիզմին վերագրում է «մեկ որոշակի համակարգի մեջ արտահայտված հատուկ ու որոշակի հիմունքների և գաղափարների վրա հենվող վարչակարգի» հասկացությունը¹⁴⁰: Ոռոչ հետազոտողները (Ք. Կարպատը, Ն. Բերքեսը) գտնում են, որ քենալիզնը «ազգային արդիականացման, ժողովրդավարական և ոչ դոգմատիկ գաղափարախոսություն է»¹⁴¹, իսկ բուրք պատմաբան-սցիոլոգ Շ.Մալոլինի կարծիքով, Քենալ Աբաթյուրքի հասարակական-քաղաքական հայեցակարգի հիմքում ընկած էին XX դարի սկզբին Եվրոպայում տիրապետող դիրքեր զրաված կորպորատիվիզմի և ազգային համերաշխության գաղա-

¹³⁸ Սակայն 1960 և 1980թթ. բուրքական բանակը իրականացրեց երկու հեղաշրջում՝ արձանագրելով շեղումներ քենալիզմի նախանշած ուղուց, իսկ 1971 և 1997թթ. բանակի ճնշումների տակ իշխանությունից հեռացվեցին երկրի կառավարությունները:

¹³⁹ K. Karpat. Turkey's Politics. P. 79.

¹⁴⁰ Tekin Alp. Kemalizm. s. 13-14.

¹⁴¹ E. Landau (ed.). Atatürk and the Modernization of Turkey. Leiden, 1984, p. 253.

փարսերը, որտեղ մուտք գործեցին Թուրքիա բյուրքիզմի «հայր» Ջիյա Գյո-րափի միջոցով¹⁴²:

Մեր կարծիքով, այս բնութագրումները էական են քեմալիզմը որպես 1920-1930-ական թթ. քաղաքական համակարգի «շարժիչ ուժ» վերլուծելիս: Միաժամանակ, հարկ է նշել, որ քեմալիզմը չի սահմանափակվում վերոհիշյալ սահմանումների շրջանակներով: Այն, ըստ էության, պետական և քաղաքական մոդելի առանձնահատուկ ձև էր, ինչպես նաև պետության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն: Այս առումով կարելի է համաձայնել ամերիկյան հետազոտող Է.Լ.Անդաուի այն տեսակետի հետ, որ «ժամանակակից Թուրքիայի հիմքում ընկած քեմալիզմը չի կարելի համարել բացառապես հասարակական-քաղաքական համակարգ կամ պրագմատիկ փիլիսոփայություն: Այն իրենից ներկայացնում է ինչ-որ ավելի մեծ մի բան՝ ներառելով ժամանակակից գիտությունը, տեխնոլոգիաները, կրթությունը, բարոյագիտությունը, մի խոսքով, դա արդիի մեջ երկրի ինտելեկտուալ գործընթաց է»¹⁴³:

Վերջապես, քեմալիզմին բնդիանուր զնահատական տալիս, անհրաժեշտ է հաշվի առնել, որ 1920-1930-ական թթ. ամբողջ աշխարհում տեղի էր ունենում ամբողջատիրական և ազատական գաղափարախոսությունների և քաղաքական համակարգերի բախում՝ առաջիններիս ակնհայտ առավելությամբ, և նրանում քեմալիզմը հավակնում էր ներկայանալ իբրև Թուրքիայի զարգացման «հատուկ ուղի»: Չընդունելով կոմունիզմը և քննադատորեն մոտենալով լիբերալիզմին՝ Աթաթյուրքն ընտրեց նրանց միջև միջինը՝ էտատիզմը, համաձայն որի պետությունը պետք է փաստացիորեն ղեկավարի տնտեսության զարգացման համար. «Մենք պետք է հպարտանանք նրանով, - հայտարարում էր Աթաթյուրքը, - որ մենք ոչ ոքի մնան չենք և որ մեզ հնարավոր չէ որևէ մեկին նմանեցնել: Որովհետև մենք նման ենք ինքներս մեզ...»¹⁴⁴:

Քաղաքականության գաղափարախոսական ոլորտը բազմաբնույթ երևույթ է, որը ցույց է տալիս նրա ուղղվածությունն ու իմնավորում է այս կամ այն քաղաքական քայլերը: Տվյալ ժամանակաշրջանում (իսկ դա՝ 1920-1930-ական թվականներն էին՝ XX դարի ամենազաղափարականացված ժամանակաշրջանը) բուրժական պետությունը զգում էր որոշակի ողկտրինաների կարիք, քանի որ պետության և հասարակության ամուր

¹⁴² Նույն տեղում, էջ 11:

¹⁴³ Նույն տեղում, էջ 11:

¹⁴⁴ К. Атаатюрк. Избранные речи и выступления, с. 183.

հիմքերի պահպանման համար քեմալականներին չԺԿ-ն ու քանակը դեռևս բավարար չէին: Իսկ Թուրքիայում ընդհանրապես որպես գաղափարախոսություն կարող էին հանդես գալ կա՛մ իսլամը, կա՛մ աշխարհիկ ազգայնականությունը, որն առաջ քաշվեց որպես հակակշիռ իսլամին: Դա ինչպես իսլամի պետական հայեցակարգի վրա հիմնված Օսմանյան կայսրության անկման, այնպես էլ Թուրքիայում և ամբողջ Արևելքում «ազգային պետության» լընթման տարածման գործընթացների հետևանք էր: Բացի այդ, Արաբյուրը, ըստ երևույթին, գիտակցում էր, որ թուրքերին անհրաժեշտ է ներկայացնել կոնկրետ պատմական իրավիճակով քելադրվող նոր գաղափարական ուղղություն, որը գտավ իր արտացոլումը Հանրապետական-Շողովրդական կուսակցության ծրագրում. քեմալիզմի հենասյուն էին հռչակվում Հայրենիքը, Հանրապետությունը, Ազգը և վեց «նետերը»՝ հանրապետականությունը, ազգայնականությունը, ժողովրդայնությունը, էտատիզմը, լաիցիզմը և հեղափոխականությունը¹⁴⁵, որոնց ամբողջությունը հաճախ դիտվում է որպես հենց քեմալիզմ: Փաստորեն քեմալիստական կոնցեպտը ներկայացնում իրենից արվիականության և ազգայնականության, ունիվերսալի և տեղականի տարրերի մի համադրություն:

Քեմալիզմի ծրագրային դրույթներում հանրապետականությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Հանրապետականությունը թուրք ազգի ինքնիշխանության ապահովման պահանջներին, նրա էությանն ու պատմությանը լավագույն կերպով համապատասխանող կառավարման ձև է»¹⁴⁶: Հանրապետականության հիմնարար սկզբունքը մերժում էր սուլթանական միապետության իշխանության ձևը: Ըստ այդ սկզբունքի ժողովրդի գերիշխանության իրականացման իրավունքը կարող է պատկանել միայն կառավարման հանրապետական ձևին:

Հանրապետականության սկզբունքն արդիական էր քեմալականների համար, քանի որ այն կոչված էր հակադրելու սուլթանության կամ իսլաֆայության վերականգնման ջանքերին, որոնց վտանգը 1920-ական թթ-ին իրական էր: Չմայած, դեռևս երիտթուրքերի կառավարման շրջանում սուլթանի իշխանությունը դարձել էր գուտ ձևական: Մակայն փաստորեն մինչև 1923թ. Թուրքիայում հանրապետականություն դավանող քաղաքական հոսանք չի եղել: «Անկախության պատերազմը» վարվում էր սուլթանության-իսլաֆայության փրկության կարգախոսի տակ: Մեջլիսն էլ իր համոզմունքներով ամենևին հանրապետական չէր: Բայց արդեն պատերազմի

¹⁴⁵ J. Parker and Ch. Smith *Modern Turkey*. P. 235-237.

¹⁴⁶ Э. Гасанова. Об идеологических основах кемализма и их современном толковании в Турции. "Народы Азии и Африки", 1968, N 3, с. 33.

Ժամանակ Մ.Քեմալը գրում էր իր զինակիցներից մեկին՝ Մ.Քանսույին. «Հաղթանակից հետո պետության կառավարման ձևը լինելու է հանրապետությունը»¹⁴⁷: Փաստացիորեն 1920թ. ապրիլից սկսած Թուրքիայում քեկուզև ոչ պաշտոնապես, գործում էր հանրապետական կարգը:

Ժողովրդայնության սկզբունքը հռչակում էր, որ «Թուրքիայի Հանրապետության ժողովուրդը բաղկացած չէ առանձին դասակարգերից, այլ բաժանվում է տարբեր մասնագիտություններից պատկանող անձանց վրա»¹⁴⁸: Այս սկզբունքի մեջ Ք.Աթաթյուրքը տեղադրում էր ազգային համերաշխության և իրար հակադրվող դասակարգային շահերի բախման բացակայության հասկացությունները: 1923թ. Իզմիրի տնտեսական կոնգրեսում նա հայտարարում էր. «Մեր ժողովուրդը կազմված չէ դասակարգերից, որոնց նյութական շահերը հակադիր են իրար, այլ, հակառակը, այն բաղկացած է դասերից, որոնք շահագրգռված են փոխադարձ գոյության և համատեղ գործունեության մեջ»¹⁴⁹: Այս սկզբունքով քեմալիզմը որպես կարևորագույն հասարակական կատեգորիա դիտում էր ազգը՝ հակադրելով այն դասակարգերի հայեցակարգին, ազգային միասնության գաղափարը՝ սոցիալական կոնֆլիկտներին: Դեռ Ջ.Գյոքալվին էր առաջ քաշում կորպորատիվ պետության և հասարակության գաղափարը. «Ժամանակակից պետության մեջ հասարակության, ազգի բոլոր անդամները դիտվում են որպես իրար հավասար անձինք: Ո՛չ անհատը, ո՛չ ընտանիքը, ո՛չ էլ դասակարգը չեն կարող դիտվել որպես հատուկ և առանձնաշնորհյալ խմբեր»¹⁵⁰: Ժողովրդայնության սկզբունքի առաջքաշումով քեմալականները փորձում էին հակադրել դասակարգային պայքարի հայեցակարգին, որը բավականին տարածված էր տվյալ ժամանակաշրջանում: Քեմալականները հասկանում էին այդ սկզբունքը որպես ժողովրդական գերիշխանության և ոչ դասակարգային հիմքերի վրա կառուցվող հասարակության ստեղծման գաղափար, որը, սակայն, այն իրականում չէր կենսագործվում Թուրքիայի գոյություն ունեցող քաղաքական համակարգի պայմաններում, որտեղ որոշիչը զինվորական-պաշտոնյա վերնախավի, այլ ոչ քեմալիզմի կամքն էր:

¹⁴⁷ M.Kansu. Erzurum'dan Ölümlüne Kadar Atatürk'le Beraber. c.1, s. 131.

¹⁴⁸ Ç. Keyder. State and Class in Turkey. p. 98.

¹⁴⁹ К.Атаюрк. Избранные речи и выступления. с. 280–281:

¹⁵⁰ Ю. Дятлов. Некоторые аспекты националистической доктрины турецкого философа Зии Гекалья. "Османская империя: государственная власть и социально-политическая структура", Москва, 1990, с. 329.

«Ազգայնականության» սկզբունքն էական դեր կատարեց Թուրքիայի քաղաքական կյանքում: Այն հնարավոր է կիրառել ինչպես ազգային պետության գաղափարախոսության, այնպես էլ այդ գաղափարախոսության ամենաազդեհիվ՝ ազգայնամոլության առումով: Ազգայնականությունն առանձին վերցված մի երևույթ չէ, այլ մի քանի բազմազան երևույթների ամբողջություն՝ սկսած մշակութային նոր ուղղություններից մինչև բարձր աստիճանով կազմակերպված ու մշակված ռասայական և ազգային բացառիկության ուսմունքը: Քեմալականները ներկայացնում էին այն «ազգային պետության» հասկացության առումով, որն արտահայտում էր ծագումով, լեզվով և մշակույթով միատարր բնակչությունից կազմված պետության գաղափարը, որը դարձավ ժամանակակից Թուրքիայի քաղաքական մտքի գերակայող հոսանքներից մեկը, եթե ոչ հիմնականը:

Նորաստեղծ Հանրապետության ղեկավարության 1920-ական թթ-ին որդեգրված տեսակետի համաձայն՝ «ազգը սոցիալական և քաղաքական կազմավորում է, որը բաղկացած է իրար հետ լեզվի, մշակույթի ու խղճալի ընդհանրությամբ կապված քաղաքացիներից»¹⁵¹: Այս տեսակետը շրջանառության մեջ է դրվել Ջիյա Գոթբալիի կողմից, որի կարծիքով նաև, «ազգը ոչ թե ռասայական, էթնիկական, աշխարհագրական, քաղաքական կամ կամավոր ստեղծված խումբ է, այլ լեզվական, կրոնական, բարոյական, և էսթետիկական ընդհանրությամբ միավորված անհատներից կազմված խումբ է»¹⁵²: Այսպիսով՝ կարծես թե առաջին հայացքից, ազգայնականությունը՝ իր ազգային սահմանների մեջ ապրող բուրքական հասարակության անդամների գիտակցված հավատարմության և փոխօգնության հիմքի վրա միավորված ազգային պետություն ստեղծելու և նրա ամբողջականությունն ապահովելու հայեցակարգ էր: Համաձայն խորհրդային պատմաբանների, մասնավորապես՝ Ա. Մյուլերի տեսակետի, քեմալական ազգայնականությունն ավելի պրոգրեսիվ էր, քան թե «նոր օսմանների» քվազիազգայնականությունը կամ երիտթուրքերի բյուրքիզմը, որը վերածվեց պանբյուրքիզմի: Աթաթյուրքն, ըստ այդմ, անջատեց բյուրքիզմը պանբյուրքիզմից: Նրա ընկալմամբ բյուրքիզմը ոչ այլ ինչ էր, քան «բյուրքական ազգայնականությունը Թուրքիայի սահմանների մեջ»¹⁵³: Սակայն, պետք է նշել նաև, որ ազգայնականության քեմալիստական ըմբռնումը բխում էր ոչ թե հստակ գաղափարախոսական հայեցակարգից կամ համոզմունքների համակարգից,

¹⁵¹ N.Berkes. The Development of Secularism in Turkey. Montreal, 1964, p. 251.

¹⁵² Z.Gökalp. The Principles of Turkism. Leiden, 1968, p. 15.

¹⁵³ К.Атаюрк. Избранные речи и выступления. с. 109.

այլ կոնկրետ պատմական—քաղաքական իրավիճակից, որն Աքաբյուրքի առջև դրել էր միասնական երկիր, միասնական թուրք ժողովուրդը և միասնական թուրքական ազգային պետություն կազմավորելու խնդիրը:

Այս տեսանկյունից հարկ ենք համարում առանձնացնել քեմալիստական ազգայնականության հետևյալ կողմերը: Առաջինը, ինչպես վերևում արդեն նշվել է, ազգայնականության կոնցեպցիան քեմալական Թուրքիայում կոչված էր մերժելու կրոնական հիմքի վրա կազմավորվող պետությունների գաղափարը: Այդ մերժումը խորհրդանշեցին սուլթանության ու խալիֆայության վերացումը և ազգի գերիշխանության սկզբունքի վրա ստեղծված կառավարման հանրապետական ձևի հռչակումը: Քեմալականները հետևողականորեն փոխարինում էին կրոնական, տեղական և խմբային հայրենասիրությունն ու ինքնությունն ազգային ինքնությամբ ու հայրենասիրությամբ և կերտում էին էթնիկապես և մշակութապես միատարր հասարակություն՝ հետևելով եվրոպական ազգային պետությունների օրինակին:

Երկրորդը, ազգայնականությունը քաղաքական ղեկավարության կողմից ընկալվում էր մաս որպես ուժեղ քաղազական գործիք, որի միջոցով հնարավոր կլինէր թուրքերի համար վերագտնել ինքնավստահությունն ու ազգային արժանապատվությունը, հաղթահարել օտար մշակույթների և տերությունների առաջ ունեցած թերաթժեքության քարոզչությունը: Սակայն այդ քաղազությունը ստացավ ծայրահեղացված բնույթ՝ 1920–1930–ական թթ–ին հասնելով նրան, որ, մասնավորապես, պաշտոնական քառահատորյա «Պատմության» (*"Tarih"*)¹⁵⁴ մեջ պնդվում էր, որ մարդկային քաղաքակրթության «սկզբնավոր և ջահակիրն» է թուրքը, գիտակցաբար կեղծվում և չափազանցվում էր թուրքերի դերը համաշխարհային պատմության և քաղաքակրթության մեջ. թուրք ազգը հայտարարվեց համաշխարհային քաղաքակրթության հիմնադիր, որ թուրքերն են ստեղծել առաջին քաղաքները, առաջին գրերը: Նման տեսակ հայտարարություններ հաճախ կարելի է հանդիպել Աքաբյուրքի մոտ. «Որևէ կասկած չկա, – շեշտում էր Մ.Քեմալը, – որ թուրք ազգի էությունը մեծ է: Թուրք ազգը աշխատասեր է: Թուրք ազգը բանիմաց և խելացի է: Ի՞նչ երջանիկ են են թուրք լինել»¹⁵⁵:

Թուրքական ազգային ինքնության վերախմաստավորումը հանդիսանում էր քեմալական վերնախավի առջև ծառայած առավել ղվար խնդիր-

¹⁵⁴ Նրա գլխավոր խմբագիրն ու հովանավորը նախագահ Մուստաֆա Քեմալն էր, և այդ գործը չունէր որևէ կապ իսկական պատմագիտության հետ:

¹⁵⁵ S.S. Aydemir Tek Adam, c.3, s.348.

ներից մեկը: Հանրապետության դեկլարությունը, օգտվելով իր նախորդների քաղաքականության արյունքներից՝ Թուրքիայի ոչ մահմեդական բնակչության կոտորածները, բռնագաղթը և տարագրումը, որդեգրեց բնակչության միատարրության, լեզվի մշակույթի և մտածելակերպի միասնականացումը: Այդ քաղաքականության դրսևորման օրինակ կարող է ծառայել 1925թ-ին «Թուրքական օջախների» համագումարում վարչապետ Իսմեթ-փաշայի բացահայտ հայտարարությունը. «Ազգայնականությունը մեր գործունեության միակ գործոնն է: Մենք պետք է ամեն զնով բրբացներ բոլորին, ով ապրում է մեր հասարակության մեջ»¹⁵⁶: Արժանի է հիշատակման նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովում 1930թ-ին ընդունված օրենքը, համաձայն որի, կառավարությունն իրավունք էր ստանում բնակեցնել ոչ թուրքերին թուրք բնակչության մեջ, որպեսզի նրանք յուրացնեն թուրքերեն լեզուն և թուրքական մշակույթը»¹⁵⁷: Ազգային ինքնության իմաստավորումը Թուրքիայում վերածեց փաստորեն արմատական ազգայնականության կամ, պարզ ասած, ազգայնամոլությանը: Ինչպես հայտնի է, թուրքական ազգային պետության ստեղծումն ուղեկցվում էր Անատոլիայի հայ և հույն բնակչության կոտորածներով և վերջնական տեղահանությամբ, քրդական բնակչության հանդեպ կիրառվող գտումների քաղաքականությամբ, թուրքերեն լեզվի միասնականացման և մաքրման ընթացքով¹⁵⁸: Քեմալական ազգայնականությունը խարխսվում է այն համոզման վրա, որ երկրում բնակվող յուրաքանչյուր մարդ, ով չի պատկանում թուրք ազգին, լինի այն բուրդ, հայ թե հրեա, պարտավոր էր դառնալ թուրք: Մույն դրույթն արտացոլվեց Թուրքիայի 1924թ. Սահմանադրության 88-րդ հոդվածում, որտեղ ասվում էր. «Թուրք է հանդիսանում Թուրքիայի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր անձ՝ առանց ազգության և հավատքի տարբերության»¹⁵⁹: Այս դրույթը պահպանվեց նաև Հանրապետության երկրորդ՝ 1961թ. և երրորդ՝ 1982 թ. Սահմանադրությունների մեջ:

Բնականաբար, նման մոտեցումները հաշվի էին առնվում երկրի քաղաքական համակարգի ձևավորման և վերահսկման գործում: Այսպես, եթե

¹⁵⁶ А. Колесников. Народные дома в общественно-политической и культурной жизни Турецкой Республики. Москва, 1986, с. 65с

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 257:

¹⁵⁸ Քեմալականները, հետևելով սուլթան Աբդուլ-Համիդ II-ի և երիտթուրքերի օրինակին, սկզբից՝ 1919-1922 թթ. պատերազմի ընթացքում կազմակերպում էին հայերի, հույների և այլ ժողովուրդների ջարդերը Կիլիկիայում, Պոնտոսում, Հայաստանում, Իզմիրում, իսկ ապա՝ Հանրապետության ժամանակաշրջանում, հրաժարվեցին ճանաչել ոչ թուրք ժողովուրդների ազգային իրավունքները երկրում, ինչը հանգեցրեց ազգային հարցի սրմանը համարվելուսական Թուրքիայում նրա գոյության առաջին իսկ տարիներին:

¹⁵⁹ Конституции государств Ближнего и Среднего Востока., с. 515.

օսմանյան մեջլիսում կամ կառավարությունում եղել են հայ, հույն, հրեա և այլ ազգությամբ պատգամավորներ, սպա Ջեմալ Արաքյուրքի իշխանության շրջանում ազգային փոքրամասնությունների ցերեպայացուցիչների¹⁶⁰ համար խորհրդարան կամ կառավարություն մուտք գործելուն արգելք դրվեց: ՀԺԿ-ի անդամ չէին կարող դառնալ ազգությամբ ոչ թուրքերը. «Համարվում էր, որ միայն թուրքերը և ՀԺԿ-ի անդամները կարող են գրադվել Թուրքիայի համար օգտակար գործունեությամբ»¹⁶¹: ՀԺԿ-ի գլխավոր քարտուղար Ռեֆեի Փեքերը ընդգծում էր, որ թուրք կարող են համարվել Թուրքիայի այն բոլոր բնակիչները, այդ թվում և՛ քրիստոնյա ու հրեա փոքրամասնությունները, եթե նրանք խոսում են թուրքերեն լեզվով և դավանում են թուրքական խղեսկները¹⁶²:

Ըստ էության, Թուրքիան չկարողացավ ազգային ինքնության հաստատման ընթացքում խուսափել էթնոկենտրոն ինքնասահմանափակումից, որը պարունակում էր ազգային բացառիկություն և շովինիստական ուժեղ հնչեղություն: Ժառանգելով իրիհադականներից ազգային փոքրամասնությունների հանդեպ տարվող քաղաքականությունը՝ բնավիզմը «Թուրքիան թուրքերինն է» կարգախոսը դարձրեց տիրապետող թուրքերի ազգային մտածելակերպի մեջ:

Թուրքիայում առկա էր և շարունակում է գոյություն ունենալ «պետական ազգայնականություն», որը կարելի է բնութագրել որպես տվյալ անկախ պետությանը պատկանելության զգացմունքի, լեզվի, մշակույթի և ազգային խղեսկի միասնության, եղած տարածքային սահմաններում ստեղծված պետականության վարժեք ամրապնդման և ազգային բացառիկության հայեցակարգ, որը, ելնելով պատմական և քաղաքական հանգամանքներից, հրաժարվել էր իսլամական աշխարհի և էթնիկական թյուրքերի նկատմամբ ունեցած օսմանյան ու երիտթուրքական հավակնություններից, միաժամանակ բացառելով նախկինում Թուրքիայի պետական և քաղաքական համակարգերում էական դեր կատարած հայերի, հույների, հրեաների մասնակցությունը պետական և քաղաքական գործունեությանը: Ջեմալ Արաքյուրքը և նրա զինակիցները հստակ կերպով հետևում էին իրենց այն ըմբռնմանը, որ Թուրքիայի Հանրապետության կայունությունը և

¹⁶⁰ Խոսքը տվյալ դեպքում չի գնում այն պետական և քաղաքական գործիչների մասին, որոնք ծագմամբ թուրք չլինելով, իրենց համարել են թուրք: Հիմնականում դրանք կովկասյան ազգությունների կամ «ոյունե» քրթացած հրեաների շրջանակներին պատկանող անձինք էին:

¹⁶¹ P. Кондакчян. Турция: внутренняя политика и ислам. Ереван, 1983, с. 77.

¹⁶² Tekin Alp. Kemalizm, s. 253.

ուժը մեծ մասամբ պարտական են իր բնակչության միատարրությանը, որը ձեռք էր բերվել բռնի թրջացման քաղաքականության շնորհիվ:

Քեմալիստական հաջորդ սկզբունքը՝ լաիցիզմը կամ աշխարհիկ իշխանության գերակայությունը ժամանակակից Թուրքիայի հեմասյունեյից մեկն է հռչակվել և հռչակվում: Նախ և առաջ, քեմալականները լաիցիզմը դիտում էին իբրև գլխավոր պայման՝ Թուրքիային արդիական արևմտյան քաղաքակրթության մակարդակին հասցնելու համար. «Համարելով կրոնական հայացքները խղճի գործ, - նշվում է ԺԿ-ի ծրագրում, - կուսակցությունը որպես առաջընթացի ուղու վրա ազգի հաջողության գլխավոր գրասվական է դիտում կրոնական գաղափարների անջատումը պետական և աշխարհիկ գործերից, ինչպես և քաղաքականությունից»¹⁶³:

Լաիցիզմը ընկալվում է Է:սև որպես հասարակական-քաղաքական կյանքում կրոնի ազդեցության բացառում: Օսմանյան պետության մեջ ամբողջ հասարակական գործունեությունը՝ ներառելով նաև քաղաքական կյանքը, հենվում էր կրոնական հիմքի վրա: Այս պայմաններում աշխարհիկ կենսակերպի և հասարակարգի գաղափարը հանդես եկավ ինչպես քաղաքական իշխանության կառուցվածքում կրոնական հիմունքների և հաստատությունների վերացման իմաստով, այնպես էլ անհատական և հասարակական կենսակերպի բոլոր ոլորտները կրոնական վերահսկողությունից հեռու պահելու իմաստով: Մուստաֆա Քեմալի կողմից վարվող լաիցիզմի քաղաքականությունը, եզրակացնում է հոլանդացի հասարակագետ Կ. ֆոն Նյուվենհույզեն, «մի կենտրոնացված գրոհ էր արձատավորված պահպանողական ինստիտուտների և սիմվոլների վրա՝ սկսած դերվիշական եղբայրություններից մինչև արաբերեն լեզվի և գրի օգտագործումից հրաժարվելն ու հագուստը»¹⁶⁴:

Մյաժամանակ քեմալական վարչակարգի համար լաիցիզմը չէր նշանակում անաստված պետության ստեղծում, այն պարզապես մերժում էր իսլամի՝ որպես «պետական կրոնի» կարգավիճակը. «Դարեր շարունակ կապված լինելով մեր իսլամի կրոնի հետ, - հայտարարում էր Մուստաֆա Քեմալը 1924 թ-ին, - մենք այսօր անհրաժեշտություն ենք դիտում ազատել նրան քաղաքականության միջոց ծառայելու դիրքից: Միայն այդ դեպքում իսլամական հավատքը կարտահայտի իր վեհ որակները»¹⁶⁵: Քեմալի և նրա շրջապատի իրական նպատակը, գտնում է բուրք սոցիոլոգ Մետին Հեփերը, եղել է ոչ քն կրոնի լիակատար բացառումն, այլ այն դուրս

¹⁶³ Мустафа Кемаль. Путь новой Турции. т. 4, с. 323.

¹⁶⁴ C.A.O.von Nicuwenhuijze. Sociology of the Middle East. Leiden, 1971. p. 348.

¹⁶⁵ Atatürkün Söylev ve Demeçleri. C 2. Ankara, 1961. s. 314.

պահել պետական և հասարակական կյանքից, «հասցնել ինստիտուցիոնալ սեկուլյարիզացումը իր տրամաբանական ավարտին՝ լիովին ազատելով պետությունը կրոնական աշխարհայացքից»¹⁶⁶:

Թուրքական քաղաքական գիտակցության գլխավոր առանձնահատկություններից մեկն էր եղել և մնում այս կամ այն ձևով քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում պետական միջամտության հիմնավորումը կամ գերակայությունը. «Պետությունը դարձավ իշխանության գործունեության և ոգեշնչման աղբյուր, որը կերտում է հզորության, գիտելիքների և իմաստնության մարմնավորման իր կերպարը»¹⁶⁷: Հենց այս ղեկավարման արտացոլում է բեմալիզմի հիմնարար սկզբունքում՝ էտատիզմում: Կարելի է համաձայնել թուրք հասարակագետ Օմեր Մեհմետի այն տեսակետի հետ, որ իրականում էտատիզմն առավելապես հանդիսանում է «ավելի շուտ ազգային շինարարության մարտահրավերներին դիմագրավող ներքին զարգացման և աճի ռազմավարություն, քան թե դոգմատիկ գաղափարախոսություն»¹⁶⁸: Խորհրդային թուրքագետ Ն. Կիրենկո առաջ է քաշում այն կարծիքը, որ «պետության համարնդգրկուն մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ գաղափարախոսական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, հանդիսանում է Թուրքիայի պատմական զարգացման ակնհայտ առանձնահատկությունը»¹⁶⁹: Էտատիզմը, ըստ Կիրենկո, արտացոլում էր քաղաքական իշխանության ավտորիտար բնույթը Թուրքիայում և ներառում էր իր մեջ այնպիսի ձևեր, ինչպես, օրինակ, պետության միջամտությունը կադրերի պատրաստման, ազգային կրթության ամբողջ համակարգի գործունեության մեջ: Դա մակ պետության տիրապետող դիրքն է սոցիալական ծրագրերում, պետական ապարատի լայն լիազորությունները հասարակական կյանքի համակարգման գործում, զինված ուժերի կողմից պետության և քաղաքական համակարգի նկատմամբ «խնամակալությունն» է¹⁷⁰:

Արաքյուրքը, հայտնելով իր կարծիքն էտատիզմի մասին, նշում էր. «Էտատիզմի հիմք պետք է ծառայեն մասնավոր ձեռնարկություններն ու անհատական նախաձեռնությունը, սակայն, հաշվի առնելով մեր մեծ ազգի

¹⁶⁶ M. Heper. Islam, Polity and Society in Turkey: A Middle Eastern Perspective. "The Middle East Journal", vol. 35, N 3, Summer 1981, p. 350.

¹⁶⁷ K. Karpat (ed.) Political and Social Thought in the Contemporary Middle East. New-York-Washington. 1968, p. 6.

¹⁶⁸ Ö. Mehmet. Turkey in Crisis: Some Contradictions in the Development Strategy. "International Journal of Middle East Studies", vol. 15, N 1, February 1983, p. 58.

¹⁶⁹ Н. Киреев. История этатизма в Турции. Москва, 1991, с. 5.

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 6:

բոլոր պահանջումքները և այն, որ մասնավոր կապիտալն ընդունակ չէ շատ քան անել. տնտեսությունը պետք է հսկվի պետության կողմից»¹⁷¹:

Թուրքական Էտատիզմը դա տնտեսության պետական հսկողությունն էր, որն ուներ մաս անհատական նախաձեռնության խրախուսման տարրեր: Էտատիզմի քաղաքականությունը թելադրվում էր երկրում զարգացած տնտեսական համակարգի գրեթե լրիվ բացակայությամբ և քաղաքական համակարգում Էտատիստական հայացքներ դավանող վերնախավի առկայությամբ: Ընդ որում, եթե հնչում էր կառավարության Էտատիստական կուրսի քննադատությունը, ինչպես դա տեղի է ունեցել Առաջադիմական և Լ.Իբրալ կուսակցությունների գործունեության շրջանում, ապա այն ուղղված էր ոչ թե այդ քաղաքականության բուն գաղափարին, այլ դրա կիրառման ձևերին: Էտատիզմը մաս չէր հանդիսանում բոլոր տնտեսական միջոցների կոլեկտիվացման և մասնավոր սեփականության մերժման հայեցակարգ, այլ առաջ էր տանում այն դրույթը, որ պետությունը կոչված է դեկավարել և կարգավորել տնտեսական գործունեությունը երկրում:

Վերջապես, քեմալիզմի վեցերորդ «նետը»՝ հեղափոխականության սկզբունքը արտահայտում էր Թուրքիայի քաղաքական, հասարակական ու տնտեսական կառույցների և թուրք ժողովրդի մտածելակերպի ու կենսակերպի մեջ մշտական, դիմամիկ և համալիր փոփոխությունների ապահովման գաղափարը: Մ.Քեմալը մեկնաբանում էր այն հետևյալ կերպով. «Վերջին դարերում թուրք ազգի հետամնացության պատճառ հանդիսացող հաստատությունները քանդելով՝ դրանց տեղը հիմնելու ենք ազգի քաղաքակրթության կարիքներին համապատասխանող և նրա առաջընթացն ապահովող հաստատություններ»¹⁷²: Այդ սկզբունքը պետք է ապահովեր ժամանակակից մտածելակերպի և մշակույթի յուրացումը Թուրքիայի կողմից: Հեղափոխականությունը քարոզում էր հավատարմություն բարեփոխումների գաղափարին: Թուրք մասնագետները, մասնավորապես Օ.Սեհմետը, գտնում են, որ «այս սկզբունքի տակ Աբաբյուրքն ի նկատի ուներ ընդդիմությունը կույր պահպանողականության և կոպիտ ավանդապաշտության հանդեպ»¹⁷³:

Այսպիսով՝ Թուրքիայի Առաջին Հանրապետությունում գաղափարախոսությունը կատարում էր երկու հիմնական գործառույթ. (1) այն փորձում էր ստեղծել նոր ազգային ու քաղաքական ինքնություն, որը ծառայում է

¹⁷¹ А. Колесников. Народные дома. Москва, 1984, с. 24.

¹⁷² Afetinan. Kurtuluş savaşının bazı belgeleri ve Atatürk'ün İnkılap prensipleri. "Bellekten", с. XXXII, N 128. Ekim 1968, s. 7.

¹⁷³ Ö. Mehmet. Turkey in Crisis. p. 58.

որպես ժամանակակից ազգային պետության հիմք: Այս որակով քեմալիստական գաղափարախոսությունը կարելի է անվանել ազգայնական: (2) այն մի շարք քաղաքական, տնտեսական և մշակութային ձեռնարկումներով փորձում էր համախմբել պետական կյանքում վճռորոշ գործոնները: Դրանով քեմալիստական գաղափարախոսությունը կարելի է համարել կորպորատիվ և էտատիստական:

Վերոհիշյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քեմալիզմը առաջ քաշվեց որպես Թուրքիայի զարգացման ուղի կամ ռազմավարություն, որը, սակայն, ստեղծվել է ոչ թե որպես մշակված, հեռահար գաղափարախոսական և քաղաքական համակարգ, այլ բխում էր Թուրքիայի Հանրապետության կայացման ժամանակաշրջանի պահանջներից՝ իրականացնելով կոնկրետ գործնական նպատակներ, որոնք հետապնդվում էին Զեմալ Աթաթյուրքի կողմից:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1920-1930թթ.)**

Քաղաքական համակարգի ուսումնասիրության խնդիրը սերտորեն առնչվում է քաղաքական ղեկավարության (լիդերության) պրոբլեմի հետազոտման հետ: Յուրաքանչյուր պետության մեջ քաղաքական իշխանության մեխանիզմը գործում է գլխավոր դերակատարների՝ քաղաքական կուսակցությունների, քաղաքական առաջնորդների և քաղաքական ընտրանու միջոցով: Քաղաքական լիդերության միջոցով բացահայտվում է քաղաքականության իրականացման գործընթացի էությունը: Իշխանությունը՝ դա մարդիկ են, որոնք կազմում են այն և գործում նրա ներսում: Քաղաքական ղեկավարները և ընդհանրապես քաղաքական ընտրանին որոշակի ավանդ են ներդնում քաղաքական համակարգի ձևավորման, գործունեության և փոփոխությունների գործում: Այս գլխում փորձ է արվում դիտարկել քաղաքական լիդերության և քաղաքական ընտրանու երևույթները Թուրքիայի քաղաքական համակարգի կտրվածքով: Այս առումով ուշագրավ է Քեմալ Աթաթյուրքի՝ որպես պետական և քաղաքական ղեկավարի կերպարը, որն ուղղություն էր տալիս երկրի քաղաքական գործընթացներին: Սակայն նախքան դրան անդրադառնալը հարկ ենք գտնում համառոտ կանգ առնել քաղաքական լիդերության տեսակների և Թուրքիայում դրանց դրսևորման վրա:

ա. Քաղաքական ղեկավարման ավանդույթն ու տեսակները Թուրքիայում

Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն էր, որ իր գոյության առաջին տարիներին նա խաբխսվում էր ոչ թե գաղափարական և ինստիտուցիոնալ հիմքերի, այլ երկրի ղեկավարների, հատկապես՝ նրա առաջին նախագահի անհատական քարիզմայի վրա: Մինչդեռ քարիզմատիկ ղեկավարումը Թուրքիայում մինչև 1920-ական թթ. տարածում չուներ: Օսմանյան պետությունը ճանաչում էր կամ աշխարհակալ սուլթանների, կամ բռնակալ Աբդուլ-Համիդ II, կամ բախտախնդիր Էնվեր-փաշայի ղեկավարությունը: Լինում էին որոշ ժամանակաշրջաններ, երբ Օսմանյան կայսրությունում քաղաքական ղեկավարումը բուլանում էր, նրանում մեծ նշանակություն էին ձեռք բերում տեղական կառավարիչների, խոշոր ավատատերերի, ցեղապետների, շեյխերի և կենտրոնական բյուրոկրատիայի իշխանական

փոխհարաբերությունները: Ընդհանրապես, օսմանյան ղեկավարությունն առաջնորդվում էր դիմաստիկ սկզբունքով և իմաստիտուտներով, ինչպես և իսլամի արժեքներով և ավանդույթներով: Օսմանյան ղեկավարության մեջ գերագույն իշխանության և լեգիտիմության խորհրդանիշը հանդիսանում էր սուլթանը: Հայտնի գերմանացի հասարակագետ Մաքս Վեբերը բնութագրում էր սուլթանությունը որպես քաղաքական ղեկավարության ավանդական-լեգիտիմ տեսակ¹⁷⁴: Նման լիդերության դեպքում քարիզմատիկ առաջնորդի համար տեղ սովորաբար չի գտնվում, իսկ պետական և քաղաքական գործունեության հիմնական դերակատարը հանդիսանում էր զինվորական-բյուրոկրատական վերնախավը ժառանգական միապետության հսկողության տակ:

«Քարիզմատիկ ղեկավարություն» երևույթն ունի բազմաթիվ մեկնաբանություններ հասարակական և քաղաքական գիտությունների մեջ. դրանցից ամենատարածվածն ու ընդհանուրը հետևյալն է. քարիզման՝ անհատի ոչ սովորական, գերբնական, հատկություններն են, որոնք թույլ են տալիս նրան ենթարկել իրեն բնակչության զանգվածներին և խմբերին: Քարիզման մասն առաջնորդ լինելու կոչում է և անհատական սկզբունքի գերակայությունն է: Քարիզմատիկ ղեկավարության մասին իր աշխատության մեջ Մաքս Վեբերը նշում է, որ «քարիզմա հարկավոր է կոչել անհատի որակը, որը ընդունվում է որպես ոչ սովորական, որի շնորհիվ տվյալ անհատը գնահատվում է որպես գերբնական, գերմարդկային կամ, առնվազն, առաձեռնահատուկ, այլ մարդկանց համար անհասանելի ուժերի և հատկությունների տեր: Այն դիտվում է որպես աստվածատուր շնորհ կամ նմուշ»¹⁷⁵: Մ. Վեբերը նկատել է ևս մի տարբերություն ղեկավարման ավանդական և քարիզմատիկ տեսակների միջև. «Եթե ավանդական ղեկավարման, ինչպես, օրինակ, սուլթանության տեսակը կողմնորոշված է դեպի անցյալը և կանոնների պահպանումը, ապա քարիզմատիկ ղեկավարումը «բանդում է այդ անցյալը»¹⁷⁶: Դրանով քարիզմատիկ առաջնորդը կարող է հանդես գալ իբրև մեծ հեղափոխական ուժ, որը իրականացնում է արժատական վերափոխում հասարակական մտածողության և գործունեության ուղղությունների մեջ: Բացի այդ, քարիզմատիկ առաջնորդը տիրապետում է ամենաան-

¹⁷⁴ М. Вебер. Экономика и общество. Избранные сочинения. Москва, 1991. с. 196.

¹⁷⁵ М. Вебер. Харизматическое господство. — "Социологические исследования", N 5, 1988, с. 139.

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 141:

հուսալի իրադրության մեջ վստահություն ու քաջություն ներշնչելու և մարդկանց գործողությունների մղելու կարևոր ունակությամբ:

Քարիզմատիկ ղեկավարությունն առաջ է գալիս այնտեղ, որտեղ տեղի է ունենում իշխանության ավանդական ինստիտուտների փլուզում կամ ստեղծվում է յուրջ սպառնալիք երկրի և ժողովրդի անվտանգության համար: «Քարիզմատիկ ղեկավարությունը, – նշում է Դ. Ռասպուն, – դա ճգնաժամային ղեկավարության ձև է»¹⁷⁷: Օսմանյան կայսրության փլուզումն էլ ստեղծեց հենց նման մի իրավիճակ՝ հանգեցնելով, բնականաբար, քաղաքական ղեկավարության ավանդական տեսակի վերացմանը: Համազգային ճգնաժամը՝ այսպես կոչված «Անկախության պատերազմը», առաջ քաշեց արդեն քարիզմատիկ առաջնորդին՝ զեներալ Մուստաֆա Քեմալ-փաշային: Քարիզմատիկ առաջնորդը, սովորաբար, իր ուսերի վրա է վերցնում ազգի «փրկության», հասարակության համախմբման և արդիականացման առաքելությունը: Եվ Մուստաֆա Քեմալի կերպարը հաճախ ընկալվում է Թուրքիայի «փրկիչ» լուսապսակով:

1920–1930–ական թթ. Թուրքիայում պետության և կուսակցության առաջնորդն ուներ չափազանց ուժեղ իշխանական ու բարոյական ազդեցություն հասարակությունում՝ հանդես գալով որպես առանձնահատուկ առաքելության կրող, այսինքն՝ որպես քարիզմատիկ լիդեր: Քարիզմատիկ առաջնորդներն իրար հետ են կապակցում հասարակության առանձին հատվածները՝ փոխհատուցելով ինստիտուցիոնալ քաղաքական համակարգի պակասը: Ս.Հանքինգտոնի պնդմամբ, «փոսած պետության վերակառուցումը կամ նոր պետության կազմավորումը սովորաբար հանդիսանում է մեկ կամ մի քանի մարդկանց գործը»¹⁷⁸: Իրոք, նորաստեղծ պետություններում, սովորաբար, որտեղ բացակայում կամ քիչ են զարգացած կուսակցությունների, ընդլիճության, ազատ մամուլի ավանդույթն ու ինստիտուցիոնալ ուժը, երկրի ճակատագրի համար պատասխանատվությունը ստանձնում են հենց ուժեղ, քարիզմատիկ լիդերները, ինչպես դա եղավ Թուրքիայի դեպքում: Թուրքիայի փորձը նաև վկայում է, որ ազգային պետականության կառուցման գործընթացը կարող է տեղի ունենալ ավելի շուտ քարիզմատիկ առաջնորդի շուրջ քաղաքական վերնախավի և զանգվածների համախմբման, քան թե ինստիտուցիոնալ և գաղափարախոսական հիմքի վրա:

¹⁷⁷ D.A. Rustow. Atatürk as Founder of a State. "Daedalus", N. 196.

¹⁷⁸ S.Huntington. Political Order in Changing Societies. p. 369.

Քարիզմատիկ միտումների համար պայմանները Թուրքիայում բավականին բարենպաստ էին բուքերին հատուկ գերազույն իշխանության պաշտամունքի առկայության դեպքում: Սակայն, հարկ է նշել նաև, որ թե՛ սուլթանական, թե՛ քենալական իշխանությունների մեջ ավանդական և քարիզմատիկ ղեկավարումը հաճախ գուգակցվում էր: Նույն սուլթան-խալիֆը ևս համարվում էր Ալլահի կողմից ուղարկված և նրա անունից իշխող սրբազան տիրակալ, իսկ Հանրապետության նախագահը կիրառում էր ավանդական կառավարման համալսյա նույն եղանակները, ոճը և խորհրդանշները¹⁷⁹:

բ. Քենալ Աքաթյուրք

Ինչպես փաստում է գերմանացի բուրքագետ Կարլ Գրոթիուզենը, «ժամանակակից Թուրքիան, անկասկած, հանդիսանում է Քենալ Աքաթյուրքի ստեղծագործությունը»¹⁸⁰, և այս պնդման հետ. թերևս, դժվար է չիսմածայնվել: Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Քենալ Աքաթյուրքը մտել է պատմության մեջ որպես առաջնորդ, որի ջանքերով ստեղծվեց նոր բուրքական ազգային պետությունը և բուրքական հասարակությունը սկսեց իր անցումը դեպի արդիական կառույցներն ու կենսակերպը: Նա 1919 թ. սկսած հանդիսանում է Թուրքիայի ժամանակակից պատմության կենտրոնական դեմքը, որի անվամբ կոչվեցին այս երկրի զարգացման ուղին փոխած քաղաքական դոկտրինան և քաղաքական կուրսը:

Մուստաֆա Քենալ Աքաթյուրքը ծնվել է 1881թ. մակեդոնական Սալոնիկ քաղաքում, ծառայողի ընտանիքում: Տասներկու տարեկանում արդեն նա սովորում էր սալոնիկյան զինվորական ուսումնարանում, ապա՝ Մոնաստիրի ռազմական լիցեյում, իսկ 1902թ-ին նա ընդունվում է Մուսմբուլի ռազմական ակադեմիա, որն ավարտելուց հետո ստանում է քանակի գլխավոր շտաբի կապիտանի կոչումը և ուղարկվում ծառայության Սիրիա: Այսպիսով՝ Քենալն անցավ զինվորական կրթության բոլոր աստիճանները՝ ուսում ստանալով կայսրության ամենաարևմտականացված հաստատություններում՝ զինվորական ուսումնարաններում: Այնտեղ էլ ձևավորվում էր երիտասարդ սպայի աշխարհայացքը՝ ներառյալ նրա քաղաքական հայացքները, որոնց վրա ազդեցություն են գործել «ճոր սոմաններին» գաղափարախոսների՝ Իբրահիմ Շինասիի, Նամըք Քենալի, Ջլյա-փաշայի

¹⁷⁹ Դրանք հայտակների վախի գզացումն էր իշխանությունների հանդեպ, սովորույթը հնազանդվել տիրակալին, առաջնորդի կողմից միջամտությունը գրեթե բոլոր բիշ թե շատ կարևոր պետական, հասարակական, տնտեսական և մշակութային գործերին և միջոցառումներին:

¹⁸⁰ K.-D. Grothusen. Kemal Atatürk. – Südosteuropa Mitteilungen, N 2, 1982, S. 13.

ստեղծագործությունները: Նրանք առաջինն էին, ումից Մուստաֆա Քեմալը իմացել էր «ազգ», «հայրենիք», «քաղաքակրթություն» հասկացությունների մասին¹⁸¹: Հետագայում, Ջիյա Գոյրալիի և այլ բյուրքիստական գաղափարախոսների ազդեցության ներքո և սեփական համոզմունքներով Մուստաֆա Քեմալը դարձավ բուրքական ազգայնականության գաղափարների հետևորդը: Բացի այդ, Քեմալի ծննդավայրը և սոցիալական ծագումը որոշակի առումով տարբերում էին նրան իր զինակիցներից: Եթե նրանք մեծ մասամբ ծնվել էին ու դաստիարակվել Ստամբուլում կամ Անատոլիայում ազնվական զինվորականների և պաշտոնյաների ընտանիքներում, ինչպես, օրինակ, Կարաբեքիրը, Օրբայը, Ինյունյուն, ապա նա ծնվել և մեծացել էր կայսրության եվրոպական մասում՝ Սալոնիկում, որտեղ միախառնված էին արևմտյան, հունական, հրեական և օսմանյան ազգություններն ու մշակույթները:

1906թ. Քեմալն ընդգրկվում է գաղտնի գործունեության մեջ՝ սկզբից փորձելով ստեղծել սեփական հեղափոխական՝ «Հայրենիք և Ազատություն» կոմիտեն, բայց, անհաջողության մատնվելով, ստիպված եղավ մտնել «Միություն և առաջադիմություն» երիտրուքական կոմիտեի շարքերը¹⁸²: 1908–1909թթ–ին նա ակտիվորեն մասնակցում է Մակեդոնիայում «Գործողությունների բանակի» հակասուլթանյան ելույթներին, սակայն հետագայում նրան հետին պլան են մղում բանակի ավելի ճարպիկ հրամանատարներն, ինչպես, օրինակ, Էնվերը: Քեմալն այդպես էլ չկարողացավ հարմարվել իր իրողությանը և, ընդհանուր լեզու չգտնելով *Իթթիհադի* ղեկավարների հետ ու իրեն արհամարհված զգալով, թողեց քաղաքական գործունեությունը, քեև, չունեի իթթիհադական վերնախավի հետ որևէ սկզբունքային քաղաքական տարածայնություններ և մնում էր կուսակցության անդամ մինչև նրա ինքնալուծարումը 1918թ–ին¹⁸³:

1909 1914թթ–ին նա մկիլիում է իրեն բանակային ծառայությանը և, առաջ գնալով զինվորական աստիճանակարգով, հասնում է մինչև գեներալի կոչումը և փաշայի տիրոջն: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մուստաֆա Քեմալին հանձնարարվում է գլխավորել Դարդանեղների պաշտպանությունն ապահովող զորարանակը, ապա նրան ուղարկում են Արևելյան և Սիրիական ճակատներ: Պատերազմի վերջին

¹⁸¹ А. Миллер. "Кемаль Ататюрк. Ранние годы" — Турция. Актуальные проблемы новой и новейшей истории. Москва, 1983, с. 84.

¹⁸² А. Миллер. "Революция 1908г. и Мустафа Кемаль" — Турция. Актуальные проблемы новой и новейшей истории. Москва, 1983, с. 106.

¹⁸³ Նույն տեղում, էջ 106:

շրջանում Քենալ-փաշան դառնում է սուլթան Սեհմեդ VI-ի համհարզը, իսկ Միրիական ճակատում թուրքական բանակի կրած պարտությունից կազմակերպում է նրա նահանջը: 1918թ. նոյեմբերին նա վերադառնում է Ստամբուլ և փորձում է ստանալ ռազմական նախարարի պաշտոնը, սակայն ապարդյուն:

Վերջապես, 1919թ. մայիսին, ստանալով սուլթանից թուրքական 3-րդ բանակի զինվորական տեսուչի պաշտոնը, գեներալ Մուստաֆա Քենալ-փաշան մեկնեց Անատոլիա: Այդ ժամանակ նա հաղիսանում էր երկրում ամենահեղինակավոր զորահրամանատարը. նա էր, որ հետ մղեց անգլիացիներին Գալիպոլիից, որ հրաժարվեց հանձնել Ալեքսանդրետը դաշնակիցների գործերին, նա էր ընդդիմանում իթթիհադականների Գերմանիայի հետ դաշինքի մեջ ներքաշվելու քաղաքականությանը, նրան համարում էին սուլթանի բարեկամ: Ուստի, նրա ժամանումն Անատոլիա նոր թափ հաղորդեց «*Հուվալը Մյլլիե*» շարժմանը, և շատ շուտով նա դարձավ այդ շարժման առաջնորդը: Արդյունավետ օգտագործելով իր կազմակերպչական ունակությունները՝ նրան հաջողվեց համախմբել իր շուրջ *Իթթիհատի* քիչ թե շատ հայտնի, երկրում մնացած գործիչներին՝ ստանալով նաև երիտթուրքական կուսակցության ընդհատակյա գաղտնի կոմիտեների, Անատոլիայի տեղական և կրոնական վերնախավի աջակցությունը:

1920թ. ապրիլից Մուստաֆա Քենալը գլխավորում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը, նշանակվում է բանակի գլխավոր հրամանատար, Սաքարյայի ճակատամարտից հետո ստանում է մարշալի կոչում և «Գագի» տիտղոսը: Իսկ 1923թ. հոկտեմբերի 29-ին Հանրապետության հռչակումից 15 րոպե անց Մուստաֆա Քենալը միաձայն (ներկաների բոլոր 158 ձայնով) ընտրվեց Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ:

Նրա իշխանությունն այդ պահից սկսած կարելի է բնորոշել որպես բացարձակ: Մուստաֆա Քենալի ձեռքում կենտրոնացված էր ամբողջ քաղաքացիական ու զինվորական իշխանությունը. նա հանդիսանում էր միաժամանակ Հանրապետության ցմահ նախագահ, գործադիր իշխանության ղեկավար, իշխող Հանրապետական-Ժողովրդական կուսակցության անփոփոխ գլխավոր նախագահ, Ջինված Ուժերի գերագույն հրամանատար: Նրա առջև հաշվետու էին Հանրապետության կառավարության անդամները և Ջինված Ուժերի հրամանատարական կազմը: Որպես Հանրապետական-Ժողովրդական կուսակցության գլխավոր նախագահ Քենալ Արաբյուրքն իրականացնում էր մեջլիսի պատգամավորության թեկնածուների ցուցակների կազմումը և ընտրությունների ընթացքի ղեկավարումը: Այս եղանակով նա ապահովում էր մեջլիսում միակուսակցական կազմը և,

հետևաբար, երաշխավորում էր իր համար Հանրապետության մախազասիի պաշտոնը: ՀԺԿ-ի գաղափարախոսական պատասխանատուներից մեկը՝ Յունուս Նադին հայտարարում էր, որ «... ընտրությունների անցկացման բոլոր իրավունքների տրամադրումը Մուստաֆա Քեմալին նշանակում է կուսակցական կամքի բացարձակ կենտրոնացում մեկ անձի, մարդու մեջ, որը հանդիսանում է կուսակցության ուղեղը, հոգին ու սիրտը... Այս իրավասությունների կենտրոնացումը Քեմալի՝ հեղափոխության ամենաազնիվ ծառայի և երկրում ամենաազդեցիկ մարդու ձեռքերում, տալիս է բոլոր երաշխիքները, որ մեջլիսում ապահովվելու է ամուր կուսակցական մեծամասնությունը»¹⁸⁴:

Մ. Քեմալը, հաղթելով իշխանության համար պայքարում, դարձրեց իշխանական կառուցվածքը ուղղահայաց և փորձեց համակարգել, համախմբել և հավաքագրել համակարգի բոլոր տարրերը: Այդ քաղաքականությունը հիմնավորվում էր որոշակի առաջնահերթ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպես, օրինակ, արդիական հասարակության կազմավորումը, զարգացող տնտեսության ստեղծումը, ժամանակակից բանակի շինարարությունը և այլն:

Աքաբյորք, սակայն, առանձնապես չէր իդեալականացնում բռնապետությունը: Երբ նրան ասում էին, որ նրան բռնապետ կամ դիկտատոր են անվանում, նա պատասխանում էր. «Այ՛ո, ես բռնապետ եմ: Սակայն նրանք, ովքեր ուսումնասիրել են իմ կյանքը, գիտեն, որ ես Եգիպտոսի փառավունների նման ինձ դամբարան կառուցելու համար մտրակի տակ մարդկանց չեմ քաշել: Ես երկրում իմ ուզած գաղափարներն իրագործելու համար սկզբից համագումարներ են գումարել, նրանց հետ այս գաղափարները քննարկել եմ, նրանցից լիազորություններ ստանալով՝ նոր իրագործել եմ... Ով ինչ ասում է, բող ասի: Մենք մեր ճանապարհը շարունակենք»¹⁸⁵: Իսկ 1930թ-ին, ԼՀԿ-ի կազմավորման օրերին, մախազահը Ֆեթհիի հետ զրոյցում շեշտում էր, որ «այն համակարգը, որը մենք տեսնում ենք այսօր, այսպես քե այնպես բռնապետություն է: Սակայն ես չեմ հիմնել հանրապետությունն իմ անձնական օգուտի համար: Մենք բոլորս այս աշխարհում անցողիկ ենք: Եթե ես այսօր մահանամ, հաստատությունը, որը ես կթողնեի ինձանից հետո, կլիներ բռնապետությունը: Բայց ես չեի ցանկանա բողնել այն իմ ազգին որպես ժառանգություն և դրանով պատմութ-

¹⁸⁴ Մեջբերվում է ըստ Ирандуст. Движущие силы кемалисткой революции. Сс. 121 – 122:

¹⁸⁵ F.R.Atay,Çankaya. c. 2, s.336.

յան մեջ մտնել իբրև բռնապետ»¹⁸⁶: Նրա համար բռնապետությունը կառավարման միակ հնարավոր ձևն էր «վերևից հեղափոխությունն» իրականացնելու համար:

Թուրքիայի առաջին նախագահը հաշվի էր առնում իր երկրի առանձնահատկությունները՝ զիտակցելով, որ կառավարման մեթոդները, որոնք որևէ այլ տեղ և երբևէ հաջողություն են ունեցել, Թուրքիայում կարող են տապալվել: Բազմակուսակցական ժողովրդավարության ստեղծումն ամենևին էլ չի եղել Քեմալ Աթաթյուրքի առաջնահերթ նպատակը և մնում էր նրա քաղաքականության հետին պլանին: 1931 թ. սկզբին՝ Լիբերալ-Հանրապետական կուսակցության լուծաբանից հետո և նոր մեջլիսի ընտրություններից նախօրեին իր հարցազրույցներից մեկում նա նմանեցնում էր թուրք ժողովուրդին փոքր երեխաներին, որոնց պետք է սնել, աճեցնել և դեկավարել: «Քաղաքականությունն այսօր ժողովրդի համար չէ: Թող ժողովուրդն աշխատի գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության մեջ՝ մինչև որ մեր ազգը մեծ դառնա: Ես պետք է դեկավարեմ ևս մոտ 10-15 տարի... Ես տանելու եմ իմ ժողովրդին այս ուղով, քանի դեռ նա չի սկսել վստահորեն քայլել, իմացել իր ճանապարհը և կկարողանա ընտրել ու կառավարել իրեն: Այդ ժամանակ իմ գործն արված է լինելու»¹⁸⁷: Այս խոսքերը ապացուցում են, որ նրա կերպարը թուրքերի զիտակցության մեջ զուգակցվում էր ընտանիքի «հոր» ավանդական կերպարի հետ, որը բարեսիրտ է, իմաստուն, ամեն ինչ տեսնում է և հոգում է իր ընտանիքի բարօրության մասին: Մուստաֆա Քեմալի կողմից «Աթաթյուրք» ազգամվան ընտրությունն արդեն ինքնին հաշվում է նրա մոտ լիոյելության պատերձանալիստական ընկալման առկայության մասին:

Աթաթյուրքի քաղաքական ռազմավարությունը հետապնդում էր սահմանափակ և որոշակի նպատակներ: Իսկական քաղաքական գործչին հատուկ ժամանակի ընտրության, անակնկալների մարտավարության և «մեղմ հարկադրանքի» տեխնիկային նա տիրապետում էր չափազանց լավ: Այսպես, օրինակ, երբ Առաջադիմական կուսակցությունը 1924թ. աշնանը ուներ ինչ թե շատ ամուր դիրքեր, Քեմալը շզնաց նրա հետ բացահայտ առճակատման, այլ անգամ «գոհեց» իր վարչապետին՝ Իսմեթ-փաշային, իսկ հենց որ 1925թ. գարնանը քրդական ապստամբությունն առիթ բնձնեց խստացնել տարվող ներքին քաղաքականությունը, նախագահը

¹⁸⁶ A.F.Okay. Üç devirde bir adam. İstanbul, 1980. s.36; մեջբերվում է ըստ M.Tunçay. Türkiye Cumhuriyeti'nde Tek Parti Yönetiminin Kurulması. s. 252.

¹⁸⁷ R.Brock. Ghost on Horseback. P. 387.

գործեց հստակ և արագ՝ արգելելով ԱՀԿ-ն և վերադարձնելով Իսմեթին, որն ավելի էր համապատասխանում «կարծր» գծին: Ընդհանրապես, Թուրքիայի առաջին նախագահը հմտորեն առիթներ էր գտնում քաղաքական հարցերը սեփական տարբերակով լուծելու համար: Դրա մեկ այլ օրինակ կարող է ծառայել 1922թ. աշնանը սուլթանության վերացման մասին որոշման ընդունումը, երբ Լոզանի կոնֆերանսին մասնակցելու հրավեր էին ստացել և՛ Անկարայի կառավարությունը, և՛ Ստամբուլի «կառավարությունը», երկրում բողոքներ բարձրացան դրա դեմ, և Քեմալը հեշտությամբ մեջլիսում անցկացրեց վերոհիշյալ որոշումը:

Մեկ այլ օրինակ են հանդիսանում Հանրապետության հռչակման հետ կապված իրադարձությունները: Մոտ մեկ տարի Քեմալը պատրաստում էր այդ քայլը: 1923թ. հոկտեմբերի 25-ին նա կարգադրեց Ալի Ֆեթհիի կարիներտին հրաժարական տալ: Դրանից հետո մեջլիսը պետք է նոր կառավարություն նշանակեր: Սակայն Քեմալն արգելեց իր կողմնակիցներին մասնակցել այդ գործում, հետևաբար, նոր կառավարությունը չէր կարող ձևավորվել: Այս ինքը հանդես եկավ մեջլիսում՝ հայտարարելով, որ «հարցը վերաբերում է կառուցվածքներին և այն կարող է լուծվել Սահմանադրության փոփոխությամբ»: Նրա առաջարկն էր՝ «հռչակել հանրապետություն»¹⁸⁸:

Սակայն քանի դեռ գոյություն ուներ խալիֆը, Մ.Քեմալը չէր կարող իրեն ապահով զգալ տեսնելով իր իշխանության դեմ խալիֆի ու ընդդիմության հավանական միացման վտանգն: 1924թ. գարնանը, երբ հնդիկ մահմեդականների առաջնորդ Ադա-խանը նամակ էր ուղարկել, որտեղ խոսվում էր «խալիֆայության հանդեպ անհարգալից վերաբերմունքի մասին», նախագահը դա անվանեց «անզլիական իմպերիալիզմի խարդավանքներ» և դրսից միջամտությունները վերջ տալու և երկրի ներսում ապակայունացումը կանխելու համար առաջարկեց վերացնել խալիֆայությունը¹⁸⁹: Այն-հայտ է, որ մեջլիսում արդեն գոյացող ընդդիմությունը, առավել ևս Քեմալին բանակի աջակցության պայմաններում, չէր կարող որևէ բողոք հայտնել այդ որոշման դեմ:

1925-1926թթ-ին վատթար տնտեսական վիճակի և արմատական բարեփոխումների անհրաժեշտության ֆոնի վրա նախագահին հարկավոր էր ասպառել իր դիրքերը՝ մեկընդմիջտ հեռացնելով իր բոլոր մրցակիցներին քաղաքական ասպարեզից: Բարեփոխումների հանդեպ դժկամ վերաբեր-

¹⁸⁸ E.J.Zürcher. The Unionist Factor. P. 137.

¹⁸⁹ Atatürk. Söylev. c. 2, Ankara, 1964, s. 579-580.

մունքը բնակչության մեջ, քրդական խռովությունը, Մուսուլի վիլայեթի գի-
ջումն Անգլիային չէին ամրապնդում իշխող վարչակարգի դիրքերը: Եվ այս
պայմաններում նախագահը դիմեց քաղաքական հետապնդումների քա-
ղաքականության կիրառմանը, որոնք ցույց տվեցին, թե ով է երկրի իսկա-
կան տերը. բացի այդ էլ շեղում էին բնակչության ուշադրությունը վերուիշ-
յալ պորբեմներից:

Քրդական ապստամբությունը 1925 թ.-ին և Իզմիրի դավադրությունը
1926թ.-ին թույլ տվեցին Մուստաֆա Քեմալին համախմբել իշխանությունը
իր շուրջ, վերացնել քնդիմադիր կամ մրցակից գործիչներին և խմբերին:
Քաղաքական համակարգի կազմավորման փուլում Հանրապետության
նախագահի համար որոշիչ գործոն էին բանակի նկատմամբ լիակատար
վերահսկողությունը և երկրի տնտեսական միջոցները վերահսկող ուժեղ
պետական ու կուսակցական ապարատի և տեղական վերնախավի օգտա-
գործումը:

Արաբյուրքի քաղաքական և հասարական կյանքի վերաբերյալ տեսա-
կետները բխում էին մոտ քսանամյա ժամանակահատվածում երկրում տե-
ղի ունեցող անկայունության և քայքայման գործընթացների փորձից: Նա
գլխտեք, թե ինչն այնպես չէ և ինչպես պետք է լինի: Այս համատեքստում էլ
նա վերակառուցում էր թուրքական պետությունը: Հարկ է նշել նաև, որ Ա-
րաբյուրքը չկատարեց որևէ նոր գաղափարական նորամտություն, նա
նախընտրում էր գտնել քաղաքական կառավարման կենսունակ մեթոդներ՝
համաձայնեցնելով դրանք իրականության հետ:

Որպես իշխանության պահպանման և օգտագործման միջոցներ նրա
համար ծառայում էին կառավարությունը և պետական ապարատը, կուսակ-
ցությունը, բանակը, պետական լրատվամիջոցները, որոնցից հիմնական հե-
նարանն էին ՀԺԿ-ն և բանակը: Հենվելով նրանց վրա՝ Մուստաֆա Քեմալը
կայտո էր կառավարել երկիրն իր ուզած ձևով. «Քեմալն ապստամբություն-
ներից չէր վախենում...», – գրում է Ֆ.Ռ.Արայը, – «Նա չափազանց վստահ էր
բանակում ու ժողովրդի մեջ իր խորհրդավոր ազդեցության մեջ»¹⁹⁰:

Գատելով այս ամբողջից՝ կարելի է եզրակացնել, որ Արաբյուրքի որ-
դեգրած դեկավարման ոճը համարժեք էր «ժայռապետական» (պատերմա-
լիստական) և «ավտորիտար» կոչված ոճերին: Թուրքերի համար Քեմալ
Արաբյուրքը ներկայացնում էր ավանդական կառավարչի կերպարով. նա
կարող էր լինել դաժան, բիրտ ու չարասիրտ, բայց կարևորն այն էր, որ նա
ուժեղ դեկավար էր: Դեռ Ջոյա Գյոքալփը խրատում էր Մուստաֆա Քեմա-

¹⁹⁰ F.R.Atay. Çankaya. c. 2. s. 466.

լին. «Ամեն ինչ հնարավոր է, միայն պահանջի՛ր ու կարգուկանոն հաստատիր»¹⁹¹; Նախագահը պահանջում էր իր ստորադասներից լիակատար հնազանդություն, բելադոնում էր իր կամքը շրջապատին, միայնակ էր որոշում ու ձևակերպում պետական քաղաքականության մասնակցները և ամուր վերահսկողություն էր սահմանել պետական և քաղաքական իշխանության հիմնական ծակների՝ կառավարության, կուսակցության և բանակի վրա: Այսպիսի ղեկավարման պահանջը բխում էր ինչպես Թուրքիայի պատմական, քաղաքական և իշխանական ավանդույթներից, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակից, մասնավորապես, հասարակության ներսում անդրդի ու անվտանգության պահանջից և ուժեղ առաջնորդի հանդեպ տաժվող կույր հավատից: «Մյուլիեթ» քերթում այդ ժամանակ ո՞նց մի պատգամավոր Մահմուդը գրում էր. «Մեր Հանրապետության ստեղծողը, մեր հեղափոխությունը կենսագործողը, նա, ով կայոլ է ասել բոլորի անունից «Մենք», Մուստաֆա Քեմալն է»¹⁹²: Այսպիսի մթնոլորտում նա կարող էր իշխել միայն որպես բռնապետ, որը «չէր հանդուրժում հակառակ կարծիքներ, հատկապես՝ կուսակցական ու պետական գործերում»¹⁹³:

Ավտորիտար կառավարման ոճի որդեգրումը Քեմալ Արաքյուրքի կողմից կարելի է բացատրել ոչ միայն երկրում տիրող ավանդույթներով և պայմաններով, այլ նաև առաջնորդի անձնական հատկություններով: Թուրքիայի առաջին նախագահը զինվորական էր, ուստի, նա սովոր էր ամեն ինչ ինքնուրույն որոշել ու գործել, սովոր էր, որ իր հրամանները կատարվեն անմիջապես և առանց քննարկման:

Քեմալ Արաքյուրքը բախվել էր ժամանակակից պետության ստեղծման հետ կապված իմնահարցերի հետ՝ ազգային ինքնության որոշումը, արդիական աշխարհիկ պետական ու քաղաքական կառուցվածքի ձևավորումը, սոցիալական ու մշակութային բարեփոխումների իրականացումը, տնտեսական զարգացման խթանումը: Այս բոլոր իմնահարցերը Թուրքիայի առաջին նախագահը լուծում էր իրարից անջատ՝ «քայլ առ քայլ» ուղղումների ընդունման մարտավարությամբ, ինչի էությունը կայանում էր նրանում, որ նա հայտարարում էր որոշակի, գզուշորեն ընտրված պահին ձեռնարկվելիք միջոցառումների մասին, մոբիլիզացնում էր առկա ուժերը՝ հատուկ, սահմանափակ նպատակին հասնելու համար, և արագ իրակա-

¹⁹¹ Սեջբերվում է ըստ U.Heyd. Foundations of Turkish Nationalism, P. 135.

¹⁹² F.Kandemir. Kâzım Karabekirin Yakılan Hatıraları Meselesinin İçyüzü. İstanbul, 1964, s. 39.

¹⁹³ Я.К. Караосманоглу. Дипломат поневоле. Москва, 1978, с. 29.

նացնում էր դրանք՝ ժամանակ չտալով ընդդիմադիրներին համախմբվել: Իսկ երբ այդ նպատակը իրականացվում էր, նա այդ պահին կենտրոնանում էր հաջորդ «քիրախի» վրա, որը, սովորաբար, կապ ուներ մախորդ ձեռնարկման հետ: Այսպես, սկզբից նա պայքար էր մղում Անատոլիայում անկախ ազգային պետության ստեղծման համար և չկապեց այդ պայքարը սուլթանական իշխանությանն ընդդիմանալու քաղաքականության հետ: Ավելին, Քեմալը մույնիսկ ազգային շարժման նպատակներից մեկը հռչակեց սուլթանի ազատագրումը զավթիչների ձեռքից: Երբ շարժման հաղթանակն արդեն ապահովված էր և ազգային գոյության խնդիրը լուծված էր, Քեմալն իր ուշադրությունը նվիրեց նոր պետության քաղաքական կառույցների հարցին: Կրկին նա անջատում է քաղաքական և կրոնական պլուրեզմները՝ ձեռնամուղ լինելով սուլթանության վերացմանը և ձեռք չտալով խալիֆայությանը, քանի որ հասկանում էր, որ խալիֆայության վերացումը առաջ կբերեր լուրջ ընդդիմություն: 1923թ.-ին օսմանյան իշխանության կայսրական քաղաքական ինստիտուտները վերջնականապես փոխարինվեցին Հանրապետության և Ժողովրդական կուսակցության ժամանակակից քաղաքական կառույցներով, ինչից հետո էլ նախագահը կարող էր արդեն գրադվել կրոնական ու մշակութային բարեփոխումների հարցով:

Այսպիսով՝ ելնելով վերոհիշյալից, կարելի ենք պարզել, որ Քեմալ Աթաթյուրքի քաղաքական ու պետական գործունեությունը ղեկավարվում էր երեք հիմնական նպատակներով. (1) լիակատար ինքնիշխանությանը տիրապետող ազգային պետության ստեղծումը, (2) ազգային ներուժի զարգացումը և ժամանակակից աշխարհում Թուրքիայի ուժեղ արտաքին դիրքերի ապահովումը, (3) արևմտյան կենսակերպի ու կարգերի հաստատումն յուրացումը: Այդ գործունեության գործիք էին ընտրվել հզոր մենիշխանական կուսակցությունը և բանակը, ինչը մեծ չափերով նպաստեց ինչպես իշխանության կենտրոնացմանն ու ընդլայնմանը, այնպես էլ վերևից բարեփոխումների անցկացմանը և ներքևից անհրաժեշտ աջակցության մտքիլիզացմանը: Նրա առանձնապես ոչ բարդ գաղափարախոսական հայեցակարգի հիմնադրույթները դարձան իշխանությունների միասնությունը, անկախ և իրատեսական արտաքին քաղաքականությունը, հասարակական և տնտեսական բարեփոխումները: Նա ավելի շատ ոչ թե գաղափարախոս էր, այլ «գործողության մարդ», որի համար որպես որոշիչ արժեքային կողմնորոշումներ հանդես էին գալիս երկրի անկախության ու տարածքային ամբողջականության և ազգային շահերի պաշտպանությունը; իշխանության լեզվախմբությունը (այսինքն՝ Ժողովրդի կողմից իր իշխանության աջակցությունը և դրա հետ կապակցված ազգի գերիշխանության հասկացության վրա խարխաված պետության հայեցակարգը); քաղաքական և

հասարակական–տնտեսական կառուցվածքային բարեփոխումների անցկացման համար անհրաժեշտ կամքը:

Դատելով Արարյուրի քաղաքական գործունեությունից՝ կարելի է նաև ենթադրել, որ նրա քաղաքական մտածողության մեջ հիմնական տեղը հատկացվում էր ուժի հասկացությանը, ինչը, միանգամայն, բացատրելի է, հաշվի առնելով Քեմալի պատկանելությունը բանակին և նրա քաղաքական վերելքը հենց ռազմական ժամանակաշրջանում: Բայց, միաժամանակ, նա ամեն անգամ տալիս էր այդ ուժին օրինական ձևեր: Այսպես, 1919թ. աժոհանը նա իրենից վայր դրեց օսմանյան 3–րդ բանակի տեսուչի և գեներալի կոչումներն ու պարտականությունները և ապա նոր սկսեց ձևավորել Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների կազմակերպությունը, որպեսզի՝ համդես չզար որպես սուլթանական իշխանության դեմ խռովարար: Նա այդպես էլ 1920–1922թթ. ընթացքում շուղդեց իր գլխավորած շարժումը սուլթանի իշխանության և անձի դեմ՝ պատճառաբանելով սուլթանությանն այլընտրանքային իշխանության կենտրոնի՝ Թուրքիայի ՄԱԺ–ի կազմավորումը անհավատների գերության մեջ գտնվող սուլթանի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինությունը: Անգամ ի պատասխան 1920թ. մայիսին Ստամբուլի շեյխ–ուլ–իսլամի կողմից հրապարակված ֆեթվայի նա նախաձեռնեց Անատոլիայի կղերականության կողմից հակառակ ֆեթվայի հրապարակումը: Նա ճանաչում էր օրինական կառավարման անհրաժեշտությունը նաև երկրի անվիճելի և ցմահ ղեկավար դառնալուց հետո՝ օգտագործելով ընտրությունները իր իշխանությունը ամրագրելու համար և ձգտելով համդես գալ որպես օրինական (լեգիտիմ) առաջնորդ:

Խոսելով քաղաքականության մեջ Արարյուրի մեթոդաբանության շուրջ, չի կարելի չնշել նաև, որ իր առջև ծառայած հիմնախնդիրներին նա մոտենում էր որպես պրագմատիկ ու իրատես պետական գործիչ, որը հաշվի էր առնում նախ և առաջ վիաստերը և ձգտում էր հենվել իրականության ճշգրիտ վերլուծության վրա: Քաղաքականությունը նրա համար սրափ հաշվարկի, ուժի և հնարավորությունների համադրություն էր: «Հաջողության հասնելու համար, հայտարարում էր նա, պետք է հետևել այն ճրագրման, որը լիովին կհամապատասխաներ մեր այսօրվա վիճակին, մեր պայմաններին, օրախնդիր հասարակական կարիքներին, ինչպես նաև արդի պահանջներին: Մենք պետք է հրաժարվենք ամեն տեսակ մեծ, քայց ֆանտաստիկ նախագծերից, սովորենք խորաքափանց հայացքով նայել իրականությանը, զգալ այն և հասկանալ, քե ինչով արժե զբաղվել և ինչը սկսել

կենսագործել»¹⁹⁴: Աբաբյուրքը անընդհատ շեշտում էր սքափ մտածողության, իրատեսության ու զգացական ընկալումների հաղթահարման կարևորությունը քաղաքականության մեջ: Պատրանքներով ու տեսիլքներով առաջնորդվող քաղաքականության մեջ թուրքիայի անվտանգությունն ու բարօրությունն ապահովելն անհնար էր: Ինչպես արդարացիորեն նշում է խորհրդային թուրքագետ Բ.Պոցխվերիան, Քեմալի քաղաքական իրատեսությունը կայանում էր նրանում, որ նա «չէր հավատում մշտական բարեկամությանը կամ մշտական թշնամությանը»¹⁹⁵:

Հետաքրքիր է նշել, որ թուրքիայի առաջին նախագահի քաղաքական հավատամքն արտահայտված է նրա այն ելույթում, որտեղ ինքը նշում է, որ «հնարավոր չէ կառավարել պետությունը՝ ընկնելով ընդարածակ, վեհ, սակայն պրակտիկ տեսակետից արժեք չունեցող պատրանքների հետևից: Մեր դժբախտությունների աղբյուրը, պատճառը, որի համար մեր ազգը կանգնել էր մահացու վտանգի առաջ, եղել են հենց պատրանքներն ու զգացմունքները... Պարոնա՛յք, հաշվի նստեք այն գիտական, պատմականորեն ապացուցված ճշմարտության հետ և միշտ հիշե՛ք, որ կա հզորություն սահման, որից դուրս որևէ քաղաքական մարմին չի կարող անցնել, ինչպես կան բնական սահմաններ մարդու նորմալ զարգացման համար: Երբ ի հայտ է գալիս ինչ-որ անբնական բան, երբ մարդկային օրգանիզմի նորմալ զարգացման սահմանները խախտվում են, մենք մեր առջև տեսնում ենք խղճուկ մի թզուկի կամ ահավոր մի հսկայի: Եվ ինչպես այս օրեքը գործում է մարդկային օրգանիզմի դեպքում, այն ուժի մեջ է նաև մարդկային հասարակության համար... Մենք խաբեբաներ չենք, որոնք ընկնում են անիրական երազանքների հետևից, ձևացնելով, որ այսպիսի գործերից զուխ կարող ենք հանել... Մենք ազգ ենք, որը ցանկանում է ապրել և լինել անկախ: Միայն ու բացառապես դրան ենք մենք նվիրում մեր կյանքը»¹⁹⁶:

Չժխտելով Աբաբյուրքի այս դիրքորոշումը՝ պետք է նշել նաև, որ ծավալապաշտական ծրագրերի, մասնավորապես՝ պանթյուրքիզմի որպես պետական քաղաքականության անկյունաքարի մերժումը պայմանավորված էր ոչ այնքան հանրապետական թուրքիայի առաջնորդների քաղաքական մտածելակերպով և համոզմունքներով, որքան ստեղծված պատմական պայմաններով՝ միջազգային իրադրությամբ և թուրքիայի Հանրապետությամբ:

¹⁹⁴ K. Ататурк. Избранные речи и выступления, с. 220.

¹⁹⁵ Б.Поцхверия. Турция между двумя мировыми войнами. Москва, 1992, с. 7.

¹⁹⁶ K. Ататурк. Избранные речи и выступления, сс. 186–189.

յան ներքին ուզման-քաղաքական հնարավորություններով¹⁹⁷: Չպետք է մոռանալ նաև, որ իրենց կողմից հենց Մուստաֆա Քեմալը և նրա ղեկավարած շարժումը ձեռնրկեցին Հայաստանի Առաջին Հանրապետության դեմ 1920թ. ուզմանական արշավանքը՝ մինչ այդ Էրզրումի և Սվասի «Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների» կոնգրեսներում մերժելով բուրժահայերի բոլոր իրավունքները իրենց հողերի վերադարձման վերաբերյալ և ապա պարտադրելով Հայաստանին հաշտության նվաստացուցիչ պայմանները:

Համեմատելով բազմաթիվ փաստերն ու վկայությունները՝ հարկ ենք համարում նշել, որ Արաբյուրքի հեղինակությունը և քաղաքական գործունեությունը զգալիորեն պայմանավորված էին նրա անհատական հստակություններով: Նա ընդունալ էր արագ որոշումներ քննումը ճգնաժամային պահերին և արագ կողմնորոշվել փոփոխվող իրավիճակներում: Ինչպես նկատում է ամերիկյան բուրժազետ Բ.Լյուիսը, Արաբյուրքը «արագ ու վճռական գործողությունների մարդ էր»¹⁹⁸: Նա նաև ուներ քաղիզմատիկ առաջնորդին հատուկ մարդկանց գրավելու և իր հետևից տանելու տաղանդ, ինչպես նաև հավատում էր պատմության մեջ հերոսների բացառիկ դերին՝ համոզված լինելով, որ բոլորից ավելի է արժանի գերագույն իշխանությանը¹⁹⁹: Արաբյուրքն ինքն էր ստեղծում իր անձնական առասպելը՝ լավ կռահելով իր ժողովրդի հակումը դեպի հերոսների և առաջնորդների երկրպագությունը: Թուրքերի մեծամասնության համար նա հանդիսանում է այսյի այսպես կոչված «հերոս-առաջնորդներից» մեկը, որոնք զլխավորում են իրենց երկիրը օրհասական պահերին և փրկում են այն: Թուրքիայում գոյություն ունեւ հերոսների, մարտիկի, պետական գործչի, լուսավորչի պաշտամունքի, մեծ անհատների և պատմության ընթացքը փոխելու նրանց կարողությունն նկատմամբ հավատի ավանդույթ: Թուրքերը մշտ եղել են այն համոզման, եզրակացնում է հայտնի ռուս արևելագետ Վլադիմիր Գորդլևսկին, որ «պատմության մեջ լինում են հերոսներ, որոնք ոգևորում են իրենց ժողովրդին և իրենց կամքով ամրասպնդում են մնացածներին»²⁰⁰: Քեմալ Արաբյուրքի պաշտամունքը դարձել է Թուրքիայի ժամա-

¹⁹⁷ Այն, որ բնական կերպով հնարավորության դեպքում վարում էր բացահայտ կամ քողարկված «ծավալապաշտ» քաղաքականություն, կարելի է հետևել Հայաստանից տարածքներ նվաճելու, Մոսկուի և Հաթայի տարածքները Թուրքիային հին վերադարձնելու, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հին սահման մեղքերնելու հարցերում ձեռնարկված հետևողական քայլերով:

¹⁹⁸ B. Lewis. The Emergence of Modern Turkey. p. 284.

¹⁹⁹ H. C. Armstrong. Grey Wolf. p. 328.

²⁰⁰ В. А. Гордлевский. Силуэты Турции. Избранные сочинения. Т. 3, Москва, 19, с. 181.

նակակից քաղաքական կյանքի անբաժանելի հատկանիշը: Ամենուրեք կախված են նրա դիմանկարները, Առաջին նախագահին վերագրվում են «ժողովրդի հայր», «ազգի հայր», «Հանրապետության Ճարտարապետ» կոչումները և Թուրքիայի հաղթանակները: Գրեթե բոլոր քաղաքական դեկավարները, կուսակցությունները, բանակը, մամուլը այս կամ այն կերպով հիմնավորում և արտաբացնում են իրենց գործողությունները Քեմալ Աթաթյուրքի քաղաքական գծի և սկզբունքների պահպանման ու կենսագործման անհրաժեշտությամբ: Հանրապետության առաջին նախագահի հիշատակը պահպանվում է ժամանակակից Թուրքիայում որպես սրբություն. 1951թ–ին մեջլիսը հատուկ օրենք էր ընդունել Քեմալ Աթաթյուրքի հիշատակի պահպանման մասին²⁰¹:

Արդարության համար պետք է նշել, որ Աթաթյուրքի անցած ուղին իյոթ նշանակալի էր. Թուրքիան իբրև Եվրասիայի մեծ կայսրություններից մեկը վերացավ և համեմատաբար փոքր ներքին ցնցումներով անցում կատարեց ժամանակակից ազգայնականությանը (քեպետ, իխպետ, Թուրքիան ստիպված էր նման անցում կատարել՝ ելնելով կայսրության կործանման փաստից): Հրաժարվելով իսլամի պահապանի և էքնիկ բյուրքերի շահերի պաշտպանի գլոբալ հավակնություններից՝ Աթաթյուրքը ստեղծեց «փոքր» Թուրքիայի կոմպակտ (հավաք) ազգային պետության կանխադրույքը, որ սահմանափակվում էր հիմնականում Անատոլիայի տարածքով: Թուրքիայի՝ որպես ուժեղ պետության և քարեկեցիկ ազգի կազմավորումը, սա է Աթաթյուրքի քաղաքական փիլիսոփայության էությունը, մնացածն ամսացալ էր այդ նպատակին: Այլ հարց է, որ նրան ոչ ամենին հաջողվեց հասնել իր կենդանության օրոք, որ նրա դրոշ ձեռնարկումներ, ինչպես, օրինակ, ժողովրդի լիակատար արևմտականացումը, քաղաքականության մեջ իսլամի ազդեցության վերացումը կամ քրոյական փոքրամասնության դեմ ծավալած դաժան պայքարը դրական արդյունք չբերեցին, ավելին, առաջացրին ավելուղ բարդություններ ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում:

Պետք է նշել նաև, որ Քեմալ Աթաթյուրքի անհատականությունը զգալի ազդեցություն է բողել Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների առաջնորդների քաղաքական կուրսի ու վարքագծի, ինչպես նաև քաղաքական համակարգերի մոդելների և էությունը վրա, ինչի օրինակ կարող են ծառայել այն, որ Արևմուտքի և Արևելքի միջև Քեմալի վարած հավասարակշռության

²⁰¹ "Ulus", 26.08.1951 Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահի հասցեին վիրավորանք հասցնելու համար նախատեսված էր մեկից երեք տարի բանտարկություն, նրա արձանը քանդելու կամ պղծելու համար՝ մեկից հինգ տարի:

քաղաքականությունը, պրեզիդենտական–բռնապետական կառավարման եղանակներն ու ոճը փոխառեցին XX դարի երկրորդ կեսին Մերձավոր ու Միջին Արևելքի պետությունների շատ ղեկավարներ՝ Ռեզա-շահը՝ Իրանում, Գ.Ա.Նասերն ու Ա.Սադաթը՝ Եգիպտոսում, Հ.Ասադը՝ Սիրիայում, Ս. Հուսեյնը՝ Իրաքում, քեև, իհարկե, նրանց գործունեության մեջ շատ տեղ էր գրավում գուտ մանակման տարրը:

Կարելի է բավականին շատ վիճաբանել այն տեսակետի շուրջ, որը քեմալական թուրքիայի ղեկավարությունը բնութագրում է «լուսավորյալ բռնապետություն»²⁰²: Քեմալ Աթաթյուրքի օրինակն այս առումով ցույց է տալիս քարիզմատիկ լիդերության երկակի բնույթը. Դ. Ռասթոուն նկատում է, որ «քարենյութիչը ղեկավարում է ինչպես ինն հասարակարգը, որտեղ դեռ շարունակում են ապրել նրա կողմնակիցներն, այնպես էլ նոր հասարակարգը, որը նա փորձում է ստեղծել»²⁰³: Անվանել նրան բացարձակ բռնապետ կամ էլ «ծողովրդավար», ինչպես դա փորձում է ներկայացնել պաշտոնական թուրքական պատմագրությունը, ճիշտ չէր լինի: Որպես կանոն, իրատեսական ու պրագմատիկ ղեկավարները ձեռնարկում են բռնությանը ուղեկցվող քայլեր կամ դեմոկրատական բնույթի գործողություններ՝ կախված նրանից, քե վարքագծի որ տարբերակն է տվյալ իրավիճակում իրեն թվում ավելի արդյունավետ: Այսինքն՝ տվյալ առաջնությունի և նրա քաղաքականության համահատականը պետք է տրվի՝ ելնելով նրանից, քե ինչքանով նրանք զանաթեք են իրավիճակին և ինչպիսի արդյունքների են հասել իրենց գործունեության մեջ:

գ. Թուրքիայի քաղաքական ընտրանին 1920–1930–ն թվականներին

²⁰² Այսպիսի կարծիք արտահայտել են N.Berkes Türkiye'de Çağdaşlaşma. Ankara, 1973; s. 371.; G.Carretto 1930–larda Kemalizm–Faşizm–Komünizm üzerine polemikler. "Tarih ve toplum", N 17–18, Mayıs–Haziran 1985, ss. 62–72; M. Goloğlu Demokrasie geçiş. s. 124, İstanbul, 1982; I. Schick, E. Tonak (eds.). Geçiş Sürecinde Türkiye. s. 254; K.–D.Grothusen. Kemal Atatürk. "Südosteuropa Mitteilungen", N 2, 1982, SS. 13–20; N.Berkes The Two Facets of the Kemalist Revolution. "The Muslim World", N 64, 1974, pp. 16–28; R. Brock Ghost on Horseback. p.385; F.Frey The Turkish Political Elite. p.385; F.Fucuyama The End of History and the Last Man. p. 257.; S.Huntington Political Order in Changing Societies; K.Karpat Turkey's Politics. p.68; A.Kazancigil and I. Özbudun (eds.). Atatürk: Founder of a Modern State. p. 153; Kinross, Lord. Atatürk. p. 381; D.Lerner and R.Robinson Swords and Ploughshares. The Turkish Army as a Modernizing Force. "World Politics", vol. XIII, N 1, October 1960, pp. 19–45; B.Lewis The Emergence of Modern Turkey. p.352 և ուրիշները:

²⁰³ D.A.Rustow. Politics and Westernization in the Near East. Princeton, 1956. p. 29.

1920–1930–ական թթ. ժամանակաշրջանում Թուրքիայում կազմավորվեց նոր քաղաքական ընտրանի՝ իր նոր արժեքներով, մոտեցումներով և գաղափարներով, որը հետագայում փորձում էր առաջ տանել և տարածել Արաբ-յուրքի գործը: Այն բաղկացած էր զինվորականներից, հատկապես բարձրագույն սպայակազմի ներկայացուցիչներից, քաղաքաբնակ մտավորական խավից, պաշտոնյաներից, Անատոլիայի տեղական վերնախավի ներկայացուցիչներից և նոր ձևավորվող արդյունաբերական և առևտրական կամ «միջին» խավից: Կարելի է համաձայնել քաղաքագիտության մեջ տարածված այն տեսակետի հետ, ընտրանին՝ դա մարդկանց մի խումբ է, որի ձեռքում գտնվում են կրթության, տեղեկատվության, ֆինանսական հիմնական միջոցները և ինստիտուտները, որոնց օգնությամբ էլ փաստորեն իրականացվում է քաղաքական իշխանությունը²⁰⁴: Թուրքական քաղաքական ընտրանու մասին իր ընդգրկում աշխատության մեջ ամերիկյան բուրբազետ Ֆրեդերիկ Ֆրեյը նշում է, որ Թուրքիայում «քաղաքական ընտրանին կազմում էր իշխանության կայացման և գործունեության ամուր հիմքը, որը մասնակցում էր քաղաքական ծրագրերի և բարեփոխումների մշակման և կենսագործման մեջ»²⁰⁵: Դեռևս Զիյա Գյոքալփի կողմից առաջ էր քաշվում այն գաղափարը, որ գերագույն իշխանությունը պետք է տրվի ոչ թե ժողովրդին, այլ ազգային էլիտային, որը պետք է իշխի ելնելով ժողովրդի շահերից. «Ժողովրդական իշխանությունը՝ ընտրանու իշխանությունն է»²⁰⁶:

Ընդհանրացնելով, նշենք, որ քաղաքական ընտրանին դա որոշակի խումբ է կամ հասարակության խավ, որը կենտրոնացնում է իր ձեռքերում պետական իշխանությունը և զբաղեցնում է դեկավար պաշտոնները՝ կառավարելով հասարակությունը: Նրա մեջ մտնում են իշխանական լիազորություններ և գործառույթներ ունեցող բարձր կարգի քաղաքական գործիչները, բարձրագույն պետական ծառայողները: Քաղաքական ընտրանին հանդիսանում է քաղաքական համակարգի կենտրոնական օղակը:

Թուրքիայում իշխանությունը «Անկախության պատերազմի» ընթացքում և նրանից հետո հայտնվեց, բնականաբար, ազգայնական շարժումը՝ գլխավորող անհատների ձեռքում, ընդ որում, նրանցից ոչ բոլորը մնացին իշխանական համակարգի գագաթին, մնացածներն էլ դարձան նոր՝ հանրապետական ընտրանու հիմքը: Հանրապետական ընտրանին մեծ մասամբ հավակնում էր հանդես գալ որպես կրթված, մտավորական և պաշ-

²⁰⁴ J. Coleman.(ed.) International Encyclopedia of Social Sciences. vol. 4, p. 362.

²⁰⁵ F. Frey. The Turkish Political Elite. p. 40.

²⁰⁶ U.Heyd. Foundations of Turkish Nationalism. London, 1950, p. 133.

տոնավոր խավ: Ընտրանու մյուս խումբը կազմում էին տեղական մակարդակով ազդեցություն ունեցող մարդիկ, որոնք, սակայն, տվյալ ժամանակաշրջանում զգալի չափով ներկայացված չէին իշխանական համակարգում: Ընդ որում, երկրի տարածքի մեծ մասում քաղաքականությունը շարունակում էր մնալ, մի կողմից, տեղական աղաների և ցեղապետների և, մյուս կողմից, իշխանությունների միջև բանակցությունների գործ:

Համաձայն մասնագիտական գրականության մեջ առաջ քաշվող, մասնավորապես Ֆ. Ֆրեյի և թուրք հասարակագետ Չաղլար Քեյդերի տեսակետների, թուրքական քաղաքական ընտրանին 1920–1930–ական թթ–ին քաղկացած էր մի քանի շերտից՝ բարձրագույն, միջին, վարչական: Բարձրագույն օղակի մեջ մտնում էին Հանրապետության նախագահը, ՀԺԿ–ի գլխավոր նախագահը, Հանբապետության վարչապետը, ՀԺԿ–ի փոխնախագահը, ՀԺԿ–ի գլխավոր քարտուղարը, ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների և տնտեսության, ազգային պաշտպանության նախարարները, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահը, կրթության, արդարադատության նախարարները, 1924–1925 և 1930թ. կարճատև գոյություն ունեցած Առաջադիմական–Հանրապետական և Լիբերալ–Հանրապետական կուսակցությունների նախագահները, մնացած նախարարները, ՄԱԺ–ի փոխնախագահները և մշտական կոմիտեների ղեկավարները, ՀԺԿ–ի կենտրոնական կոմիտեի և վարչության անդամները, ՀԺԿ–ի տարածքային տեսուչները: Այս շրջանակն էր ընդունում ժողովրդի համար ամենակարևոր քաղաքական որոշումները: Միջին քաղաքական ընտրանին ձևավորվում էր խորհրդարանի անդամներից, վիլայեթների նահանգապետներից, քաղաքապետներից, տարբեր քաղաքական ուժերի ղեկավարներից: Վարչական ընտրանու մեջ մտնում են պաշտոնյաները, որոնք զբաղեցնում են բարձր դիրքեր նախարարություններում և պետական կառավարման այլ մարմիններում²⁰⁷:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, ինքը՝ քաղաքական վերնախավը ներսում բաժանվում էր մի քանի խմբերի՝ կառավարության անդամները, ՀԺԿ–ի ղեկավար մարմինների անդամները, մեջլիսի պատգամավորներ, զինված ուժերի հրամանատարական կազմը, դատավորները, նահանգապետները:

Թուրքիայի Հանրապետության իշխող վերնախավը իր արձատնելով պատկանում էր օսմանյան և երիտթուրքական ընտրանու երկրորդ և եր-

²⁰⁷ F. Frey, *The Turkish Political Elite*, p. 45; Ç. Keyder, *State and Class in Turkey*, p. 136.

որոյ շարքին, ուստի թե՛ իր մտածելակերպով, թե՛ իր վարքագծով նա օտարված չէր նախորդ ժամանակաշրջանից: Նախկին օսմանյան բյուրուկ-րատիայից շատերը տեղ գտան նաև Անկարայի կառավարության հաստատություններում: Հանրապետության 50-ամյակին նվիրված իր հուշերում թուրք հայտնի գրող և պետական գործիչ՝ Յակուբ Քադրի Կարասօմանօղլուն գրում էր. «Բարեփոխումների առաջընթացի համար հարկավոր էր ազատվել նախորդ ժամանակաշրջանի մարդկանցից: Մինչդեռ մենք նոր պետության գլուխ հավաքեցինք ինչ որ կար Բաք-ը Ալիում»²⁰⁸ ... Ահա այդ պակասն էր, որ մեր բարդությունների պատճառը դարձավ: Աբաբյուրը ինձ այս իմ հարցումներին պատասխանում էր, որ «ինձ մի բողոքի՛ր: Ես ազգային պայքարը սկսեցի կանաչ դրոշների տակ հավաքված հոջաների հետ: Մարդ չկար, չկարողացա գտնել: Ռ՞վ եկավ, ո՞վ ինձ հավատարիմ ծառայեց: Խալիֆայությունը, սուլթանություն անգամ շեյխի ֆեթվայով վերացնել տվեցի»²⁰⁹: Հետևաբար, Քենալ Աթաբյուրքն ամեն կերպ ջանք էր գործադրում, որպեսզի թուրք երիտասարդությունից նոր ընտրանի աճեցնվի. «Մենք ամեն ինչ երիտասարդներին ենք թողնելու... Մեր ամբողջ հույսը երիտասարդությունն է»²¹⁰:

Փաստորեն, Թուրքիայում իշխող վարչակարգը իր ուսերի վրա էր վերցրել երկրի նոր ընտրանու ձևավորման գործը: Նոր ընտրանու մոտ էլ դեռևս չէր վերացել օսմանյան ինքնիշխան և տիրապետող էին մնում օսմանյան մտածելակերպն ու ավանդույթները՝ պետության և իշխանության մասին հատուկ պատկերացումներով, մասնավորապես, երկրի կառավարման ոճի, ժողովրդի կյանքում պետության խաղացած դերի վերաբերյալ: Այսպես, հանրապետական ընտրանին, օսմանյան վերնախավի պես, ընդունում էր պետության և նրա առաջնորդների գերակայությունը՝ հանդգնած լինելով, որ պետությունն է մարմնավորում արդիականության գաղափարները և կարող է տարածել դրանք ամբողջ բնակչության մեջ բարեփոխումների միջոցով:

Հատկանշական է, նշում է Դ. Լեյնեբը, որ «արդիականացվող վերնախավի և զանգվածների միջև սովորաբար գոյություն ունի խոր, հիմնարար

²⁰⁸ Բաք-ը Ալի «Բարձրագույն Դուռ» կոչվում էր սուլթանական սնձ վեզիրի նստավայրը, որը դարձավ ամբողջ սուլթանական կառավարության հոմանիչը:

²⁰⁹ Y.K. Karaosmanoğlu. Açık oturum. "Milliyet", 28.10.1973.

²¹⁰ M.Kansu. Atatürk'le Beraber. ss. 471-472; մեջբերվում է ըստ D.Avcioğlu. Milli Kurtuluş Tarihi. c. 3, İstanbul, 1976, s. 1233.

ճեղքվածք»²¹¹, որն արտահայտվում էր ինչպես սոցիալական ծագման և դիրքի, այնպես էլ կրթական և մտավոր մակարդակներում: Թուրքական ընտրանին շատ ավելի կրթված էր հասարակ ժողովրդից: Քենալական ժամանակաշրջանում մեջլիսի մոտ 60 տոկոսը ունեցել է բարձրագույն համալսարանական կրթություն: Հիմնականում մեջլիսի պատգամավորները ավարտում էին քաղաքական գիտությունների և իրավաբանական բաժանմունքները²¹²: Փաստագրական տվյալները վկայում են, որ քուրդական քաղաքական ընտրանու մեջ տիրապետող էին միջին տարիքի²¹³ բարձրագույն կրթությամբ տղամարդիկ²¹⁴, որոնք պատկանում էին սոցիալական բարձր և միջին խավերին: Դրանք հիմնականում պետական բյուրոկրատիայի, զինվորականության, մտավորական խավի ներկայացուցիչներ էին²¹⁵:

Ինչքանով մեջլիսն էր տարբերվում երկրի ընդհանուր բնակչությունից, այդքանով էլ բարձրագույն դեկավալությունն էր առանձնանում խորհրդաբանից: Նախարարների կաբինետի անդամները գերազանցապես ունեին համալսարանական մակարդակի կրթություն: Ըստ մասնագիտությունների նրանք բաժանվում էին զինվորականների, բժիշկների, իրավաբանների և քաղաքագետների²¹⁶: Այսպիսով՝ երկրի քաղաքական ընտրանու մեջ մուտք գործելու համար պահանջվում էր համապատասխանել որոշակի չափանիշներին, ինչպես, օրինակ, բարձրագույն կրթություն ունենալը, պատկանելությունը բանակային վերնախավին կամ պետական բյուրոկրատիային:

1920–1930–ական թթ. ընթացքում քենալական ընտրանու գործունեության գլխավոր հենարանը հանդիսանում էին գործադիր իշխանությունը (բյուրոկրատիան), կուսակցությունը և բանակը, իսկ կենտրոնական նպատակներն էին երկրի քաղաքական, սոցիալ–տնտեսական կառուցվածքների, մշակութային կյանքի և մտածողության արմատական վերափոխումը և արդիականացումը: Այս կոնտեքստում նրա հիմնական կարգախոսները դարձան ազգայնականության, աշխարհիկ պետության և արդիականաց-

²¹¹ D. Lerner. The Passing of Traditional Society. Glencoe, 1966. p. 17.

²¹² F. Frey. The Turkish Political Elite. p. 94.

²¹³ Նրանց միջին տարիքը 40–ից 60 տարեկան էր:

²¹⁴ Հինգերորդ մեջլիսում, որը ընտրվել էր 1935թ., նրք վերացվեց ընտրական իրավունքի հետ կապված սեռական խտրականությունը, կանայք կազմում էին նրա անդամների 4,1%-ը:

²¹⁵ Պաշտոնյա և զինվորական խավերի ներկայացուցիչները կազմում էին մեջլիսի մտավորական 21%-ը, իսկ տնտեսական խավի ներկայացուցիչները՝ 9%-ը: Բոլոր տվյալները բերվում են ըստ F. Frey. The Turkish Political Elite. p. 105–125:

²¹⁶ Նույն տեղում, էջ 130:

ման գաղափարները, որոնց անունից էլ քաղաքական ընտրանին իրեն իրավունք վերապահեց խիստ վերահսկողություն սահմանել զանգվածների և երկրի քաղաքական ղեկավարման գործընթացների նկատմամբ՝ տեսնելով Թուրքիայի գաղափարները ուժեղ և կենտրոնացված վերահսկողության տակ, այսինքն, «խնամակալ» վարչակարգի պայմաններում: Ավելին, երկրի քաղաքական ընտրանին սկսել էր իրեն նույնացնել ազգի և պետության հետ: «Հանրապետության ղեկավարությունը,– ընդգծում է Աբաթյուրբի կենսագիր լորդ Կինրոսը,– անկեղծորեն հավատում էր, որ իրավունք ունի երկրի բնակչությունից հնազանդություն պահանջելու և ստանալու համար»²¹⁷: Այսպիսի ավտորիտար իշխանության պայմաններում քաղաքական ղեկավարության և քաղաքական ընտրանու գործառույթը կայանում էր պետական, զինվորական, մտավորական կառույցների նկատմամբ վերահսկողության պահպանման մեջ: Ընդ որում, շնորհիվ բնակչության մեջ արմատավորված այդ նույն մտածելակերպի նրանք կարիք չունեին դիմելու դեմագոգիայի և տեռորի հսկայական ապարատի օգնությանն իրենց քաղաքականությունն անցկացնելիս, ինչպես դա տեղի էր ունենում միաժամանակ Խորհրդային Միությունում և Գերմանիայում: Թ՛և, մասնավորապես, մեկ անգամ չէ, որ արձանագրվում էին դեպքեր, երբ նրանք, ովքեր համաձայն չէին իշխող վերնախավի դիրքորոշումների և քաղաքականության հետ, դիտվում էին ոչ միայն որպես քաղաքական ընդդիմախոսներ, այլ նաև որպես «պետության և ազգի թշնամիներ»:

Հարկ է նշել նաև, որ թուրքական ընտրանու մեջ գոյություն չունեին բավականաչափ ինքնուրույն խմբեր: Տնտեսական վերնախավը, օրինակ, չէր կարող հավակնել հանդես գալ իբրև ինքնավար քաղաքական ուժ, մտավորականությունն ի վիճակի չէր առաջ քաշել այլընտրանքներ առկա քաղաքական համակարգին և հանդիսանում էր իշխող վարչակարգին ավելի շուտ «սպասարկող», քան թե ընդդիմադիր ուժ, իսկ բանակային սպայակազմը բավարվում էր իր նախկին հրամանատարներին Հանրապետության բարձրագույն պաշտոններում տեսնելով և կենտրոնացած էր երկրի տարածքային ամբողջականության պահպանման և բանակի մողեռնիզացման խնդիրների վրա, պետական բյուրոկրատիան էլ զբաղված էր կառուցվածքային բարեփոխումների խնդրի լուծմամբ: Իշխող ընտրանին պատասխանատու չէր երկրի բնակչության առաջ, քանի որ չէր գործում պարբերական ընտրությունների միջոցով այն փոխելու մեխանիզմը: Ընդ որում, հանրապետական քաղաքական ընտրանու առաջին սերնդին այդ

²¹⁷ Kinross, Lord. Ataturk. p. 477.

պես էլ չհաջողվեց փոխադարձ կապ հաստատել լայն զանգվածների հետ: Չ. Քեյդերը այս առթիվ նշում է. որ «հանրապետականներն այդպես էլ չկարողացան շահել բնակչության լայն խավերի աջակցությունը: Նրանք մնացին որպես զանգվածներից կտրված ընտրամի»²¹⁸: Բավական էր միայն 1950 թ.-ին բուրժեբրին տալ ազատ ընտրության իրավունքը, և 27 տարի իշխող Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը ջախջախիչ պարտություն կրեց՝ հանձնելով իշխանությունը քաղաքական ընտրանու հաջողի՝ երկրորդ սերնդին:

1920–1930–ն թթ. ընթացքում քեմալական ընտրանու գործունեության գլխավոր հենարանը հանդիսանում էին գործադիր իշխանությունը (բյուրոկրատիան), կուսակցությունը և բանակը, իսկ հիմնական նպատակներն էին երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական կառուցվածքների, մշակութային կյանքի և մտածողության արմատական վերափոխումը և արդիականացումը: Այս կոնտեքստում նրա առաջնությունը կարգախոսներով դարձան ազգայնականության, աշխարհիկ պետության և արևմտականացման գաղափարները:

Հարկ ենք համարում ընդգծել, որ բուրժ դեկավարները կարողություն ունեցան մոտ 30 տարով ապահովել իշխանության պահպանումը մեկ ուժի ձեռքերում, ինչը բույլ տվեց Թուրքիային ավելի սահուն և հարաբերականոթեն անցավայի ապրել «անցումային շրջանը»:

Արևում արդեն նշվել է, որ քեմալական շրջանում վերարտադրվեցին օսմանյան և երիտբուրժական քաղաքական համակարգերի որոշ հանգուցային տարրերը: Թե՛ սուլթանը, թե՛ իթթիհադական «ետյակը», թե՛ Հանրապետության նախագահը, բոլորն էլ ունեին քաղաքական և կադրային հարցերով որոշումներ ընդունելու, կառավարության գործունեությունը ղեկավարելու համար անսահմանափակ իշխանություն: Այս տեսանկյունից Թուրքիայում քաղաքական ղեկավարման պրոցեսում գերակայող էր հանդիսանում երկրի բարձրագույն ղեկավարի կամքը, որով պայմանավորված էին պետության գոյությունը, նրա առաջընթացը կամ հետընթացը:

Հանրապետության քաղաքական ղեկավարները ձգտում էին բացարձակ վերահսկողություն սահմանել երկրի քաղաքական ղեկավարման գործընթացների նկատմամբ, այստեղից էլ բխում էր նրանց ձգտումը կենտրոնացնել իշխանությունը մեջլիսի, կառավարության և կուսակցության միջոցով մի քանի մարդկանց ձեռքերում: Հարկ է ընդունել, որ Հանրապետության նախագահի չափազանց ուժեղ և ավտորիտար իշխանությունը խան-

²¹⁸ Շ. Keyder. Türkiye'nin Demokrasinin Ekonomi Politigi.– I.C. Schick ve E. Tonak (derl.). Geçiş Sürecinde Türkiye. İstanbul. 1998, s. 50.

գարում էր թուրքական քաղաքական համակարգի մյուս տարրերի կայացմանը: Չանքայալում²¹⁹ էին որոշվում երկրի զարգացման գերակայությունները, քաղաքական և տնտեսական գլխավոր ռեսուրսների բաշխումը, վարչական մեքենայի գործունեությունը: Այդուհանդերձ, նախագահը զգում էր երկրի քաղաքական ընտրանու աջակցության և օգնության կարիքը, քանի որ այն պետք է կյանքի կոչեր նրա նախաձեռնությունները²²⁰:

Արդեն նշվեց, որ քաղաքական վերնախավը Թուրքիայի Հանրապետությունում բաժանված էր մի քանի խմբերի՝ կառավարության անդամները, ՀԺԿ-ի ղեկավար մարմինների անդամները, մեջլիսի պատգամավորները, զինված ուժերի հրամանատարական կազմը, դատավորները, նահանգապետները: Այդ ընտրանու ներսում, իր հերթին, գոյություն ունեին մի քանի մրցակից խմբեր. սկզբից դրանք էին հանդիսանում նախկին՝ օսմանյան-իթքիսական վերնախավին պատկանող Մուստաֆա Քեմալի շուրջը համախմբված և նրան ընդլիմադիր անձինք, որոնց միջև պայքարի գագաթնակետը դարձան 1924-1926 թթ-ին Առաջադիմական կուսակցության և Իզմիթի դավադրության հետ կապված իրադարձությունները, ապա վարչապետ Իսմեթ Ինյունյուի և ներքին գործերի նախարար Ռեջեփ Փեքերի գլխավորությամբ արմատականների, 1930-1934 թթ-ին գործունեություն ծավալած ձախ-արմատական «Կադրո» և ֆինանսների նախարար և վարչապետ Ջելալ Բայարի ազատական հայացքներ դավանող ընտրանու անդամների խմբերը: Այս ամենը վկայում է, որ տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի քաղաքական ղեկավարությունը միասնական չէր, ինչպես դա ներկայացվում է թուրքական պաշտոնական պատմագրության մեջ:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ քարիզմատիկ առաջնորդը ընտրում է իր շրջապատը քարիզմատիկ լիդերությանը հատուկ չափանիշով, այսինքն՝ մոտենալով այդ ընտրությանը ոչ թե մասնագիտական պատրաստվածության կամ «աստիճանակարգի», այլ «իսլամատարմության» և «վստահելիության» տեսանկյունից: Այդպես էլ, Թուրքիայի առաջին նախագահը գերադասում էր շրջապատել իրեն հեղինակությամբ ու փորձով զիջող կողմնակիցներով, որոնք պատրաստ էին անվերապահորեն հետևել նրան:

Քեմալ Աթաթյուրքի շրջապատին պատկանող մարդիկ հանդիսանում էին հիմնականում նրա մտերիմ ընկերները և զինակիցները զինվորական

²¹⁹ Այսպես էր կոչվում Քեմալ Աթաթյուրքի տունը Անկարայում, որը հետագայում դարձավ Թուրքիայի Հանրապետության նախագահների պաշտոնական նստավայրը:

²²⁰ F. Frey, The Turkish Political Elite, p. 314.

ուսումնարաններում ուսման և երիտթուրքական շարժման օրերից²²¹: Նախագահի շրջապատը բաղկացած էր երեք կարգի մտադրականացից՝ պաշտոնյաներ, որոնց հետ ինքը հարաբերվում էր ի պաշտպան, մերձավոր ընկերներ կամ զինակիցներ և մտավորականներ՝ պատմաբաններ, լեզվաբաններ, լրագրողներ: Առաջին կարգի մեջ մտնող անձանցից կարելի առանձնացնել վարչապետ Իսմեթ Ինյունյուի, Ռեջեփ Փեքերի (չժԿ-ի գլխավոր քարտուղար 1931–37թթ-ին), Շյուքրյու Քայալի (ներքին գործերի նախարար 1927–1938թթ-ին, չժԿ-ի գլխավոր քարտուղար 1927–1931թթ-ին), Ջելալ Բալարի (տնտեսության նախարար 1932–37թթ-ին, վարչապետ 1937–38թթ-ին), Ֆուհր Ռ-յուշու Արասի (արտգործնախարար 1925–38թթ-ին), Ֆեզի Չաքմակի (Գլխավոր շտաբի պետ 1922–38 թթ-ին), Քյազըմ Օզալփի (նախագահի օգնական 1925–1935-ին, պաշտպանության նախարար 1935–39-ին, Արաբյուրքի հիմնական քաղաքական խորհրդականը) անունները, որոնց հետ նախագահը քննարկում էր պետական քաղաքականության կարևոր գործառնություններն ու որոշումները²²²: Պարզ երևում է, որ երկրի քաղաքական առաջնորդը ձգտում էր ներգրավել իր շրջապատի մեջ մարդկանց, որոնց հետ ինքը պատանեկության և երիտասարդության տարիներին անցել է համատեղ ուսում:

Ուզգմավարական և կադրային հարցերում իր որոշումները Արաբյուրքը ընդունում էր ինքնուրույն, թեև, իհարկե, նախօրոք քննարկում էր դրանք իր մերձավորների հետ: Այդ շրջանակի մեջ մտնում էին վարչապետ Ինյունյուն (մինչև 1936–37թթ.), Քյազըմ Օզալփը, Ֆեզի Չաքմակը, Շյուքրյու Քայան, Ռեջեփ Փեքերը, Քըլլը Ալին, Նուրի Ջոնքերը: Քաղաքական որոշումների կայացման նախաձեռնությունը, բնականաբար, բխում էր Հանրապետության նախագահից: Դրանից հետո, դրանք քննարկվում էին Արաբյուրքին հավատարիմ անձանցից կազմված շատ նեղ խմբի շրջանակներում, ապա որոշումները արագ ձևակերպում էին ստանում մեջլիսի կուսակցական

²²¹ W. Weiker. Kemal Atatürk'ün yakınları. "Bellefen", c.XXXIV, N 136, Ekim 1970, s. 632.

²²² Որոշումների կայացման գործընթացի վրա որոշ ազդեցություն ունեին նաև Մակեդոնիայում գինվորական ուսման և ռազմական ծառայության տարիներից նրա մտերիմ ընկերները, ինչպես, օրինակ, Նուրի Ջոնքեր (համադասարանցի, չժԿ-ի փոխնախագահի օնական), Քըլլը Ալին (պատգամավոր), Մալիի Բոզոքը (համադասարանցի, Քնձալի համհարզ 1917–1923թթ., պատգամավոր): Մյուշիթ Օզընը (գինվորական ուսումնարանի համակուրսնցի, պատգամավոր), Ֆալիի Ռեջը Աթայը (պատգամավոր, մատույն ընկերության ղեկավար): Անձնական ընկերների շարքից հարկ է հիշատակել նաև Ալի Ֆեթիի Օթյարի, Ալի Յուդա Ջըրետյի, Բյազըմ Կարաբեքիրի, Տյումսին Ռուշ Օրթայի անունները՝ մարդիկ, որոնց հետ Արաբյուրքը ծանոթ էր գինվորական ուսման տարիներից և որոնց հետ միասին հաղթանակ տոնեց «Անկախության պատերազմում», բայց իզեց կապերը 1923–1926 և 1930 թթ. իրադարձությունների պատճառով:

խմբակցության կողմից և քվեարկվում արդեն խորհրդարանում: Հանրապետությունում որոշումների ընդունման կենտրոն հանդիսանում էր իրականում ոչ թե կառավարությունը կամ մեջլիսը, այլ անձամբ երկրի առաջնորդը և նրա շրջապատը, որը ստացել էր որոշումների ընդունման ոչ ինստիտուցիոնալ կենտրոնի կարգավիճակ: Այն նաև հայտնի է որպես «սոփրաներ»:

Այսպիսով՝ նախագահի շրջապատի ազդեցությունը քաղաքական որոշումների ընդունման մեջ թեկուզև զգալի էր, բայց ոչ վճռորոշ: Չկար որևէ մեկ գործիչ, որ կարող էր ասել, որ ինքն է հանդիսանում նախագահի գլխավոր հենարանը. անգամ Իսմեթ Ինյունյուն չէր հավակնում կոչվել այդպիսին: Իր իշխանությունը և լիազորությունները Արաբյուրքը չէր կիսում ոչ մեկի հետ: Միայն 1937–1938 թթ–ին՝ իր ծանր հիվանդության պատճառով, նախագահը բույլ տվեց իր շրջապատին ձեռք բերել մեծ չափերի հասնող ինքնուրույնություն և ազդել որոշումների կայացման վրա:

Արաբյուրքի բարեփոխումների հանդեպ անբարյացակամ վերաբերմունքը զանգվածների մոտ այնքան էլ բացահայտ չէր դրսևորվում, ինչքան երկրի քաղաքական վերնախավի որոշ ներկայացուցիչների մոտ. «Դիմադրությունը նրան (Արաբյուրքին – Ս.Բ.) առաջացավ միայն վերնախավի կողմից»²²³: Իսկ այդ դիմադրության կազմակերպիչները, ինչպես վերևում արդեն նշվել է, Քեմալ Արաբյուրքի մերձավոր զինակիցներն էին՝ Հյուսեյն Ռաուֆ Օրբայը, Բյազըմ Կարաբեքիրը, Ալի Ֆուադ Ջեբեսոյը, Ռեֆիք Բեյեն. նրանք, ով այս կամ այն ձևով նպաստում էին Մուստաֆա Քեմալ–փաշայի վերելքին:

Քանի դեռ շարունակվում էր «ազատագրական պատերազմը», թուրքական իշխող վերնախավը թիչ թե շատ համախմբված էր հանդես գալիս: Սակայն ազգայնական շարժման հաղթանակը դարձավ նրա պառակտման սկիզբը: Հանրապետության իռադիոնալ հետո Մուստաֆա Քեմալի համար ավելի ու ավելի դժվար էր դառնում պահպանել համագործակցությունը Իսթիհադի շրջանակների և շարժման իր զինակիցների հետ: Ազգային շարժումը, հասնելով իր գերագույն նպատակին՝ պետության և նրա տարածքի պահպանմանը, անխուսափելիորեն կորցնելու էր իր ներքին միասնությունը: Մուստաֆա Քեմալը նույնիսկ կանխազգույն էր ազգային շարժման պառակտումը, երբ նրա ավարտից թիչ առաջ նշել էր, որ շուտով «մենք սկսելու ենք սպանել իրար»²²⁴: Սկսվել էր «հետանկախության»

²²³ D.von Mikusch. Gazi Mustafa Kemal. S. 327.

²²⁴ H.C.Armstrong. Grey Wolf. p. 220.

շրջանը, որը վճռորոշ դեր էր կատարելու երկրի ապագա ճակատագրի համար: Եվ այստեղ բուրբակյան քաղաքական ընտրանքին բաժանվեց Քեմալի կողքին մնացածների և նրանից հեռացածների վրա:

1923–1925թթ–ին քաղաքական դաշտում հիմնական դերակատարները հանդիսանում էին մի կողմից Հանրապետության նախագահը և նրա մերձավոր շրջապատը, մյուս կողմից՝ առաջադիմականները: Եթե առաջին խմբի համար նպատակը ամեն զնով իշխանությունը պահպանելն էր և սեփական դիրքերն ամրացնելը, ապա երկրորդ խմբի համար առաջնահերթ խնդիր էր կոյրցած դիրքերի վերանվաճումը: Երկու խումբն էլ տիրապետում էին նույն ռեսուրսներին և հենարաններին՝ բանակ, կառավարական վերնախավ, մտավորականություն: Ուստի, Մուստաֆա Քեմալի առաջին մտահոգությունն էր առաջադիմականների հետ պայքարում զրկել նրանց այդ հիմքերից և ինչպես հնարավոր է շուտ վերացնել վտանգավոր մրցակցին քաղաքական ասպարեզից: 1923 1926թթ ին տեղի ունեցած պառակտումն արտացոլում էր իշխանության համար տարվող պայքարի, երբ երկրի առաջնորդ Մուստաֆա Քեմալից ինքնուրույն և ոչ պակաս ամբիցիոզ անհատները սկսեցին հավակնել քաղաքական իշխանությանը՝ հակադրվելով շարժման մեջ Քեմալի հեղինակությունն անվերապահորեն ընդունող թեխն: Եվ Ռաուֆը, և Կարաբեքիրը, և Ալի Ֆուադը Մուստաֆա Քեմալից ոչ պակաս հավակնոտ գործիչներ էին, որոնք ընկալում էին Քեմալի ղեկավարման ոճն ու մեթոդները որպես հարված սեփական հեղինակությանն ու պատմվածքային: Առաջին թեխ առաջնորդ Քյազըմ Կարաբեքիրը հայտարարում էր այդ օրերին. «Մուստաֆա Քեմալը զնում է դեպի բռնապետություն: Մենք այն տեսել ենք համաշխարհային պատերազմի ժամանակ և գիտենք, թե ինչ զին ունեցան մեր երկրի համար Էնվերի կատարած խեղճատությունները: Երկրի գլխին սեփական ձեռքով երկրորդ մի Էնվեր եք տեղծում: Քեմալի այսքան ուժեղանալը ճիշտ չէ»²²⁵: Ալի Ֆուադ Ջեքետյը 1957թ–ին գրում էր, որ Առաջադիմական կուսակցության ղեկավարներն այն կարծիքին էին, որ Գազին ավելի արդյունավետ կղեկավարեր երկիրը՝ մնալով որպես կուսակցություններից վեր կանգնած պետության զուլս²²⁶:

Մյուս թեխ կամ արմատականները որպես «ազգային նպատակների» պրոբլեմի լուծում ընտրեցին առաջնորդի, կառավարության և կուսակցության ձեռքբերում իշխանության կենտրոնացումը: Չի կարելի չնշել, որ ընդդիմությունը ղեկավարում էին անձինք, որոնք նշանակալի դիրքեր էին զբաղում մինչև Հանրապետության իռչակման շրջանը, ուստի նրանք դժվար

²²⁵ Ş S Aydemir Tek Adam, c 2, s 507

²²⁶ D.A. Rustow, Atatürk as Founder of a State, "Daedalus", N , 196 , p.805.

էին տանում այն փաստը, որ իրենց փոխարինում են նոր մարդիկ և որ իրենց հաշվին մեծամում է հակառակ կողմի իշխանությունը: Ռաուֆ Օրքալը օսմանյան ծովակալի որդի էր, որը կարիերա էր արել ռազմածովայն ուղորտում. Կարաբեքիրն ու Ջեբետյոյ՝ օսմանյան բանակի հայտնի գեներալներ էին, որոնք սովորել են Մուստաֆա Քեմալի հետ նույն ուսումնարաններում. անգամ նրանից ավելի արագ էին բարձրանում զինվորական աստիճանակարգով: Նրանք կողմնակից էին երկրի աստիճանական, էվոլյուցիոն զարգացմանը՝ համդես զարով ավանդականի և արդիականի հարմարեցման գաղափարի օգտին²²⁷:

Հատկանշական է, որ Իսմեթ Ինյունյուն չէր համարում իր նախկին կուսակիցներին դավադիրներ. որոնք մեղադրվում էին 1926 թ. Քեմալի դեմ դավադրություն կազմակերպելու մեջ: Գլխակալության արձատները, ըստ Ինյունյույի, կայանում էին որոշումների համաձայնեցման պրոբլեմի մեջ. «Նրանք (ԱՀԿ-ի հիմնադիրները – Մ.Բ.) գտնում էին, որ հենց սկզբից միասին են եղել, միասին հաղթանակ են տարել, նաև միասին էին պետություն ստեղծում. այդ պատճառով բոլորն էլ պետք է հավասար իրավունք ունենան որոշումների ընդունման մեջ»²²⁸:

Արդեն 1923թ. հուլիսի 29-ին Հանրապետության հռչակումից հետո Ռաուֆը ստամբուլյան բերքերին տված իր հարցազրույցում զնահատում էր տվյալ փաստը որպես «հապենս քայլ, որը կատարվել էր առանց հասարակական կարծիքը հաշվի առնելու... Հանրապետության հռչակումից առաջ գոյություն ունեցող կառավարման ձևը եղել էր ամենահարմարը մեր երկրի համար»²²⁹: Նա նաև շեշտում էր, որ պետք չէ կուռք ստեղծել «հանրապետություն» բառից՝ բերելով լատինամերիկյան երկրների օրինակը, որոնք կոչվում են «հանրապետություն», բայց իրականում կառավարվում են իշխանատենչ գեներալների կողմից²³⁰:

Գեռես 1923թ. ամռանը Մուստաֆա Քեմալին քննադատում էին երկրորդ մեջլիսի ընտրությունների անցկացումն իր ձեռքը վերցնելու և դրանց ազատությունը սահմանափակելու համար²³¹: Իսկ Մ.Քեմալի Հանրապետության նախագահ ընտրվելու փաստը որոշակի տագնապ առաջ բերեց սեփական դիրքերի համար նրա նախկին զինակիցների շարքերում, որը նրանք քողարկում էին Քեմալի բռնապետական հակումների մասին պնդումներով:

²²⁷ ԱՀԿ-ի գաղափարախոսության մասին տե՛ս վերևում՝ էջ 49-51:

²²⁸ I. İnönü. İsmet İnönünün hatıraları, 2-nci kitap, Ankara, 1987, ss. 213-217

²²⁹ Նույն տեղում, էջ 563: Այստեղ Ռաուֆն ի նկատի ուներ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պետությունը, որը գոյություն ուներ 1920թ.-ից:

²³⁰ E.J.Zürcher. The Unionist Factor. P. 137.

²³¹ Նույն տեղում, էջ 142:

Ընդ որում, նրանք ընդունում էին Քեմալ Արաբայուրքի հեղինակությունը. Ռ-աուֆը, 1935թ–ին հայրենիք վերադառնալուց հետո, Ինյոնյուի հետ հանդիպելիս, նշում էր, որ «Արաբայուրքը մեծ մարդ է: Իր շուրջը հավաքվածները երբեք նրան հավասար ու արժանի չեն եղել...»²³²: Սակայն նախագահին հարկավոր էին մարտիկ, որոնք պատրաստ էին անվերապահորեն կատարել նրա հրահանգներն ու կարգադրությունները: Իսկ Ռ-աուֆն ու Կարաբեքիրը հանդես էին գալիս որոշումների կոլեկտիվ քննարկման օգտին: Ազգայնական շարժման առաջնորդները գտնում էին, որ նրանք ծայրի իրավունք ունեն կարևոր քաղաքական որոշումների ընդունման գործընթացում, սակայն նրանց արհամարհում էին²³³: Այդ պատճառով էր, որ Ռ-աուֆին, Կարաբեքիրին, Ռեֆեքին, Ֆուադին հետզհետե հետին պլան էին մղում նախագահի շուրջ համախմբուող «նորեկները», որոնք պատրաստ էին անվերապահորեն կատարել Գ-ազիի հրամանները: Պետք է նաև հաշվի առնել, որ ընդդիմության ղեկավարներն այնքան էլ «կլիսագրագետ» չէին, այլ բավականին կրթված մարտիկ էին, որոնք վայելում էին երկրում մեծ հեղինակություն և կարող էին օգտվել իշխանության հենարան հանդիսացող կուսակցական, բյուրոկրատական և զինվորական աղբյուրներից: Թերևս, հենց այդ էր նրանց վտանգավոր դարձնում իշխող վարչակազմի համար:

Ընդդիմության մասին իր բավականին բացասական վերաբերմունքը Մուստաֆա Քեմալը արտահայտեց 1927թ–ին «Լոս–Անջելես Էքսպոզիցիոն» քերթին տված իր հարցազրույցում, որտեղ ինքը նշում էր, որ Հանրապետության կազմավորման առաջին տարիներին նա բախվեց երկու վտանգավոր տարրերի հետ. «Մեկը դա այն խումբն էր, որը կրոնական մոլեռանդությունն ու տգիտությունը զուգակցում էր քաղաքական անմտության հետ, և որն անցյալում, տարբեր սուլթանների իշխանության ներքո, փորձում էր հավատացնել մեզ, թե պետությունը մի օրգանիզմ է, որը կարելի է շահագործել անառակության ու անբարոյ կաշառակերության միջոցով՝ իրենց անձնական նպատակների համար: Ես վերջ դրեցի կառավարման այդ չարագուշակ և դատապարտելի տեսությանը՝ վերացնելով խալիֆին ու սուլթանին: Երկրորդ տարբը, որի դեմ ես անխնա պայքար եմ մղում, դա մարդկանց այն խումբն էր, որը նախահանրապետական շրջանում աշխարհին հայտնի էր «Երկուստարյ թուրքերի Միություն» կոմիտե անվան տակ: Այդ տարրերի շարքերը հավաքագրված էին քաղաքական բախտախնդիրների կասկածելի նմուշներից, կիսագրագետ առաջադիմական-

²³² F.Kandemir, Kâzım Karabekirin yakılan..., s. 121.

²³³ Ş.S. Aydemir, Tek Adam, c. 3, s. 157.

ներից ու սանձարձակ սովորույթների տեր մարդկանցից: Այն օրերին, երբ մենք պայքարում էինք մեր հակառակորդների դեմ՝ այս տարբերը մեզ միացան և կովեցին մեր շարքերում: Չնայած դրան՝ ես առաջին իսկ օրից հավատ չունեի նրանց մղումների հանդեպ: Սակայն ես ցանկանում էի, հույս էի տածում և աղոթում, որ երբ մեր երկիրն ազատվի օտար լծից, այս տարրն ուղղի իր մեթոդները՝ ներշնչվելով հայրենասիրական մղումներով: Շուտով ես համոզվեցի, որ իմ հույսերը դատապարտված են հիասքափության, և որ իմ մտղթանքները մնացին անպատասխան: Ես համբերությամբ սպասում էի՝ աչքս չհեռացնելով նրանց գործունեությունից»: Ապա Քեմալը նշում է, որ երբ այդ ուժերը ձևավորվեցին որպես քաղաքական ընդդիմություն, ինքը. «չհավակնելով լինել բռնապետ», հակված էր հանդուրժելու նրանց. բայց երբ նրանք քաղաքական ընդդիմության բողի տակ սկսեցին խռովություններ կազմակերպել, «կառավարման մեքենայի» ղեկին կանգնած անձանց սրբազան պարտականությունը դարձավ ճնշել նրանց ու ճնշել օրինակելի դաժանությամբ...»²³⁴:

Սակայն չի կարելի միանշանակ պնդել, որ Քեմալ Աթաթյուրքը Ստալինի կամ Հիտլերի նման անխնա ոչնչացնում էր իր բոլոր ընդդիմախոսներին: 1930-ական թթ. երկրորդ կեսում նա հաշտվում է նրանց հետ, բույլ է տալիս Օրբայի վերադառնալ Թուրքիա, Ջեբեսային և Բեյլեյին ընտրվել ՀԺԿ-ից մեջլիսի պատմաբանի, իսկ այդեն Ինյունյուի իշխանության օրոք Ռաուֆ Օրբայը և Քյազըմ Կարաբեքիրն ընտրվում են մեջլիս ՀԺԿ-ի ցուցակով:

Այսպիսով Աթաթյուրքի քաղաքական գիծը սկսած 1925թ-ից չէր հանդիպում որևէ լուրջ դիմադրության: Ինքը, ի տարբերություն թուրքական Երկրորդ և Երրորդ հանրապետությունների նախագահների, միշտ իր ձեռքի տակ ունեցել է հնազանդ վարչապետներ: Թուրքիայի «երկրորդ մարդ» հորջոդջված Իսմեթ Ինյունյուն լիովին կիսում էր Աթաթյուրքի տեսակետներն ուժեղ իշխանության վերաբերյալ. «Ուժեղ կառավարություն..., – հայտարարում էր նա,– ինչպե՞ս ենք այն ստեղծելու: Ներկայացնեն ձեզ սկզբից այս երկրում կառավարման ձևը: Մեր երկրում մինչ այժմ դիտվող պատկերն անիշխանությունն էր կամ էլ բռնակալությունը: Ինչպես ինքճակատության, այնպես էլ Սահմանադրության կառավարությունը կամ դեկավարում էր բռնության միջոցով, կամ էլ տապալվում էր»²³⁵: Եվ երբ 1930-ական թթ. 2-րդ կեսին նախագահի և վարչապետի միջև սկսեցին ի հայտ գալ լուրջ հակասություններ: Աթաթյուրքը բացահայտ հայտարարում էր իր

²³⁴ Ռ.Գ.Սահակյան, Մուստաֆա Քեմալի մի հարցազրույցի առիվ, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, N 3, էջ:

²³⁵ Rauf Orbay'in hatıraları. "Tercüman", 16.10.1986.

շջապատին. «Իսմեթն ընդդիմանում է ինձ: Քսանհիկը տարվա ընթացքում ես ջանք էի քափում նրանից ինչ-որ բան դարձնել, իսկ նա վերջում ապստամբեց... Նա զանգատվում է. որ ես թույլ չեմ տալիս նրան իր կարծիքն արտահայտել: Բայց ես հիմա հարց եմ տալիս ձեզ. ինչ էք կարծում, երբեք նա ունեցե՞լ է սեփական կարծիք...»²³⁶:

1937թ-ից սկսած՝ Արաբյուրքի հիվանդության պատճառով երկրում փաստացի իշխանությունը կենտրոնանում էր Ի.Ինյունյուի ձեռքերում: Վարչապետը նույնիսկ դժգոհություն հայտնեց, որ երկիրը կառավարվում քեֆի սեղանին հավարված մի խումբ հարբեցողների կողմից²³⁷: Տեսնելով քաղաքական իշխանության բուրգում վարչապետի դերի և կշռի այսպիսի աճը՝ նախագահը, որը սրբազանորեն պահպանում էր իր իրավունքները, Ինյունյուի և արտգործնախարար Թևֆիք Արասի միջև ծագած տարածայնություններն օգտագործելով՝ 1937թ. աշնանը կարգադրեց վարչապետին հրաժարական տալ և նրա փոխարեն վարչապետ նշանակեց հայտնի տնտեսական գործիչ, տնտեսության և ֆինանսների նախարար, իսկ նախկինում Իթքիհադի ակտիվ անդամ Ջելալ Բայարին:

Այս համատեքստում պետք է նշել, որ յուրաքանչյուր բռնապետություն մի օր բախվում է ժառանգականության ճգնաժամին: Այդ ճգնաժամը բնութագրվում է որպես նախորդ կառավարչի (դիկտատորի) ամենահավակնոտ զինակիցների միջև իշխանության համար պայքարով: Թուրքիան ևս անցավ բռնապետությանը հատուկ ժառանգականության հետևյալ շրջանը. սկզբից հաստատվել էր կայուն իշխանության փուլը, ապա սկսվեց ժառանգականության ճգնաժամը, վերջապես, տեղի է ունենում ճգնաժամի լուծումը կամ քաղաքական համակարգի քայքայումը²³⁸: Արաբյուրքի հետնորդի հարցը լուծվեց նրա մահից չորս օր առաջ, երբ Ինյունյուն ու Չաքմակը հանդիպեցին Անկարայում և քննարկեցին իշխանության փոխանցման պայմանները²³⁹: Իսկ Քեմալ Արաբյուրքի մահվան հաջորդ օրը՝ նոյեմբերի 11-ին, մեջլիսը ընտրեց Իսմեթ Ինյունյուին Թուրքիայի Հանրապետության երկրորդ նախագահ: Նա այդ ժամանակաշրջանում իրոք չուներ իրական և

²³⁶ I.Orga Phoenix Anscendant. P. 184.

²³⁷ Նույն տեղում, ռ. 184-185: Ինյունյուն ի նկատի ուներ Չանքայայում հաճախ տեղի ունեցող սփրանները՝ գիշերային քեֆերը, որոնք անցկացնում էր Արաբյուրքը և որտեղ ընդունվում էին կարևորագույն պետական որոշումները:

²³⁸ Ավելի մանրամասն դրս մասին տե՛ս E. Shills. Political Development in the New States. Hague, 1962. .p. 251:

²³⁹ G.Harris The Role of the Military in Turkish Politics. "The Middle East Journal", vol. 19, N 1, Spring 1965. p. 76.

լուրջ մրցակիցներ²⁴⁰: Ինյոնյուն հաջողվեց հանդես գալ երկյի քաղաքական ընտրանու աչքերում որպես Աբաբյուրբի քարիզմայի ժառանգորդ: Ինյոնյուն անգամ վերականգնեց հարաբերությունները Ֆեքիի, Կարաբեքիի, Ռաուֆի և մյուսների հետ՝ հրավիրելով նրանց աշխատելու բարձր պետական պաշտոններում: Դրանով նա կանխեց նրանց կողմից նոր ընդդիմություն ձևավորելու մտադրությունները: Հետզհետե իշխանությունից հեռացվեցին մարտիկ, որոնց հետ ինքը լուրջ հակասություններ ուներ՝ արտգործնախարար Թ. Արասը, վարչապետ Ջ. Բայաբը:

Աբաբյուրբի ցմահ նախագահությունը և նրա մահից հետո Ինյոնյուի իշխանության ցավը որոշակի առումով երաշխիք ծառայեցին բուրբական քաղաքական համակարգի կայունության և արդիականացման շարունակականության ապահովման համար²⁴¹: Այդ ժամանակահատվածը սպանվում էր հասարակական-քաղաքական կյանքի նոր ազդեցիկ և ինքնուրույն սուբյեկտների առաջացման համար, ինչպես, օրինակ, բուրբական բուրժուազիան կամ գործարար խավը, որի շահերը 1940-ական թթ. կեսերից սկսեցին առանձնանալ բուրբական բյուրոկրատիայի շահերից:

Այսպիսով ընդհանրացնելով բերված փաստերն ու դատությունները, կարելի է փաստել, որ ավտորիտարիզմը, կորստարտիվ հասարակությունը, էթնիկապես միատարր պետությունը, տնտեսության պետական հովանավորությունը, միջազգային ասպարեզում հավասարակշռության և համագործակցության քաղաքականությունը՝ ահա քեմալական Թուրքիայի առաջնորդների քաղաքական կողմնորոշումները, որոնք բեխարված էին ինչպես օբյեկտիվ հանգամանքներով (բուրբական պետության և հասարակության ավտորիտար և էտատիստական ավանդույթները և պահանջները), այնպես էլ Հանրապետության առաջնորդների անձերով, մասնավորապես՝ երկրի նախագահի «հայրենասիրական հավակնոտությամբ»: Նոր Թուրքիայի և նոր բուրբի կերտման ճանապարհին Աբաբյուրբն, Ինյոնյուն և նրանց զինակիցները հիմնականում ուժի սպառնալիքով (բավական է իլիշել նրանց նախազգուշացումները մեջլիսում, երբ այնտեղ քննարկվում էին սուրանության և խալիֆայության վերացման մասին

²⁴⁰ Կուլիսներում խոսակցություններ էին գնում, որ որպես նախագահության բեկնածունք կարող են հանդես գալ վարչապետ Բայաբը, արտգործնախարար Արասը կամ մարշալ Չաքմալը, սակայն նրանցից ոչ մեկը չդրեց իր բեկնածությունն Ինյոնյուի դեմ:

²⁴¹ Որպես համեմատություն նշենք, որ արդիականացման նման գործընթացների ապահովման համար պահանջվեցին Խորհրդային Միությունում Ի. Ստալինի 30-ամյա իշխումը, ԱՄՆ-ում Ֆ. Ռուզվելթի չորսամյակետային նախագահությունը, Ֆրանսիայում Ը. դը Գոլի 11-ամյա պաշտոնավարությունը:

որոշումները, որ դրանց ընդդիմացողների գլուխները կարող են բռնել²⁴²), երբեմն. նաև դրա գործադրմամբ, հատրթահարում էին բաղաբարական, կրոնական, ավանդապաշտական, սոցիալ-կենցաղային արգելքները: Թուրքական դեկավաթությունը 1920-1930-ական թթ-ին գերադասեց չննալ սեփական անձնական իշխանության կաղապարի մեջ, այլ գնալ պետության ամրապնդման, այսինքն՝ բարդ ու համակողմանի կառուցվածքի, ինստիտուտների ու գաղափարախոսության ստեղծման ճանապարհով, որոնք կշարունակեին կենսունակ լինել նաև իրենցից հետո՝ հետքարիզմատիկ շրջանում:

²⁴² А. Миллер. Очерки новейшей истории Турции. с. 147.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄԸ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ա. Քաղաքական արդիականացման գաղափարը եւ նշանակությունը Թուրքիայում

Թուրքիայի Հանրապետությունն իր ստեղծման ժամանակաշրջանից սկսած որպես զարգացման հիմք ընտրեց արևմտականացման կամ արդիականացման (մոդեռնիզացիայի) ուղին: Այդ ընտրությունը թելադրված էր պարզ պրագմատիկ շահերով. եթե Թուրքիան ցանկանում էր պահպանել այն, ինչը նվաճել էր զենքի ուժով, և Արևմուտքի հետ հավասարի պես խոսել ու գործ ունենալ, ապա նրան անհրաժեշտ էր յուրացնել արևմտյան քաղաքակրթությունը: Թուրքիան դատապարտված էր գնալ դեպի արդիականացում, որի ընթացքում քույր ժողովուրդն ապրեց իր ավանդական արժեքների փոխակերպումը, քաղաքական իշխանության հիմքերի փոփոխությունը, անցում կրոնական-համայնքային կենսակերպից դեպի աշխարհիկ-ազգայնական, և տեղի ունեցան նոր քաղաքական ինստիտուտների հաստատումն ու ազգային ինքնության հստակեցումը: Ըստ էության, արդիականացման գործընթացի ձեռնարկումը Թուրքիայի կողմից ինքնապահպանման ձգտման դյուսետումն էր:

Արդիականացման վերաբերյալ քաղաքագիտության և սոցիոլոգիայի մեջ գոյություն ունեն տարբեր տեսություններ, որոնք սկիզբ են առնում 1960-ական թվականներին և կապված են Արևմուտքի և երիտասարդ զարգացող պետությունների միջև փոխհարաբերությունների հիմնահարցերի հետ: Հենց այդ տարիներին պատմագրության և քաղաքագիտության բնագավառներում շրջանառության մեջ է դրվում «արդիականացում» (*modernization*) հասկացությունը, որը դուրս է մղում մինչ այդ գոյություն ունեցող «եվրոպականացում» և «արևմտականացում» հասկացությունները՝ իր մեջ ներառելով ավելի ընդգրկուն և գիտական իմաստ: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը լույս տեսած գիտական գրականության մեջ այս կամ այն երկրներում եվրոպական տերությունների ազդեցության տարածման բնութագրման համար օգտագործվում էր «եվրոպականացում» հասկացությունը: Ամերիկյան ազդեցության ուժեղացմամբ Արևմուտքի երկրների ընդհանուր ազդեցությունը ստացավ «արևմտականացում»

անվանումը²⁴³: Մինչդեռ «արդիականացում» տերմինը արտահայտում էր ավելի շուտ արդեն նորաստեղծ պետություններում զարգացման նոր ուղիների և մոդելների որոնման, երբեմն հակաարևմտյան միտումները: Այն օգտագործում են ոչ արևմտյան հասարակական կառուցվածքների վերաբերյալ նրա այն իմաստով, որը նշանակում է «արդի» (*մոդեռնի*) մակարդակի ձեռքբերման գործընթաց, այսինքն, այն մակարդակի, որը տիրապետող է համապատասխան պատմական ժամանակաշրջանում²⁴⁴: Հարկ է շեշտել, որ տեսականորեն չի կարելի նույնացնել արդիականացման գործընթացը արևմտականացման կամ եվրոպականացման գործընթացի հետ: Դա «հետամնացության վիճակից տվյալ հասարակական կառուցվածքի (հասարակության, ինստիտուտի և այլն) դուրս գալու գործընթաց է, իսկ եվրոպականացումը՝ դա արդեն ձևավորված եվրոպական քաղաքակրթության համակարգի մեջ ինտեգրման գործընթաց է²⁴⁵: Բացի այդ, նշենք, որ «արդիականացում» հասկացությունը վերաբերում է այն մեծ փոփոխություններին, որոնք սկսվել են Արևմտյան Եվրոպայում վերջին երեք դարվա ընթացքում և որը մեր օրերում ընդգրկել է ավելի հեռավոր երկրներ²⁴⁶:

Արդիականացման երևույթին անդրադարձել են իրենց աշխատություններում բազմաթիվ բուրք պատմաբաններ և հասարակագետներ Դ. Ավջրոլուն, Ն. Բեյքեսը, Հ. Ինսլջըկը, Չ. Քեյդերը, Բ. Կարպատը, Թ. Թունալան, Մ. Հեփերը, Բ. Թոփրաքը: Ավելի մեծ է արևմտյան մասնագետների ներդրումը արդիականացման տեսության մշակման և, մասնավորապես, Թուրքիայում արդիականացման տեսության մշակման գործում՝ ի դեմս Շ. Այգենշտադտի, Հ. Ալլենի, Դ. Ափերի, Ռ. Բելլաի, Ֆ. Ֆուրյուսմայի, Ս. Հանթինգտոնի, Ջ. Քոուլմանի, Դ. Լեյնեյի, Բ. Լյուիսի, Դ. Ռասքոուլի, Է. Շլյվի: Հայ բուրքագիտության մեջ արդիականացման խնդրին առանձին անդրադարձել են բուրքագետներ Ռ. Սահակյանը և Բ. Կոնդակչյանը:

Եվ երև Թուրքիայի ակադեմիական շրջաններում քննարկման ժամանակաշրջանի արդիականացման վերաբերյալ տիրապետող է այն կարծիքը, որ Մուստաֆա Բեմալ Աբաթյուրքը ձգտում էր ստեղծել արևմտականացված, «քաղաքակիրթ» պետություն ու հասարակություն ժողովրդավարության հիմքերի վրա, սակայն, քանի որ քաերկոխումների նրա ծրագիրը քախվեց «հետամնաց» և «հետադիմական» տարրերի կողմից զգալի դիմադրության, ինքը ստիպված էր կիրառել ավտորիտար մեթոդներ, ապա

²⁴³ D. Lerner. The Passing of Traditional Society. Glencoe, 1958, p. 45.

²⁴⁴ М. Тодорова. Англия, Россия и танзимат. Москва, 1983, с. 6.

²⁴⁵ Կոլմ տղում, էջ 7:

²⁴⁶ R. Ward and D. Rustow. Political Modernization... p. 3.

Արևմուտքում բնակվող բուրբ մասնագետները նշում են նաև քեմալական արդիականացման բացասական կողմերը, մասնավորապես՝ թուրք ժողովրդի որոշակի մեկուսացման նշանները, քաղաքական ղեկավարության կողմից արդիականացման հաճախակի միակողմանի, մակերեսային բնույթի ընկալումները և այդ մտածելակերպը չի հանդուրժում որևէ բննադատություն: Բացի այդ, տեղի ունեցավ թուրքական ավանդական մշակույթի անտեսում՝ որպես ազգայնական թուրքական ինքնության հաստատմանը խոչընդոտի: Արդիականացումը ընկալվում է այս տեսակետներում որպես արևմտյան արժեքների և ինստիտուտների արտաքին ձևերի գուտ կրկնօրինակում: Արևմտյան պատմագիտությունը քեմալիզմը ևս դիտարկում է որպես մեկ քաղաքակրթությունից դեպի մյուսը մի ամբողջ ազգն անցկացնելու ծավալուն փորձ:

«Արդիականացում» տերմինին տրվող ամենաընդհանուր բնորոշումը տալիս է Ջ. Բուրդևանը. «Հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային փոփոխությունների մի համալիր գործընթաց»²⁴⁷: Սակայն արդիականացումը դա գուտ «գարգացում» կամ «առաջընթաց» չէ: Դ.-Ուսարուն բնորոշում է այն որպես «պատմական հարթության մեջ կատարվող փոփոխությունների մի ամբողջություն, որն իր մեջ ներառում է ինդուստրիալիզացիան, ռացիոնալիզացիան, սեկուլյարիզացիան, բյուրոկրատիզացիան»²⁴⁸: Հայտնի իսրայելցի հասարակագետ Շ.Այզենշտատի բնորոշմամբ, «արդիականացմանը հատուկ են (1) բազմատեսակ քաղաքական կառուցվածքի զարգացումը՝ հատուկ քաղաքական ինստիտուտներով և դերակատարներով, և ամբողջ քաղաքական համակարգի կենտրոնացումը, (2) ժամանակակից քաղաքական կառույցների զարգացումը, ինչը նշանակում է կենտրոնական կառավարման, օրենսդրական ու քաղաքական գործունեության տարածումը հասարակության բոլոր ոլորտներում և շրջաններում, (3) հասարակական լայն խավերի շարունակական ներգրավումը քաղաքական իշխանության մեջ, (4) ավանդական վերնախավի և նախկին համակարգում իշխանավորների լեգիտիմության թուլացումը կամ վերացումը, (5) կառավարողների կողմից կառավարվողների նկատմամբ որոշակի չափով գաղափարախոսական և ինստիտուցիոնալ պատասխանատվության հաստատումը»²⁴⁹: Այզենշտատը փաստում է, որ

²⁴⁷ J. Coleman. Modernization. International Encyclopedia of the Social Sciences. vol. 10. New-York, 1969Ճ p. 390.

²⁴⁸ D.A.Rustow. The Modernization of Turkey in Historical and Comparative Perspective. In K.Karpat (ed.). Social Change and Politics in Turkey. Leiden, 1973, pp.93-94.

²⁴⁹ S.Eisenstadt. Modernization and Conditions of a Sustained Growth. p. 572.

«արդիականացումը՝ դա մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն դիմագրավում է՝ համապատասխան երկարատև զարգացման արդյունքում իր հիմքերում ընկած սկզբունքներին, կառույցներին ու սիմվոլներին»²⁵⁰։ Հարկ է նշել նաև Քենալ Կարպատի տեսակետը, որ «արդիականացումը արտահայտում է հասարակության ավանդական կենսակերպի, գաղափարների և ինստիտուտների դեպի Արևմուտքի ժամանակակից, ռացիոնալ գաղափարների և ինստիտուտների համընդհանուր վերափոխման նպատակը հետապնդող պետության տեսությունը»²⁵¹։

Բնականաբար, վերոհիշյալ գործընթացները այս կամ այն կերպով անդրադարձել են Թուրքիայի քաղաքական զարգացման վրա։ Ավելին, ինչպես նշում է նույն Ք. Կարպատը, «արևմտյան գերակայության, արևմտյան կրթության, գործունեության արևմտյան մեթոդների և քաղաքների գաղափարը ընդունվում էր անվերապահորեն որպես գերակայող մնացած ամեն ինչի նկատմամբ»²⁵²։ Թ.Թունայայի պատկերացմամբ՝ «արդիականացումը ժամանակակից հասարակության և ազատական հիմունքների վրա հենվող պետություն ստեղծելու նպատակով նախաձեռնված միջոցառումների շարք է»²⁵³։

Գնահատելով վերոհիշյալը՝ կարելի է եզրակացնել, որ արդիականացման ընթացքում տեղի են ունենում մեծ չափերով հասարակական շերտավորման կամ դիֆերենցիացիայի, ազգային ինքնության ճանաչման, Լասարակական-քաղաքական կյանքում կարգավորիչ մեխանիզմների և հասարակական խմբերի ու խավերի շահերն արտահայտող կազմակերպությունների ձևավորման պրոցեսներ, վերանում են հին քաղաքական ու հասարակական կառույցները, տեղի է ունենում սոցիալական հավաքագրման (մոբիլիզացիայի) ու քաղաքական ինստիտուտների հաստատման (ինստիտուցիոնալիզացիայի) պրոցեսը։

Արդիականացման քաղկացուցիչ մասն է հանդիսանում քաղաքական մոդեռնիզացիան։ Այն բնութագրվում է բավականին բազմատեսակ քաղաքական կառուցվածքի զարգացմամբ՝ քաղաքական ինստիտուտների, դերակատարների և կառույցների կենտրոնացմամբ և քաղաքական նպատակների և կողմնորոշումների հստակեցմամբ։ «Քաղաքական արդիականացում» տերմինը,– նշում է է. Շիլլըր,– ներառում է իր մեջ նախաարդիա-

²⁵⁰ Ш.Айзенштадт. Революция и преобразование обществ. Москва 1999, с. 14.

²⁵¹ K. Karpat. Turkey's Politics. p. 12–13.

²⁵² K. Karpat. Turkey's Politics. p.325.

²⁵³ T.Z. Tunaya. Türkiye'de Siasi Hayatında Batılılaşma Hareketleri. Istanbul, 1961. s. 18.

կան ավանդական տիպի պետությունից դեպի հետավանդական արդիական պետություն տրանսֆորմացիայի հասկացությունը²⁵⁴;

Քաղաքական արդիականացման ընթացքում ստեղծվում են իրար հավասարակշռող իշխանության մի քանի կենտրոններ, ընդունվում են ժամանակակից պահանջներին համապատասխանող օրենքներ, կատարելագործվում է ընտրական համակարգը, ձևավորվում են դասական իմաստով քաղաքական կուսակցություններ, փոխվում է հասարակության կառուցվածքը՝ ի հայտ բերելով «միջին խավը», փոփոխություններ են կատարվում դեկավարների և սովորական քաղաքացիների գիտակցության մեջ: XX դարի ընթացքում (առնվազն մինչև 1990–ն թթ.) քաղաքական արդիականացում հասկացությունն արտահայտվում է ազգային պետության ստեղծման և ժողովրդավարության հաստատման տեսքով: Դրա տակ հասկանում են նաև իշխանության ռացիոնալիզացումը (արևմտյան ռացիոնալիզմի սկզբունքները հասարակական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում՝ սկսած տնտեսությունից մինչև բյուրոկրատիա և զինվորականություն ներմուծելու արմատական փորձերը: իշխանության բազմաթիվ ավանդական, կրոնական, ընտանեական, էթնիկական տեսակների փոխարինումը միակ՝ ազգային աշխարհիկ քաղաքական իշխանությամբ, այսինքն՝ տեղի է ունենում իշխանության վերաբաժանման պրոցեսը, երբ շեղական, կրոնական, էթնիկական իշխանության կենտրոններից այն փոխանցվում է ազգային քաղաքական ինստիտուտներին: նոր քաղաքական խմբերի և քաղաքական գործառույթների հստակեցումն ու առանձնացումը: քաղաքական ազատականացման գործընթացը: պետական և քաղաքական կառուցվածքային փոփոխությունների, մասնավորապես, սահմանադրական փոփոխությունների ընթացքը:

Որպես արդիական քաղաքական համակարգի հատկանիշներ հարկ է առանձնացնել քաղաքական որոշումների ընդունման ռացիոնալ, հիմնավորված եղանակը, ժողովրդի կողմից սեփական պատմության, տարածքի և ազգային ինքնության ճանաչումը, քաղաքականության (քայց ոչ անպայման որոշումների ընդունման գործընթացում) մեջ երկրի բնակչության մասնակցության հետևողական աճը, ռացիոնալ կամ աշխարհիկ օրենսդրությունը: Սակայն որևէ քաղաքական համակարգ, առավել ևս՝ մերձավորարևելյան պետություններում, չի հանդիսանում լիովին արդիական և պայտանակում է իր մեջ նախաարդիական կամ ավանդական տարրեր: Երկրորդ, քաղաքական ոլորտում, կարծում ենք, արդիականացումը չի կարող

²⁵⁴ E. Shills Political Development in the New States. Hague, 1962, p. 263.

կապված լինել որևէ մեծ պատմական հայեցակարգի կամ քաղաքական համակարգի բնույթի ու տեսակի և գաղափարախոսության հետ: Քաղաքական արդիականացումը ուղեկցվում է ժողովրդավարական և ներկայացուցչական ինստիտուտների աճով: Թուրքիայում նման ինստիտուտներ գոյություն ունեն, սակայն միայն ձևականորեն, ինչպես, օրինակ, ընտրություններ, խորհրդարան, Սահմանադրություն: Բայց արդիականացումն իրականացնելու համար քաղաքական համակարգը բոլորովին էլ չպետք է լինի ժողովրդավարական: Ընդհանրապես, «արդիականացումը սկսվում է ավտորիտար ավտորիտար կամ օլիգարխիկ քաղաքական համակարգում և ընթանում է դեպի ավելի զանգվածային հասարակություն»²⁵⁵: Քաղաքական արդիականացման կոնցեպցիան չեզոք է քաղաքական համակարգի ձևերի հարցում և կարող է իրականացվել նրա բոլոր տեսակներում՝ լինի այն ամբողջատիրական, ավտորիտար կամ ժողովրդավարական: Ամենևին էլ պարտադիր չէ, որպեսզի արդիականացումը դառնա ժողովրդավարական, կայուն և միասնական քաղաքական համակարգի ստեղծմանն ուղղված մի շարժում: Դրա փոխարեն արդիականացման պրոցեսը հաճախ կարող է բերել ավտորիտար, զինվորական և միակուսակցական համակարգի հաստատմանը: Ավելին, Մերձավոր Արևելքում քաղաքական արդիականացումը հիմնականում հնարավոր է իրականացնել հենց նման մի համակարգի առկայության դեպքում:

Քաղաքական արդիականացման համար գլխավոր նախադրյալներն են իր սիմվոլներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ձևավորումը, արդյունավետ վարչական մեքենայի ստեղծումը և քաղաքական պայքարի հետզհետե ծավալումը: Պատմականորեն քաղաքական արդիականացումը վերագրվում է քաղաքական կառուցվածքի և քաղաքական կուլտուրայի փոփոխությունների ամբողջությանը, որը կարելի է բնութագրել որպես համընդհանուր հասարակական տրանսֆորմացիա, որի մեջ ընդգրկվում են սեկուլյարիզացման, ինդուստրիալիզացման, սոցիալական մոբիլիզացիայի և շերտավորման, կենսամակարդակի ու նրա ստանդարտների աճի, գրագիտության, կրթության և զանգվածային լրատվության միջոցների տարածման, ազգային համախմբվածության, բնակչության քաղաքական մասնակցության ընդլայնման երևույթներով: «Քաղաքական արդիականացումը, - նշում է Ջ.Քոուլմանը, - հիմնականում վերաբերում է քաղաքական կառուցվածքի դիֆֆերենցիացմանը և քաղաքական կուլտու-

²⁵⁵ Նույն տեղում, էջ 5:

րայի աշխարհիկացմանը՝ դրանով ուժեղացնելով հասարակության քաղաքական համակարգի պոտենցիալը»²⁵⁶:

Քաղաքական մոդեռնիզացիան, անշուշտ, հանդիսանում է նաև քաղաքական ինստիտուցիոնալիզացման գործընթաց, որի օգնությամբ կանոնավորվում են արդիականացման ընթացքում առաջացած հասարակական բախումներն ու լարվածությունը, և առաջ են քաշվում նոր նպատակներ ու առաջարկվում դրանց հասնելու ճկուն ուղիներ:

Ամբողջացնելով քաղաքական արդիականացման վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները՝ կարելի է առանձնացնել նրա հետևյալ հայեցակարգային առանձնահատկությունները. (1) ազգային ինքնության ճանաչումը, նախկին կրոնական կամ ցեղային հայրենասիրության և համերաշխության փոխարեն անցումն ավելի կայուն և ուժեղ ազգային համակարգին, (2) քաղաքական լեգիտիմության նոր հիմնավորումը, արդիականացող ընտրանու և նորաստեղծ պետության իշխանության կառույցների օրինականացումը, (3) իշխանության կենտրոնացումը, (4) քաղաքական մասնակցության աճը, քաղաքական ինստիտուտների և քաղաքական ինֆրակառուցվածքի զարգացումը, որոնք կազմակերպվում են ելնելով արդի պահանջներից, (5) քաղաքական գործընթացի հետևողական և փոխկապակցված կազմակերպումը, (6) կառավարական իշխանության բաժանումը և արդյունավետ օգտագործումը տնտեսական աճի, տնտեսական ռեսուրսների մոբիլիզացման, բարիքների և արժեքների բաժանումը համապատասխան զանգվածային պահանջներին և սպասելիքներին: Այս ամբողջ գործընթացը սովորաբար անցնում է վեց փուլերով. (1) ազգային ինքնության իմաստավորումը և կազմակերպչական մարմնավորումը, (2) ազգային անկախության համար պայքարը, (3) «հետ»-անկախական շրջանում դերերի և դիրքերի վերաբաժանումն ու վերադասավորումը, (4) «խնամակալ» վարչակարգի հաստատումը, (5) ժողովրդավարացման փորձերը կամ ավտորիտար իշխանության համակարգի համեմատական թուլացումը, (6) իշխանության անցումն ընդդիմության ձեռքը:

Քաղաքական արդիականացումը նշանակում է նախ և առաջ քաղաքական ինստիտուտների փոփոխություն, որոնց մեջ առավել կարևոր են քաղաքական ղեկավարությունը և քաղաքական կուսակցությունները: Քաղաքական արդիականացման ընթացքում պահանջ առաջացավ այն իրականացնող կամքի, այսինքն, ուժեղ առաջնորդների, որոնք կփոխեն երկրի

²⁵⁶ J.Coleman. Modernization. "International Encyclopedia of the Social Sciences", vol. X, Washington, 1968, p. 392.

քաղաքական համակարգը և կստեղծեին նոր քաղաքական վերնախավ: Կարելի է համաձայնել ամերիկյան պատմաբան և քաղաքականագետ Ռ. Թաքերի այն տեսակետի հետ, որ «քարիզմատիկ իշխանությունը հանդես է գալիս աշխարհի առաջ՝ հռչակելով արմատական փոփոխությունների անհրաժեշտությունը»²⁵⁷:

Թուրքիայում ազգայնական շարժման հաղթանակից հետո հաջորդ քայլը տրամաբանորեն դառնալու էր իշխանությունն իրականացնելու նպատակով քաղաքական ինստիտուտների կազմավորումը: Քենալականներից հարկավոր էր ապահովագրել իրենց ձեռքբերումներն ու սեփական վարչակարգի գոյությունը, իսկ դա հնարավոր էր միայն նոր հասարակական ու քաղաքական ինստիտուտների ստեղծման միջոցով: Որևէ այլընտրանք արդիականացմանը նրանք չէին տեսնում: «Այն ազգերը, – շեշտում էր Քենալ Արաքյուրը, – որոնք ժամանակակից չեն հանդիսանում, դատապարտված են մնալու քաղաքակիրթ ազգերի ոտքերի տակ»²⁵⁸: Արաքյուրը վճռական էր տրամադրված մինչև վերջ գնալու Թուրքիայի արդիականացման գործում՝ համարելով այն իր ազգի համար կյանքի ու մահվան խնդիր. և բացահայտ հայտարարում էր. «Երկիրը, ինչ գնով էլ լինի, դառնալու է ժամանակակից, քաղաքակիրթ ու նորացված: Մեզ համար սա գոյության հարց է»²⁵⁹:

Իսկ որպես երկրի արդիականացման նպատակ նա հռչակում էր հետևյալը. «Մեր իրականացրած հեղափոխության նպատակը Թուրքիայի Հանրապետության ժողովրդին իր ամբողջ իմաստով ու ձևով լիովին արդիական և հասուն հասարակություն դարձնելն է...»²⁶⁰: Քենալիզմն ինքը կանախ ընկալվում է որպես մեկ քաղաքակրթությունից դեպի մեկ ուրիշ քաղաքակրթություն անցման լայնածավալ և դանդաղ մի փորձ²⁶¹:

1925թ ին ունեցած իր մի ելույթում Մուստաֆա Քենալն հետևյալ կերպով էր մեկնաբանում իր քարեփոխումների իմաստը. «Թուրքական հեղափոխությունը ներկայացնում է իրենից ավելի լայն տրանսֆորմացիա, քան թե այն, ինչ առաջարկում է համաշխարհային հեղափոխությունը... Այն նշանակում է կրոնի վրա հիմնվող հնամյա քաղաքական ընդհանրության փոխարինումը մեկ ուրիշ կապի՝ ազգության վրա հիմնվող ընդհանրու-

²⁵⁷ R. Tucker. The Theory of Charismatic Leadership. "Daedalus". N . 196 . p. 733.

²⁵⁸ Atatürk diyor ki. İstanbul, 1960, s. 46.

²⁵⁹ Atatürk'ten Düşünceler. Ankara. s. 48.

²⁶⁰ Atatürk diyor ki. s. 52.

²⁶¹ B.Lewis. Turkey: Westernization., in G. von Grunebaum (ed.) . Unity and Variety in Muslim Civilization. Chicago, 1955. p. 315.

յամբ: Մեր ազգն ներկայումս ընդունել է մի սկզբունք, որը հանդիսանում է միջազգային պայքարում գտնվող ազգերի համար գոյատևելու միակ միջոցը և որն ընկած է ժամանակակից արևմտյան քաղաքակրթության հիմքում»²⁶²: Երկու տարի անց Թուրքիայի նախագահն իր «Ճառում» հայտարարում էր. «Մի՞թե կարելի էր քաղաքակիրթ ազգ անվանել մարդկանց մի քաղմություն. որը թույլ էր տալիս, որ իրեն առաջնորդի շեյխերի, դեղեմների, սեյդիների, չելեբիների, բաբաների և էմիրների մի խումբ, որը վստահում էր իր ճակատագիրն ու կյանքը կախարդներից ու քախտագուշակներից: Մի՞թե կարելի էր պահպանել այն տարրերն ու հաստատությունները, որոնք դարեր շարունակ ազգին տալիս էին լիովին մի այլ տեսք. քան այն, որ նա իրականում ուներ: Մի՞թե դա ամենամեծ սխալը չէր ժողովրդի առաջընթացի ու զարթոնքի գործում... Մենք օգտագործում ենք բոլոր հնարավորությունները՝ բարձրացնելու ազգն աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների ընտանիքում իրեն իրավամբ պատկանող աստիճանին, ամրապնդելու Թուրքիայի Հանրապետությունը, հավելի ունչացնելու բռնակալության ոգին»²⁶³: Այս խոսքերը հաստատում են Շ. Ալզենշտայտի այն պնդումը, որ «արդիականացումը գործընթաց է, որի ժամանակ հին հասարակական, տնտեսական, քաղաքական ու հոգեբանական արժեքների ու պարտավորությունների գլխավոր փունջը բանդվում է և ժողովուրդը հարմարվում է սոցիալիզացման ու վարքագծի նոր մոդելին»²⁶⁴:

Մյուս կողմից՝ պետք է նշել նաև, որ թուրքական դեկավարությունը չունեք արդիականացման ինչ-որ մի հստակ հայեցակարգ: Ավելին՝ քեմալական բարենորոգումներն իրենցից որևէ նորույթ ամենևին էլ չէին ներկայացնում: Նմանատիպ գաղափարները քննարկվում էին դեռևս Իթթիհատի կանավարման շրջանում: Քեմալականները կարիք չունեին հայտնագործել «Սահմանադրություն», «խորհրդարան», «կուսակցություններ», «ընտրություններ», «մամուլ» հասկացությունները: Այդ ամենն արդեն գոյություն ունեւ երիտթուրքական շրջանում: Սակայն բարեփոխումների նախադր շրջանը չմտցրեց էական փոփոխություններ թե՛ պետական-քաղաքական համակարգում, թե՛ սովորական ժողովրդի քաղաքական գիտակցության և վարքագծի մեջ՝ հանգեցնելով Թուրքիայի առաջին նախագահին և նրա շրջապատին այն հանոգմանը, որ երկրի ինքնուրույնությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է ժամա-

²⁶² N. Berkes. The Development of Secularism in Turkey. p. 470.

²⁶³ Мустафа Кемаль. Путь новой Турции. т.3, с. 205-206.

²⁶⁴ S. Eisenstadt. (ed.) Readings in Social Evolution and Development... London, 1970, p. 21.

նակակից ուզվածական կառուցվածքի ստեղծում, ինչն անհնար է առանց ժամանակակից գիտության ու արդյունաբերության ստեղծմանը: Դրանք էլ, իրենց հերթին, գոյություն չէին կարող ունենալ առանց վերափոխված հասարակական ու քաղաքական համակարգերի, որոնք թույլ կտաին քուրք ժողովրդին առավելագույնս իրացնել և զարգացնել իր պոտենցիալը: Արաբությունը համոզված էր, որ միայն զնալով արդիականացման, ժամանակակից քաղաքակրթության հաստատման ճանապարհով, Թուրքիան կկարողանա լինել իսկապես անկախ, բարգավաճող և ծաղկուն երկիր. «Այխարին. - ընդգծում էր նա, -- ահավոր մի արագությամբ առաջ է քայլում: Կարո՞ղ ենք մենք այս ընթացքից դուրս մնալ...Մեր երկրի նպատակը, մեր ազգի խղեալը լիարժեք իմաստով քաղաքակրթ հասարակություն դառնալն է»²⁶⁵:

Այսպիսով՝ արդիականացման գործընթացը 1920-1930-ն թթ. Թուրքիայում աչքի էր ընկնում հետևյալ հիմնավորումներով. (1) չի կարող լինել իրական և տևական քաղաքական անկախություն, եթե այն կառուցված չէ տնտեսական ու սոցիալական անկախության հիմքի վրա, (2) Թուրքիան առանց արդիականացման չի կարող իրեն հավասար զգալ միջազգային ասպարեզում տիրապետող դիրքեր գրավող Արևմուտքի հետ, (3) արդիականացման գործընթացը հնարավոր չէ նախաձեռնել ու հաջողությամբ իրագործել առանց նրա համար պատասխանատվություն կրող ղեկավարությանը:

Արդիականացմամբ Թուրքիայում փորձ կատարվեց ստեղծել նախկին օսմանյան կայծրացած կառույցների ու շրջանակների փոխարեն նոր սիմվոլներ, արժեքներ, անգամ նոր ազգային ինքնություն: Նպատակներն էլ հստակ էին. նոր իշխող վերնախավի ձևավորում, ժամանակակից կառավարման մեքենայի և քաղաքական ինստիտուտների (կուսակցությունների) ստեղծում. տնտեսության զարգացում, քաղաքների աճը՝ ուրբանիզացիա, անզրագիտության վերացում: Ու թեև արդիականացման ընթացքում քուրք ժողովրդին առաջարկվեցին նոր արժեքներ և ինստիտուտներ, սակայն դրանք անհամատեղելի էին նրա սոցիալական, տնտեսական, էթնո-շակութային կառուցվածքների և արժեքների հետ: Ուստի, պարտադրյալից բացի արդիականացման այլ եղանակ չենձալը չուներ:

Մյուս կողմից, բուրբական ղեկավարությունը չուներ արդիականացման որևէ ամբողջական և համակարգված ծրագիր, և այն սահմանափակվում

²⁶⁵ E.Z.Karal. "Atatürk'ü anlamak", Atatürk'e Saygı. s.110.

էր բուրքական ազգային պետությունը կայացնելու, այն հաստատուն դարձնելու և հզորացնելու ընդհանուր նպատակով:

բ. Քաղաքական արդիականացման ընթացքն ու գործոնները Թուրքիայի Հանրապետությունում 1920–1930–ական թվականների

Այդիական աշխարհիկ պետություն ստեղծելու համար քեմալականների անհրաժեշտ էր նախ և առաջ փոխել Օսմանյան պետության պետական և քաղաքական կառուցվածքը: Մուստաֆա Քեմալը նախընտրեց զգուշորեն շարժվել այս ուղղությամբ՝ հաշվի առնելով այդ դարավոր ինստիտուտների ուժն ու ազդեցությունը, որոնք անգամ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո մնում էին զգալի:

Ազգայնական շարժումն ինքնին խոշոր քաղաքական փոփոխություն էր հանդիսանում: Այդ ժամանակաշրջանում Թուրքիան որդեգրեց արևմտյան քաղաքական կոնցեպտը՝ ազգի գերիշխանության գաղափարը, որը փոխարինելու եկավ սուլթան–խալիֆի բացարձակ իշխանության հայեցակարգին: Այսուհետ, ոչ թե սուլթանն էր պետության տարածքների և հպատակների տերը, այլ ազգը: Պետական և քաղաքական համակարգի փոփոխությունը Թուրքիայում սկսվել էր 1920թ. ապրիլի 23–ին, երբ Անկարայում գումարվեց Ազգային մեծ ժողովը, որն իր մեջ միավորեց և՛ օրենսդիր, և՛ գործադիր, և՛ դատական իշխանությունների լիազորությունները: Չևականորեն միապետությունը պահպանում էր իր գոյությունը, շարժման ղեկավարությունը չէր կարող բացահայտ հանդես գալ սուլթանի իշխանության դեմ: Քեմալի «Շառից» հետևյալ հատվածը վկայում է, թե ինչպիսի տրամադրություններ էին տիրում երկրում այդ ժամանակահատվածում. «Ազգն ու բանակը դեռևս չէին գիտակցում սուլթան–խալիֆի դավաճանությունը: Ավելին՝ նրանց գիտակցության մեջ մտած կրոնական պատկերացումների և ավաղույթների պատճառով նրանք հավատարիմ էին մնում գահին ու նրան, ով այն գրադեցնում էր: Նրանք ի վիճակի չէին ընկալել այն փաստը, որ երկիրը հնարավոր է փրկել առանց սուլթանի: Եվ վա՛յ նրանց, ով այն ժամանակ կարտահայտեի հակառակ կարծիք: Նրանց խելույն կանվանեին անհայրենիք, անհավատ, դավաճաններ...»²⁶⁶:

Ազգայնական շարժման ավարտից հետո սուլթանության կարիքն այլևս չէր զգացվում: Այդ ինստիտուտի հետագա գոյությունը ուղղակիորեն սպառնում էր Մուստաֆա Քեմալի իշխանությանը, որը նա ձեռք էր բերել

²⁶⁶ Мустафа Кемаль. Путь новой Турции, т. 1, с. 13.

չարժման ընթացքում և չէր պատրաստվում զիջել: Պետական իշխանության երկու կենտրոններից մեկը պետք է վերանայ: 1922թ. նոյեմբերի 1-ին ընդունված որոշմամբ այսուհետև միակ գերագույն իշխանությունը երկրում հանդիսանում էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը, Օսմանյան կայսրությունը և նրա համակարգն այլևս գոյություն չունեին, սուլթանությունը հայտարարվում էր վերացված և անցած պատմության գիրկը: Խալիֆայությունը դեռ պահպանվում էր՝ պատկանելով Օսմանյան հարստությանը:

1923թ. հոկտեմբերի 29-ին Մուստաֆա Զեմալը մեջլիսին մի օրինագիծ ներկայացրեց, որը բաղկացած էր երեք կետից. 1) բուրքական պետության կառավարման ձևը հանրապետությունն է, 2) բուրքական պետությունը ղեկավարվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից, 3) Թուրքիայի ՄԱԺ-ի իշխանությունն իրականացվում է Հանրապետության նախագահի և Նախարարների խորհրդի միջոցով²⁶⁷: Հանրապետության հռչակումը բացահայտ դարձրեց երկրում երկու գլխավոր քաղաքական խմբերի դիրքորոշումներն ու բախումը՝ խալիֆայության գաղափարի և հաստատության շուրջ համախմբվող չափավորականների կամ պահպանողականների և իշխանությունը վերահսկող արմատականների կամ հանրապետականների միջև: Թեև, սուլթանության վերացումից հետո էլ խալիֆայության պահպանման կողմնակիցները երկրում մնում էին բավականին ազդեցիկ ուժ, բայց այդ հաստատության ճակատագիրն էլ վճռված էր:

Խալիֆայության վերացման ամիսաժեշտությունը 1924թ. դարձել էր ակնհայտ: Մուստաֆա Զեմալը նշում էր, որ «խալիֆայությունն այլևս որևէ այլ բան չի կարող լինել, բան թե քաղաքակիրք աշխարհի աչքերում մի ծաղրանք»²⁶⁸: Իսմեթ-փաշան հիմնավորում էր խալիֆայության վերացումը այն հանգամանքով, որ իր կարելի բոլոր տակ պետության մեջ պետության գոյությունը²⁶⁹: 1924թ. մարտի 3-ի մեջլիսն ընդունեց օրենք խալիֆայության վերացման մասին, որով խալիֆ Աբդուլ-Համիդ II գահընկեց հայտարարվեց, իսկ Օսմանների ամբողջ դինաստիան արտաքսվեց երկրից դուրս:

Խալիֆայության վերացման հետ միասին սկսվեց պետական և մշակութային կրթական համակարգի աշխարհիկացման գործընթացը: Ազգային գերիշխանությունից բացի, մյուս արդիական գաղափարը, որով ղեկավարվում էին քեմալականները՝ աշխարհիկ պետության հայեցակարգն էր:

²⁶⁷ Ş. S. Aydemir. Tek Adam. c.3. s. 47.

²⁶⁸ Мустафа Кемаль. Путь новой Турции. т. 1, с. 16.

²⁶⁹ Р.Саакян. Франко — турецкие отношения и Киликия. Ереван, 1986, с. 60.

Լաիցիզմը համարվեց առաջընթացի չափանիշ: Թուրքիայում քաղաքական արդիականացման հիմնական երկու խթանն էին արտաքին մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությունը և արևմտյան գաղափարախոսական և մշակութային տարածումը: 1924թ. մարտի 3–ին մեջլիսն օրենք ընդունեց շարիաթի և վաքըֆների նախարարությունը վերացնելու մասին ու դրա փոխարեն կրոնական գործերի վարչություն ստեղծելու մասին: Վարչության պետին նշանակում էր Հանրապետության նախագահը: Մյուս օրենքով բոլոր հոգևորական դպրոցներն անցան լուսավորության նախարարության վարույթի մեջ: Արգելվեցին նաև դերվիշական երբայրությունների և կատարվեց վաքըֆների՝ կրոնական հողատարածքների պետականացումը²⁷⁰: Այս քայլերով Մ. Քեմալը հետևողականորեն քանդում էր պետության կրոնական հիմքը:

Քեմալի և նրա շրջապատի համար քաղաքական արդիականացման գործընթացում լուրջ մարտահրավեր դարձան 1924–1925 թթ. Առաջադիմական–Հանրապետական կուսակցության ստեղծման և գործունեության հետ կապված իրադարձությունները, որոնց մենք անդրադարձել ենք առաջին գլխում: Քաղաքական արդիականացման ճանապարհին մեկ այլ փորձ էր 1930թ. ամռան–աշնանը ընդդիմադիր, ավելի ճիշտ «կառավարելի»–ընդդիմադիր կուսակցության ստեղծումը, որը ինչ–որ աստիճանի ելք էր համարվում իշխող ՀԺԿ–ի քաղաքականությունից և կառավարության չարաչառումներից ու անօրինականություններից առաջացած և կուտակված դժգոհությունների համար: Նախագահը նախատեսում էր, որ երկրորդ կուսակցությունն էլ ղեկավարվի մեկ կենտրոնից՝ անիշխանությունից խուսափելու նպատակով²⁷¹: ԼՀԿ–ի ղեկավար Ալի Ֆեթհին Քեմալին ուղղված նամակում գրում էր. «Հանրապետական կառավարումը մեր երկրում հավերժացնելու համար, համոզված եմ, որ անհրաժեշտ է միակուսակցական կառավարության իշխանության փոխարեն առաջ քաշել ազատությունն ու բանավեճը, ապահովել կառավարության կողմից ազգի դրության մասին լուրջ հաշվետվությունը և, եթե նույնիսկ այդ դրությունը վատ է, ազատ բնմարկումը պետք է տեղի ունենա բոլորի աչքի առաջ...»²⁷²:

Ազատականացումը վերաբերեց նաև մամուլին, երբ հնգամյա ընդմիջումից հետո հայտնվեց կառավարության քաղաքականությունը բնմաղատող և նորաստեղծ ԼՀԿ–ին աջակցող թերթ՝ «Յարընը»: Հասկանալի էր, որ

²⁷⁰ A. Миллер. Очерки новейшей истории Турции. с. 149.

²⁷¹ A. Ağaoğlu. Serbest Firka Hatıraları. s. 18.

²⁷² Նույն տեղում, էջ 22:

քննադատության աստիճանը որոշակի սահմաններում որոշվում էր ոչ թե լրագրողների կամ ընդդիմության, այլ Հանրապետության նախագահի կողմից:

Հնգամյա դադարից հետո հասարակությունը կրկին հնարավորություն ստացավ քննադատելու, գրելու «համարձակ» հոդվածներ, զանգատվելու իշխանությունից: ԼՀԿ-ին սկսեց միանալ դժգոհողների մի սովորական, որոնցից մի մասը հանրապետականների մեջ հուսախաբ եղած մարդիկ էին, մյուսն էլ՝ վարչակարգի և բարեփոխումների քաղաքականության հակառակորդները՝ հոգևորականները, նախկին վերնախավի ներկայացուցիչները, Առաջադիմական-Հանրապետական կուսակցության նախկին անդամները՝ նոր կուսակցության մեջ տեսնելով իրենց բողոքական տրամադրությունների մարմնավորումը:

Ըստ էության, 1930թ-ին Մուստաֆա Քեմալը փորձ ձեռնարկեց ստեղծել այնպիսի քաղաքական համակարգ, որը կվերապրեր իրեն և կապահովեր Թուրքիայի իրական անցումը արևմտյան քաղաքական մոդելին²⁷³: 1924-1925թթ-ին գործող Առաջադիմական-Հանրապետական կուսակցությունը չափազանց անկախ և ինքնուրույն ընդդիմություն էր հանդիսանում, մինչդեռ Քեմալը համարում էր, որ ընդդիմադիր կուսակցությունը պետք է գոյություն ունենա իր հսկողության տակ: Սակայն նախագահը չէր սպասում, որ ժողովուրդն այսքան արագ իր երեսը կթերի ՀԺԿ-ից դեպի ԼՀԿ: Շարունակել հանդուրժել երկրորդ կուսակցություն գոյությունը նշանակում էր գնալ լուրջ քաղաքական զիջումների, անգամ մինչև իշխանության կորուստն, ինչին բեմադրականներն այդ տարիներին դեռևս պատրաստ չէին: Լիբերալ-հանրապետականների առաջին իսկ փորձն անցկացնել երկրում քիչ թե շատ ժողովրդավարական ընտրություններ²⁷⁴ բախվեց իշխող կուսակցության ճնշման բացահայտ զինվորական-նստիկանական մեթոդների հետ: Այսպիսով՝ բազմակուսակցականության հաստատման երկու փորձն էլ 1924-1925 և 1930 թթ-ին չբերեցին պլուրալիստական քաղաքական համակարգի ստեղծմանը, այլ հանգեցրեցին միայն միակուսակցական համակարգի հաստատմանը կամ ուժեղացմանը:

²⁷³ Նման մի փորձ Քեմալը կատարեց 1921թ-ին, երբ կարգադրեց ստեղծել բուրբակյան կոմկուսը՝ ելնելով այդ շրջանում Խորհրդային Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների գործոնից: Սակայն երբ նա հասավ իր ուզածին, կարգադրեց նույն կերպով «կոմունիստներին» ցրվել: Ավելի մանրամասն դրա մասին տես՝ M. Tunçay, Türkiye'de Sol Akımları:

²⁷⁴ Խոսքը գնում է 1930թ. աշնանը կայացած տեղական կառավարման մարմինների ընտրությունների մասին:

Եթե 1920-ական թթ-ին թուրք քաղաքական ղեկավարների քաղաքականությունն ուղղված էր քաղաքական և ընդհանրապես հասարակական համակարգերում փոփոխությունների իրականացման նպատակին, ապա 1930-ն թթ-ին այդ ընտրանին կողմնորոշվում էր դեպի եղածի պահպանումը: Այդ տարիները բնորոշվում են միակուսակցական վարչակարգի խստացման ու աշխարհիկ-ազգայնական գաղափարախոսության ամրապնդմանն ուղղված միջոցառումների ընթացքի արմատավորմամբ ու ինտենսիվացմամբ: Դրանք էին՝ ՀՄԿ-ի ծրագրի ընդունում, կենտրալիզացիայի ամրապնդում, պետության և կուսակցության փաստացի սերտացում, հասարակական կյանքի միասնականացում, իշխող վարչակարգի գաղափարախոսական կենտրոնների՝ «Ժողովրդական տների» բացում:

Արաթյուրքը, թեև երբևէ առաջ չի քաշել երկրի արդիականացման մշակված նախագիծ, սակայն նրա ելույթները և ճառերը իրենց բովանդակությամբ փաստորեն թույլ են տալիս համարել, որ Թուրքիայի առաջին նախագահը հետապնդում էր թուրքական ազգային ինքնիշխան պետությունը կայացնելու, ուժեղ և կուռ պետական համակարգ ստեղծելու, հասարակական կյանքը արդիականացնելու, բարեփոխելու, պետական շահերի գերակայությունը առանձին քաղաքացու շահերից վեր դասելու նպատակները: Բնակչության մեծամասնությունը աջակցում էր նրան, սակայն չէր ունենում ակտիվ մասնակցություն նրա քաղաքականության իրականացմանը: Արաթյուրքի արդիականացման քաղաքականությունը, բնականաբար, կյանքի էր կոչված օբյեկտիվ պատմական զարգացմամբ: Կայսրության փտած համակարգի փլուզումը, պատերազմական և հեղաշրջումների շրջանից հետո կայունության և պետության ամրության, ասել է թե՛ ավտորիտարիզմի հասարակական պահանջումըը: Ավտորիտար իշխանության ամհրաժեշտությունը զգացվում էր սուր կերպով, գտնում է ամերիկյան հետազոտող Ռ. Ռոբինսոնը, քանի որ, ինչպես ցույց տվեց, օրինակ, Լիբերալ-Հանրապետական կուսակցության հետ փորձարկումն այդ տարիներին իրականացված բարեփոխումները հաճախ ժողովրդականություն չէին վայելում և արժանանում էին դիմադրության, որը, թուրք դեկավարներին համոզմամբ, եթե չճնշվեր սկզբնական փուլում, չափազանց լուրջ վտանգ կներկայացներ պետության ապագայի համար²⁷⁵:

Որպես թուրքական քաղաքական արդիականացման գաղափարական կողմնորոշիչ կարելի է բերել քեմալական վարչակարգի կողմից ազատակա-

²⁷⁵ R. Robinson. The First Turkish Republic. Cambridge, Massachusetts, 1965, p. 33.

նության գաղափարախոսության սնանկության ճանաչումը²⁷⁶: Վարչապետ Իսմեթ Ինյունյուն 1930թ. դեպքերից հետո կարծիք հայտնեց, Թուրքիայում ազատական ժողովրդավարությունը կվերջանար կամ սուլթանական-խալիֆայական վարչակարգի վերականգնմամբ, կամ անիշխանությամբ և քաղաքացիական պատերազմով²⁷⁷: Ուստի, Աբաթյուրբը քաղաքական արդիականացման ոլորտում նախընտրեց գնալ ոչ թե ազատական ժողովրդավարության, այլ, ելնելով ելիտոսոփոսական փորձից, կուսակցապետական մոդելի հաստատման ճանապարհով:

Եվ չնայած որ բուրքական Սահմանադրության մեջ գոյություն ունեի առանձին գուլա՝ նվիրված խոջի, խոսքի, մամուլի, հավաքների և ժողովների, քաղաքացիների կյանքի, ունեցվածքի և պատվի անձեռնմխելիության մարդու իրավունքներին ու ազատություններին, սակայն դրանք որևէ գործնական արժեք չունեին՝ մնալով զուտ հռչակագիր: Այսպես, 1931թ.-ին ընդունված մամուլի մասին օրենքում փաստորեն վավերացվում էր կառավարության կողմից արդեն վեց տարի կիրառվող գրաքննության իրավունքը: Պարբերականները և թերթերը, որոնց հրատարակումները «ուսկաստրական մեջ էին մտնում պետության գլխավոր քաղաքականության հետ»,²⁷⁸ ենթակա էին փակման: Այդ օրենքով իշխանություններն ապահովում էին հասարակական կարծիքի միաձայնությունը և սեփական քաղաքականության հավանությունն ու անգամ գովաբանումը:

Վարչակարգի խտտացումն արտահայտվեց նաև այսպիսի քայլով, ինչպես 1933թ. ին ընդունված իր ազատական հայացքներով հայտնի Ստամբուլի համալսարանի ինքնավարության վերացման մասին կարավարության որոշմամբ. իսկ նրա դասախոսների 2/3-րդը հեռացվեց աշխատանքից «պետական քաղաքականությունից տարբերվող տեսակետներ ունենալու պատճառով»²⁷⁹:

1938թ. հունիսին Թուրքիայի Ազգային մեծ ժողովն ընդունեց օրենք ընկերությունների մասին, համաձայն որի արգելվում էր ընտանիքի, ռասայական, համայնքային տոհմական և դասակարգային հիմքի վրա պետության ամբողջականությունն, անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքական և ազգային միասնությունը խախտող կազմակերպությունների ձևավորումը²⁸⁰:

²⁷⁶ Ç. Keyder. State and Class... p. 100.

²⁷⁷ Yetkin Ç. Tek Parti Yönetimi. Ankara, 1983. s. 211.

²⁷⁸ Ç. Keyder. State and Class in Turkey. p. 99.

²⁷⁹ Lewis B. The Emergence of Modern Turkey. p. 452.

²⁸⁰ Parker J. and Smith C. Modern Turkey. p. 235.

Օգտագործելով վերտիչյալ օրենքները՝ կառավարությունն իրավունք ուներ ցրել յուրաքանչյուր հավաք կամ փակել յուրաքանչյուր թեթր՝ պետական կարգերի համար սպառնալիքի առաջացման պատրվակով: Երկրում, բացի այդ, բացակայում էին ինքնուրույն և ուժեղ հասարակական կազմակերպություններ և լրատվամիջոցներ՝ արդիական ժողովրդավարական հասարակությունների հիմնաքարերից մեկը, ինչը զգալիորեն դյուրացնում էր իշխանությունների գործը:

Քաղաքական արդիականացման կարևոր բաղադրիչն են քաղաքական մասնակցությանն ապահովման ինստիտուտները՝ քաղաքական կուսակցությունները: Թուրքիայում կուսակցությունները սկսեցին կազմավորվել դեռևս երիտթուրքական շրջանում: Սակայն դրանցից ոչ մեկն այդպես էլ չդարձավ կուսակցություն այս հասկացության դասական իմաստով: Քեմալական քաղաքական մոդելն ի սկզբանե բացառում էր այլ ինքնուրույն քաղաքական կենտրոնների՝ խմբի կամ կուսակցության գոյությունը: Այս առումով կարելի է համաձայնել հայտնի ֆրանսիացի քաղաքականագետ Մորիս Դյուվերթեի այն գնահատականի հետ, որ «քեմալական համակարգը, որը հենվում էր միակուսակցական վարչակարգի վրա, չէր հանդիսանում ժողովրդավարություն... ՀԺԿ-ի մենիշխանությունը ընկալվում էր որպես ազգային քաղաքական դաստիարակության համար անհրաժեշտ անցում»²⁸¹: Քեմալ Աթաթյուրքն ինքը համարում էր, որ թուրք ազգին չի հերիքում ամենից առաջ քաղաքական կրթվածությունը. «Ազգը պետք է ստանա այդ քաղաքական կրթությունը դպրոցում, որը կստեղծվի քաղաքական կուսակցության միջոցով»²⁸²:

Աթաթյուրքի քաղաքականությունը, հաղթահարելով մի շարք դժվարություններ՝ ԱՀԿ-ի ընդդիմությունը, քրդական խռովությունը, Իզմիրի դավադրությունը, այդպես էլ չհանդիպեց որևէ իրական, կառուցվածքային ընդդիմության, իսկ այն կազմավորելու փորձերն էլ ճնշվեցին: Քեմալական վարչակարգի վերաբերմունքը երկրում քաղաքական գործընթացների վերաբերյալ լավագույնս արտահայտել է վարչապետ Ի.Ինյունյուն, որը հայտարարել էր Թուրքիայում ամերիկյան ներկայացուցիչ Բրիստոլին. «Ընդդիմությունն այս երկրում նշանակում է հեղափոխություն»²⁸³: Մինչդեռ և՛ Առաջադիմական կուսակցությունը, և՛ Լիբերալ կուսակցությունը փորձում էին կենտրոնացնել հասարակության ուշադրությունը երեք հիմնահարցերի

²⁸¹ M. Duverger. *Kemalizm – "Atatürk'e Saygı"*. s. 250–251.

²⁸² Milliyet. 13.09.1998.

²⁸³ Lord Kinross. *Ataturk*. p. 402.

վրա, որոնք 1940–1960–ական թթ–ին անգամ մնում էին բուրքական քաղաքական կյանքի խնդրո առարկա. (1) բարեփոխումների ինչպիսի ընթացք պետք է որդեգրվի, որպեսզի ապահովվի հավասարկշռությունը երկրի զարգացման մեջ, (2) հասարակությունը զգում է ավելի մեծ քաղաքական և անձնական ազատության պահանջ, և (3) ինչպիսին պետք է լինի պետության դերը տնտեսության մեջ: Ընդ որում, երկրի սոցիալ տնտեսական զարգացման պահանջմունքներն այդքան 1930–ական թթ.–րի վերջում սկսում էին քելադրել քաղաքական փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնց արտահայտությունը դարձան 1939թ.–ին ՀԺԿ–ի V համագումարում ընդունված կուսակցության գլխավոր քարտուղարի և Հանրապետության ներքին գործերի նախարարի պաշտոնների բաժանման մասին որոշումն, իսկ մեջլիսում նախագահ Ինյունյուի նախաձեռնությամբ ստեղծվեց «անկախ պատգամավորների» 21 հոգուց բաղկացած խումբ՝ խորհրդարանում բազմակարծություն ապահովելու նպատակով²⁸⁴:

Սակայն Երկկարդ համաշխարհային պատերազմի սկիզբը ստիպեց բուրքական ղեկավարությանը վերադառնալ «կարծի գծին», որն արտահայտվում էր որևէ ընդլիմնադիր քաղաքական գործունեության արդելման, մասնով խիստ զրաքնության տակ գտնվելու (թեպետ, գլխական և գրական ոլորտներում կարծիքների արտահայտումը համեմատաբար ազատ է եղել) մեջ: Քննադատությունը նախագահի շրջապատի կամ կառավարության հասցեին²⁸⁵ պատժվում էր կամ վիլայեթներում, կամ դեսպանատներում աշխատանքի նշանակումներով²⁸⁶:

ՀԺԿ–ն այդպես էլ չկարողացավ ներգրավել իր շարքերում իրավաբանական ու առևտրական խավերի և տեղական ընտրանու ներկայացուցիչներին²⁸⁷: Եթե 1920–ական թթ.–ին և 1930–ական թթ. առաջին կեսին բուրքական ղեկավարությունը կենտրոնացել էր իր դիրքերի հնարավորին չափ առավելագույն ամրապնդման և սեփական կուսակցության մեկիշխանության հաստատման վրա, ապա հետագայում փորձում էր ներգրավել քա-

²⁸⁴ «Անկախների» անկախությունը, սակայն, շատ հարաբերական հասկացություն էր. նրանց ղեկավարը ևս հանդիսանում էր Խմեթ Ինյունյուն, և նրանք պարտավոր էին միաձայն քվեարկել ՀԺԿ–ի կողմից ներկայացվող բոլոր առաջարկներին:

²⁸⁵ Նախագահի անձը ենթակա չէր որևէ քննադատության, քանի որ նա վայելում էր հսկայական հարգանք և հեղինակություն բնակչության և քաղաքական վերնախավի համարյա բոլոր խմբերի մոտ:

²⁸⁶ Որպես օրինակ կարելի է բերել Յակոբ Քադրիի դեպքը, երբ նրան 1933թ. «Քաղորդ» ամսագրում հրատարակված սուր քննադատական հոդվածների համար նշանակեցին Աբանիայում թուրքիայի դեսպան:

²⁸⁷ Ç. Keyder. State and Class in Turkey. p.274.

դարական ընտրանու այդ խմբերը իր շրջանակներում, սակայն 1930-ական թթ. երկրորդ կեսին քեմալականները կորցրել էին արդեն իրենց ճկունությունը և հարմարվողականությունը փոփոխվող իրավիճակներին, ինչի հետևանքը դարձավ 1940-ական թթ-ին Դեմոկրատական կուսակցության ստեղծումը և բնակչության լայն խավերի կողմից նրա բացարձակ աջակցությունը:

Այս դատողություններից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի Հանրապետությունում կուսակցությունները և ընդհանրապես բազմակուսակցական համակարգը կարող էին ստեղծվել միայն պետական իշխանությունների կամքով և որոշմամբ: Ժամանակակից ինստիտուցիոնալ քաղաքական կուսակցություն Թուրքիայում կարող էր ի հայտ գալ միայն երկրի արդիականացման մակարդակի աճի հետևանքով: Օրյեկտիվորեն բազմակուսակցական համակարգի կամ ազատական ժողովրդավարության և տնտեսության համար Թուրքիան դեռ չէր հասունացել: Քաղաքական շրջանակներում իշխող էր այն համոզումը, որ թուրք ժողովուրդը դեռևս պատրաստ չէ ժողովրդավարական քաղաքական համակարգի համար, որ որևէ կազմակերպված ընդդիմություն վաղ թե ուշ կվտանգեր աշխարհիկ կարգերն ու հանրապետությունը: Քեմալականներն իրենց աչքի առաջ ունեին նոր օսմանների (Առաջին Սահմանադրության) և երիտթուրքերի (Երկրորդ Սահմանադրության) շրջանների դառը փորձը, երբ արևմտյան տիպի պետական և քաղաքական մոդելի կիրառումը Թուրքիայի պայմաններում տապալվեց:

Թուրքիայում քաղաքական արդիականացումը՝ դա նախ և առաջ քաղաքական կառուցվածքի կամ ազգային պետության ստեղծման խնդրի լուծում էր: Եվ այս առումով կարելի է համաձայնել Ք. Քարպատի այն դատողության հետ, որ «մոտ երեսուն տարի պետությունը վերահսկող «քաղաքացիական» զինվորականների, մտավորականների և պաշտոնյաների խումբը ճանաչում էր պետության գերակայությունը՝ հանդգնած լինելով, որ պետությունը մարմնավորում է արդի գաղափարները և կայտղ է տարածել դրանք ամբողջ բնակչության մեջ քարեփոխումների միջոցով»²⁸⁸:

Ավտորիտար քաղաքական համակարգը, որ հաստատվեց այս ժամանակաշրջանում, կոչված էր փաստորեն կանոնավորելու և վերահսկողության տակ պահելու անցումը հին ավանդական համակարգից արդիականին: Այն կարգավորում էր նաև հասարակական ուժերի և շահերի տարանջատումն ու բաշխումը: Արդիականացվող ավտորիտար դիկտատուրան

²⁸⁸ K. Karpat. Society, Economics and Politics in Contemporary Turkey. – "World Politics". v. XVII, N 1, p. 53.

կարող է սկզբնապես շատ ավելի արդյունավետ լինել, քան թե ժողովրդավարությունը՝ ստեղծելով այնպիսի սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք ապահովում են ինչպես կայուն տնտեսական աճ, այնպես կայուն և ավելի ազատական քաղաքական համակարգի առաջացումը: Մ.Դյուվեր-ժենն հաստատում է, որ «ոչ զարգացած կամ զարգացող երկրները դատապարտված են կառավարման ավտորիտար եղանակի կիրառմանը և չունեն մարխապայմաններ ժողովրդավարության հաստատման համար»²⁸⁹: Կարող ենք փաստել, որ քեմալական թուրքիայում ստեղծվել էր իշխանության ավտորիտար-մախաժողովրդավարական տեսակը՝ սյոբզիդենտական կառավարմամբ զինվորական-բյուրոկրատական պետության տեսքով: Ժողովրդավարությունն այս երկրում չունեք ոչ քաղաքական, ոչ սոցիալական, ոչ էլ պատմական հիմք: Բացակայում էին նաև ժողովրդավարության համար անհրաժեշտ քաղաքական գիտակցությունն ու մեխանիզմները, ինչպես. օրինակ, ազդեցիկ տնտեսական և լրատվական խմբավորումներ, որոնք առկա են Արևմուտքի հասարակություններում, ինչը զգալիորեն հեշտացրեց ավտորիտար դեկավարման և աղիականացման գործը: Հասարակությունը, որը դուրս էր գալիս սոցիալական ու տնտեսական լճացումից, որտեղ գերիշխում էին ճակատագրապաշտությունը, բացակայում էր խոշոր, հեռատես, կրթված մտավորական դասը, չէր կարող առաջ գնալ առանց այսպիսի իշխանության և հարկադրական արդիականացման: Թուրք դեկավարները ստիպված էին, հաճախ միայն ճնշումների և ուժի միջոցով, հաղթահարել անատոլիական գյուղացիության ինտերցիան ու պահպանողականությունը, վերափոխել նրա կենսակերպը:

Ըստ էության, արդիականացման գործընթացը դուրսին կերպով չէր անցնում հաշվի առնելով թուրքիայում առկա որոշակի վախճ ու թաքուն դիմադրությունը փոփոխությունների նկատմամբ: Այդ դիմադրության վկայություն կախող են հանդիսանալ Ռիզեյում (1925թ.), Իզմիրում և Սենեմեմում (1930թ.), Բուրսայում (1933թ.) տեղի ունեցած հակակառավարական ելույթները: Դեռևս 1925 թ. քրդական ապստամբությունը դարձավ երկրի քաղաքական դեկավարության ավտորիտար կամ «կարծր» կողմնորոշման բացահայտ վկայություն: Երկրի քաղաքական ընտրանին, որը մինչ այդ գոլշանում էր Մուստաֆա Քեմալի ձեռքբերում իշխանության չափազանց

²⁸⁹ M. Duverger, *Political Parties*, p. 65, մեջբերվում է քսոս D. A. Rustow, *The Development of Parties in Turkey*, in La Palombara J. and Weiker M. (ed.), *Political Parties and Political Development*, Princeton, 1966. – p. 84.

մեծ կենտրոնացումից, քրդական խռովությունից հետո ստիպված էր հաշտվել այս հանգամանքի հետ:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքական արդյակաճանցման գործի առաջամարտիկներն էին երկրի քաղաքական լիդերներն ու քաղաքական ընտրանին: Հասարակական և քաղաքական փոփոխությունները հաճախ հանդիսանում են երկրի քնտրանու համեմատաբար փոքր խմբի համախմբված ջանքերի արդյունքը: Ֆ.Ֆրեյի կարծիքով, «արդյակաճանցումը սովորաբար դեկավարվում է «մոդեռնիզացվող կադրերի» կողմից, որոնք սկզբնական բարեփոխումների և տարբեր խմբերի միջոցով իրականացնում են անցումը»²⁹⁰: Աքաբյուրքի առջև արդյակաճանցման ընթացքում ծառայած էր հենց ժամանակակից քաղաքական, սոցիալական և տնտեսական մարտահրավերներին դիմագրավելու ունակ, կառավարման տեխնոլոգիային արդյունավետորեն տիրապետող ընտրանու ձևավորման պրոբլեմը: «Պետք է պատրաստել երկրի վերակառուցման համար անհրաժեշտ կադրեր, հիմնել համապատասխան հաստատություններ ու դաստիարակել մարդկանց,– հայտարարում էր Աքաբյուրքը,– որոնք ընդունակ են հասկանալ և բացատրել մեր ազգային հիմնախնդիրները և մեր գաղափարախոսությունը սերնդից սերունդ փոխանցել»²⁹¹: Այս խնաստով թուրքական արդյակաճանցումը հանդիսանում էր փաստորեն վերևից՝ առաջնորդի կողմից պարտադրված բարեփոխումների քաղաքականություն, որի արագությունն ու աստիճանը կախված էին առաջնորդների մտածելակերպից և կիրառվող մեթոդներից: Արդյակաճանցումը Թուրքիայում կարող էր հաջողությամբ իրագործվել միայն պետության ակտիվ դերի դեպքում և իրականացվեց բռնապետության հիմքի վրա: Ըստ էության, մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը թուրքական քաղաքական համակարգի բնույթն ու գործառույթները կախված էր երկրի առաջնորդների անհատներից: Այդ պատճառով էլ, Ջեմալ Աքաբյուրքի դեպքում, կարելի է համաձայնել է: Շիլլի այն դատողությունը, որ «արդյակաճանցվող երկրներում քաղաքական կայունության պահպանումը պայմանավորված է մեծ քարիզմատիկ առաջնորդի առկայությամբ»²⁹²:

Հարկ ենք համարում նշել, որ քաղաքական արդյակաճանցման պլոյեթում քեմալականների համար գլխավոր պլոբլեմը եղել է ոչ թե ժողովրդավարության և քաղաքական ազատության հաստատումը, այլ երկի-

²⁹⁰ F.Frey. The Turkish Political Elite. p. 5.

²⁹¹ Նույն տեղում, էջ 400:

²⁹² E.Shills. Intelligentsia in the Political Development of the New States. – "World Politics", vol. XII, 1960, p.63.

ըր կառավարելու ընդունակ իշխանության ստեղծումը. «Աքաբյուրքը գիտակցում էր, որ բազմակուսակցության համար ավելի նպաստավոր ժամանակ է անհրաժեշտ», նշում է գերմանացի հետազոտող Ֆենսկեն՝ առաջ քաշելով այն դրույթը, որ «Աքաբյուրքի պետական մոդելը զարգացման բռնապետության դասական դեպքն էր»²⁹³: Դժվար է չհամաձայնել դրա հետ, հաշվի առնելով, որ թուրքական քաղաքական ղեկավարության մոտ տիրապետող էր այն մտայնությունը, որ նոր Թուրքիան պետք է սովորի կառավարել իրեն, որ թուրք ժողովուրդն ինքը դեռ գգում էր ղեկավարվելու, այլ ոչ թե ղեկավարելու կարիքը:

Չի կարելի չնշել, որ, ի տարբերություն Արևմուտքի, Թուրքիայում միշտ գերակայող է եղել պետության դերը, այլ ոչ թե անհատի, ազատության կամ քաղաքացիական հասարակության գաղափարները: Ինչպես օսմանյան ավանդույթի հետևանքով, այնպես էլ քեմալիզմի ազդեցության տակ թուրքերը շարունակում էին ընկալել պետությունը որպես հայրապետական կազմակերպություն, որից միշտ կարելի է օգնություն ստանալ որպես հատուցում հավատարմության դրսևորման դիմաց: Թուրքիայի Հանրապետությունում ևս քաղաքական իշխանությունը ստացավ իր ոլորտի ընդարձակման և հասարակության նկատմամբ վերահսկողության ընդլայնման միտում: Այստեղ չէր գործում իշխանությունների տարանջատման սկզբունքը, քաղաքական իշխանությունները չունեին (առնվազն բացահայտ) ընդդիմություն: Եվ թուրքական արդյակահանացումն առաջին հերթին հանդիսանում էր պետության կամ իշխանության շահերի ու ինսուլտուտների ամրապնդում, այլ ոչ թե անհատական իրավունքների և ազատությունների ճանաչման ու ընդարձակման գործընթաց: Մինչ օրս Թուրքիայի Հանրապետության կառավարությունը և կառավարման ամբողջ համակարգը, թեև ոչ այն աստիճանի, ինչքան 60–50 տարի առաջ, շարունակում է մնալ կենտրոնացված, իսկ երկրի հասարակական կյանքում պետության դերը՝ գերակայող:

Ինչպես արդեն նշվել է առաջին գլխում, Զ.Աքաբյուրքի համար արդյակահանացման գործընթացում գլխավոր հենարան էր հանդիսանում, բացի Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունից, բանակը: Աքաբյուրքի քաղաքական սխեմայում բանակի համար նախատեսվում էր ավելի մեծ դեր, քան թե երկրի արտաքին սահմանների պաշտպան լինելը: Բանասեր կոչված էր հանդես գալ որպես հանրապետությունում կայունության ա-

²⁹³Fenske H. Politisches Denken in 20. Jahrhundert in H.J. Lieber (Hrsg.). Politische Theorien von der Antike bis zur Gegenwart. Bonn, Bundeszentrale für Politische Bildung, 1993, s. 828.

պահովման, այնպես էլ արդիականացման գործիք: Թուրքիայում արդիականացումը անց է կացվել զինվորականության հովանու ներքո. «զինվորականությունն էր Թուրքիայի արդիականացման հիմնական գործոնը»²⁹⁴: Թուրքիայի պատմության մեջ կարևոր դեր էին կատարում արևմտականացված, աշխարհիկ ռազմական ուսումնարանները, որտեղից էլ դուրս են եկել Թուրքիայի Հանրապետության քաղաքական ընտրանու կորիզը. «Այդ խավը, նշում է Դ.Ռասթուն, – Աթաթյուքի դեկավարությանը ջանք էր գործադրում դուրս մղել քաղաքական դաշտից կրոնը և կրոնական դպրոցներում կրթություն ստացած խավին...»²⁹⁵: Չինվորական կրթությունը ինքնուրույնության պահանջում էր դեպի արդիականացումն ուղղված կադմոնյուշումներ:

Թուրքիայի առաջին նախագահը բանակի ուսերի վրա դրեց երկրի արդիականացման շարժիչ ուժի, առաջատարի դերը: 1931թ.–ին, ելույթ ունենալով Կոնիայում, Մուստաֆա Քեմալը ընդգծում էր. «Ամեն անգամ, երբ բուրք ազգը մտադիր է մեկ աստիճանով վերև բարձրանալ, նրա հայացքներն ուղղվում են դեպի բանակը որպես վեհ ազգային իդեալների հասնելու համար շարժման առաջնորդի... Թուրք ազգը համարում է Թուրքիայի Հանրապետության բանակը իր իդեալների պաշտպանը»²⁹⁶:

Թուրքիայում արդիյի կերպարը ընդհանրապես ներկայանում է զինվորականի, սպայի կերպարով: Ի տարբերություն ուրիշ մերձավորարևելյան պետությունների, Թուրքիայում գոյություն ունեցող բավականին արևմտականացված զինվորական վերնախավ, որն ուսանել էր մասնագիտական աշխարհիկ ռազմական ուսումնարաններում, իր ձեռքը վերցրեց երկրում արդիականացման գործի ղեկավարումը՝ հանդիսանալով այն ուժը, որը տիրապետում էր երկրի ներսում կայունությունն ապահովելու և կարգուկանոն հաստատելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքներին և միջոցներին:

Այսպիսով՝ վերլուծելով Թուրքիայում քաղաքական արդիականացման փորձը, կարող ենք փաստել, որ (1) քաղաքական համակարգի ավտորիտար ձևը կարող է լինել արդյունավետ արդիականացման պրոցեսի սկզբնական փուլերում, (2) ավտորիտար կառավարման եղանակից անցումը դեպի ժողովրդավարական կառավարման եղանակը կարող է էական դեր կատարել իրական ժողովրդավարական և ժամանակակից քաղաքականության առաջացման համար:

²⁹⁴ D.A.Rustow, The Military, – R.Ward and D.A.Rustow (eds.), Political Modernization in Japan and Turkey, p. 135.

²⁹⁵ F.Frey, The Turkish Political Elite, p. 40.

²⁹⁶ Atatürk'ün Söylev ve Demeçleri, c. 2, Ankara, 1952, s. 266.

գ. Արդիականացումը և իսլամը

Արդիականացման տեսության մեջ առաջնային տեղ է հատկացվում քաղաքականության և կրոնի փոխհարաբերությունների խնդրին: Թուրքական արդիականացման փորձի ճիշտ ըմբռնման համար կարևոր է հասկանալ քաղաքականության և իսլամի միջև փոխհարաբերությունների բնույթը Թուրքիայի Հանրապետության բեմադրական շրջանում, որի ազդեցությունն այսօր էլ ամենախոր կերպով զգացվում է թուրքական քաղաքական կյանքում:

Լաիցիզացիան հանդիսացավ արդիականացման գործընթացի հենասյուններից մեկը: Ն. Բերքեսը Թուրքիայի աշխարհիկացմանը նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ «սեկուլյարիզմը ի հայտ է եկել որպես հոգևոր և երկրային իշխանությունների իրավասությունների բաժանման խնդիր»²⁹⁷: 1920-1930-ական թթ.-ին Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարար Մահմուդ Էսադը, խոսելով քեմալական քաղաքականության մասին, ընդգծում էր, որ «նոր օրենքների նպատակը չէր հանդիսանում աջակցել էին ավանդույթների կամ հավատքի պահպանմանը, որոնց աղբյուրը կրոնն էր, այլ, ավելի շուտ, ապահովել ազգի տնտեսական և սոցիալական միասնությունը: Երբ կրոնը ձգտում է կառավարել մարդկային հասարակությանը, այն դառնում է գործիք իշխողների, բռնակալների և ուժեղ մարդկանց ձեռքում: Անջատելով աշխարհիկն ու հոգևորը՝ ժամանակակից քաղաքակրթությունը փրկեց աշխարհը բազում դժբախտություններից և կրոնին տվեց իր անմահ տեղը հավատացյալների հոգիներում»²⁹⁸:

Քեմալական արդիականացումը հետևողականորեն ջանքեր էր քափում քուրք ժողովրդի գլխակցության մեջ մինչ այդ տիրապետող վերագազային Իսլամի «խայրենիքի» մասին պատկերացումները վերացնելու և հայրենասիրության նոր տեսակ՝ սեփական ազգային խայրենիքին նվիրվածության գաղափարը սերմանելու ուղղությամբ: Սակայն չպետք է մոռանալ, որ իսլամը հանդիսանում է համակարգված ու փոխկապակցված գաղափարախոսություն և կենսակերպ՝ իր սեփական բարոյագիտությամբ, սոցիալական արդարության ու քաղաքական կառուցվածքի մասին պատկերացումներով: Իսլամն ունիվերսալ կրոն է, որը չի սահմանափակվում էթնիկական կամ ազգային խմբի սահմաններով: Իսլամն էր կանոնակարգում բոլոր հարցերը Օսմանյան կայսրության մահմեդական բնակչության կյանքի բոլոր բնագավառներում: Թուրք սոցիալոգ Բ. Թոփրաքը շեշտում էր այն հան-

²⁹⁷ N. Berkes. The Development of Secularism in Turkey, p. 4.

²⁹⁸ R. Bellah. Religious Aspects of Modernization in Turkey and Japan, p. 3.

գամանքը, որ «խլամը քաղաքական կրոն է, որովհետև նա որոշում է հավատացյալի համար նրա հոգևոր ու երկրային գոյության ամբողջականությունը»²⁹⁹: Մահմեդական ումմայի կերպարի մեջ մարմնավորված էր հասարակական–քաղաքական և կրոնական ընդհանրությունների սերտաճումը: Օսմանյան կայսրության պետական կոնցեպցիան հիմնավորվում էր առաջին հերթին իսլամով: Պետությունն ու իսլամը հանդես էին գալիս որպես մեկ մարմին: Այս առումով արդիականացումը Թուրքիայում պետք է անպայման բախվեր կրոնական ավանդույթների հետ: Իսկ դրանց, ինչպես և կրոնական վերնախավի ազդեցությունը երկրում շատ մեծ էր: «Թուրքիայի կրոնական վերնախավը,– գրում է Բ. Լյուիսը,– դեռևս տիրապետում էր մեծ իշխանության և ավելի ուժեղ ազդեցության: Երկրի կրթական հաստատությունների մեծ մասը գտնվում էր նրա վերահսկողության տակ, ընտանիքին և անհատական խնդիրներին վերաբերող օրենսդրության մեջ գերիշխում էին շարիաթի դրույթները: Սուլթանության վերացումից հետո նա մնում էր երկրում միակ ուժը, որն իր կազմակերպությանը և հեղինակությունը ի վիճակի էր մարտահրավեր նետել նոր վարչակարգին»³⁰⁰:

Մուստաֆա Էմեալը գիտակցում էր, որ իր քաղաքականության նկատմամբ միակ հնարավոր լուրջ ընդդիմությունը երկրում կարող են լինել հոգևորականները, այդ պատճառով էլ նրանց ազդեցությունը «ենթակա էր վերացման...»³⁰¹: Քաղաքական իշխանությունը կրոնական ազդեցությունից ազատելու համար քեմալականներին հարկավոր էր նախ և առաջ մաքրել իշխանության կառույցները կրոնական հաստատություններից՝ խալիֆայություն, շեյխ–ուլ–իսլամ, շարիաթի և վաքըֆների նախարարություն, որոնք անձեռնմխելի էին մնացել մինչև քեմալական արդիականացումն իրականացված բոլոր քարեմորթումների ժամանակ³⁰²: «Խալիֆայության և շարիաթի վերացումը,– ընդգծում է Նիյազի Բերբեքը,– դարձավ կրոնական վերնախավի ինստիտուցիոնալ հեմարանի կորստի արտահայտումը՝ լինելով պետության համդեպ այդ վերնախավի կողմից իր վերահսկողությունը հաստատելու փորձի տապալման հետևանք»³⁰³:

²⁹⁹ B. Toprak. Islam and Political Development in Turkey. p. 22.

³⁰⁰ B. Lewis. The Emergence of Modern Turkey. p. 259.

³⁰¹ P. Sugar. Economic and Political Modernization.– R. Ward and D. Rustow (eds.), Political Modernization in Japan and Turkey. p. 163.

³⁰² Թեև երիտուրբական շրջանում արդեն գոյություն ունեին ծրագրեր աշխարհիկ բարեփոխումների անցկացման շուրջ, սակայն, ի վերջո, Իրքիադը որոշեց չգնալ արմատական քայլերի՝ հաշվի առնելով երկրի բնակչության տրամադրությունները և պատերազմի պահանջները:

³⁰³ N. Berkes. The Development of Secularism in Turkey. p. 481.

Որպես լաիցիզացման քաղաքականության կոնկրետ արդյունք կարելի է հիշատակել 1920–ական թթ. ընթացքում դեյվիշական եղբայրությունների, թեքենեյի (սորբավայրերը և դամբարանները), կրոնական դպրոցների՝ մեյլեսենների փակումը, ավանդական հագուստ կրելու արգելքը: 1928թ. մեջլիսը փոփոխություն մտցրեց Սահմանադրության 2–րդ հոդվածի մեջ, որով իսլամն այլևս չէր հայտարարվում պետական կրոն և սահմանվում էր խղճի ազատություն, մախազահի և պատգամավորների երդման կրոնական տեքստը փոխարինվեց քաղաքացիականով:

Այս բարեփոխումներով Մուստաֆա Քեմալը դուրս բերեց Թուրքիային մահմեդական պետական գաղափարախոսության ազդեցության ոլորտից և մտցրեց նրան ժամանակակից ազգային պետության հասկացողության ոլորտի մեջ: «Ի տարբերություն Թանզիմատի կամ երիտթուրքական բարեփոխումների,– շեշտում է նույն Բերբեքը,– Մուստաֆա Քեմալի բարեփոխումները կրում էին բացահայտ աշխարհիկ բնույթ»³⁰⁴:

1920–ական թթ–ին Թուրքիայում ընտրություն էր կատարվում գոյություն ունեցող հասարակական–քաղաքական մտքի երկու ուղղությունների միջև՝ «արևմտյան խղեալի» (երկրում արևմտյան հասարակարգի և կենսակերպի հաստատման գաղափարը) և «արևելյան խղեալի» (իսլամական կարգերի պահպանումն ու Արևմուտքին դիմակայելու գաղափարը): Արդիականացումը, կարծես թե, կոչված էր պատասխանելու այն հարցին, թե ինչի հետ է Թուրքիան կապելու իր ապագան՝ արևմտյան քաղաքակրթության թե՞ իսլամական աշխարհի: Արքայությունը պնդում էր, որ «ժամանակակից Թուրքիան ասիական պետություն չէ: Մեր ճակատագիրը, շահերն, ապագան մեզ կապում են Եվրոպայի հետ: Այն, ինչի կարիքը մենք զգում ենք մեր կառուցվածքների վերակառուցման գործն ավարտելու համար, մենք վերցնում ենք Եվրոպայից և այն օրը, երբ այդ գործն ավարտված է լինելու, կլինի Թուրքիայի արյուական և քաղաքակիրք պետություն դառնալու օրը»³⁰⁵: Հանրապետականները պարզ տեսնում էին, որ ազգերի համաշխարհային ասպարեզում տեղ զբաղեցնելու հավակնող պետությունը չի կարող այլևս հենվել կրոնական հիմքերի ու օրենքների վրա: Հանրապետական–Շողովրդական կուսակցության որոշ ղեկավարներ նույնիսկ արարացնում էին իրենց անբարեհաճ վերաբերմունքը ժողովրդավարական

³⁰⁴ Նույն տեղում, էջ 451:

³⁰⁵ F. de Gerando. Modern bir devlet. – "Atatürk' e Saygı". s. 266.

գաղափարների նկատմամբ նրանով, որ Թուրքիայում այն կնշանակեր խոջաների և հետադիմականների իշխանություն³⁰⁶:

Այսպիսով՝ պետության կրոնական հիմքին փոխարինման եկավ աշխարհիկ-ազգայնական հիմքը: Կարելի է համաձայնել Շ. Այզենշտադտի այն մտքի հետ, որ «քեմալական հեղափոխության առանձնահատկություններն էին հանդիսանում նախ և առաջ քաղաքական լեգիտիմության հիմքերում և քաղաքական ընկերակցության խորիդանիշների մեջ կատարվող փոփոխությունները: Այս փոփոխությունների հետ մեկտեղ իրականացվեց ընկերակցության նոր սահմանների որոշումը... Հասարակությունն իր կապը խզեց իսլամական ընդհանրության համակարգի հետ և անցյալ կատարեց թուրք ազգի կատեգորիաների համակարգին»³⁰⁷: Ավելին՝ պետք է նշել, որ մահմեդական պաշտամունքին գտնվեց յուրօրինակ փոխարինում: Պաշտոնական քաղաքական մեջ նախագահի նստավայրը՝ Չանքայան դարձել էր Քաաբայի տաճարին, նախագահ Քեմալ Աթաթյուրքը՝ Ալլահին կամ Մուհամմեդին, նրա «Ճառք»՝ Դուրանին համարժեք հասկացություններ: Ինչ-որ չափով քեմալիզմը կատարեց Թուրքիայում այն դերը, որը կատարեցին լիբերալիզմը, ֆաշիզմը և կոմունիզմը, որոնք, լինելով աշխարհիկ գաղափարախոսություններ, դարձան ժամանակակից Արևմուտքում և Ռուսաստանում քրիստոնեության փոխարինող «դավանանքներ»: Նմանապես քեմալիզմը՝ աշխարհիկ գաղափարախոսությունը, կոչված էր փոխարինելու մահմեդական արժեքները:

Միաժամանակ ընդգծենք, որ Թուրքիայում աշխարհիկ բարեփոխումներն ուղղված էին ավելի շուտ ոչ թե պետությունից կրոնի անջատման, այլ պետական համակարգի կողմից կրոնական կյանքի վրա վերահսկողության սահմանմանը: Արդիականացումը հաճախ այդպես էլ ընկալվում էր քեմալականների կողմից՝ որպես «կրոնը կառավարության հսկողությանը ենթարկելը»³⁰⁸: Աթաթյուրքն ինքը շեշտում էր, որ «նոր Թուրքիան անաստված պետություն չէ, այլ կարիք է գգում մի կրոնի, որը չի հակադրվում բանականությանը կամ թշնամություն առաջընթացին... Այսօր բացահայտ ճշմարտություն է դարձել, որ հարկավոր է ազատել մեր վեհ մահմեդական կրոնը քաղաքականության գործիք լինելուց...»³⁰⁹: Կրոնի հանդեպ սահմանափակումների քաղաքականությունը համատեղվում էր աշխարհիկ պետության բնույթին ոչ հատուկ կառավարության կազմում կրոնական գոր-

³⁰⁶ M. Tunçay. Türkiye Cumhuriyetinde Tek Parti Dönemi. s. 224.

³⁰⁷ III. Айдзенингалг. Революция и преобразование общества., с. 283.

³⁰⁸ B. Toprak. Islam and Political Development in Turkey. p. 38.

³⁰⁹ Lord Kinross. Atatürk. p. 585.

ծերի վարչության և կրոնական միջոցառումների ու մզկիթների համար հատկացումների տրամադրման, ինչպես նաև մահմեդական տոների՝ «ռամադանի» և «կուրբան-բայրամի» պետական մակարդակով նշման հետ: Անհրաժեշտության դեպքում Մուստաֆա Քեմալը դիմում էր իսլամի և կրոնական զգացմունքների օգնությանը: 1928 թ. իր ելույթներից մեկում Թուրքիայի նախագահը նշում էր, որ «խլամը հանդիսանում է ամենախեղամիտ, բնական և կատարյալ կրոնը»³¹⁰:

Արաբյուրքից հետո էլ իսլամը մնում էր և մնում է Թուրքիայի քաղաքական կյանքի կարևորագույն հարցերից ու գործոցներից մեկը: Այն հանգամանքը, որ Հանրապետության պատմության սկզբնական փուլերում իսլամը մերժվեց որպես պետական կրոն, դարձավ պետության և հասարակության զգալի, եթե ոչ գերակշռող մասի միջև ճեղքվածքի առաջացման պատճառը, քանի որ «խլամը շարունակում էր մնալ ժողովրդին համախմբող ու ղեկավարող սկզբունք»³¹¹: Քաղաքային և առավել ևս գյուղական բնակչության մեծամասնությունը շարունակում էր բնկալել իսլամը որպես հասարակական-քաղաքական և անձնական կյանքի գերակայող ուժ: Փաստ է, որ Հանրապետության վիլայեթներում այդպես էլ լուրջ կառուցվածքային, սոցիալական-տնտեսական բարեփոխումներ տեղի չունեցան:

Կրոնի և պետության միջև փոխհարաբերությունների քեմալիստական ընթրման հետևանքն այն էր, որ սրևե քաղաքական բողոք ընդդեմ իշխանությունների հավակնում էր գործել հանուն իսլամի նախկին կարգավիճակի վերականգնման: Արմատավորված քաղաքական ավանդույթների բացակայության պայմաններում զայրույթը իշխանությունների բարենորոգումների քաղաքականության դեմ արտահայտվում էր կրոնական պահպանողականության բառապաշարով՝ միակ լեզվով, որը հաստ էր ժողովրդի մեծամասնությանը: «Անաստվածության» մեջ մեղադրանքը, - նշում է Բ. Կոնդակչյանը, - ամենատարածվածն էր ՀԺԿ-ի ղեկավարների և անդամների հասցեին³¹²: Հետևաբար՝ լինի այն 1925թ. քրդական ապստամբությունը, 1924-1925թթ. Առաջադիմական կուսակցության ու 1930թ. Լիբերալ կուսակցության հետ կապված դեպքերը, 1930թ. հակակառավարական ելույթները երկրի հարավում, ապա դրանք կրում էին իսլամական հավատի և արժեքների վերականգնման նրբերանգներ, իսկ կառավարության կողմից վերագրվում էին կրոնական մոլեռանդների և հետադիմականների ջանքերին:

³¹⁰ Բ. Кондакчян. Турция: внутренняя политика и ислам". с. 9.

³¹¹ Ը. Keyder. State and Class in Turkey, p. 88

³¹² Բ. Кондакчян. Турция: внутренняя политика и ислам". с. 82.

Այսօր էլ, չնայած նրան, որ Թուրքիայի բոլոր սահմանադրություններում միշտ ամրագրված է եղել Հանրապետության աշխարհիկ բնույթը, սակայն իսլամական ուղու կողմնակիցների թիվը ոչ միայն չի պակասել, այլ գնալով աճում է: Կարելի ենթադրել, որ քեմալական քաղաքական համակարգի օտոբ այդ հոսանքը փաստորեն ժամանակավորապես նահանջել էր իր դիրքերից: Հասարակական գիտակցությունն այդ ժամանակ պատռաստ չէր լաիցիզացման արագ ընթացքին, և այդ պատճառով էլ Աթաթյուրքին չհաջողվեց վճռակամորեն սասանել ժողովրդի գիտակցության մեջ արմատավորված իսլամական ազդեցությունը. «Քեմալիզմը, –նշում է Մեթին Հեփերը,– չէր կարող փոխարինել իսլամին թուրքերի անհատական կյանքում և զարգացման մեջ»³¹³: Բնակչության զգալի մասի համար որպես սեփական ինքնության հիմք շարունակում էր ծառայել իսլամը: 1950–1990–ական թթ. ընթացքում իսլամիստները հետևողական ջանքերով տարածում էին իրենց գաղափարները, բացում էին կրոնական դպրոցներ ու նոր մզկիթներ և դրա արդյունքում հրապարակ եկավ իսլամիստական մտավորականների ու քաղաքական կադրերի, աթաթյուրքիզմին մրցակից քաղաքական ու գաղափարախոսական հոսանք, որը նույնիսկ կարճ ժամանակով գլխավորում էր երկրի կառավարությունը³¹⁴:

Կրոնը փաստորեն դարձավ Թուրքիայում քաղաքական ուժերի միջև այն բաժանարար գիծը, որը Եվրոպայում անցնում է աջերի ու ձախերի միջով:

դ. Քեմալիզմի քաղաքական ժառանգությունը

Անդրադառնալով Թուրքիայում հետագա քաղաքական զարգացումների վրա քեմալական քաղաքական համակարգի հետևանքների և ազդեցության հարցին, հարկ է նշել, որ բնակչության հիմնական մասի համար նրա օգուտներն ու պտուղները 1920–1940–ական թթ–ին այդպես էլ մնացին անհասանելի: Լուրջ տեղաշարժեր երկրի քաղաքական և սոցիալ–

³¹³ M. Heper. Islam, Polity and Society in Turkey. – "Middle east Journal", Summer 1981, v. 35, N 3, p. 361.

³¹⁴ Խոսքը գնում է 1996–1997թթ ին «Բարօրություն» իսլամիստական կուսակցության կառավարության մասին, որը մա կազմել էր «Ճշմարիտ Ուղի» կուսակցության հետ դաշինքում և որը գլխավորում էր «Բարօրության» նախագահ Նեջմետին Էրաքանը: Իսլամիստների իշխանությունը չդարձավ պատռուսա Թուրքիայի գլխին, ինչպես տարիներով գուշակում էին քեմալականները: Իրական իշխանությունը, այսինքն՝ ուժային բոլոր կառույցները մնացել էին «քեմալիստական» քանակի ձեռքում, որն էլ հետագրեց այդ կառավարությունը 1997թ. ամռանը՝ կրկին առաջին պլան մղելով Աթաթյուրքի կերպարն ու գաղափարները:

տնտեսական զարգացման մեջ սկսեցին կատարվել արդեն Աբաթյուրքի մահից հետո՝ Իսմեթ Ինյույուի, Ջեյալ Բայարի և Ադնան Մեհդեբեսի կառավարման օրոք: Թեպետ, իհարկե, չի կարելի ժխտել, որ նրանց ձեռնարկումների վրա զգալի էր արտաքին կամ օբյեկտիվ հանգամանքների ազդեցությունը և այն, որ իրանց համար հողը նախապատրաստվել էր քեմալական ժամանակաշրջանում:

1920–1930–ական թթ. Թուրքիայում հասարակության լիակատար շեկավարումն իր ուսերի վրա վերցրել էր զինվորական–բյուրոկրատական վերնախավը, որն հանգել էր երեք հետևությունների. առաջինը՝ արևմտյան քաղաքակրթության առավելությունը XX դարում դարձել էր ակնհայտ, հետևաբար, Թուրքիան, մրանից հետ չմնալու և իր տարածքային ամբողջականությունը վտանգի տալ: Պենելու համար, պարտավոր է գնալ արդիականացման կամ արևմտականացման ճանապարհով: Բացի այդ, արդիականացման գործընթացը չի կարող սահմանափակվել մեկ առանձին ոլորտով: Երկրորդը՝ բուրքական նոր ազգային պետությունը կարիք ուներ նոր խորհրդանիշների ու կարգախոսների, և այս համատեքստում Աբաթյուրքն առաջ քաշեց «Երջանիկ է նա, ով իրեն բուրք է անվանում» նշանաբանն ու ազգային բուրքական մշակույթի «հայտնագործման» և բուրքերեն լեզվի մաքրման թեզը: Երրորդը՝ արևմտականացումը և շրջադարձն ազգայնականությունը կապված էին նաև լաիցիզացիայի ընթացքի հետ: Իսլամն այլևս դադարում էր լինել պետության և ազգային ինքնության հիմքը: Հանրապետության ղեկավարության կողմից հռչակած ժողովրդի կենսական, կրթական և տեխնիկական զարգացման մակարդակների բարձրացման կուրսի և իրականության միջև գոյացել էր մեծ անհամապատասխանություն: Որպես արդյունք վերևից փաթաթվող արդիականացման քաղաքականությունը դարձավ իսլամի և կրոնական ավանդույթների հետ կապը պահպանած բնակչության լայն զանգվածների դիմումը քեմալիզմին այլընտրանք քաղաքական ու գաղափարախոսական հոսանքներին, ինչը բերեց 1970 ական թթ–ին քաղաքական համակարգում կրոնական հիմքի վրա ստեղծված քաղաքական կազմակերպությունների ազդեցության զգալի աճին և նույնիսկ իշխանության մարմինների մեջ ներթափանցելուն:

Քեմալական արդիականացումը նաև փորձ էր պատասխանելու այն հարցին, թե արդյո՞ք մերձավորարևելյան պետություններում արդիականացումը, ավտորիտարիզմն ու ժողովրդավարությունը համաձայնեցված, թե՞ իրար բացառող գործոններ են, այսինքն՝ արդյո՞ք ավտորիտար կամ ժողովրդավարական քաղաքական համակարգը հանդիսանում են քաղաքական արդիականացման պարտադիր և առանձնահատուկ հետևանք, թե՞ այն զգուշավոր, դանդաղ մշակման ու դաստիարակման արդյունք է: արդ-

յո՞ք արդիականացման դժվար գործն ավելի հաջող չի ընթանում ավտորիտար, ուժեղ և կենտրոնացված իշխանության առկայության դեպքում, և, վերջապես, այսյո՞ք այն երկրները, որոնք ձգտում են արիականանալ, զգում են ոչ միայն արևմտյան տեխնոլոգիաների, այլև արևմտյան քաղաքական ինստիտուտների և քաղաքական փոփոխության պահանջը:

Այս հարցին միանշանակ պատասխան տալ այսօր էլ հնարավոր չէ: Թուրքիայի փորձը ցույց է տալիս, որ ավտորիտարիզմն իրոք կարող է ապահովել երկրի արդիականացման կայուն ընթացքը, կարող է արմատապես վերափոխել մի ամբողջ արևելյան ժողովրդի մտածելակերպն ու կենսակերպը. որ ինքն ընդունակ է դուրս չգալ իր իսկ նախասնշած սահմաններից և չվերածվել բիրտ բռնապետությանը, այլ սահուն կերպով անցում կատարել ազատական ժողովրդավարության համակարգին: Սակայն, մյուս կողմից էլ, մենք կարող ենք տեսնել այդ նույն իշխանության անհաջող փորձերը՝ ազատական, պլուրալիստական համակարգից անցնելու գործում, դրանից հետո էլ՝ բավականին ուժեղ ամբողջատիրական միտումները և արդիականացման ընթացքի փաստացի դանդաղեցումը: Քաղաքական արդիականացման առումով քեմալական վարչակարգն այնքան էլ չէր հետևում արևմտյան չափանիշներին. արևմտյան քաղաքական համակարգերը՝ դա իշխանությունների տարանջատում է և բազմակուսակցականություն, այսինքն՝ պետական ինստիտուտների հավասարակշռությունը և կուսակցությունների միջև փոխադարձ վերահսկողության մեխանիզմը: Բացի այդ, արևմտյան քաղաքական միտքը իր հիմքում դավանում է պետությունից և հասարակության ներսում անհատի ինքնավարության գաղափարը: Թուրքիայի համար քաղաքական կյանքի այս կենսակերպը մինչ օրս մնում է եթե ոչ օտար, ապա բավականին աններդաշնակ առկա իրողությունների հետ: Այսպես որ խոսել արևմտականացման հաջող ընթացքի մասին Թուրքիայի Հանրապետությունում առանց արևմտյան քաղաքական փոփոխության յուրացմանն անիմաստ է:

Ամփոփելով՝ հարկ ենք գտնում նշել, որ Քեմալ Արաբյուրքի կառավարման ժամանակաշրջանում հաստատվել էր «խնամակալ» իշխանություն, որի առաջնային նպատակը ոչ թե ժողովրդավարության ստեղծումն էր, այլ երկրի արագընթաց մոդեռնիզացիան, և որը ձգտում էր ղեկավարել, առաջնորդել, խթանել և ուսուցանել թուրքական հասարակությանը: Սակայն, պետք է փաստել նաև, որ 1930 թթ.—ին և 1940—ական թթ. առաջին կեսին քաղաքական համակարգում իրական փոփոխությունների բացակայությունը հանգեցրեցին երկրի հիմնահարցերի լուծման ընթացքի դանդաղեցմանը և կառավարող ընտրանու մեջ հակասությունների աճին: Կուսակցապետության խիստ պայմանները, պերմանենտ տնեսական ճգնաժամերը,

կաշառակերությունը միայն ուժեղացնում էին բողոքական տրամադրությունները չժԿ–ի դեմ: Մյուս կողմից, արդիականացման արդյունքում երկրի քաղաքական էլիտայում տիրապետող դիրքեր սկսեցին զբաղեցնել ոչ միայն զինվորականները, այլ նաև բյուրոկրատիայի և գործարար շրջանակների ներկայացուցիչները, այսինքն՝ տեղի էր ունենում իշխող վերնախավի ընդարձակում, ինչը հանգեցրեց 1945–1946 թթ. իշխող Հանրապետական–ժողովրդական կուսակցության նրա պատմության մեջ երկրորդ պատակտմանը՝ ի դեմս Դեմոկրատական կուսակցության առաջացմանը: Միակուսակցական համակարգը, որի մեջ կազմակերպվել էր բուրքական իշխող վերնախավը, պետք է վերջիվերջո սպառեր իրեն՝ հաշվի առնելով նաև ներքաղաքական իրավիճակի վրա երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային դրությունը³¹⁵: Եվ եթե 1946թ. մեջլիսի ընտրությունները դեռ անցան չժԿ–ի բացահայտ ճնշման տակ, ապա դրանից հետո այլևս նրա ուժերից վեր էր դիմակայել երկրի քաղաքական համակարգում սկսված փոփոխություններին: չժԿ–ն 1950թ. ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց և ընդմիջտ կորցրեց իր մենիշխանությունը:

Սակայն 1960–1990–ական թթ. պերմանենտ քաղաքական ու կառավարական ճգնաժամերի ու զինվորական հեղաշրջումների ֆոնի վրա բազմակուսակցական խորհրդարանական համակարգը և նախագահական իշխանության թուլացումը վկայում են, որ բուրքական կոնտեքստում այնքան էլ բարերար ու արդյունավետ գործոններ չհանդիսացան: Բազմակուսակցական համակարգի գլխավոր պրոբլեմը դարձավ կայունության պահպանումը: Այդ տարիների իրադարձությունները և գործընթացները ցույց տվեցին, որ քեմալիզմը որպես պետական գաղափարախոսություն չունի այնքան էլ անսասան դիրքեր և չի ներկայացնում թուրքական հասարակության համերաշխ կարծիքը: Այդ դիրքերի թուլացման վրա իր մեքագործություն է թողել երկրում առկա քաղաքական, կրոնական և էթնիկական լարվածությունը:

Դրանով հարկ է ընդունել, որ այսօրվա Թուրքիայի առջև ծառայած քաղաքական, էթնիկական, մշակութային և կրոնական բնույթի բազում հիմնահարցերը հետևանք են Քեմալ Աթաթյուրքի կողմից տարվող քաղաքականության և տարածվող գաղափարների: Ուրաշ բուրք և արևմտյան հետազոտողներ գտնում են, որ ժամանակակից Թուրքիան ունի երկու այ-

³¹⁵ Սառը պատերազմում արևմտյան բեռին Թուրքիայի միանալու որոշումը պարտադրում էր որդեգրել արևմտյան քաղաքականության կանոնները: Նացիզմի ջախջախումից հետո միակուսակցական ավտորիտար վարչակարգին հետևեց Արևմտքի կողմից դիտվում էր առնվազն որպես անարդարավիճ:

լընտրանք՝ կա՛մ շարունակել հետևել Ջեմալ Աթաթյուրքի կողմից հիմնա-
վորված ավանդույթին և քեմալական պետական մոդելի կիրառմանը, կա՛մ
ընդունել կրոնական և էթնիկական բազմակարծությունը ճանաչող,
հարևան պետությունների հետ հարաբերություններում «պաշարված ամ-
բողի» բարոյության ազատ պետության մոդելը³¹⁶: Այսպես, բուրք թաղաքա-
կանագետ Ջենգիզ Չանդարի կարծիքով, Աթաթյուրքի ժառանգությունը
նրա մահից հետո երկրում իշխանությունը վերահսկող քեմալական ռազ-
մա-քյուրուկրատական ընտրանու ձեռքերում վերածվել է կայծրացած ուղ-
ղադավանության՝ դառնալով ժամանակակից աշխարհում թուրքիայի քա-
ղաքական և տնտեսական զարգացման լուրջ խոչընդոտ³¹⁷: Նա նաև գրում
է, որ Աթաթյուրքի հետևորդների, հատկապես՝ զինվորականության քաղա-
քականության հետևանքով Աթաթյուրքի կերպարը փոխակերպել է ան-
ձեռնմխելի ազգային սրբապատկերի, իսկ քեմալիզմը՝ անճկուն մի դոգմա-
յի, մինչդեռ այսօրվա Հանրապետության ղեկավարության ջանքերը պետք
է կենտրոնացվեն Աթաթյուրքի սկսած արդյակականացումն ավարտին հասց-
նելու ուղղությամբ³¹⁸: Այս իմաստով թուրքիայի Հանրապետությունն այ-
սօր իրոք կանգնած է դժվար մի ընտրության առջև. ինչպե՞ս, պահպանելով
պատմական-ազգային ավանդույթները և չվտանգելով քեմալիզմի ժա-
ռանգության դրական կողմերը, ապահովել սեփական առաջընթացը XXI
դարում:

³¹⁶ O. Tunander. A New Ottoman Empire? – Security Dialogue. vol. 26, N 4, December 1995, p.414.

³¹⁷ C. Çandar. Atatürk's Ambiguous Legacy. – The Wilson Quarterly, Autumn 2000, vol. 24, N 4, p.89.

³¹⁸ Նույն տեղում. էջ 96:

ՎԵՐՋԱԲԱՆ

1920-1930-ական թթ-ին Թուրքիան անցում կատարեց պետականության ու հասարակարգի նոր՝ ազգային պետության ու աշխարհիկ արդիական հասարակության ձևերին: Այդ անցումով էլ պայմանավորված էին Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգի ստեղծման և զարգացման առանձնահատկությունները: Վերոհիշյալ տարիներին Թուրքիայում ձևավորված քաղաքական համակարգը, մասնավորապես՝ գլխավոր պետական ինստիտուտների քաղաքական դերն ու նշանակությունը, քաղաքական կուսակցությունների գործունեությունը և սկզբունքները, բուրքական բանակի գործունեության երկրի քաղաքական կյանքում, քեմալիզմի գաղափարախոսությունը, երկրի քաղաքական առաջնորդների դերակատարումը և որդեգրված արդիականացման ուղեգիծը, մեծ ազդեցություն են բողել Թուրքիայի հետագա պատմական զարգացման, նրա քաղաքական և զինվորական վերնախավի, ինչպես նաև լայն զանգվածների քաղաքական վարքագծի, գաղափարների և գիտակցության վրա:

Հանրապետական Թուրքիայի քաղաքական համակարգի ձևավորման և զարգացման մեջ զգալի դեր կատարեց նախորդ՝ երիտթուրքական ժամանակաշրջանը, որի հետ 1919-1922թթ. ազգայնական շարժումն ու հանրապետությունը ունեին թե՛ քաղաքական, թե՛ կադրային, թե՛ գաղափարախոսական կապ: Երիտթուրքների գաղափարախոսական ազդեցությունը զգացվում է ազգայնականության (կամ բյուրքիզմի) և լաիցիզմի սկզբունքների որդեգրման մեջ, իսկ քաղաքական ընդհանրությունը կայանում էր միակուսակցական բյուրոկրատական-զինվորական վարչակարգի հաստատման մեջ: Եվ հենց երիտթուրքական շրջանում իրապարակ եկավ արդիական զինվորական-բյուրոկրատական-մտավորական վերնախավը, որի մտածելակերպն ու մեթոդների կիրառումը իրենց շարունակությունը գտան քեմալական շրջանում:

Թուրքիայի Հանրապետությունում 1920-1930-ական թթ. ժամանակաշրջանում հաստատվել էր քաղաքական կյանքի նկատմամբ խիստ վերահսկողություն իրականացնող, միակուսակցական, քաղաքական առաջնորդող ղեկավարության քաղաքական համակարգ, որի էությունը կարելի է արտահայտել «մեկ ազգ, մեկ առաջնորդ, մեկ կուսակցություն» բանաձևով, և որտեղ իրական իշխանությունը պատկանում էր փոքրաթիվ զինվորական-բյուրոկրատական ընտրանուն: Ընդհանուր առմամբ, 1920-1930-ական թթ. քուրդական քաղաքական համակարգը կարելի է բնորոշել որպես արդիականացվող մավորիտարիզմ:

Այդ համակարգը կարելի է բնութագրել նաև որպես՝ (1) հակա-ազատական և միաժամանակ՝ հակա-պահպանողական, (2) կորպորատիվ, այսինքն՝ սոցիալական միասնության գաղափարը որդեգրած, հասարակության մեջ դասակարգերի գոյությունը միտող, (3) դեպի բարիզմատիկ ղեկավարությունը

հակված. (4) ազգային միատարրության սկզբունքի վրա հենվող, այսինքն՝ երկրում բնակվող այլազգիների ճնշող և հետապնդող համակարգ:

Քենալական Թուրքիայի քաղաքական համակարգին հատուկ էր գործադիր և օրենսդրական իշխանության թեթի միջև անհավասարակշռությունը՝ ի օգուտ առաջինի, երբ, հակառակ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթների, ըստ որոնց գերագույն օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունը կենտրոնացված է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի մեջ, իրական գերակայությունը պատկանում էր գործադիր իշխանությանը: Չնականորեն Թուրքիան խորհրդարանական հանրապետություն էր, սակայն Սահմանադրության ու պետական ինստիտուտների դերն ու կշիռը պայմանավորված էին Հանրապետության ղեկավարների անձեռով ու դիրքորոշումներով: Մեջլիսն իրականում որևէ լուրջ ազդեցություն պետական ու քաղաքական կյանքի վրա չունեց. այնտեղ գոյություն ունեցր բացարձակ քաղաքական մեծամասնություն և բացակայում էր որևէ ընդդիմություն՝ չհաշված առաջին մեջլիսը և 1924–1925 թթ–ին մեջլիսում մոտ 30 հոգիանոց առաջադիմականների խմբի կարճատև գոյությունը: Լինելով միակուսակցական մարմին՝ այն հեշտությամբ վերահսկվում էր Հանրապետության նախագահի կողմից, որը հանդիսանում էր երկրի բացարձակ առաջնորդը: Փաստորեն երկրում գործում էր ուժեղ պրեզիդենտական վարչակարգ, որի գլխավոր խնդիրն էր՝ ապահովել հնարավորին չափ խաղաղ ու կայուն անցումը կայսրական համակարգից դեպի ազգային ու ժամանակակից պետության համակարգ:

Ազգային առաջնորդի հեղինակությամբ երաշխավորված միակուսակցական համակարգն իր մեջ ներառեց ամբողջ պետական իշխանությունը: Հանրապետական–ժողովրդական կուսակցությունն իր վրա էր վերցրել երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի կազմակերպման գործառույթը՝ հռչակելով իրեն երկրում «ազգային նպատակներն» իրականացնող ուժ: Մուստաֆա Քենալ Արաբյուրքի և նրա շրջապատի համար ՀԺԿ–ն ծառայում էր իբրև կարևոր քաղաքական գործիք, որի միջոցով նաև ապահովվում էր իշխանության բոլոր մակարդակների վերահսկելիությունը: Կուսակցությունն իր ձեռքերում կենտրոնացրեց և՛ քաղաքական ղեկավարման, և՛ վարչական–տնտեսական կառավարման գործառույթները: Կուսակցությունը փաստորեն ձուլվել էր պետական իշխանության հետ և այն ենթարկել իրեն: ՀԺԿ–ն անհանդուրժողական դիրք էր գրավել բոլոր մրցակից ուժերի նկատմամբ՝ դիտելով նրանց որպես սպառնալիք սեփական իշխանությանը և երկրի ապակայունացման վտանգ: Սինչեռ 1924–1925թթ–ին գործող Առաջադիմական–Հանրապետական կուսակցությունն առաջին ազատական քաղաքական կազմակերպությունն էր հանրապետությունում, որի արգելումը հստակորեն հետապնդում էր քաղաքական նպատակ՝ վերացնել քաղաքական ասպարեզից իշխող վարչակարգին մարտահրավեր նետելու ունակ ամենալուրջ ուժին: 1925թ. ԱՀԿ–ի արգելմամբ և 1926թ. կատարված դատավարությունների և մա-

հապատիժների օգնությամբ Մուստաֆա Քեմալը ապահովեց իր համար անվիճարկելի իշխանություն և հաստատեց երկրում Հանրապետական-Ժողովրդական կուսակցության լիակատար մենիշխանությունը, որը տևեց 27 տարի:

1930թ-ին նախագահ Մ. Քեմալը փորձ կատարեց հաստատել երկրում «խնամակալ ժողովրդավարության» վարչակարգ՝ բուլլատրելով ընդդիմադիր Լիբերալ-Հանրապետական կուսակցության ստեղծումը: Սակայն բնակչության դժգոհությունը իշխող կուսակցության վարվող քաղաքականությունից, որի արդյունքն էին ծանր տնտեսական վիճակն ու իշխանությունների չարաշահումները, Քեմալի համար անսպասելիորեն դարձրեց ԼՀԿ-ն բողոքի, նույնիսկ դիմադրության հնարավոր կենտրոն:

1930-ական թթ-ին Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը հանդես էր գալիս ոչ թե որպես դասական իմաստով քաղաքական կուսակցություն, այլ հարկադրանքի և ուժի վրա հենվող կազմակերպություն՝ «պետություն պետության մեջ» կարգավիճակով, որը դառնում է երկրում ընթացող անբողջ պետական, քաղաքական, գաղափարախոսական, տնտեսական և մշակութային գործունեության ողնաշարը: Հասարակական-քաղաքական կյանքում ՎՄԿ-ի քայքայող մենիշխանությունն օրինաչափորեն հանգեցրեց կուսակցության ու պետության ինստիտուտների միասնականացմանը, որը կոչված էր ամրապնդելու և շաղախելու միակուսակցական համակարգը:

Այսպիսով՝ միակուսակցական համակարգի էությունը կայանում էր ինչպես այլընտրանքային, մրցակից քաղաքական կուսակցությունների և խմբերի գոյությունը բացառելու, այնպես էլ տարբեր հասարակական խավերի ու խմբերի շահերը մեկ կուսակցության շրջանակներում ի մի բերելու մեջ:

Թուրքիայի Հանրապետության ստեղծման ու կայացման, նրա քաղաքական համակարգի կառուցվաթի մեջ նշանակալի է եղել բանակի գործունը: Բանակի խոսքը եղել է և մնում է վճռորոշ քաղաքական իշխանության փոփոխման հարցերում: Հանրապետության առաջին և երկրորդ նախագահները, թեև փոխել էին զինվորական համազգեստը քաղաքացիական կոստյումի, պահպանում էին իրենց ամուր կապը գեներալիտետի հետ: 1920-1940-ական թթ-ին քաղաքականության մեջ բանակի չմիջամտելու հանգամանքը պայմանավորված էր հենց նախագահներ Աբաթյուրքի ու Ինյոնյուի անձերի գործունեությամբ: Թուրքական բանակը դարձավ երկրում լավագույն կազմակերպված պետական ինստիտուտը, Հանրապետության «առանցքը», որը Աբաթյուրքից հետո իր վրա վերցրեց Թուրքիայի առաջին նախագահի ժառանգության երաշխավորի և Հանրապետության քեմալիստական ուղու պահպանի առաքելությունը՝ մշտապես զգացնել տալով իր ուժը երկրում քաղաքական ճգնաժամների կամ ապակայունացման վտանգի առաջացման պահերին և իր ձեռքում պահելով Թուրքիայի քաղաքական կյանքի վրա ազդեցության ու վերահսկողության լծակները:

Ժամանակակից Թուրքիայի պաշտոնական գաղափարախոսություն համարվող քեմալիզմն կարելի է դիտել որպես Թուրքիայի զարգացման հատուկ ուղու արտահայտություն և միաժամանակ Քեմալ Արաբյուրքի կողմից առաջ քաշված գաղափարների ու սկզբունքների մի ամբողջականություն: Քեմալիզմն ընկալվում է նաև որպես թուրքական պետության և ժողովրդի ազգային շահերի մասին հանրապետական Թուրքիայի հիմնադիրների պատկերացումների մի համակարգ, որը, սակայն, հանդես չի գալիս համապարփակ ու համակարգված ձևով, այլ որպես արդեն հայտնի գաղափարների հավաքածու, ինչպես, օրինակ, հանրապետականություն, ազգայնականություն, էտատիզմ:

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ գաղափարախոսության դերը քեմալական Թուրքիայում կրում էր օժանդակ բնույթ. այն ծառայեցվում էր գործնական խնդիրների լուծման և անհրաժեշտ հասարակական-հոգեբանական մթնոլորտի ստեղծման համար:

Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգի ստեղծման և կայացման գործում էական դեր կատարեցին երկրի առաջնորդները: Այդ համակարգը իր գոյության առաջին տարիներին խառնախուլում էր ոչ թե գաղափարական և ինստիտուցիոնալ հիմքերի, այլ երկրի ղեկավարների, հատկապես՝ նրա առաջին նախագահի անհատական քարիզմայի վրա:

1920–1930–ական թթ. Թուրքիայում պետության և կուսակցության առաջնորդը հանդես էր գալիս որպես առանձնահատուկ առաքելության կրող, այսինքն՝ որպես քարիզմատիկ լիդեր, որը ստանձնել էր պատասխանատվությունը երկրի ճակատագրի համար: Ավտորիտար բնույթի քաղաքական համակարգը գործում և որոշումներ էր կայացնում քարիզմատիկ առաջնորդի կողմից առաջ քաշված պահանջներին և նրա մղումներին համապատասխան: Այդ պատճառով էլ քեմալական քաղաքական համակարգի առանցքը՝ քարիզմատիկ լիդերությունն էր:

Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Մուստաֆա Քեմալ Արաբյուրքի քաղաքական գործունեությունն ու համոզմունքները, պրագմատիզմն, իրատեսությունը, ազգային ու պետական շահերի հետևողական հետապնդումը, քաղաքականության արվեստին տիրապետելու բարձր աստիճանը էական ազդեցություն գործեցին ժամանակակից Թուրքիայի պատմության մեջ: 1920–1930–ական թթ. այս երկրում կատարված բոլոր քաղաքական ու հասարակական բարեփոխումները կյանքի էին կոչվում մեկ մարդու երկաթյա կամրով: Որպես այդ բարեփոխումների ապահովագրման միակ ուղի ընտրվեց ուժեղ անձնական իշխանության վարչակարգի ստեղծումն ու կիրառումը: Բոլոր թիչ թե շատ նշանակալի նախաձեռնությունները կենտրոնացված էին Հանրապետության նախագահի ձեռքերում, հետևաբար, Արաբյուրքի ղեկավարման ոճը կարելի է բնութագրել որպես «հայրապետական» և «ավտորիտար», ըստ որի, առաջնորդը պահանջում է իր ստորադասներից լիակատար հնազանդություն, բեկադրում է իր կամքը շրջապատին, միայնակ որոշում ու ձևա-

կերպում է պետական քաղաքականության նպատակները և ամուր վերահսկողություն սահմանում պետական և քաղաքական իշխանության հիմնական լծակների՝ կառավարության, կուսակցության և բանակի վրա: Հարկ է նշել, որ Աբաբյուրը իրատես ղեկավար էր, որի որոշումները քելադրվում էին ստեղծված իրավիճակով և կիրառվող եղանակների արդյունավետությամբ:

Աբաբյուրի խիստ վերահսկողության տակ գործոց ռազմա-քյուրդկրատական վերնխավը դարձավ փաստորեն արդիականացման հիմնական գործակալը, նրա կազմակերպիչն ու խթանիչը:

1920-1930-ական թթ-ին Թուրքիայում ձևավորվեց հանրապետական քաղաքական ընտրանին, որը բաղկացած էր հիմնականում զինվորականներից, հատկապես բարձրագույն սպայակազմի ներկայացուցիչներից, քաղաքացնական ստորակարգ խավից, քյուրդկրատիայի մարդկանցից ներկայացուցիչներից: Այն կազմում էր իշխանության կայացման և գործունեության ամուր հիմքը՝ մասնակցելով քաղաքական ծրագրերի և բարեփոխումների մշակման և կենսագործման մեջ:

Միաժամանակ այդ ընտրանին մնում էր որպես զանգվածներից մեկուսացված մարդկանց մի խումբ, որը հակված էր շարունակել Թուրքիայի զարգացումը ուժեղ և կենտրոնացված վերահսկողության տակ, այսինքն՝ «խնամակալ» վարչակարգի պայմաններում:

Քննալ Աբաբյուրի վարչակարգը տարբերվում էր իրեն ժամանակակից բռնապետների վարչակարգերից երկու եական առումով: Նրա արտաքին քաղաքականությունը հիմնվում էր ոչ թե ծավալապաշտության, այլ «սահմանափակ նպատակների» քաղաքականության վրա, իսկ նրա ներքին քաղաքականությունը չէր պահանջում զանգվածային տեռորի իրականացում և հետապնդում էր երկրի քաղաքական զարգացման կայուն ընթացքն ապահովող ինստիտուտների ստեղծման նպատակ:

Այս առումով թուրք ղեկավարների համար առաջնահերթ հիմնահարցը ոչ թե ազատական ժողովրդավարական համակարգի ստեղծումն էր, այլ չոր բուրբական պետության ամրապնդումն ու հզորացումը: Պետական կառավարման և քաղաքական լիդերության նրանց հայեցակարգը բխում էր այն դրույքներից, որ ժողովրդավարական կարգերն անհամատեղելի էին Թուրքիայի պայմանների հետ և անհրաժեշտ էր, որ թուրք ժողովուրդը նախ ոտքի կանգնի, տնտեսապես ու հույժբանդորեն պատրաստ լինի նոր համակարգին անցնելու համար և, որ այդ ժամանակաշրջանում լուրջ քաղաքական փոփոխությունները կհանգեցնեին երկրում իրավիճակի ապակայունացմանն, ինչպես նաև իրենց սեփական դիրքերի վտանգմանը:

1920-1930-ական թթ-ին քեմալական Թուրքիայի առջև ծառայած էր հասարակական և քաղաքական արդիականացման հիմնահարցը, որը քառացիորեն հանդիսանում էր նրա համար գոյության խնդիր: Արդիականացումը Թուրքիայում ընթացավ համալիր եղանակով՝ ընդգրկելով ռազմական, տնտեսա-

կան, գիտական, սոցիալական ու քաղաքական ոլորտները: Թուրքական արդիականացումը փաստորեն հեղափոխություն էր վերսից, որի տեմպն ու ընթացքը պայմանավորված էին Հանրապետության առաջնորդների կամքով և վարվող քաղաքականությամբ: Վերջնական նպատակին՝ զարգացած տնտեսությամբ, կայուն քաղաքական կառույցներով, արևմտականացված կենսակերպով ու մտածելակերպով հասարակության ստեղծմանը, թուրք ղեկավարությունն այդպես էր շիասավ, թեև հիմքեր նախապատրաստեց հետագա տասնամյակներին այդ նպատակների իրականացման համար:

Քաղաքական արդիականացումը հստակորեն հետապնդում էր երկրի տարածքի և բնակչության վրա արդյունավետ կառավարման իրականացման նպատակը: Դրա հետևանքով ստեղծվեց միակուսակցական «խնամակալ» քաղաքական համակարգ, որը կոչված էր առաջնորդել և կերտել արդիական հասարակությունը, կատարվեցին ինստիտուցիոնալ-կառուցվածքային բարեփոխումներ: 1920-1930-ական թթ. Թուրքիայի քաղաքական համակարգն ուներ քաղաքական ինստիտուցիոնալացման բարձր ու քաղաքական մասնակցության ցածր մակարդակներ: Ինստիտուցիոնալ իշխանության և քաղաքական մասնակցության մակարդակի բարձրացման խնդիրներն իրենց լուծումը ստացան արդեն Ա-բարյուրի մահից հետո:

Երկրի բնակչության մեծամասնության համար արդիականացման պտուղներն այդպես էլ անհաս մնացին, ինչի արդյունքում ճեղքվածքը իշխող վերնախավի և զանգվածների միջև շարունակում էր պահպանվել: Բնակչության ռեակցիայի արտահայտությունը դարձավ քաղաքական խալաֆի վերածնունդը Երկրորդ և Երրորդ հանրապետությունների օրոք:

Թուրքիայի փորձը ցույց տվեց նաև, որ քաղաքական համակարգի ավտորիտար ձևը կարող է արդյունավետ լինել արդիականացման ընթացքի սկզբնական փուլերում և, որ ավտորիտար վարչակարգն ունակ է սահուն անցում կատարել դեպի ավելի ազատական ու բազմատեսակ համակարգը:

Սակայն առկա էին նաև լուրջ խոչընդոտներ քաղաքական արդիականացման արդյունավետ իրականացման ճանապարհին: Այսպես, քրդական ապստամբությունը հանդիսացավ ամենալուրջ մարտահրավերը նոր Թուրքիայի համար 1920-ական թթ. ընթացքում՝ ցույց տալով իշխող վերնախավին, որ, չնայած հայերի և հույների հանդեպ գտման քաղաքականությանը, երկրում այդպես էլ չհաստատվեց էթնիկական միատարրություն: Քրդական ապստամբությունը նաև հարմար առիթ ծառայեց Հանրապետության ղեկավարության համար քաղաքական համակարգը սեփական կառիքներին հարմարեցնելու առումով: Փաստորեն, քրդական ապստամբությունը և քրդական խնդիրն ընդհանրապես խաթարեցին Թուրքիայի նորմալ քաղաքական զարգացումը՝ մինչև մեր օրերը, շարունակելով խոչընդոտել երկրում ազատ, ժողովրդավարական հասարակության զարգացմանը: Ժամանակակից Թուրքիան իր կազմավորման տարիներից սկսած քրդական հարցի պատճառով անընդհատ զգում է պե-

տուրյան միասնությանը և տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգը:

Քենալական քաղաքական մոդելի առանձնահատկությունը դարձավ անհատների գերիշխող դիրքը ինստիտուտների նկատմամբ, իշխանության կենտրոնացումը, իշխանության ճյուղերի միասնությունը, քաղաքացու կախվածությունը պետությունից: Բացակայում էր նաև քաղաքական բազմակարծությունը, քաղաքացիական ազատություններն ու իրավունքները պաշտպանված չէին և կրում էին ղեկավարատիվ բնույթ: Ամբողջ քաղաքական գործունեությունը դարձել էր քացառապես իշխող ուժի գործառույթը:

